

ՃՈՆ ԴԸՎԻՐ

ԳԻՐՔԵՐՈՒ ՄԵՑ ԿԱՃԱՌՔ ՈՒՆԵՑՈՂ (ՊԵՍՑ-ՍԵԼԻՆԿ) ՀԵՐԻՆԱԿ

ԱՍՏՈՒԾՈՅ

ԱՅԸ

ԻՆՉՊԵՍ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՆԴԵՊ

ԱՌՈՂՋ ԿԱԽԸ ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ԿԵՐՊՈՎ

ԿԸ ՓՈԽԱԿԵՐՊԵ ԿԵԱՆՔԴ

Սիրելի բարեկամ,

Ահը կը նկարագրուի իբրեւ մեծարական յարգանք վախի կամ սքանչացումի հետ խառնուած: Անկկա առողջ, յարգալից, սուրբ վախ մըն է Աստուծոյ հանդէպ, որուն պէտք է հետամուտ ըլլայ ամէն հաւատացեալ, տրուած ըլլալով, որ Աստուծոյ ահը հիմն է Աստուծոյ բոլոր խոստումներուն:

Այդ վախը ընդունելու օգուտները մեծ են, ներառեալ՝ աւելի մեծ իմաստութիւն, Աստուծոյ հետ մտերմութիւն, երկայնակեցութիւն, պատիւ, ապահովութիւն եւ մնայուն աւանդ մը կերտել: Աստուծոյ խօսքը յստակօրէն կը նկարագրէ, թէ ինչպէս Աստուած կը մօտենայ անոնց, որոնք առանց յոգնելու, յարատեւօրէն կը փնտռեն զինք՝ հնազանդութեամբ եւ ճշմարտութեամբ: Յիսուս արժեւորեց այդ արժանիքը ամէն բանէ աւելի. մենք ալ իմաստուն կ'ըլլանք եթէ նոյնը ընենք:

Կը քաջալերեմ, որ մերժես ապրիլ անկեանք եւ ձանձրացուցիչ Քրիստոնէական կրօնը եւ փոխարէնը որդեգրես մտերմիկ, կենսատեւ, իմաստալից, պտղաբեր եւ գոհացուցիչ յարաբերութիւն մը Աստուծոյ հետ՝ զերծ ուրիշ վախերէ եւ անձկութիւններէ:

Եղբայրդ Քրիստոսով՝



Ծնն
JohnBevere@gmail.com



Messenger
INTERNATIONAL

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՅԸ

ԻՆՉՊԵՍ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՆԴԵՊ
ԱՌՈՂՋ ԿԱԽԸ ԱՊՇԵՑՈՒՑԻՉ ԿԵՐՊՈՎ
ԿԸ ՓՈԽԱԿԵՐՊԵ ԿԵԱՆՔԴ

ԾՈՆ ՊԸՎԻՐ

The Awe of God, Western Armenian, by John P. Bevere

© 2024 Messenger International

MessengerInternational.org

Originally published in English as The Awe of God

ISBN 978-1-400-33670-8

Author photo © Meshalli Mitchell

Additional resources in Western Armenian are available for free download and video streaming at **MessengerX.com** and on the **MessengerX** app

To contact the author: JohnBevere@gmail.com

This international leadership seeding edition of the Awe of God book has been produced in collaboration between Thomas Nelson and Messenger International. It is a free gift and is NOT FOR SALE

Printed in Lebanon

Աստուծոյ Ահը, Արեւմտահայերէն, Ճոն Պըվլիըր

© 2024 Messenger International

MessengerInternational.org

Բնագիրը հրատարակուած է անգլերէն լեզուով իբրեւ The Awe of God

ISBN 978-1-400-33670-8

Հեղինակի նկար © Meshalli Mitchell

Արեւմտահայերէն լեզուով յաւելեալ աղբիւններ մատչելի են՝ ձրի ներբեռնումի եւ *վիդէո* սփռումի համար հետեւեալ կայքէջին վրայ՝

MessengerX.com եւ հետեւեալ բջիջային հեռաձայնի

կիրարկումին վրայ՝ **MessengerX**

Հեղինակին հետ կապուելու համար, կրնաք գրել՝

JohnBevere@gmail.com ե-նամակի հասցէին:

Հաւատքով սերմանելու նպատակով միջազգային Եկեղեցւոյ առաջնորդներուն ուղղուած «Աստուծոյ Ահը» վերնագիրով այս գիրքի նիւթական ծախսերը հոգացուած են Thomas Nelson-ի եւ Messenger International-ի կողմէ: Անիկա ձրի նուէր մըն է, եւ ԾԱԽՈՒ ՉԷ:

Տպուած՝ Լիբանանի մէջ



App Store ապրանքանիշն է Apple Inc.-ի, որ արձանագրուած է ԱՄՆ-ի եւ այլ երկիրներու մէջ:

Google Play-ը եւ Google Play-ի պատկերանիշը ապրանքանիշներն են Google LLC-ի:

*Հոյակապ կինս, մտերիմ բարեկամս եւ
սիրելիս, Լիսա Պըվիր:*

*«Տէրոջմէն վախցող կինը պիտի գովուի»:
Առակներու 31.30 ¹*

*Ես այս գիրքը գրեցի մեր ամուսնութեան քառասուներորդ
տարին:*

*Ամէն տարի քեզի հետ միայն աւելի լաւ կ'ըլլայ,
եւ եթէ առիթը տրուէր,*

*քեզի հետ անգամ մը եւս կ'ամուսնանայի
առանց պահ մը իսկ մտածելու:*

*Բառեր չունիմ արտայայտելու այն հրճուանքն
ու երջանկութիւնը, զորս դուն կը պատճառես ինծի:*

*Ես պիտի չըլլայի այն մարդը, որ եմ այսօր
առանց քու սիրոյդ եւ նեցուկիդ:*

*դուն իմաստուն ես, հաճելի, զուարճալի, զօրաւոր,
արկածախնդիր եւ գեղեցիկ:*

Ես յաւիտենապէս կը սիրեմ քեզ:

¹ Այս թարգմանութեան մէջ Աստուածաշունչի Հին Կտակարանի մէջբերումները առնուած են՝ «Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած» տարբերակէն, 2001:

Իսկ Նոր Կտակարանի մէջբերումները ընդհանրապէս առնուած են՝ «Աստուածաշունչ Նոր Կտակարան Յիսուս Քրիստոսի. Նոր Աշխարհաբար Թարգմանութիւն՝ Համեմատութեամբ՝ Յունարէնի եւ Գրաբարի» տարբերակէն, Անթիլիաս, 2001, բացի եթէ բնագիրի թարգմանութիւնը հարազատ պահելու համար յարմար տեսնուած է մէջբերումը ընել վերը նշուած առաջին տարբերակէն կամ «Աստուածաշունչ Գիրք Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայական եւ Յունական Բնագիրներէն Թարգմանուած» տարբերակէն, 1981:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս Կարդալ այս Գիրքը.....	IX
Ծանօթութիւն	XIII

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ- ԱՀԱՐԿՈՒ ԱՍՏՈՒԱԾ ՄԸ

1. Աստուծոյ Գանձը	3
2. Վախերոյ Բաղդատութիւն	11
3. Ինչ է Սուրբ Վախը	17
4. Աստուծոյ Շօշափելի Ներկայութիւնը	25
5. Անմոռանալի Երեկոյ մը	31
6. Տեսնել զԻնք	37
7. Աստուծոյ Փառքը	43

ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ- ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԱԾ՝ ԻՆՉՊԷՍ ՈՐ ԵՆՔ

8. Քու Արժէքը	51
9. Մահացոյ Բախումը	57
10. Աստուած Չի Տեսներ	63
11. Ահ ու Դող	71
12. Վարակիչ Կեղծաւորութիւն	79
13. Երեք Պատկերներ	85
14. Յաւիտենական Որոշումներ	93

ԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ– ԱՆԴԻՄԱԴՐԵԼԻ ՍՐԲՈՒԹԻՒՆ

15. Մարդոց Վախը	101
16. Իրաունք Համարել	109
17. Հեռացիր Չարէն	117
18. Երկայնակեցութիւն	123
19. Մաքրել Մեր Անձերը	131
20. Ինչ Բանի Հետամուտ Ըլլալ	139
21. Փափաք եւ Զօրութիւն	145

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ– ԻՆՉՊԷՍ ԿՐ ՊԱՏԱՍԽԱՆԵՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ

22. Դողալ Աստուծոյ Խօսքին Դիմաց	153
23. Անմիջապէս	161
24. Անհասկնալի Է	169
25. Առանց Բացայայտ Օգուտի	175
26. Լաւ Ցաւ մը	181
27. Կատարուեցաւ	189
28. Ինչպէս Կարծրացնել Խիղճը	195

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ– ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆ

29. Հոն, Ուր Մտերմութիւնը Կը Սկսի	203
30. Տարբեր Յիսուս մը	211
31. Չէի Ճանչնար Ձեզ	219
32. Տիրոջ Գաղտնիքը	227
33. Ներքին Վերջին Լուրերը կամ Նորութիւնները	233
34. Դէմ առ Դէմ	239
35. Դուք Իմ Բարեկամներս Էք	247

ՎԵՑԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ- ԳԱՆՁԻՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

36. Իր Խոստումներուն Հաստատուիլը	255
37. Այն Վախը, որ Կ'ոչնչացնէ Միւս Բոլոր Վախերը	263
38. Աւանդ.....	271
39. Ամէնէն Կարեւոր Բանը	279
40. Յաջող Կերպով Ապրիլ	287
41. Լաւ Կերպով Աւարտել	295
42. Գանձը Գտնել	303
<i>Յաւելուած- Աստուծոյ Մեծութենէն Նշոյլ մը</i>	<i>313</i>

ԻՆՉՊԷՍ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Սիրելի Ընթերցող,

Ասիկա պարզապես որեւէ պատգամ մը չէ. կեանքի պատգամ մըն է, որուն եթէ հաւատաս եւ եթէ անոր հիման վրայ գործես, ասիկա յաւիտենապէս պիտի փոխակերպէ քեզ: Ես վստահ եմ ատկէ, քանի որ այս գիրքին մէջ տեղ գտած ճշմարտութիւնները փոխած են իմ եւ անհամար ուրիշներու կեանքերը: Երբ որ ինձի խրատ կը հարցնեն, ըլլայ ասիկա ամուսնութեան, ընտանիքի կամ ծառայութեան մասին, իմ անմիջական աղբիւրներս այս գիրքին մէջ նշուածներն են:

Կարելոր ըլլալուն պատճառով, երկար ժամանակ տրամադրած եմ եւ խոկումով աղօթք ըրած եմ՝ զանոնք լաւագոյն ձեռով ներկայացնելու համար: Նկատի առնելով մեր այսօրուայ կեանքերուն տեղատուութիւնն ու մակընթացութիւնը՝ մեր խճողուած օրակարգերը եւ մեր առօրեայի արագ ընթացքը, պէտքը զգացի ճշմարտութիւնները պատշաճեցնելու եւ ներկայացնելու պատահիկներու չափի կտորներով, որպէսզի կարենաք խորապէս խոկալ այդ պզտիկ կտորներուն վրայ:

Առաջին նայուածքով կրնաս մտածել, թէ այս գիրքը ամենօրեայ առանձին աղօթքի եւ խոկումի պահի համար կարճ ներշնչումի նիւթեր եւ աղօթքներ պարունակող գիրք մըն է (*տրիվոշընը*): Բայց վստահեցնեմ, որ այդպէս չէ: Բացատրեմ: Առանձին աղօթքի եւ խոկումի համար գիրք մը յաճախ իւրաքանչիւր օրուայ համար տարբեր նիւթ մը կը պարունակէ, որոնք անպայմանօրէն չեն կազմեր հակիրճ եւ համակարգուած պատգամ մը: Հակառակ անոր որ այս գիրքը կրնայ ամենօրեայ աղօթքի եւ խոկումի գիրք թուիլ, իւրաքանչիւր օրուայ նիւթ կը շինէ նախորդ օրուայ նիւթին վրայ՝ կազմելով սովորական գիրքի մը ամբողջական նիւթը: Այս ձեւին առաւելութիւնը այն է, որ դուն կրնաս որոշել ինչպէս կարդալ զանիկա: Վստահաբար զանիկա կրնաս կարդալ քանի մը օրէն եթէ այդ է քու նախընտրութիւնդ: Սակայն իմ յանձնարարութիւնս այն է, որ կամ

զանիկա կարդաս վեց շաբթուայ ընթացքին (օրական մէկ գլուխ) կամ երեք շաբթուայ ընթացքին (առտու՝ մէկ գլուխ, գիշերը՝ մէկ գլուխ):

Իւրաքանչիւր գլուխի վերջաւորութեան պիտի գտնես հինգ գործիքներ կամ միջոցներ, որոնք կ'օգնեն քեզի աւելի եւս խորանալու գլուխին պարունակութեան մէջ: Այդ բաժինը կը կոչենք՝ «Անձնականացնել»: Անիկա կը պարունակէ հինգ կէտեր [որոնք անգլերէն բնագիրին համաձայն բոլորն ալ կը սկսին *Փի.* գիրով, եւ այդ պատճառով հեղինակը զանոնք կը կոչէ՝ 5 *Փի*-երը– *Թարգմանիչ*].

- 1. Հատուած**– Իւրաքանչիւր գլուխի մէջ դրած եմ աստուածաշնչական հատուած մը, որուն վրայ հիմնուած է այդ օրուայ պատգամը կամ հատուած մը, որ անպայմանօրէն չի մէջբերուիր բուն նիւթին մէջ, բայց կը հաստատէ կամ կը հիմնաւորէ խօսուած նիւթը: Կը յանձնարարեմ, որ գոց սորվիք այդ աստուածաշնչական հատուածները:
- 2. Միտք**– Ասիկա գլուխին մէջ գոյութիւն ունեցող գլխաւոր միտքն է, եւ հոս տեղ գտնելուն նպատակը անոր կարեւորութիւնը շեշտելն է: Զանիկա դարձեալ տեսնելը պիտի զօրացնէ անոր ազդրութիւնը եւ արագ յիշեցում մը ըլլայ քեզի երբ վերադառնաս գլուխը անգամ մը եւս այքէ անցընելու համար:
- 3. Խոկալ**– Ասիկա շատ կարեւոր է: Սաղմոսողը կ'ըսէ. «Քու հրամաններուդ մասին պիտի խոկամ, եւ քու ուղիներդ պիտի դատեմ» (Սաղմոսներու 119.15): Խոկալ կը նշանակէ մեր միտքին մէջ դարձնել նիւթը՝ մտածելով, որ Աստուծոյ Խօսքը ինչպէս կրնանք կիրարկել մեր ներկայի վիճակին մէջ: Ատիկա ընելով, մեզի կ'ըսուի, թէ մեր ճամբաները յաջող պիտի ըլլան եւ պիտի յառաջդիմենք (տես Յեսուի 1.8: Սաղմոսներու 1: Ա.Տիմոթէոսի 4.15):
- 4. Աղօթք**– Պիտի ըլլայ նաեւ աղօթք մը, որ կ'արտացոլացնէ այդ գլուխի ուսուցումը: Շատ կարեւոր է, որ Աստուած լսէ մեր ձայնը եւ որ Իրեն տանք արօնութիւն՝ Իր Խօսքին համաձայն մեզ փոխելու:
- 5. Դաւանութիւն**– Մեզի կ'ըսուի, թէ *մահն ու կեանքը* մեր խօսքերուն մէջն են (տես Առակներու 18.21): Յայտարարելով այն ինչ որ Աստուած կը հռչակէ մեր վրայ, մեր հոգին, շունչը եւ մարմինը կը սկսին համապատասխանել մեզի համար Իր կամքին հետ, ինչ որ կեանքը լիութեամբ ապրելու փաստուած ձեւն է:

Դարձեալ կը քաջալերեմ քեզ, որ ժամանակդ առնես այս գիրքը կարդալու ատեն, որպէսզի Աստուծոյ Խօսքին ճշմարտութիւնները թափանցեն սիրտիդ եւ միտքիդ մէջ: Յառաջիկայ քանի մը շաբաթներուն ամէն օր այս ճշմարտութիւններուն մասին մտածելը պիտի օգնէ, որ անոնք սուզուին եւ արմատ նետեն կեանքիդ մէջ: Հոս կարդալիքներդ

տեղեկություններ և այլն են. անոնք Աստուծոյ անբաժնի մօտենալու ճամբան են: Նաեւ կը յանձնարարեն, որ կարդաս գլուխները եւ անցնիս «Անձնականացնել» բաժինի 5 Փհ-երէն իւրաքանչիւրին վրայէն՝ քովդ նօթ առնելու տետրակ մը ունենալով: Խորհուրդներդ եւ աղօթքներդ գրէ անոր մէջ ամէն օր, որպէսզի երբ հետագային վերադառնաս անոնց, յիշես, թէ Սուրբ Հոգին ինչ յայտնեց քեզի:

Քանի մը ուրիշ յանձնարարութիւններ: Առաջին՝ հեռաձայնովդ կամ ժամացոյցովդ չափէ, թէ որքան ժամանակ կ'առնէ գլուխ մը կարդալով՝ «Անձնականացնել» բաժինը ընելով եւ նօթեր առնելով: Մի՛ աճապարեր. մրցումի մէջ չես: Ժամանակը չափելու պատճառը այն է, որ կարենաս իմաստուն կերպով ծրագրել միւս գլուխները կարդալու եւ անոնց վրայ աշխատիլ:

Երկրորդ՝ փորձէ սովորութիւն մը սկսիլ եւ մի՛ արտօներ, որ որեւէ բան խանգարէ կարդալու համար ճշդաձ ժամանակդ ամէն օր: Իմ աղօթքս եւ յոյսս է, որ անցնող քառասուն տարիներուն ընթացքին Աստուծոյ իմ մէջս ըրած գործը նաեւ քու մէջդ կատարուի՝ մինչ կը սերտես այս գիրքը:

Երրորդ՝ պատգամ մը միշտ մեծագոյն օգուտը կը բերէ ինձի երբ կ'ուսուցանեմ զանիկա կամ անոր վրայէն կ'անցնիմ խումբ մը ընկերներով: Ընտրէ քանի մը մօտիկ բարեկամներ եւ միասին սերտեցէք այս գիրքը: Երբ գլուխը սերտելդ աւարտես առանձինդ՝ միայն դուն եւ Սուրբ Հոգին, միասին հաւաքուեցէք ընկերներուդ հետ՝ բաժնեկցելու համար այն ինչ որ Ան ցոյց տուաւ քեզի: Ասիկա ըրէք հերթական ձեռով:

Կ'աղօթեմ, որ աճիս Աստուծոյ հետ մտերմութեանդ մէջ մինչ կը սերտես *Աստուծոյ Ահը*: Կարեւոր է, որ կարդաս Ծանօթութիւնը, եւ ոչ թէ զանիկա զանց առնելով ուղղակի անցնիս Առաջին Գլուխին, քանի որ անիկա մեր սիրտը կը բանայ քննարկուելիք նիւթերուն համար: Եւ երբ վերջացնես գիրքը, շատ պիտի ուզէի լսել քեզմէ, թէ՛ ինչպէս հաւատքդ եւ կեանքդ փոխուեցան՝ Աստուծոյ հանդէպ սուրբ վախին միջոցաւ:

Անկեղծօրէն՝

Ճոն Պըվիլ

Յ.Գ. Պարգապէս յիշեցում մը, որ զանց չառնես Ծանօթութեան բաժինը: Աղօթքս է, որ անիկա կրակ մը կը վառէ մէջդ, որպէսզի սուրբ ահ մը մշակես մէջդ եւ գլուխդ ի վար սուզուիս այս պատգամին մէջ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Վախ: Տարիներ շարունակ մարդիկ ջանք թափած են արմատախիլ ընելու զանիկա: Շատեր ուսումնասիրություններ ըրած են անոր մասին, պայքարած են անոր դէմ եւ քարոզարշաւներ ըրած՝ անոր ազդեցութիւնը մեր կեանքէն վերցնելու համար: Նոյնիսկ նախագահ Ֆրանքլին Տի. Ռուզվելթի հռչակաւոր խօսքը անոր վրայ ուշադրութիւն կը հրաւիրէ. «Միակ բանը, որմէ պէտք է վախնանք ինքնին վախն է»: Ամէն տեսակի բեմերէ աղաղակներ կը լսուին թէ՛ պէտք է ձեւեր գտնենք յաղթահարելու համար վախը, եւ կրնանք գտնել հարիրաւոր եթէ ոչ հազարաւոր գիրքեր, որոնք կը սորվեցնեն աստիկա ինչպէս ընել անհատապէս: 1980–ականներու վերջաւորութիւններէն ի վեր մարդիկ ամէն տեղ կը հագնին հագուստներ, որոնց վրայ հաստ տառերով գրուած է՝ «Առանց Վախի» («Նօ Ֆիր») եզրը: Այնպէս կը թուի, որ շատ լուրջ ենք մեր կեանքերէն ամէն վախ վերացնելու մեր ջանքին մէջ:

Այդ արշաւը կը թուի ըլլալ ողջամիտ, ազնուական եւ խոհեմ շատ մը ճակատներու վրայ: Սակայն ճշմարտութիւնը այն է, որ *ամէն վախ վախ չէ*: Ուստի ինչո՞ր կայ այդ մտապաշարումը: Կը հաւատամ, որ ատոր պատճառը բոլոր վախերը «վնասակար» պիտակով մը մէկ մեծ դասակարգումի տակ դնելն է: Բայց արդեօք այդ ենթադրութիւնը ճիշդ է:

Առաջին՝ կարեւոր է ճանչնալ, որ իրապէս կան *կործանարար* վախեր, նոյնիսկ երբ կը թուին ողջամիտ ըլլալ: Եթէ կը վախնանք մեր ամբողջ դրամը եւ ստացուածքը կորսնցնելէն, հաւանաբար պիտի մտապաշարուինք անոնցմով եւ ըլլանք կծծի ու ապրանք կուտակողներ՝ պաշտելով մեր դրամը եւ ստացուածքը ուրիշ որեւէ բանէ աւելի: Եթէ կը վախնանք ամուսին մը կորսնցնելէն, պիտի փարինք այդ անձին չափէն աւելի ամուր կերպով կամ կասկածինք անոր ամէն մէկ արարքէն: Այդ երկուքն ալ կ'առաջնորդեն դժգոհութեան կամ զայրոյթի, որ վերջաւորութեան կը վնասէ յարաբերութեան: Եթէ ունինք մեզմէ բանի մը վրիպելուն

վախը [*\$ՕՄՕ*– հանրաժանօթ եզր մը, որ առաջնատառերն են անգլերէնով՝ «*Ֆիր աֆ միսինկ աութ*» բառերուն– *Թարգմանիչ*], անիկա կրնայ պատճառ ըլլալ, որ մենք նոր հետաքրքրութիւններ եւ նոր փորձառութիւններ փնտռենք, բայց ատիկա պիտի ըլլայ առողջ համայնքի, իրական կապակցութիւններու եւ նուիրումին ընկերակցող գեղեցիկ խաղաղութեան հաշտոյն: Եթէ կը վախնանք մեր զաւակներուն ապահովութեան համար, հաւանաբար պիտի խանգարենք անոնց աճումը՝ զանոնք կամ խեղդելով կամ ալ շռայլութեան (կամ մսխելու) առաջնորդելով: Յանկը անվերջանալի է:

Միա կողմէ, *շինիչ* վախերը կ'արտադրեն նպաստաւոր իմաստութիւն: Քարաժայռէ մը երկու հազար ոտք (600 մետր) վար իյնալու վախը մեզի կու տայ իմաստութիւն շատ չմօտենալու ծայրին, ուրկէ կրնանք սահիլ–իյնալ: Գորշ արջերու զօրութեան վախը մեզի կու տայ իմաստութիւն վտանգ չսպառնալու մայր արջի մը քրթոթներուն: Երրորդ աստիճանի այրուածք ունենալու վախը մեզի կու տայ իմաստութիւն հաստ ձեռնոցներ հագնելու երբ ափսէ մը կը հանենք տաք փուռէ մը:

Եւ սակայն *շինիչ* վախը՝ հակառակ օգտակար ըլլալուն, նաեւ կրնայ սխալ ուղղութեամբ երթալ եւ սահմանափակել մեր կեանքը: Եթէ չյաղթահարուի, իյնալու վախը կրնայ պատճառ ըլլալ, որ մենք օդանաւ չուզենք ելլել, ինչ որ կրնայ սահմանափակել մեզ: Գորշ արջէն մեր անզուսպ սարսափը կրնայ զրկել մեզ անտառին մէջ հաճելի պտոյտէ մը, եւ մենք մեզ այրելու վախը կրնայ պատճառ ըլլալ, որ բնաւ փուռը չվառենք եւ աղուոր տան կերակուրներէ զրկենք մենք մեզ:

Իրական հարցումը, որ պէտք է հարցնենք մենք մեզի հետեւեալն է՝ *Ամէնէն շարք ինչէն կը վախնանք*: Ատիկա շատ անելի ճիշդ փնտռտուք մըն է քան կործանարար վախը ինչպէս վերացնելու եւ *շինիչ* վախերը ինչպէս կառավարելու վրայ կեդրոնանալը: Անիկա իմաստուն հարցում մըն է, եւ եթէ ճիշդ ձեւով պատասխանուի, բոլոր միա վախերը անելի հասկնալի կը դարձնէ մեզի համար եւ կը բարելաւէ մեր կեանքը՝ թէ՛ ներկային մէջ եւ թէ՛ յափտենապէս: Ատիկա կը լուսաւորէ մեր ճամբան՝ դէպի բարի եւ լեցուն կեանք մը: Աստուածաշունչը շատ բան ունի ըսելու վախի մասին, եւ անոնց հիմը հետեւեալն է. իմաստութեան սկիզբը Տիրոջ վախն է (Առակներու 1.7): Եւ ոչ միայն որեւէ իմաստութիւն, այլ՝ Աստուծոյ իմաստութիւնը: Լաւ է այդ տեղէն սկսիլը:

Ուստի նկատի առ հետեւեալը. հապա եթէ ըսեմ, որ վախը՝ եթէ ճիշդ ձեւով ուղղուի, *արժանիք* մըն է... Հապա եթէ Աստուծոյ վախը այն ինքնահակասական ճամբան է, որ կ'առաջնորդէ

Իրեն հետ հարազատ յարաբերության մը... Եւ հապա եթէ այդ սուրբ վախը այն գործօնն է, որ մեզ ճշմարտապէս կը բանայ այն կեանքի լեցունութեան, զոր Յիսուսի հետեւորդները ապրած են դարերու ընթացքին... Հապա եթէ այդ վախը արմատախիլ կ'ընէ միւս բոլոր վախերը. քու սեփական գործդ սկսելու վախը, երկրիդ կառավարութեան առնելիք քայլերուն վախը, այն վախը թէ՛ ինչ պիտի պատահի զաւակներուդ, հիւանդութենէ տառապելու վախը, այն վախերը, որոնք մտային հիւանդութիւն կամ ընկճուածութիւն կը պատճառեն (ցանկ մը, որ անվերջանալի կրնայ ըլլալ)...

Մինչ կը սկսինք մեր ճամբորդութեան, կ'ուզեմ չորս հաստատումներ ընել.

1. Մենք մարդ ենք եւ վախեր պիտի ունենանք:
2. Աստուծոյ ահը կամ վախը շատ աւելի խորունկ է, աւելի գեղեցիկ եւ աւելի մտերմիկ քան շատեր կը համարձակին պատկերացնել:
3. Աստուծոյ վախը կը կլլէ բոլոր կործանիչ վախերը:
4. Աստուծոյ վախը սկիզբն է ամէն լաւ, բարի բանի:

Ոմանք պիտի յիշեցնեն, թէ Աստուածաշունչը մեզի կ'ըսէ՝ շուրջ 365 անգամ, որ չվախնանք, եւ ճիշդ են: Ատիկա պատճառ կ'ըլլայ, որ մեծ թիւով Քրիստոնեաներ եզրակացնեն, թէ Աստուած չ'ուզեր, որ վախնանք: Բայց այդ համարները կը խօսին *կործանարար* վախի մասին: Առաւել, կրնամ մատնանշել Աստուածաշունչէն շուրջ 200 համարներ, որոնք կը քաջալերեն, որ Աստուծմէ վախնանք: Եւ ահա ցաւալի բաժինը. մեր կեանքերէն որեւէ վախ վերացնելու մեր ջանքին մէջ (ներառեալ Աստուծոյ վախի արժանիքը), մեր հաւատքի այս բաժինը մնացած է չքննուած, չփորձուած եւ առանց օգուտի:

Աստուծոյ վախը աւելի փառաւոր է, աւելի ահ ներշնչող եւ նոյնիսկ աւելի երջանկաբեր քան ինչ որ կրնանք պատկերացնել: Մինչ կը շարունակենք, կ'ուզեմ քեզի ցոյց տալ, թէ ինչպէս ճիշդ ձեռով ուղղուած վախը՝ յատկապէս ամէն բանէ աւելի Աստուծմէ վախնալը, կը բանայ ճամբան կեանքի մը, որ աւելի անդին է քան ինչ որ երբեւէ երեւակայած ես: Եւ միայն այդ առեն է, որ կարող կ'ըլլանք համարձակօրէն դիմագրաւելու որեւէ բան, որ կեանքը կը նետէ մեր վրայ: Չարլզ Սփրըճընի բառերով. «Աստուծոյ վախը կ'ենթադրէ մահը միւս բոլոր վախերուն. հզօր առիծի մը պէս, իր առջեւէն կը վտարէ բոլոր միւս վախերը»:

Իմ յոյսս է, որ մինչ կը կարդաս այս գիրքը, գլուխդ ի վար սուզուիս այդ արժանիքին մէջ, կեղուես–հանես անոր կրօնական

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

հասկացողութեան դիմակը, որ ճիշդ ձեւով չի ներկայացներ զանիկա, եւ քողազերծես անոր մեր ոտքերը ամուր կերպով գետինին վրայ հաստատելու բարիքը: Այո, մի՛ վախնար որեւէ չարիքէ, այլ՝ յայտնաբերէ, թէ ինչպէս Տիրոջմէ վախնալու արժանիքը՝ որ յաճախ սխալ հասկցուած է, պիտի ծաղկեցնէ կեանքդ՝ վայրի գեղեցկութեամբ մը:

Սկսինք մեր Աստուծոյ ճրքան ահաւոր ըլլալը հետազօտելով:

Զանիկա պիտի կոչենք՝ «Աստուծոյ Ահը»:

ԱՀԱՐԿՈՒ ԱՍՏՈՒԱԾ ՄԸ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ

Տիրոջ վախը Իր գանձն է,
ընտրանի գոհար մը՝ տրուած
միայն... անոնց, որոնք
մեծապէս սիրելի են:

– ՃՈՆ ՊԱՆՅԸՆ

1 | ԱՍՏՈՒԾՈՅ ԳԱՆՁԸ

Հապա եթե քեզի ըսէին ծածուկ արժանիքի մը մասին, որ իր էութեան մէջ բանալին է ամէն կեանքի... Անիկա կը բանայ գոյութեանդ նպատակին կղզանքը, եւ կը գրաւէ ներկայութիւնը, պաշտպանութիւնը եւ նախախնամութիւնը քու Ստեղծիչիդ: Անիկա արմատն է ամէն ազնուական յատկանիշի, հիմն է ամէն ուրախութեան եւ երբ հակառակ պայմաններ դիմագրաւես, անիկա կ'ընէ պէտք եղած պատշաճեցումները: Ամբողջ կառչիլը այդ արժանիքին կրնայ երկնցնել կեանքդ, առողջութիւն հայթայթել, յաջողութիւն եւ ապահովութիւն երաշխաւորել, կարօտութիւնը վերացնել եւ ազնուական աւանդ մը երաշխաւորել:

Այնքան լաւ է, որ անհաւատալի կը թուի: Կրնայ ըլլալ դուն քեզի հարց կու տաս, թե՛ *Արդեօք այս գիրքը՝ որ ձեռքերուս մէջ ունիմ, երեւակայական պատմութիւն մըն է:* Կը վստահեցնեմ քեզի, որ այդպէս չէ. գրածներս ճշմարտութիւն են:

Այդ իրականութեան դէմ յանդիման գտնուելով, մարդոց մեծ մասը հաւանաբար պիտի ծիծաղէր եւ անմիջապէս պատասխանէր. «Այդպիսի արժանիք գոյութիւն չ'ունի»: Սակայն վերը նշուած բոլոր խոստումները գրուած են անկասկած երկրի վրայ ապրած ամէնէն իմաստուն մարդոցմէ մէկուն կողմէ. եւ ատելին՝ ան այդ խօսքերը գրեց մեր Ստեղծիչին ներշնչումով, եւ Անոր խօսքերը անսխալակամն են:

Սակայն նախքան այս կեանքէն Սողոմոնի հեռանալը, ան ինկաւ այն երանութենէն, որուն մասին գրեց, քանի որ անոր սիրտը հեռացաւ իր իմաստութեան Աղբիւրէն եւ հետեւաբար ան շեղեցաւ լաւ կերպով ապրելու ճամբայէն:

Հակիրճ կերպով պատմեմ անոր պատմութիւնը: Իր մանուկ

տարիքին, Սողոմոն մարզուած էր այդ արժանիքին մէջ եւ որդեգրած էր այդ արժանիքը: Ան մեծցաւ ազնուական նկարագիրով եւ զարգացուց սուր ներըմբռնում մը: Ան անմիջապէս գերազանցեց ղեկավարութեան մէջ եւ վերջաւորութեան միլիոնաւոր մարդոց վրայ ղեկավար եղաւ: Աստուծմէ իմաստութիւն խնդրելէ ետք, ան ապշեցուցիչ իմաստութեան տէր եղաւ. իրականութեան մէջ շատ քիչ բան կար, որ ան չէր հասկնար: Ան գրեց հազարաւոր իմաստուն ասացուածքներ եւ յօրինեց հարիւրաւոր երգեր. «Ան ծառերուն վրայ խօսեցաւ, Լիբանանի մայրիէն մինչեւ պատի վրայ բուսնող զոպան: Նաեւ անասուններու վրայ, թռչուններու վրայ, սողուններու վրայ ու ձուկերու վրայ խօսեցաւ» (Գ.Թագաւորներուն 4.33):

Այդ իմաստուն մարդը ձեռք ձգեց յաջողութեան, հարստութեան եւ համբաւի մակարդակ մը, որ անզուգական էր մինչեւ իր ժամանակը եւ իրմէ ետք ալ այդպիսի բան չէ տեսնուած: Թագաւորներ, թագուհիներ, դեսպաններ եւ բարձրաստիճան ղեկավարներ երկար ճամբայ կը կտրէին՝ անոր ներկայութեան գալու համար, անոր ներըմբռնումները լսելու համար, անոր շուրջ գտնուող գործավարներու խումբին գերազանցութիւնը եւ միութիւնը տեսնելու համար եւ դասեր քաղելու համար այն նորութիւններէն, որոնք անոր երկրին մեծ զօրութիւն եւ հարստութիւն ապահովեցին: Ան այնքան տպաւորիչ էր, որ թագուհի մը չէր հաւատացած անոր մասին իր լսած լուրերը: Սակայն անոր հետ ժամանակ անցնելէ ետք, ան բացագանչեց. «Ես այդ խօսքերուն չհաւատացի, մինչեւ որ անձամբ եկայ ու իմ աչքերովս տեսայ, եւ տեսաւ ասոր կէսը ինծի պատմած չէին. քու իմաստութիւնդ ու բարօրութիւնդ իմ լսած համբաւ կը գերազանցեն: Երանի՛ քու մարդոցդ, երանի՛ այս ծառաներուդ, որոնք շարունակ քու առջեդ կենալով՝ քու իմաստութիւնդ կը լսեն» (Գ.Թագաւորներուն 10.7–8):

Մեր կարդացածներէն կը հասկնանք, թէ անոր առաջնորդած մարդիկը ուրախ եւ ազդու էին իրենց գործերուն մէջ: Չքաւորութիւն չկար. անոր թագաւորութեան մէջ ամէն ընտանիք ունէր իր սեփական տունը եւ պարտէզը: Պատմութենէն կը տեղեկանանք, թէ՛ ժողովուրդը «կ'ուտէ[ր], կը խմէ[ր] եւ կ'ուրախանա[ր]» (Գ.Թագաւորներուն 4.20): Անոնք խաղաղութեան եւ ապահովութեան մէջ կ'ապրէին:

Ժամանակի ընթացքին, սակայն, այդ նշանաւոր ղեկավարը հեռացաւ այն բանէն, որ պատճառն էր իր իրագործումներուն: Ան ինքն իր աչքին իմաստուն դարձաւ եւ այլեւս անհրաժեշտ չգտաւ այդ առաքիչութեան իմաստութեան մտիկ ընելը: Ան իր ճամբան կորսնցուց, եւ վերջաւորութեան դարձաւ դառնութեամբ լեցուն կասկածամիտ մը: Ան միակը չէր, որ իր այդ սխալ

դատողութան պատճառով տառապեցաւ. տառապեցան նաեւ անոնք, զորս ինք կ'առաջնորդէր:

Իրեն համար կեանքը անհիմաստ դարձաւ: Ան գրեց նուաստացնող խօսքեր, ինչպէս՝ «Ամէն բան ծանծրացուցիչ է, չափազանց ծանծրացուցիչ. ոչ ոք որեւէ իմաստ կրնայ գտնել անոր մէջ» (Ժողովողին 1.8)¹, եւ «Պատմութիւնը պարզապէս ինքզինք կը կրկնէ, քանի որ ոչինչ նոր է արեւին տակ» (Ժողովողին 1.9)²: Քիչ մը աւելի *տրամաթիք* հաստատումի մը մէջ կ'ըսէ. «Աւելի լաւ է [...] մահուան օրը՝ քան ծնունդին օրը» (Ժողովողին 7.1), եւ «Ինչ որ սխալ է՝ չի կրնար շտկուիլ: Ինչ որ կորսուած է, չի կրնար վերականգնուիլ» (Ժողովողին 1.15)³: Իրականութեան մէջ ան ամբողջ գիրք մը գրեց՝ նկարագրելու համար կեանքի գոյութեան անհիմաստ ըլլալը. իրեն համար ամէն բան ունայն էր: Այդ մարդը յարաբերաբար կարճ ժամանակուան մը ընթացքին յաջողութեան ամէնէն բարձր բարձրունքներէն ինկաւ յոռետեսութեան ամէնէն խոր անդունդները: Հոգեբաններ այսօր զայն պիտի բնորոշէին իբրեւ ծանր մոլագար ընկճուածութենէ տառապող մը: Ինչպէս կրնայ մարդ մը այդքան սուր ծայրայեղութիւններէն մէկէն միւսը երթալ:

Լաւ լուրը այն է, որ անոր կեանքը չ'աւարտիր վիատութեան գիրկը: Ան վերջ ի վերջոյ կը վերադառնայ կեանքի ամէնէն կարեւոր արժանիքին: Չենք գիտեր քանի՛ ամիս կամ նոյնիսկ տարի առաւ, որ իր այդ մռայլ գիրքը գրէր, բայց անոր վերջին գլուխը մեզի գաղափար մը կու տայ անոր լաւանալուն մասին: Գլուխին սկիզբի բաժինին մէջ (կարդա՛ ժողովողին 12.2–6) ան եօթը անգամ այս կամ այն ձեւով կ'ըսէ՝ «Յիշէ՛ քու Ստեղծիչդ»: Իսկ անոր վերջին խօսքերն են.

Ամէն բան խօսուեցաւ: Եզրակացութիւնը հետեւեալն է՝ *վահցիր Աստուծմէ* [...] եւ պահէ՛ անոր պատուիրանները, որովհետեւ այդ է մարդուն ամբողջութիւնը [անոր ստեղծագործութեան ամբողջական, սկզբնական նպատակը, Աստուծոյ նախախնամութեան առարկան, նկարագրի արմատը, ամէն ուրախութեան հիմը, դասաւորումը ամէն աններդաշնակ հանգամանքի եւ պայմանի արեւին տակ] եւ ամբողջ [պարտականութիւնը] ամէն մարդու (Ժողովողին 12.13, շեշտադրումը՝ մեր կողմէ)⁴:

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տը Մասէճ* (MSG) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տը Մասէճ* (MSG) տարբերակէն

3 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

4 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Ամփիլիֆայտ Պայպլը, Քլասիք Էփիշըն* (AMPC) տարբերակէն

Այդ կարեւոր արժանիքը ուրիշ բան չէ եթէ ոչ՝ *Աստուծոյ վախը*: Այդ տողերը գրողը՝ Սողոմոն Թագաւոր, կը հռչակէ, թէ անիկա նախապայմանն է գոհացնող եւ յորդառատ կեանքի մը: Աստուածաշունչին մէջ կը կարդանք. «Ո՛վ է այն մարդը՝ որ Տէրոջմէն կը վախնայ. ասիւ անոր պիտի սորվեցնէ իր ընտրած ճամբան» (Սաղմոսներու 25.12, շեշտադրումը՝ մեր կողմէ): Յաճախ չէ, որ կը տեսնենք մարդիկ, որոնք այդ ճամբան կը սորվին, քանի որ, ցաւալիօրէն, շատեր կը հաւատան՝ ինչպէս Սողոմոն Թագաւոր կը հաւատար իր մութ ժամերուն, թէ իրենց սեփական իմաստութիւնն է, որ յաջողութիւն եւ ուրախութիւն կը բերէ: Սուրբ վախը մեզ կապուած կը պահէ մեր Ստեղծիչին. Միակը, որ գիտէ, թէ ինչը կը բարելաւէ մեզ եւ ինչը կը փլէ մեզ:

Սուրբ վախի կարեւորութիւնը այնքան լայն իմաստով կը գերազանցէ բոլոր միւս արժանիքները, որ Սուրբ Գիրքը գանիկա կը նկարագրէ իբրեւ Յիսուսի *հրճուանքը* (Եսայիի 11.3, ըստ *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* (NKJV) տարբերակին), եւ նոյնքան անհաւատալիօրէն կ'ըսէ, թէ՝ «Տէրոջ վախը քու [Աստուծոյ] գանձդ է» (Եսայիի 33.6): Կանգ առ պահ մը եւ մտածէ ասոր մասին. անիկա Ամենազօր Աստուծոյ ուրախութիւնը եւ գանձն է: Ապշեցուցիչ: Մենք շուտով աւելի խորունկը պիտի սուզուինք այդ հիանալի իրականութեան, բայց նախ ետ երթանք Սողոմոն Թագաւորին:

Ինչո՞ւ ուզեցի այս պատգամը սկսիլ անոր յաջողութեամբ, ձախողութեամբ եւ վերջ ի վերջոյ վերականգնումով: Ծառայութեանս առաջին քանի մը տարիներուն իմաստուն առաջնորդ մը ուշադրութիւն գրաւող խօսք մը ըսաւ, որ միտքս մնացած է տասնեակ տարիներէ ի վեր: Ան ըսաւ. «Ես ինձի համար սկզբունք ըրած եմ իշխանութեան դիրքի վրայ չդնել ոեւէ մէկը, որ ամէն բանի մէջ կատարեալ է»:

Երբ իրեն հարցուեցաւ, թէ ինչո՞ւ, պատասխանեց. «Ես մարդու մը նկարագրիին մասին աւելի բան կը գիտնամ ձախողութեան դիմաց անոր կեցուածքէն քան ուրիշ որեւէ բանէ: Կը նայիմ, թէ ան պատասխանատուութիւն վերցնո՞ց, զղջո՞ց եւ աճեցո՞ւ այդ փորձառութեան պատճառով: Կամ արդե՞օք ան փորձեց արդարացնել իր վարմունքը եւ ուրիշին վերագրել յանցանքը: Ատիկա ցոյց կու տայ, թէ ան ատմկ է պատասխանատուութիւն վերցնելու կամ ոչ»: Ատկէ սորված բանս հետեւեալն էր. *արիկա ցոյց կու տայ, թէ արդեօք անոր համար իմաստութիւնը ամէն բանէ վեր է կամ ոչ*:

Սողոմոն ամբողջական ձեւով չանդրադարձաւ աստուածային վախի արժէքին, հակառակ անոր որ ան սորվեցուց անոր մասին

Սուրբ Հոգիի ներշնչումով: Այդ պատճառով անոր համար կարելի եղաւ անկէ հեռանալը: Իր իյնալէն առաջ, աստուածային վախը անոր *գանձը* կամ *ուրախութիւնը* չէր. իր շարժառիթներուն եւ արարքներուն համար կայուն հիմ մը չէր: Սայթաքելով, սխալի մէջ իյնալով եւ վերջաւորութեան վերականգնելով, ան ատելի ամբողջական ձեւով ըմբռնեց անոր զօրութեան չափը:

Նոյնանման բան մը Պօղոս գրեց.

Ես կը սանձեմ մարմինս [...] եւ կ'ենթարկեմ զանիկա՝ վախնալով, որ ուրիշներուն Աւետարանը հոչակելէ եւ անոր հետ կապուած բաները խօսելէ ետք, ես ինքս անատակ ըլլամ [քննութենէն յաջողութեամբ չանցնիմ, չվաւերացուած մէկը ըլլամ եւ մերժուիմ իբրեւ խարդախ մէկը]: (Ա.Կորնթացիներուն 9.27)¹

Պօղոս հասկցաւ կարեւորութիւնը Աստուծոյ Հոգիին կողմէ իրեն վստահուած իմաստութիւնը արժեւորելուն եւ Սողոմոն Թագաւորին գործած ողբերգական սխալը չգործելուն: Պօղոսի յայտնուեցան Աստուծոյ ուխտի ծածուկ ճշմարտութիւնները, որոնք ազատագրեցին բազմութիւններ, բայց եթէ ան աստուածային *վախը* չտեսներ իբրեւ թանկարժէք բան մը եւ ամուր կերպով չկառչէր անոր, ինքն ալ վերջաւորութեան պիտի ըլլար անյոյս կասկածամիտ մը. անատակ, չվաւերացուած եւ մերժուած՝ իբրեւ խարդախ մէկը:

Աստուածային վախը իբրեւ մեր ամէնէն թանկարժէք գանձը ընդունիլը կը զօրացնէ մեզ, որ ենթարկուած մնանք ճշմարտութեան, եւ ատիկա ընելը մեզ կը պահէ կեանքի ճամբուն մէջ, ինչ որ մեծ վարձատրութիւններ կը բերէ մեզի:

Ժամանակի մը մէջ երբ մարդոց մեծ մասը վախը կը համարէ փասակար բան մը, *Տիրոջ վախը* օգտակար եւ արժէքաւոր արժանիք մը հոչակելը տրամաբանութեան հակառակ կը թուի: Սակայն Աստուածաշունչին իշխանութեան վրայ հիմնուելով, կը վստահեցնենք քեզի, որ երբ կ'ընդունինք զանիկա, պէտք եղած զօրութիւնը պիտի ունենանք կարենալ մնալու համար կեանքի ճամբուն մէջ: Հոն պիտի ունենանք փորձառութիւնը Աստուծոյ հետ ճշմարիտ մտերմութեան ինչպէս նաեւ կեանք փոխող օգուտներու՝ որոնցմէ ամէնէն կարեւորը Յիսուս Քրիստոսի պատկերին համաձայն փոխակերպուիլն է: Ուստի սկսինք Աստուծոյ ահը յայտնաբերելու մեր ճամբորդութեան:

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անկիլիֆայր Պայպըն, Քլասիք Էփիզըն* (AMPC) տարբերակէն

Անձնականացնել

Հատուած- Քու օրերուդ մէջ կայունութիւն պիտի ըլլայ, փրկութեան, իմաստութեան եւ գիտութեան առատութիւն: Տիրոջ հանդէպ մեծարական վախը եւ պաշտամունքը քու գանձդ է եւ Իրը: (Եսայիի 33.6)¹

Միտք- Սուրբ վախը Աստուծոյ գանձն է. պէտք է նաեւ մեր գանձը ըլլայ:

Խոկալ- Գործնական առումով ինչ երեսոյթ ունի սուրբ վախը արժեւորելը: Ինչպէս պէտք է մօտենամ անոր: Ինչպէս պէտք է վարուիմ անոր հետ: Ինչ պէտք է ընեմ, որ չկորսնցնեմ գանձիկա:

Աղօթք- Սիրելի Երկնաւոր Հայր, կը խնդրեմ, որ Տիրոջ վախը ճանչնալու այս ճամբորդութեան ընթացքին, ես ճանչնամ գանձիկա, անով ապրիմ եւ անով հրճուիմ: Թող անիկա ըլլայ իմ գանձս, ինչպէս որ է Քու գանձդ: Թող անիկա ինծի տայ այն իմաստութիւնը եւ գիտութիւնը, որոնք պէտք են՝ գոհունակ եւ յաջող կեանք մը ապրելու համար. կեանք մը, որ հաճելի է Քու աչքիդ: Նաեւ, թող անոնք, որոնք սիրելի են ինծի լուսաւորուին, եւ թող բոլոր անոնք, որոնք կը շփուին ինծի հետ ճանչնան անոր արժէքը: Ասիկա կը խնդրեմ Յիսուս Քրիստոսի՝ իմ Տիրոջս եւ Փրկիչիս անունով: Ամէն:

Դաւանութիւն- Ես կ'ընտրեմ արժեւորել սուրբ վախը իբրեւ կեանքի ամէնէն մեծ գանձը, եւ ատիկա ընելով, պիտի զօրանամ՝ մնալու համար լաւ կեանք մը ապրելու ճամբուն մէջ:

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անկիլիֆայր Պայպը, Քլասիք Էփիշոն (AMPC)* տարբերակէն

Ակնածիր Աստուծմէ,
այո՛, բայց մի՛
վախնար Անկէ:

– ՃՈՆ ԱԼՖՐԷՏ ՍՓԵՆՏԸՐ

2 | ՎԱԽԵՐՈՒ ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ

1994-ի ամառը ինձմէ խնդրուեցաւ ծառայել եկեղեցական խորհրդաժողովի մը Միացեալ Նահանգներու Հարաւարեւելքին մէջ: Մեծ համայնք մըն էր, որ երկու տարի առաջ ունեցած էր չորս օրուայ զարթնումի փորձառութիւն մը՝ համաշխարհային հոշակ ունեցող աւետարանիչի մը առաջնորդութեամբ: Այդ վերարթնութեան ընթացքին շեշտուած էին Աստուծոյ բարութիւնը, սէրը եւ երջանկութիւնը՝ գեղեցիկ ձեւով մը ազդեցութիւն բերելով շատ մը կեանքերու վրայ: Բայց ցաւալիօրէն, եկեղեցին խրուած մնացած էր այդ վերարթնութեան փորձառութեան մէջ եւ յառաջ չէր գացած՝ աւելի եւս ճանչնալու համար Աստուծոյ սիրտը: Հիմնականօրէն անոնք խրուած մնացած էին տեղի մը մէջ եւ հաւասարակշռութենէ դուրս էին:

Այդ օրերուն ես սուրբ վախը ճանչնալու ճամբորդութեան մը մէջ էի: Կը տեսնէի անոր կարեւորութիւնը, բայց տակաւին աճման մէջ էի եւ հետեւաբար կը վարանէի հանրութեան մէջ խօսելու այդ մասին: Ատով հանդերձ սիրտիս մէջ զօրաւոր մղում մը զգացի մէկ կողմ դնելու այդ մտավախութիւնս կամ վարանումս եւ խօսելու Տիրոջ վախին մասին առաջին գիշերուայ ծառայութեան ընթացքին:

Բեմ ելայ եւ սկսայ խօսիլ այդ համայնքին իմ սահմանափակ հասկացողութեամբս: Ինքնավստահութեանս շատ չօգնեց այն իրականութիւնը, որ մարդիկ երեսիս կը նայէին պաղ աչքերով, առանց որեւէ հակազդեցութեան: Այնպէս կը թուէր, որ խօսքերս խուլ ականջներու կը հանդիպէին: Եւ մէջտեղ ելաւ, որ ճիշդ էի, եւ ատոր պատճառը շուտով պիտի գիտնայի:

Յաջորդ երեկոյ պաշտամունքէն ետք գլխաւոր հովիւը բեմ ելաւ եւ մինչ կարծեցի, թէ ան սովորական ձեւով պիտի ծանօթացնէր զիս եւ

բեմ հրաւիրէր, իրականութիւնը բնաւ այդպէս չէր: Տասնհինգ վայրկեան տետողութեամբ ան սրբագրեց իմ մէկ օր առաջուայ խօսածներս: Ան ինքնավստահօրէն նշեց. «Տիրոջ վախը կիրարկելի էր միայն Հին Կտակարանի ժամանակին: Բայց՝ իբրեւ Քրիստոնէաներ, մեզի չէ տրուած «վախի հոգին»», ակնարկելով Բ.Տիմոթէոսի 1.7-ին:

Աստած էի առաջին շարքին վրայ ամբողջովին ցնցուած եւ այնպէս կը զգայի, որ կարծես մղձաւանջի մը մէջ էի: Որքան երկար խօսեցաւ, այդքան անհանգիստ դարձաւ մթնոլորտը: Ան շարունակեց. «Նոր Կտակարանին մէջ մեզի կ'ըսուի, թէ «Սէր ունեցողը վախ չունի, որովհետեւ կատարեալ սէրը ամէն վախ կը փարատէ» (Ա.Յովհաննէսի 4.18): Ուստի երէկ գիշեր ճոնի ուսուցանածը սխալ էր, եւ կ'ուզեմ պաշտպանել ձեզ անկէ»: Ասիկա ըսելէ ետք քանի մը վայրկեան եւս ժամանակ առաւ՝ սրբագրելու համար պատգամս:

Երբ ասարտեց, բեմ հրաւիրեց զիս՝ ծառայելու համար: Տակաւին կը յիշեմ ինչպէս բեմ ելայ եւ ես ինծի կը մտածէի. *Ինչպէս պիտի ծառայեմ ես այս մարդոց՝ հովիւին այդ ըրածէն ետք: Չեմ հաւատար, որ ասիկա կը պատահի ինծի հետք հիմա:* Բայց կը պատահէր, եւ ես պէտք էր ինքզինքս հաւաքէի մինչ իրապէս ուզածս այդտեղէն փախուստ տալ էր: Դժուար էր մէկ գաղափար պահելը միտքիս մէջ, ուր մնաց կեանք պարզետող պատգամ մը տալը խորհրդաժողովի ներկաներուն:

Երբ սկսայ խօսիլ, միտքս շարունակ կ'երթար հովիւին ըրած այդ սրբագրութեան. չէի կրնար թօթափել իր խօսքերը: Պատահածը թէ՛ անհաւատալի էր եւ թէ՛ սոսկալի: Խօսքիս մէջ քանի մը անգամ ստիպուած եղայ միտքերս հաւաքելու՝ գաղափարներու ճիշդ գիծին վրայ մնալու համար: Ետ կը մղէի զգացումներ, որոնք ինծի կ'ըսէին. *Մոռցիր, կանգ առ խօսելէն եւ դիրս ել:* Շատ դժուար կացութեան մը մէջ էի: Կարճ քարոզէ մը ետք, հովիւին յանձնեցի ամպիոնը, արագօրէն պանդոկ վերադարձայ եւ անկողին մտայ՝ բոլորովին շուարած եւ դուրս դրուած ըլլալու զգացումը ունենալով մէջս:

Յաջորդ առտու լուռ շինարարութեան վայր մը գտայ պանդոկիս քով. գործարարներ չկային հոն: Մեծ լրջութեամբ աղօթեցի՝ ակնկալելով Աստուծոյ յանդիմանութիւնը: Անկեղծօրէն հարցուցի. «Տէր, վնաս հասցուցի՞ եկեղեցիիդ: Սխալ ուսուցում մը տուի: Ես քու ժողովուրդդ կապանքի տակ դրի»:

Շարունակեցի աղօթել որոշ ժամանակ մը, եւ մինչ կ'աղօթէի, խօսքերս սկսան փոխուիլ: Սկսայ չկասկածիլ պատգամիս վրայ եւ սկսայ բռնն կերպով հասկացողութիւն խնդրել սուրբ վախի մասին: Ատիկա սիրտիս խորերէն եկող խնդրանք մըն էր, եւ կը զարմանայի եղածներով: Ես Աստուծոյ դժգոհութիւնը չզգացի, այլ ընդհակառակը՝ զգացի, որ գոհ էր իմ ըրածովս: Ան սկսաւ յիշողութեանս մէջ դնել մեծ թիւով համարներ Նոր Կտակարանէն

ինչ կը վերաբերի Տիրոջ վախին: Ժամանակի ընթացքին տեսայ, որ այլևս շփոթի մէջ չէի, այլ՝ բարձր, կրակոտ ձայնով մը կ'աղաղակէի. «Հայր, կ'ուզեմ գիտնալ Տիրոջ վախը, կ'ուզեմ քալել անոր մէջ»:

Նոր Կտակարանը գրողները իրապէս գրած են այն բառերը, զորս հովիւր մէջբերեց, բայց նաեւ ըրած են ուրիշ հաստատումներ.

- Պօղոս Առաքեալ կը գրէ. «Գործադրեցէք ձեր փրկութիւնը՝ *ահով ու դողով*» (Փիլիպպեցիներուն 2.12, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹:
- Դարձեալ, ան կը թելադրէ. «Սիրելիներ, այս խոստումները ունենալով՝ մաքրէնք մենք մեզ մարմինի ու հոգիի ամէն տեսակ պղծութենէ, եւ կատարելագործենք սրբացումը *Աստուծոյ վախով*» (Բ.Կորնթացիներուն 7.1, շեշտադրումը՝ մեր կողմէ)²:
- Եբրայեցիներուն դրկուած նամակը գրողը կ'ըսէ. «Թող ունենանք շնորհք, որով կրնանք ծառայել Աստուծոյ ընդունելի ձեռով մը՝ *մեծարանքով եւ աստուածային վախով*» (12.28, շեշտադրումը՝ մեր կողմէ)³:
- Պետրոս Առաքեալ կը գրէ. «Եթէ «Հայր» կը կոչէք ան՝ որ անաչառ կերպով կը դատէ իւրաքանչիւրը իր գործերուն համաձայն, *աստուածավախութեամբ* ապրեցէք ձեր պանդխտութեան տարիները» (Ա.Պետրոսի 1.17, շեշտադրումը՝ մեր կողմէ):
- Յուդա Առաքեալ կը հռչակէ. «Փրկեցէք ուրիշները, *վախով* յափշտակելով զանոնք կրակէն» (հմր 23, շեշտադրումը՝ մեր կողմէ)⁴:
- Իսկ Յիսուս մեզի կը թելադրէ. «Մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն հոգին չեն կրնար սպաննել: Բայց դուք վախցէք մանաւանդ անկէ, որ կրնայ թէ հոգին եւ թէ՛ մարմինը կորուստի մատնել դժոխքին մէջ» (Մատթէոսի 10.28):

Կրնամ տակաւին շարունակել, եւ վստահաբար պիտի շարունակեմ մինչ կը յառաջանանք, բայց յուսամ հասկցաք ըսելիքս. *Սուրբ վախը* Նոր Կտակարանի ճշմարտութիւն մըն է: Ասոնք միայն այն կարգ մը համարներն են, զորս Տէրը սիրտիս մէջ դրաւ երբ կ'աղօթէի:

1 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանում, 2001

2 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանում, 2001

3 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիւ Քինկ Ճէյմզ Վրրժըն* (NKJV) տարբերակէն

4 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանում, 2001

Այդ առտու անդրադարձայ, որ հովիւը շփոթած էր «վախի հոգի»ին եւ «Տիրոջ վախ»ին միջեւ: Կայ մեծ տարբերութիւն, եւ անիկա կ'երեւի այն պատմութեան մէջ երբ Մովսէս Իսրայէլի ժողովուրդը առաջնորդեց Սինա Լեռը՝ Աստուծոյ հետ հանդիպելու համար:

Երբ ամբողջ ժողովուրդը հասաւ, Մովսէս լեռ ելաւ սկզբնական անձնական հանդիպումի մը համար: Ամենակարողը կը յայտնէ նպատակը Իր հզօր ձեռքով Իսրայէլը ազատագրելուն:

Սմայէս խօսէ Յակոբի տան, եւ հաղորդէ Իսրայէլի որդիներուն.
«Դուք տեսաք ինչ որ ըրի եգիպտացիներուն, ինչպէս ձեզ արծիւի թելերուն վրայ կրեցի ու *քովս բերի*»: (Ելքի 19.3-4, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Գլխաւոր պատճառը Աստուծոյ այդ հզօր ձեռքով ազատագրումին *ամբողջ ժողովուրդը* Իրեն բերելն էր: Ան զանոնք կը փափաքէր եւ կ'ուզէր հանդիպիլ անոնց հետ, որպէսզի իրենք ալ զինք ճանչնային ինչպէս Մովսէս կը ճանչնար: Սակայն երեք օր ետք երբ Աստուած կ'իջնէ լեռան վրայ՝ Ինքզինք ծանօթացնելու համար, ժողովուրդը անմիջապէս ետ կը քաշուի: Սարսափահար՝ անոնք Մովսէսին կ'աղաղակեն. «Դուն խօսէ մեզի հետ, ու մտիկ ընենք. բայց Աստուած թող չխօսի մեզի հետ, որպէսզի չմեռնինք» (Ելքի 20.19): Զանոնք մխիթարելու նպատակով, անոնց ղեկավարը կը պատասխանէ. «Մի՛ վախնաք. որովհետեւ Աստուած եկաւ ձեզ փորձարկելու, որպէսզի *անոր վախը ձեր առջեւ ըլլայ* ու չմեղանչէք» (Ելքի 20.20, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Առաջին նայումը այնպէս կը թուի, թէ Մովսէս ինքզինք կը հակասէ. «Մի՛ վախնաք», որովհետեւ Աստուած եկած է, որպէսզի «անոր վախը ձեր առջեւ ըլլայ»: Արդեօք ան խօսքը կը փոխէ եւ շփոթ կը ստեղծէ: Պատասխանը «Ոչ» է: Մովսէս պարզապէս կը զանազանէ «Աստուծմէ վախնալուն կամ սարսափելուն» եւ «Տիրոջ վախ»ին միջեւ: Դարձեալ, այդ երկուքին միջեւ հսկայ տարբերութիւն կայ:

Ան, որ կը վախնայ Աստուծմէ, պահելիք բան մը ունի: Յիշենք, որ պարտէզին մէջ երբ Ադամ մեղք գործեց, ինքը եւ Եւան պահուլտեցան Տիրոջ ներկայութենէն: Միայն անոնք չէին, որ այդպէս վարուեցան. ամբողջ Աստուածաշունչին մէջ այդ ձեւի վարմունք կը տեսնենք անոնց կողմէ, որոնք խաւար ճամբաներու մէջ կը պտտին:

Սակայն այն անձը, որ Աստուծոյ վախը ունի, պահելիք բան մը չունի: Ան կը սարսափի Աստուծմէ հեռու ըլլալէն: Ատիկա կը տեսնենք այն իրականութեան մէջ, որ երբ ժողովուրդը ետ քաշուեցաւ, Մովսէս աւելի՛ եւս մօտեցաւ Աստուծոյ: Այն անձը, որ Աստուծոյ վախը ունի,

ինքն իր մէջ չ'ըսեր. «Ո՞րքան կրնամ մօտենալ մեղքի գիծին եւ չիյնալ մեղքի մէջ»: Ոչ: Ան կ'ըսէ. «Կ'ուզեմ այնքան մօտիկ ըլլալ Աստուծոյ եւ այնքան հեռու այդ գիծէն, որ չկարենամ նոյնիսկ տեսնել զանիկա»:

Ուստի նախքան սուրբ վախը սահմանելը եւ անոր օգուտներուն մասին խօսիլը, նախ յստակացնենք, թէ անիկա ինչ չէ: *Անիկա Աստուծմէ վախնալ կամ սարսափիլ չէ եւ հեղեալաբար Անկէ ետ քաշուիլ*: Ինչպէս կրնանք մտերմութիւն ունենալ մէկու մը հետ, որմէ կը վախնանք: Աստուծմէ ետ քաշուիլը ճիշդ հակառակն է Անոր փափաքածին: Սաղմոսներուն մէջ կը կարդանք. «Երբ ըսիր. “Երեսս փնտռեցէք”, իմ սիրտս քեզի ըսաւ. “Քու երեսդ պիտի փնտռեմ, ո՛վ Տէր”» (27.8): Կը լսեմ մտերմութեան կանչը: Ան կ'ուզէ, որ Իրեն մօտենաս, յարաբերիս Իրեն հետ, խնդաք միասին, բաժնեկցիք իրարու հետ եւ կեանքի մէջ միասին քալէք: Սաղմոսողը նաեւ կը գրէ. «Տէրոջ մտերմութիւնը իրմէ վախցողներուն հետ է» (25.14): Հաստատուն իրականութիւնը հետեւեալն է. Աստուած կ'ուզէ մօտիկ եւ մտերիմ ըլլալ քեզի հետ: Ուստի վստահ եղիր, որ սուրբ վախը չի մարեր մտերմութիւնը: Անիկա ճիշդ հակառակը կ'ընէ. կը բարելաւէ Աստուծոյ հետ մեր յարաբերութիւնը:

===== Անձնականացնել =====

Հատուած- «Մի՛ վախնաք. որովհետեւ Աստուած եկաւ ձեզ փորձարկելու, որպէսզի անոր վախը ձեր առջեւ ըլլայ ու չմեղանչէք»: (Ելքի 20.20)

Միտք- Սուրբ վախը Աստուծմէ վախնալը կամ սարսափիլը չէ եւ Իրմէ ետ քաշուիլը: Անիկա Աստուծմէ հեռու մնալէն սարսափիլն է:

Խոկալ- Ինչ էր Եգիպտոսէն Իսրայելը ազատելու Աստուծոյ գլխաւոր նպատակը: Ինչ է աշխարհի կապանքներուն ստրկութենէն զիս ազատելու Աստուծոյ գլխաւոր նպատակը:

Աղօթք- Սիրելի Երկնաւոր Հայր, շնորհակալութիւն Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւ զիս վախի հոգիէն ազատելուդ համար: Կը խնդրեմ, որ մէջս դնես սուրբ վախը, որպէսզի քեզի դէմ մեղք չգործեմ, որովհետեւ ատիկա կը գրկէ զիս այն մտերմութենէն, զոր կ'ուզես ունենալ ինծի հետ եւ ես կ'ուզեմ ունենալ Քեզի հետ: Ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Աստուած կանչած է զիս Իրեն հետ մտերիմ ըլլալու համար, ուստի ես չեմ վախնար Աստուծմէ, բայց կը փափաքիմ Իր վախը ունենալ, որպէսզի չմեղանչեմ:

Աստուծոյ վախը ունենալը
առաջին եւ մեծագոյն
Պարտականութիւններէն
մէկն է իր բանական
Արարածներուն:

– Չարլզ Ինկլիս

3 | ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՎԱԽԸ

Անկարելի է սահմանել սուրբ վախը մեկ նախադասութիւնով, պարբերութիւնով կամ մեկ գլուխի մէջ: Ատիկա ընելը տարբեր չէ նոյն սահմաններուն մէջ Աստուծոյ ամբողջ լայնութիւնը բացատրել փորձելէն: Ատիկա ընելը գլուխներ պիտի պահանջէ, եւ նոյնիսկ այդ ատեն մեր հասկացողութիւնը բաւարար պիտի չըլլայ: Իրականութեան մէջ, կը հաւատամ, որ մենք ամբողջ յաւիտենականութեան ընթացքին շարունակ պիտի յայտնաբերենք թէ՛ սուրբ սիրոյ եւ թէ՛ սուրբ վախի խորութիւնները:

Ատիկա յստակացնելէ ետք, կ'ուզեմ առաջարկել սուրբ վախի սահմանումի ընդհանուր նախագիծ մը: Փորձէ յիշել մանկութիւնդ երբ քեզի ներկելու գիրք եւ ներկեր կու տային: Գիրքը կը բանայիր, էջ մը կ'ընտրէիր եւ հոն կը գտնէիր գծագրութիւն մը, որուն պարապ տեղերը պիտի ներկէիր: Նոյն ձեւով ալ, այս գլուխը մեզի պիտի տայ սահմանները, սակայն գիրքին մնացեալ գլուխներով է, որ պիտի ներկենք պարապ տեղերը: Եթէ միայն կարդայիր այս գլուխը, միայն ընդհանուր գաղափար մը պիտի ունենայիր սուրբ վախի մասին, բայց պիտի գրկուէիր անոր փոխակերպող ճշմարտութիւններէն:

Նախորդ գլուխին մէջ ըսինք, որ Տիրոջ վախը մեզ ետ չի պահեր Աստուծոյ ներկայութենէն, այլ՝ ճիշդ հակառակը: Լաւ եւ հրաշալի վախը մեզ աւելի կը մօտեցնէ Անոր, եւ այս ամուր հիմը հաստատելը կենսական է նախքան մեր շարունակելը:

Ոմանք կ'ըսեն, թէ Տիրոջ վախը միայն կը նշանակէ՝ մեծարական ձեւով պաշտել զԱստուած: Ես ճիշդ այդ բառերը լսած եմ հանրաձայնօք հովիւներէ՝ իրենց ամպիոններէն, ինչպէս նաեւ

խօսակցութիւններու ընթացքին եւ առաջնորդներու հետ ճաշի սեղաններու շուրջ: Այդ սահմանումը պարզապէս սկիզբ մըն է, եւ շատ հեռու է ամբողջական պատկերէն: Նոյնը պիտի ըլլար պարագան եթէ Աստուծոյ սէրը սահմանէինք իբրեւ միայն «համբերատար եւ քաղցր» (Ա.Կորնթացիներուն 13.4): Բայց եթէ հող կանգ առնենք, պակաս կ'ըլլայ սահմանումը եւ բոլորովին սխալած կ'ըլլանք:

Երբ Լիսան եւ ես քառասուննոցի սկիզբներն էինք, մեծապէս յարգուած ղեկավարի մը փեսան մեր տունը այցելեց՝ իր ընկերութեան մէջ ներդրում ընելու առիթի մը մասին բաժնեկցելու համար մեզի հետ: Քանի մը ժամ խօսեցանք, եւ ես որոշակիօրէն կը յիշեմ անոր քաղցրութիւնն ու համբերատարութիւնը մեզի հանդէպ: Եթէ տեսնէիր անոր վարմունքը, դուն ալ պիտի հաստատէիր, թէ ան սիրալիր մարդ մըն էր: Սակայն քանի մը օր այդ մասին աղօթելէ ետք, Լիսան եւ ես մղում չզգացինք ներդրումը ընելու: Հիմա, տարիներ ետք, ուրախ եմ, որ չըրինք, որովհետեւ ան երկար տարիներ անցուց բանտին մէջ՝ զեղծարարութեան պատճառով:

Ան համբերատար եւ քանդոր էր: Վստահաբար այո: Սիրոյ մէջ կը քալէր: Վստահաբար ոչ: Ինչո՞ւ: Որովհետեւ Աստուածաշունչը մեզի կ'ըսէ. «Քանի որ սա՛ է Աստուծոյ սէրը.– պահել անոր պատուիրանները» (Ա.Յովհաննէսի 5.3)¹: Գողնալը անձնասէր արարք մըն է, եւ կը խախտէ Աստուծոյ սիրոյ պատուիրանը (տես Եփեսացիներուն 4.28): Մանուկ բռնաբարող մը կրնայ քաղցր մէկը ըլլալ, եւ նոյնիսկ համբերատար՝ միեւնոյն ատեն կործանելով փոքր անձի մը կեանքը: Ան կը սիրէ այդ պզտիկը: Անշուշտ ոչ...

Նոյնպէս ալ սուրբ վախը միայն մեծարական պաշտամունքի մէջ սահմանափակելը կրնայ պատճառ դառնալ, որ ճիշդ չհասկնանք եւ սխալ ճամբով ընթանանք: Ուստի հիմա գծենք նկարին գիծերը եւ յետոյ կը ներկենք նկարը՝ յառաջիկայ գլուխներուն մէջ մեր առնելիք ուսուցումներով եւ տեսնելիք աստուածաշնչական օրինակներով ու պատմութիւններով: Նախքան մեր սկսիլը կ'ուզեմ զգուշացնել, որ սուրբ վախը սահմանելու ատեն պիտի լսես բառեր, որոնք կրնան վախցնել քեզ, բայց կը վստահեցնեն, որ իրականութիւնը հակառակն է: Մնա՛ այս պատգամին հետ մինչեւ վերջ եւ պիտի տեսնես, որ սուրբ վախը սիրոյ եւ պաշտպանութեան նուէր մըն է մեր Ստեղծիչէն, որ խորապէս կը հոգայ մեզի եւ կը փափաքի մեզ:

Կան շատ մը Նոր Կտակարանի համարներ, որոնցմով կրնանք սկսիլ, բայց կը հաւատամ, որ ասով սկսիլը ամէնէն յարմարն է.

¹ Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Երբայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

Հետեւաբար՝ քանի որ կը ստանանք թագաւորութիւն մը, որ անսասանելի է, թող ունենանք շնորհք, որով կրնանք ծառայել Աստուծոյ ընդունելի կերպով՝ *ականածանքով* եւ *աստուածային վախով*: Քանի որ մեր Աստուածը սպառող կրակ է: (Եբրայեցիներուն 12.28–29, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Եթէ ուշադիր ըլլաս, պիտի տեսնես, որ երկու վերագրումներ կան. *ականածանք* եւ *աստուածային վախ*: Ասիկա անմիջապէս ցոյց կու տայ, որ աստուածային վախը կարելի չէ սահմանափակել միայն ականածանքին մէջ: Եթէ այդպէս ըլլար, նամակը գրողը ինքզինք կրկնաձ ապիտի ըլլար երկրորդ բառը գործածելով: Ասոնք ոչ միայն երկու տարբեր բառեր են անզլերէնի մէջ, այլեւ երկու տարբեր բառեր են յունարէնի մէջ եւս. *այտոն* եւ *իվանայես*:

Ակնածանքը գերազանց թարգմանութիւնն է առաջին յունարէն բառին: *Քոմպիլթ Ուրրոյ Սթապի Տիքշընըրի* բառարանը *ականածանքը* կը սահմանէ իբրեւ՝ «խորունկ երկրպագութիւնով, ահով յարգանք»: Սիրեցի այդ չորս բառերուն քով քովի գրուիլը: Երբ կանգ առնենք եւ իւրաքանչիւրին մասին մտածենք, մեր հասկացողութիւնը կը բարձրանայ ուրիշ մակարդակի մը:

Երկրորդ եզրը՝ աստուածային վախ, կը նշանակէ՝ *ահ*: *Ահի* սահմանումին համար նայեցայ *Նոահ Ուեպսթըրոյ Տիքշընըրի* բառարանի 1828–ի նախնական հրատարակութեան մէջ եւ ահա թէ ինչ գտայ. «Վախ, սոսկում՝ ներշնչուած մեծ եւ ահաւոր բանէ մը. վախով եւ ականածանքով լեցուած ըլլալ: Ազդեցութիւն բանեցնել վախով, սոսկումով կամ յարգանքով»: Մի՛ մտահոգուիր *սոսկում* կամ *սարսափ* բառերով: Հակառակ անոր որ յունարէն բառարանը եւս կը գործածէ այդ բառերը, յիշէ՛, որ սուրբ վախը ունի դէպի Աստուած քաշող եւ ոչ թէ Աստուծմէ վանող ազդեցութիւն մը: Ուստի պէտք է հարց տանք. Արդեօք այդ բառերը ունին դրական եւ առողջ երես մը: Կը հաւատամ, որ Աստուածաշունչը ցոյց կու տայ, որ ունին, եւ ասիկա պիտի տեսնենք մինչ գոյն կ'աւելցնենք մեր նկարին վրայ յետագային:

Սկսինք թուել մեր սահմանումները: Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ *ականածիլ* եւ ամբողջական *ահ* ունենալ Անոր հանդէպ:

Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ *սրբաբանել* զԻնք: *Սրբաբանելը* կը սահմանուի իբրեւ՝ «մեծապէս յարգել»:

Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ մեծարել, յարգել, պատուել, պաշտել զԻնք եւ պատկառանք ցոյց տալ Իրեն ամէն մարդէ եւ ամէն բանէ աւելի:

1 Բառացի թարգմանութիւն՝ անզլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* (NKJV) տարբերակէն

Երբ կը վախնանք Աստուծմէ, Իր սիրտը կ'առնենք մեր մէջ: Կը սիրենք այն ինչ որ Ինք կը սիրէ, եւ կ'ատենք այն ինչ որ Ինք կ'ատէ: (Նկատի առ, որ չըսինք «չհանի») այն ինչ որ Ինք կ'ատէ. այլ՝ «ատել» այն ինչ որ Ինք կ'ատէ:) Այն ինչ որ կարելոր է Իրեն համար, կարելոր կը դառնայ մեզի համար եւս: Այն ինչ որ այդքան կարելոր չէ Իրեն համար, մեզի համար ալ այդքան կարելոր չ'ըլլար:

Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ ատել մեղքը:

Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ ատել անարդարութիւնը:

Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ հեռանալ չարէն ամէն իմաստով. խորհուրդով, խօսքով եւ գործով: Կը նշանակէ՝ ետ կենալ խաբէական խօսքերէ: Կը նշանակէ՝ չըսել բան մը կամ չծեւացնել ըլլալ բան մը, որ կեղծ է անձին սիրտին եւ խորհուրդներուն: Կը նշանակէ՝ մեր արտաքին վարմունքը համապատասխանեցնել մեր ներքին խորհուրդներուն, շարժառիթներուն եւ համոզումներուն:

Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ քալել իսկական խոնարհութեան մէջ՝ Աստուծոյ առջեւ եւ մարդոց:

Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ Անոր տալ այն փառաբանութիւնը, երկրպագութիւնը, երախտագիտութիւնը եւ պաշտամունքը, որոնց արժանի է Ան:

Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ Իրեն տալ այն ամէնը, որ կը պատկանի Իրեն:

Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ դողալ Անոր առջեւ հիացմունքի եւ ահի մէջ: Կը նշանակէ՝ Իր Խօսքին եւ ներկայութեան տալ մեր ամբողջական ուշադրութիւնը:

Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ հնազանդիլ Անոր: Ատիկա միայն փափաք մը չէ, այլ՝ ներքին ոյժ մը, որ կը մղէ մարդը Իր կամքը կատարելու, ինչ գինով ալ որ ըլլայ ատիկա: Մենք եռանդով, պատրաստակամօրէն եւ անմիջապէս կը հնազանդինք, նոյնիսկ եթէ օգուտ մը չտեսնենք ըսուածին մէջ կամ տրամաբանական չըլլայ ատիկա, եւ կ'ընենք պատուիրուածը մինչեւ կատարում:

Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ հրաժարիլ որեւէ ձեւի գանգատէ, մրմռալէ կամ դժգոհութենէ:

Աստուծմէ վախնալ կը նշանակէ՝ յարգել, պատուել եւ ենթարկուիլ Անոր ուղղակի եւ յանձնարարուած իշխանութեան: Նաեւ կը նշանակէ՝ հնազանդիլ յանձնարարուած իշխանութեան,

միակ բացառությունը ըլլալով այն, որ եթէ այդ իշխանությունը մեզի կ'ըսէ, որ մեղք գործենք:

Տիրոջ վախը կը ձեւակերպէ մեր մտադրությունները, խորհուրդները, բառերը եւ արարքները:

Հիմա թուենք սուրբ վախի օգուտներուն մէկ մասը: Ահա բազմաթիւ աստուածաշնչական խոստումներէն ոմանք՝ տրուած անոնց, որոնք կը քալեն անոր մէջ:

Տիրոջ վախը մեկնակէտն է Աստուծոյ հետ մտերիմ յարաբերութեան մը: Մենք կը դառնանք Անոր բարեկամները, եւ Ան Իր գաղտնիքները կը բաժնեկցի մեզի հետ:

Տիրոջ վախը իմաստութեան, հասկացողութեան եւ գիտութեան սկիզբն է: Անիկա կու տայ կանխատեսութիւն եւ յստակ աստուածային ուղղութիւն:

Տիրոջ վախը այն միջոցն է, որով կ'աճինք մեր փրկութեան մէջ եւ կը փոխակերպուինք Յիսուսի պատկերին համաձայն:

Տիրոջ վախը մաքուր է. անիկա ճշմարիտ սրբութիւն կ'արտադրէ մեր կեանքին մէջ:

Տիրոջ վախին մէջ մնալը յափտենական ամանդ ապահովել է:

Տիրոջ վախը կ'արտադրէ ինքնավստահութիւն, անվախութիւն եւ ապահովութիւն: Անիկա կը կլլէ միւս բոլոր վախերը՝ ներառեալ մարդոց վախը:

Տիրոջ վախը մեզի կու տայ ինքնութիւն, մեզ արդիւնաւէտ կը դարձնէ եւ կը լիազօրէ մեզ՝ բազմապատկուելու համար:

Տիրոջ վախը կը հայթայթէ հրեշտակային օժանդակութիւն, կատարուած փափաքներ, յարատեւ յաջողութիւն, ազնուականութիւն, ազդեցութիւն, երկայնակեցութիւն, արդիւնաւէտ օրեր, կեանքի մէջ վայելք, ուրախութիւն, աշխատանքի մէջ հաճոյք, մեր մարմինին համար բժշկութիւն եւ շատ անելի:

Տիրոջ վախը յափտեան կը մնայ. անիկա բնաւ պիտի չմարի: Տիրոջ վախը թանկարժէք նուէր մըն է մեր Երկնաւոր Հօրմէն:

Անձնականացնել

Հատուած- Հետեւաբար՝ քանի որ կը ստանանք թագաւորութիւն մը, որ անասանելի է, թող ունենանք շնորհք, որով կրնանք ծառայել Աստուծոյ ընդունելի կերպով՝ ակնածանքով եւ աստուածային վախով: Քանի որ մեր Աստուածը սպառող կրակ է: (Եբրայեցիներուն 12.28-29)¹

Միտք- Տիրոջ վախը սիրել է այն ինչ որ Աստուած կը սիրէ եւ ատել այն ինչ որ Աստուած կ'ատէ: Այն ինչ որ կարելոր է Իրեն համար, կարելոր կը դառնայ մեզի համար եւս: Այն ինչ որ այդքան կարելոր չէ Իրեն համար, մեզի համար ալ այդքան կարելոր չ'ըլլար:

Խոկալ- Գործնապէս ինչ տեսք ունի ամէն մարդէ եւ ամէն բանէ ատելի զԱստուած մեծարելը, յարգելը, պատուելը, զԱյն պաշտելը եւ Անոր հանդէպ պատկառանք ցոյց տալը:

Աղօթք- Սիրելի Երկնաւոր Հայր, կը խնդրեմ, որ սորվեցնես ինձի, որ վախնամ Քու անունէդ, Խօսքէդ, ներկայութենէդ եւ Քու ո՛վ ըլլալէդ: Թող սիրեմ սուրբ վախը եւ հաճոյք ստանամ անկէ: Սուրբ Հոգի, մինչ կը շարունակեմ այս ճամբորդութիւնը, սորվեցուր ինձի եւ հաղորդէ մէջս Աստուծոյ ձեւերը. թող կարդացածներս սոսկ տեղեկութիւններու ազդեցութիւն չունենան վրաս, այլ՝ թող խօսքերը փոխակերպեն կեանքս մեր Տէր Յիսուս Քրիստոսի պատկերին համաձայն: Ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Թող խօսքերս եւ սիրտիս խորհուրդները հաճելի ըլլան Աստուծոյ աչքին:

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* (NKJV) տարբերակէն

Անոր ամբողջ նկարագիրը
մեզմէ ակնածանք կը
պահանջէ, որովհետեւ անիկա
գերադասօրէն սուրբ է, եւ
իր անունը մեզի համար
ահ պատճառող խօսք մըն
է, որ երբեք պէտք չէ նշուի
անխորհուրդ կերպով եւ երբեք
պէտք չէ մէջբերուի առանց
լուրջ խորհուրդի եւ անոր առջեւ
սիրտի երկրպագութեան:

– ՉԱՐԼՁ ՀԱՏԸՆ ՍՓԸՐՃԸՆ

4 | ԱՍՏՈՒԾՈՅ ՇՕՇԱՓԵԼԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս նախապէս նշեցինք, Աստուծոյ վախը տրամաբանութեան հակառակ կը թուի ըլլալ: Երբ *վախ* բառը կը լսենք, մեր միտքը զանհկա կը կապէ վնասակար բանի մը հետ: Բայց կը վստահեցնենք քեզ, որ Աստուծոյ վախը իրականութեան մէջ մեծագոյն ոյժն է ինքնավստահութեան, մխիթարութեան եւ պաշտպանութեան, որ տրամադրուած է որեւէ էակի տիեզերքի մէջ: Մենք այդ ճշմարտութիւնը պիտի յայտնաբերենք մինչ կը շարունակենք մեր ճամբորդութիւնը: Բայց նախ եւ առաջ, սուրբ վախը կրնայ բաժնուիլ երկու գլխաւոր դասակարգումներու.

1. *Դողալ Աստուծոյ ներկայութեան մէջ, եւ*
2. *Դողալ Անոր Խօսքին դիմաց*

Երկուքին մասին ալ պիտի խօսինք, բայց եկէք սկսինք լուսարձակի տակ առնելով առաջինը: Սաղմոսողը կը հռչակէ. «Աստուած *յոյժ զարհուրելի* է սուրբերուն խորհրդաժողովին մէջ, եւ *ահեղ* է բոլոր շուրջը եղողներուն մէջ» (Սաղմոսներու 89.7, շեշտադրումը՝ մեր կողմէ): Նկատի առ, որ միայն չ'ըսեր «զարհուրելի» է, այլ՝ «*յոյժ*» զարհուրելի: Ահա՛ հաստատուն ճշմարտութիւն մը. բնաւ պիտի չգտնես Աստուծոյ հրաշալի ներկայութիւնը մթնոլորտի մը մէջ, ուր Ան չի մեծարուիր եւ ահով չի դիմաւորուիր:

Ես այդ ճշմարտութիւնը ճանչցայ 1997-ի Յունուարին: Հրաւիրուեցայ Պրագիի մայրաքաղաքը՝ երկրի բոլոր կողմերէն հաւատացեալներու

մասնակցութեամբ տեղի ունենալիք խորհրդաժողովի մը ընթացքին ծառայելու համար: Շատ խանդավառ էի առաջին անգամ ըլլալով այդ աղուոր երկիրը այցելելու այդ առիթին համար:

Օդանաւը առտու կանուխ իջաւ Պրագիլ, եւ ամբողջ ցերեկը ունէի սենեակիս մէջ աղօթելու, պատրաստուելու եւ հանգստանալու: Երեկոյեան մինչ ինքնաշարժով ծառայութեան վայր կ'երթայինք, նկատեցի, որ ճամբաները լեցուն էին ինքնաշարժներով: Ակնկալուածին համաձայն, կառատունը լեվ-լեցուն էր՝ ինչ որ նշան էր, որ խորհրդաժողովի ներկաներուն թիւը շատ մեծ պիտի ըլլար:

Ծառայողներու ընկերակցութեամբ հասայ մարզադաշտ, եւ քանի մը առաջնորդի հետ հանդիպելէ ետք, ուղղակի բեմ ելայ: Սքանչացած էի այն իրականութեամբ, որ զԱստուած պիտի պաշտէի՝ իմ ակնկալութեանս համաձայն, հազարաւոր Աստուծոյ ներկայութեան անօթի հաւատացեալներու հետ: Սակայն խանդավառութիւնս երկար չտեսց, տրուած ըլլալով, որ շուտով նկատեցի, որ Աստուծոյ ներկայութիւնը բացակայ էր մթնոլորտէն: Շուարած էի. ասիկա հաւատացեալներու խորհրդաժողով մըն էր, եւ պաշտամունքի խումբը երկրի լաւագոյններէն մէկն էր: Ուստի ինչո՞ւ Աստուծոյ ներկայութիւնը հոն չէր:

Նախքան շարունակելս, Աստուծոյ ներկայութեան մասին քանի մը բան յստակացնեմ: Աստուածաշունչը կը խօսի երկու տեսակի մասին: Առաջինը Անոր ամենուրեքութիւնն է: Դաւիթ կը վկայէ. «Ո՛ր երթամ քու Հոգիդ, եւ քու ներկայութենդ ո՞ր փախչիմ: Եթէ երկինք ելլեմ, դուն հոն ես, եթէ դժոխքը տարածեմ անկողինս, ահա՛ դուն հոն կը գտնուիս [...] Իսաւրն ալ քեզի համար մութ չէ [...]» (Սաղմոսներու 139.7–8,12): Ա՛յս է Աստուծոյ ներկայութիւնը, որ կը խոստանայ՝ «Բնան երեսի վրայ պիտի չձգեմ եւ պիտի չլքեմ քեզ» (Եբրայեցիներուն 13.5):

Երկրորդ տեսակը կը ճանչնանք Յիսուսի հետեւեալ խօսքէն. «Ես ալ պիտի սիրեմ զայն եւ ինքզինքս *յայտնեմ* անոր» (Յովհաննէսի 14.21, շեշտադրումը՝ մեր կողմէ): *Յայտնեմ* բառը յունարէն *էմֆանիզօ* բառն է, որ կը նշանակէ՝ «յայտնի դարձնել... արտօնել, որ անձը մտերմօրէն ճանչցուի եւ հասկցուի»: Ատիկա կը պատահի երբ Աստուած Ինքզինք կը յայտնէ մեր միտքին եւ զգայարանքներուն: Յիսուս ըսաւ. «Ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուին իմ անունովս, ես հոն եմ՝ անոնց միջեւ» (Մատթէոսի 18.20): Յստակ է, որ Ան չի խօսիր Աստուծոյ ամենուրեք ներկայութեան մասին, որովհետեւ այդ պարագային ինչո՞ւ պէտք պիտի ունենար այդ խօսքը ըսելու: Ան կը խօսի Աստուծոյ յայտնուող ներկայութեան մասին: Այդ ներկայութիւնը բացակայ էր այդ մարզադաշտին մէջ այդ գիշեր: Խորապէս գիտակից այդ իրականութեան, աչքերս գոցեցի եւ Սուրբ Հոգիին հարցուցի. *Ո՛ր է Քու ներկայութիւնդ*:

Աչքերս բացի եւ անմիջապէս անդրադարձայ բանի մը, որ վրիպած էր ինձմէ, բայց հիմա արդէն բացայայտ էր: Ներկաներուն մեծ մասը պաշտամունքին չէր մասնակցեր: Ոմանք ձեռքերը գրպաններուն մէջ կամ ծալուած կուրծքին վրայ իրենց շուրջը կը դիտէին անտարբեր կամ ձանձրացած վիճակով: Կիներ իրենց պայուսակներուն մէջ բաներ կը փնտռէին: Շատեր պարզապէս կը ճեմէին մարգարայտին մէջ կամ կ'երթային ուտելիք գնելու կրպակներէն: Մեծ թիով ներկաներ կը խնդային եւ կը խօսէին իրենց շուրջիներուն հետ: Անոնց վարմունքը տարբեր չէր վարմունքէն ամբոխի մը, որ կը սպասէ, որ ելոյթը սկսի: Ես ինձի մտածեցի. *Վստահաբար շուրջով ասիկա պիտի դադրի եւ մարդիկ պիտի մասնակցին պաշտամունքին:* Բայց այդպէս չեղաւ:

Ի զարմանս ինձի, երբ պաշտամունքի երգերը դադրեցան եւ առաջնորդներէն մէկը ելաւ Աստուծոյ Խօսքէն կարդալու, ոչինչ փոխուեցաւ, բացի անկէ, որ հիմա որ երաժշտութիւն չկար, կրնայիր լսել իրարու հետ խօսակցութեան մէջ եղող մարդոց մրմոռալը: Չէի հաւատար տեսածիս եւ սկսած էի բարկանալ:

Ապա լսեցի Սուրբ Հոգիին փսփսուքը սիրտիս մէջ. *Կ'ուզեմ, որ ուղղակիօրէն խօսիս այս հարցին մասին:*

Երբ ներկայացուցին զիս, ոտքի ելայ եւ քալեցի դէպի ամպիոն՝ թարգմանիչս կողքիս: Որոշեցի բան մը չըսել, այլ՝ պարզապէս աչքերս սեւեռել ներկաներուն: Եզրակացուցի, որ միակ կարելի ձեւը բոլորին ուշադրութիւնը գրաւելու բեմին վրայ բոլոր գործունէութիւններուն դադրիւն էր: Յաջողեցաւ այդ ձեւ: Լման մէկ վայրկեանի լռութիւնը բոլորին ուշադրութիւնը գրաւեց: Մարդոց շարժումները դադրեցան, գլուխները դէպի բեմ դարձան եւ մթնոլորտին մէջ լռութիւն տիրեց: Նկատեցի, որ բոլորին աչքերը վրաս էին:

Պատգամս չսկսայ՝ «Շատ ուրախ եմ Պրագիլի մէջ ըլլալովս» կամ «Շնորհակալ եմ ձեր հրաւերին համար»ով: Ոչ ալ ինքզինքս ծանօթացուցի: Փոխարէնը, խստօրէն հարցուցի հետեւեալ հարցումը. «Պիտի ուզէիք, որ մինչ դուք սեղանին շուրջ ձեր դիմացը նստած մէկու մը հետ կը խօսիք, ան անտեսէ ձեզ, առաստաղին սեւեռէ անտարբերութեամբ կամ իր քովինին հետ խօսակցութիւն ունենայ»:

Պահ մը լռութենէ ետք, ես իմ հարցուցած հարցումիս պատասխանեցի. «Պիտի չսիրէիք ատիկա, չէ՞»:

Տակաւին անելի եւս խորացայ. «Հապա եթէ ամէն անգամ, որ դրացիիդ դուռը զարնես, քեզ դիմաւորեն անտարբեր նայուածքով մը եւ ձանձրոյթ արտայայտող ձայնով մը ըսեն. “Հան դուն ես”: Պիտի շարունակէիր այդ տունը այցելել»:

Դարձեալ, պահ մը լուռ մնալէ ետք, պատասխանեցի. «Անկարելի է»:

Ապա ըսի. «Կը կարծէ՞ք, որ տիեզերքի Թագաւորը Իր ներկայութիւնը պիտի յայտնէ կամ խօսի վայրի մը մէջ, ուր չէ պատուուած եւ մեծարուած»:

Այս անգամ կարծորէն պատասխանեցի հարցումիս, ըսելով. «Երբեք»: Շարունակեցի. «Եթէ ձեր երկրի նախագահը կեցած ըլլար այս բեմին վրայ, ան պիտի ստանար ձեր ամբողջական ուշադրութիւնը եւ յարգանքը: Կամ եթէ ձեր նախասիրած *ֆուբայոլ* խաղցողներէն մէկը հոս կեցած ըլլար, մեծամասնութիւնդ ձեր նստարաններուն ծայրը նստած պիտի ըլլայիք խանդավառութեամբ լեցուն՝ անհամբեր սպասելով ամէն բառի, որ պիտի խօսէր: Սակայն մինչ Աստուծոյ Խօսքը կը կարդացուէր քանի մը վայրկեան առաջ, ուշադրութիւն չդարձուցիք. կարծես անհետաքրքրական աղմուկ մըն էր»: Եւ յաջորդ ինիսուն վայրկեանը ես անոնց խօսեցայ Տիրոջ վախին մասին: Եթէ ասեղ իյնար, ձայնը կը լսուէր այդ մարգարաշտին մէջ: Այնպէս կը թուէր, որ անոնք քիչ մը ցնցուած էին ըսածներուս պատճառով, բայց կարեւորը ուշադրութեամբ մտիկ կ'ընէին: Երբ խօսքս աւարտեցի, ապաշխարութեան կոչ ուղղեցի. «Եթէ հաւատացեալ ես բայց չունիս սուրբ վախը եւ կ'ուզես ապաշխարել, ոտքի ել»:

Առանց վարանումի, ներկաներուն 75 տոկոսը ոտքի ելաւ: Քանի մը վայրկեանի մէջ, նախքան անոնց հետ աղօթելու, Աստուծոյ յայտնուող ներկայութիւնը լեցուց մարգարաշտը: Մարդիկ սկսան հեծկլտալ եւ լալ մինչ Աստուծոյ հրաշալի ներկայութիւնը դպաւ իրենց կեանքերուն: Սուրբ վախը ետ չկեցուց զիրենք Աստուծմէ. այլ՝ աւելի մօտեցուց զիրենք Աստուծոյ:

Ատկէ ետք տեղի ունեցածը ամէնէն հոյակապ փորձառութիւններէն մէկն էր, որ ունեցած եմ քառասուն տարուայ ծառայութեանս ընթացքին: Բայց նախքան որ այդ պատմութիւնը պատմեմ, այս բաժինը փակենք հետեւեալ բառերով.

Մինչ անոր խօսքերուն ձայնը կը լսէի՝ *թմրած ինկայ* երեսիս վրայ, երեսս դէպի գետին: Եւ ահա՛ ձեռք մը դպաւ ինծի, զիս *ցնցեց*, եւ ծունկերուս ու ձեռքերուս ափերուն վրայ դրաւ: Ապա ինծի ըսաւ. «Ո՛վ Դանիէլ, *սիրելի մարդ*, ըմբռնէ՛ քեզի ըսելիք խօսքերս եւ կայնէ՛ եղած տեղէդ, քանի հիմա քեզի դրկուեցայ: Երբ այս խօսքը ինծի ըսաւ, *դողալով* կայնեցայ»: (Դանիէլի 10.9-11, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Դանիէլ սիրելի մարդ էր Աստուծոյ համար, սակայն ատով հանդերձ ան ցնցուեցաւ եւ գետին ինկաւ: Նոյնիսկ երբ օգնութիւն

ստացաւ, որ գետինէն ելլելով ծունկերուն վրայ կենար եւ ապա ոտքի ելլէր, ան կը դողդղար այդ ամբողջ ժամանակը: Եթէ ատիկա պատահեցաւ պատգամաբերի մը՝ հրեշտակի մը ներկայութեան մէջ, ինչ պիտի պատահի երբ Ինքնին Աստուած գայ:

Անձնականացնել

Հատուած- Աստուած յոյժ զարհուրելի է սուրբերուն խորհրդաժողովին մէջ, եւ ահեղ է բոլոր շուրջը եղողներուն մէջ: (Սաղմոսներու 89.7)

Միտք- Մենք Աստուծոյ յայտնուող ներկայութիւնը պիտի գտնենք միայն մթնոլորտի մը մէջ, ուր Անոր հանդէպ ծայրագոյն յարգանք կայ:

Խոկալ- Ինչ կը նշանակէ դողալ Աստուծոյ ներկայութեան մէջ: Ինչպէս կ'ընեն ատիկա գործնապէս իմ առանձնութեանս մէջ, երբ բարեկամներու հետ եմ, երբ հանրային վայրի մը մէջ եմ, երբ եկեղեցոյ պաշտամունքի ծառայութեան կը մասնակցիմ:

Աղօթք- Սիրելի Երկնաւոր Հայր, ներողամտութիւնդ կը խնդրեմ այն ժամանակներուն համար երբ պաշտամունքի մթնոլորտի մը մէջ մտած եմ սովորական, անկապ կեցուածքով մը: Կը զղջամ Քու ներկայութիւնդ պարզի առնելուս համար, անոր հետ սովորական բանի մը պէս վարուելուս համար: Թող Յիսուսի արիւնը մաքրէ զիս: Կը խոնարհեցնեմ անձս Քու առջեւ՝ խնդրելով շնորհքդ որպէսզի փոխուիմ: Ես կ'ուզեմ գիտակցիլ Քու ներկայութեանդ ո՛ր որ ալ ըլլամ կամ ինչ ալ ընելու վրայ ըլլամ եւ յարգել զանիկա: Կ'ուզեմ ապրիլ Քեզի հանդէպ մեծարական ահի մէջ ամէն ժամանակ: Ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Ես միշտ ամբողջական ուշադրութիւն պիտի տամ Աստուծոյ Խօսքին եւ պիտի պատուեմ Անոր ներկայութիւնը ամէն բանի մէջ, որ կ'ըսեմ եւ կ'ընեմ:

Նախքան աղօթելդ,
ջանա՛նք անդրադառնալ, թէ
Որով ներկայութեան կը
մօտենաս եւ Որով հետ պիտի
խօսակցիս՝ ի մտի ունենալով,
թէ Որով կը դիմես խօսքերդ:

– ՍՐԲՈՒՀԻ ԹԵՐԵԶԱ ԱԻԻԼԱՅԻ

5 | ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԵՐԵԿՈՅ ՄԸ

Մարկոսի Աւետարանը կը վկայէ աշակերտներուն հետ Տիրոջ գործակցութեան մասին. «Եւ իրենց քարոզութիւնը կը հաստատուէր իրենց տրուած բոլոր նշաններով» (Մարկոսի 16.20): Այդ գործակցութիւնը սկսաւ Յիսուսի երկինք համբարնալէն ետք, եւ Նոր Կտակարանին մէջ ոչ մէկ տեղ մեզի կ'ըսուի, թէ անիկա պիտի դարձի նախքան Անոր երկրորդ գալուստը:

Վերադառնանք Պրագիլի մէջ այդ երեկոյին: Երբ զոջումի կոչ ուղղեցի ներկաներուն Աստուծոյ հանդէպ ակնածանքով չվարուելնուն համար, ներկաներուն 75 տոկոսը ոտքի կեցաւ: Ես իմ գլուխս խոնարհեցուցի եւ բարձրաձայն աղօթեցի. «Տէր Աստուած, հաստատէ այս գիշեր հոչակուած Խօսքը»:

Քանի մը երկվայրկեան ետք սկսայ ժողովուրդին մէջ հեծկտոցի ձայներ լսել: Յաջորդ քանի մը վայրկեաններուն, Աստուծոյ ներկայութեան ալիք մը լեցուց մթնոլորտը՝ թարմացնելով եւ մաքրելով սիրտերը ներկաներուն: Այդ մթնոլորտին վերցուելէն ետք իսկ, հրաշալի խաղաղութիւն մը հանգչած կը մնար այդ վայրին մէջ:

Ներկաները բերանացիօրէն ներողութիւն չէին խնդրած կամ աղօթք մը ըրած, սակայն Աստուծոյ ներկայութիւնը եկաւ՝ անոնց սիրտերուն մէջ տեղի ունեցած փոփոխութեան պատճառով: Յետագային երբ այդ մասին մտածեցի, անդրադարձայ, որ անառակ որդիին հայրը չսպասեց, որ իր որդին ներողութիւն խնդրէր վազելով անոր քով երթալէն առաջ: Ո՛չ: Որդիին սիրտին մէջ տեղի ունեցած փոփոխութիւնն էր եւ ատոր իբրեւ արդիւնք անոր տուն վերադառնալու քայլը, որ հօրը խանդավառ փաթթուկին եւ

համբոյրին արժանացուցին որդին: Կարծես նոյնը պատահած էր այդ մարգադաշտին մէջ այդ գիշեր:

Յատուկ պահ մը կ'ապրէինք. ներկաները մեծարական լռութեան եւ փափկասրտութեան մը մէջ էին: Յարմար զգացի իրենց ապաշխարութեան աղօթք առաջարկելու, եւ զանազանութեան ծիրքի պէտք չկար ճանչնալու համար, թէ անոնց բառերը անկեղծ էին եւ սրտանց: Աղօթքէն քանի մը երկվայրկեան յետոյ Աստուծոյ յայտնուող ներկայութեան ուրիշ ալիք մը լեցուց մարգադաշտը: Անգամ մը ես կը լսէի հեծկտոցներ եւ լալու ձայներ ներկաներուն մէջ, բայց այս անգամ ասելի շատ էին անոնք: Շատ գեղեցիկ էր այդ ներկայութիւնը, եւ սակայն դարձեալ վերցուեցաւ քանի մը վայրկեան ետք:

Ես երախտապարտ էի այն թարմացումին համար, զոր բոլորս զգացինք՝ Աստուծոյ խաղաղաբեր եւ հրաշալի ներկայութեան այդ երկու դրսեւորումներուն ընթացքին: Բոլորս ալ ակնկալութեան վիճակի մը մէջ մնացինք մինչ աստուածային հանդարտութիւն մը թափանցեց մթնոլորտէն ներս: Այդ հանդարտութեան մէջ լսեցի Աստուծոյ Հոգին կը փսփսար սիրտիս. *Անգամ մը ես պիտի յայտնուիմ:*

Բարձրաձայն ըսի սիրտիս մէջ լսածս, սակայն ոչ մէկս գիտէինք, թէ ինչ պիտի պատահէր ատկէ ետք: Տարբեր ներկայութիւն մը պիտի հանդիպէր մեզի շուտով: Դժուար է բաժնեկցիլ պատահածին մասին, քանի որ բառերը բաւարար չեն զանիկա նկարագրելու համար: Այն ինչ որ պիտի գրեմ կրնայ անհաւանական թուիլ, նոյնիսկ անիրական, բայց ահա քսան տարի ետք, բազմաթիւ մարդիկ հաստատած են այդ վայրին մէջ պատահածը:

Պատկերացուր, որ կեցած ես անտառի մը մէջ երբ զօրաւոր փոթորիկ մը կը փչէ: Կը լսես հովին բարձր սուլոցի ձայնը ծառերուն մէջ քու վերեւը: Ատոր կը նմանէր ձայնը այն հովին, որ փչեց մարգադաշտին մէջ: Չէինք կրնար զգալ զայն, բայց կը լսէինք: Գրեթէ նոյն ատեն ներկաները սկսան ջերմեռանդօրէն աղօթել եւ աղաղակել: Անոնց ձայները կ'որոտային, բայց հովին ձայնը ասելի բարձր էր քան անոնց ձայները: Ես ցնցուած էի, ահի մէջ էի եւ գրեթէ սարսափած Անոր ներկայութենէն: Չէի կրնար շարժիլ, չէի կրնար խօսիլ, եւ փշաքաղուած էր ամբողջ մարմինս: Մթնոլորտին մէջ կար իշխանութիւն մը, որուն նմանին բնաւ չէի հանդիպած: Մտածեցի. *Ասիկա Աբբա, Հայր Աստուծոյ ներկայութիւնը չէ, այլ՝ սուրբ, ահաւոր եւ հզօր Թագաւորին ներկայութիւնն է:*

Հովին ձայնը տեսց շուրջ ինիսուն երկվայրկեան: Մինչ անիկա աստիճանաբար մարեցաւ, իր ետին ձգեց լացող մարդիկ, ոմանք ուշաթափ, ուրիշներ փլած իրենց դիմացի նստարաններուն վրայ:

Բայց բոլորս ալ կը դողայինք ահով: Այդ հանդիսաւոր հետագայ ազդեցութիւնը շարունակուեցաւ շուրջ տասը վայրկեան եւ: Չէի կրնար խօսք մը խօսիլ: Բոլորս ալ անշաժ եւ լուռ էինք: Ատկէ ետք ծառայութիւնը յանձնեցի պատասխանատու ղեկավարին, եւ ինծի տարին ինքնաշարժ՝ մեկնելու համար:

Այդ գիշերուայ երգչուհին եւ իր ամուսինը ինքնաշարժ ելան ինձմէ քանի մը վայրկեան ետք: Անմիջապէս ան ըսաւ. «Լսեցի՞ր հովին ձայնը»:

Ես չուզեցի ըլլալ այն անձը, որ կը հաստատէր հովին ձայնը: Ուզեցի ուրիշ մէկը հաստատէր պատահածը: Ուստի պատասխանեցի. «Թերեւս ցածէն թռչող ճէթ օդանաւ մըն էր, որ մեր վրայէն կ'անցնէր»: (Այդ մարգարայտին վերի պատին եւ տանիքին միջեւ բացութիւն կար՝ դաշտը օդատուն պահելու համար: Այդ պատճառով դուրսէն եկած ձայները ատի թարծր կը լսուէին քան ուրիշ ատի գոց կառոյցի մը մէջ:)

Ան նստած էր ինքնաշարժին առջեւի նստարանին վրայ, ետեւ դարձաւ զարմացած նայուածքով մը եւ կրակոտ կերպով պատասխանեց. «Ո՛հ, անիկա Աստուծոյ Հոգին էր»:

Ամուսինը, որ ատի լուռ մարդ մըն էր, միջամտեց, ըսելով. «Ատիկա ճէթ օդանաւ չէ՛ր»:

Հարցուցի. «Ինչպէս գիտէք»:

Ան պատասխանեց. «Մարգարայտին դուրսը կային ոստիկաններ եւ ապահովութեան պաշտօնեաներ, որոնցմէ շատերը անհաւատ էին: Երբ լսեցին հովին ձայնը, վազելով ներս եկան եւ մեր անձնակազմին հարցուցին, թէ ինչ էր այդ բարձր հովի ձայնը, որ մարգարայտէն կ'ելլէր: Առաւել, ես ձայնի կառավարման սենեակն էի (ան հոն էր, որպէսզի վստահ ըլլար, որ ձայնի համակարգը լաւ կը գործէր իր կնոջ երգեցողութեան ընթացքին) եւ ոչ մէկ ձայն կու գար ձայնի համակարգին ընդմէջէն: Ձայնի կառավարման գործիքը ոչ մէկ նօթ կ'արձանագրէր այն ատեն երբ հովը կը փչէր»:

Կինը շարունակեց՝ արցունքները այտն ի վար հոսեցնելով. «Ես տեսայ կրակի ալիքներ, որոնք կը թափէին շէնքին մէջ, եւ ամէն տեղ հրեշտակներու ներկայութիւնը կը զգայի»:

Խնդրեցի, որ ուղղակի պանդոկ տանէին զիս: Լուռ էինք ինքնաշարժին մէջ: Այդ գիշեր ես ժամերով նստայ սենեակիս պատշգամբը, եւ միակ բանը, որ կրնայի ընել զԱստուած պաշտելն էր: Մէջս չէի կրնար պարփակել այդ օրուան պատահածը:

Յաջորդ առտու երբ մտանք մարգարայտ, մթնոլորտը ամբողջովին տարբեր էր: Աստուծոյ յայտնուած ներկայութիւնը, որ իր ազդեցութիւնը ունեցած էր մեր վրայ մէկ գիշեր առաջ, տակաւին երեւելի էր: Աստուծոյ վախը վերականգնուած էր մարդոց սիրտերուն

մէջ, եւ անոնք կը վայելէին Անոր ներկայութիւնը եւ օրհնութիւնները հրաշալի ձեւով մը:

Ինչպէս արդէն ըսինք, շատեր հաստատած են այդ գիշեր պատահածները եւ բաժնեկցած են մեզի հետ իրենց կեանքին վրայ անոր ունեցած ազդեցութիւնը նամակով, ե-նամակով եւ անձնապէս: 2016-ին, այցելեցի Պրագիլի Կոյանիա քաղաքը՝ խօսելու համար տասներկու հազար առաջնորդներու: Զիս հիւրընկալող հովիւին առաջին խօսքերը ինծի՝ մինչ ձեռքս կը թօթուէր, հետեւեալներն էին. «Քսան տարի առաջ ես ներկայ էի Պրագիլիայի ծառայութեան երբ հովը փչեց: Կեանքս նոյնը չէ եղած ատկէ ի վեր»: Ան առաջնորդ մըն է եկեղեցական ցանցի մը մէջ, որ տասնվեց տարուայ մէջ աճած է ունենալու 300 հազար անդամ:

Երբ կինս Պրագիլ այցելած էր 2019-ին՝ խորհրդաժողովի մը ընթացքին ծառայելու համար, տարբեր շարժումի մը առաջնորդներէն մէկը ըսած էր, թէ ինքն ալ ներկայ եղած էր այն ծառայութեան, ուր հովը փչած էր աւելի քան քսան տարի առաջ: Ան ալ ըսած էր, թէ իր կեանքը յափտենապէս փոխուած էր այդ օրուրնէ ի վեր:

Աստուծոյ ներկայութեան մէջ ըլլալը շատ կարեւոր է ամէն հաւատացեալի հոգեւոր առողջութեան համար: Կար հանգրուան մը երբ աղօթքի ժամանակ Աստուծոյ ներկայութեան մտնելը դժուար էր ինծի համար: Բայց օր մը գրեթէ պատահաբար սկսայ ընել բան մը: Որոշեցի աղօթքի ժամանակս սկսիլ ոչ թէ երգելով կամ խօսքեր խօսելով, այլ՝ պարզապէս խոկալով մեր Աստուծոյ հրաշալիութեան եւ սրբութեան մասին: Գրեթէ անմիջապէս Իր ներկայութիւնը հանդիպեցաւ ինծի: Յաջորդ օրը որոշեցի դարձեալ նոյն բանը ընել եւ նոյն արդիւնքը ստացայ: Եւ երրորդ օրը, նորէն նոյնը եղաւ:

Շուարած էի: Հարցուցի. «Տէր, ինչո՞ւ վերջին երեք օրերուն այդքան դիւրին եղաւ ինծի Քու ներկայութեանդ մէջ մտնելը»:

Լսեցի, որ Աստուծոյ Հոգին ըսաւ. *Յիսուս Իր աշակերտներուն ինչպէս աղօթել սորվեցուց:*

Սկսայ միտքէս ըսել Տէրունական աղօթքը. «Հայր մեր, որ երկինքն ես, սրբաբանուի Քու անունդ»: Պոռացի. «Գիտցայ: Յիսուս Իր աշակերտներուն սորվեցուց, որ Աստուծոյ ներկայութեան գան սուրբ ահով եւ ակնածանքով»: Եւ հասկցայ եղածը:

Դաիթ կը հաստատէ այդ ճշմարտութիւնը, երբ կ'ըսէ. «Քու վախովդ պիտի երկրպագեմ քու սուրբ տաճարիդ մէջ» (Սաղմոսներու 5.7, շեշտադրումը՝ մեր կողմէ): Աստուած մեր Հայրն է, Յիսուս մեր Տէրը եւ Փրկիչն է եւ Աստուծոյ Հոգին մեզ շատ կը սիրէ: Բայց նաեւ յիշէ, որ Նոր Կտակարանին մէջ Աստուած կը կոչուի՝ «լափող կրակ»

(Եբրայեցիներուն 12.29): Յիսուսի յայտնութիւնը Յովհաննէսին պատճառ դարձաւ, որ Յովհաննէս՝ սիրելի առաքեալը, որ ամէնէն մօտիկն էր Իրեն, մեռելի պէս իյնար անոր ոտքերուն առջեւ (տես Յայտնութիւնը 1.17), եւ Աստուծոյ Հոգին է, որ Աստուծոյ զօրութիւնը կը դրսեւորէ՝ ամբողջ քաղաքի մը ուշադրութիւնը գրաւելու համար (տես Գործերը 2), շէնքեր շարժելու համար (տես Գործերը 4) եւ ուրիշ հրաշալի գործեր ընելու համար:

Ահա՛ եզրափակիչ ճշմարտութիւնը. *հոն, ուր Տէրը կը մեծարուի, Անոր ներկայութիւնը կը յայտնուի:*

===== Անձնականացնել =====

Հատուած– Ես ձեզի հետ եղայ տկարութեամբ, ահով ու շատ դողով. եւ իմ խօսքս ու քարոզութիւնս՝ ո՛չ թէ մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերով էին, հապա՛ Հոգիին եւ զօրութեան ապացոյցով. որպէսզի ձեր հաւատքը ըլլայ ո՛չ թէ մարդոց իմաստութեամբ, հապա՛ Աստուծոյ զօրութեամբ: (Ա.Կորնթացիներու 2.3–5)

Միտք– Տիրոջ վախը մթնոլորտներ կը փոխէ: Անիկա մթնոլորտ մը կը մշակէ, ուր Սուրբ Հոգիին զօրութիւնը կը փոխէ մեր եւ ուրիշներու կեանքերը:

Խոկալ– Արդեօք ես կ'ակնկալեմ Աստուծոյ ներկայութեան եւ զօրութեան յայտնուիլը եւ կը հաւատամ անոր: Աղօթքի կեանքս ինչպէս պիտի փոխուի երբ սուրբ ահով մօտենամ Իրեն: Ինչպէս կրնամ ապրիլ այդ փոփոխութիւնը:

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, եթէ ես արգելք եղած եմ Քու ներկայութեանդ յայտնուելուն անցեալի փորձառութիւններու պատճառով կամ ազդուած եմ Քու ընելիքներուդ վերաբերեալ ուրիշներու սահմանափակումներէն, ներողամտութիւնդ կը խնդրեմ: Ես Քու ներկայութեանդ պիտի մտնեմ սուրբ ահով եւ ոչ մէկ արգելք դնեմ Քու առջեւ: Կը խնդրեմ, որ Քու զօրութիւնդ յայտնելու մէջ աւելին ընես քան իմ խնդրածս, մտածածս կամ յուսացածս: Կը խնդրեմ, որ ատիկա ընես փառաւորելու համար իմ Տէր Յիսուսս եւ որպէսզի ծառայեմ իմ ազդեցութեանս աշխարհին մէջ գտնուող մարդոց: Ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն– Ամէն բան կարելի է եթէ ես միայն հաւատամ եւ մօտենամ Աստուծոյ սուրբ վախով:

Երբ զի՛նք տեսնենք դէմ առ դէմ՝
Իր ամբողջ հրաշալի սրբութեան
Եւ բոցավառ փառքին մէջ,
անհաւատալի պիտի թուի մեզի,
որ երբեւէ անփոյթ խորհուրդ
մը ունեցած ենք Իրեն հետ
Կապուած:

– ՃՕՅ ՏՈՍԸՆ

6 | ՏԵՍՆԵԼ ՁԻՆՔ

Մեր սուրբ վախը կ'աճի Աստուծոյ մեծութեան նկատմամբ մեր հասկացողութեան հետ համեմատաբար: Սակայն իրականութիւնը այն է, որ՝ «Անոր մեծութիւնը անհետազօտելի է» (Սաղմոսներու 145.3), որովհետեւ անոր փառքը հասկացողութենէ անդին է: Անոր փառքը անքննելի է, չունի սահմաններ, չունի սահմանափակումներ եւ անբաղդատելի է: Ատով հանդերձ մենք պէտք է ջանանք ւաւելցնել մեր հասկացողութիւնը:

Այն տարին, որ Յուդայի Ոգիա Թագաւորը մեռաւ, շուրջ Ն.Ք. 742 թուականին, Եսայի մարգարէն երկինք յափշտակուեցաւ: Ան տեսաւ Տէրը նստած Իր գահին վրայ, մեծապէս բարձրացած, Իր ամբողջ փառքին մէջ: Անոր հոյակապութիւնը լեցուցած էր ամբողջ վայրը, որ շատ հաւանաբար կրնար ընկալել ւաւելի քան մէկ միլիառ էակ:

Եսայի ոչ միայն սքանչացած էր Ստեղծիչով եւ յուզուած, այլեւ ան շատ սիրեց Սերովբէ կոչուած հզօր հրեշտակները, որոնք կը գտնուէին Աստուծոյ գահին վերեւ: Այդ ահ պատճառող էականերուն շրթունքներէն Եսայի լսեց հետեւեալը.

«Սուրբ, սուրբ, սուրբ է զօրքերու Տէրը. ամբողջ երկիրը անոր փառքով լեցուն է»: (Եսայիի 6.3)

Շատերս ծանօթ ենք «Սուրբ, Սուրբ, Սուրբ» անունով հին օրհներգին, որ կը պարունակէ ճիշդ այդ բառերը եւ գրուած է 1800-ականներուն Ճոն Պաքուս Տայքսի կողմէ: Անիկա միշտ երգուող կրկներգ մը դարձած է եկեղեցիին մէջ վերջին երկու հարիւր

տարիներուն, եւ հետեւաբար՝ պիտակուած իբրեւ պաշտամունքի մեղմ մեղեդի մը: Սակայն ատիկա շատ հեռու է Եսայիի տեսածէն:

Այդ հսկայ էակները մեղմ, քաղցր երգ մը չեն երգեր, որպէսզի Աստուած Ինքզինք լաւ զգայ: Այլ՝ անոնք կը հակազդեն իրենց տեսածին: Աստուծոյ մեծութեան թարմ, նոր երեսները շարունակ կը յայտնաբերուին, եւ միակ բանը, որ անոնք կրնան ընել՝ «Սուրբ, սուրբ, սուրբ» գոչել է:

Սերովբէները երեք անգամ չեն կրկներ «սուրբ» բառը: Երբ եբրայեցի գրող մը, ինչպէս Եսային, ուզէր շեշտել բառ մը, անիկա երկու անգամ կը գրէր: Ատիկա կը տեսնենք Յիսուսի հետեւեալ խօսքին մէջ եւս. «Չկարծէք, թէ ով որ ինծի “Տէր, Տէր” կ’ըսէ, երկինքի արքայութիւնը պիտի մտնէ» (Մատթէոսի 7.21): Եթէ Մատթէոսը ըլլայիր, որ նստած Յիսուսի մտիկ կ’ընէիր, պիտի նկատէիր ինչպէս անոր ձայնը կը բարձրանար *Տէր* բառը ըսելու ատեն: Իր այդ շեշտը արտացոլացնելու համար, Մատթէոս երկու անգամ գրած է այդ բառը: Անգլերէն լեզուին մէջ մենք հաստ գիր կը գործածենք կամ շեղակի կը գրենք այն բառը, զոր կ’ուզենք շեշտել:

Շատ հազուադէպօրէն եբրայեցի գրող մը շեշտ դնելու համար երեք անգամի կը դիմէ: Իրականութեան մէջ անիկա միայն քանի մը անգամ կը տեսնենք Աստուածաշունչին մէջ: Ատիկա այդ բառին բարձրագոյն աստիճանի շեշտ կու տայ: Իր էութեան մէջ, այդ հրեշտակներուն ձայները կ’որոտան այն աստիճան, որ կը շարժին այդ հսկայ վայրի սեմերուն հիմերը [անգլերէն թարգմանութեան համաձայն՝ դրանդիքները- Թարգմանիչ]:

Երբ ընտանիքով Ֆլորիտա փոխադրուեցանք, գիտցանք, որ տուները ստորահակեր չունէին՝ ընդատակեայ ջուրին բարձր ըլլալուն պատճառով: Մեր տունը շինողը մեզի ըսաւ. «Եթէ փոթորկահով մը սպառնայ շրջանին, ներքին սենեակներէն մէկուն դրանդիքներուն տակը կեցէք, քանի որ ամէնէն կայուն բաժինն է այս կառոյցի»: Գլխէ վեր բան մըն է, որ Եսայի ճիշդ այդ դրանդիքներուն մասին կը խօսի, ըսելով, որ անոնք կը շարժին այդ երկնային հսկայ վայրին մէջ: Ուրեմն ամբողջ կառոյցն էր, որ կը դրոդար այդ հզօր հրեշտակներուն գոչումներէն:

Ինչ էր Եսայիի կեցուածքը Տիրոջ փառքը տեսնելուն դիմաց: Ան չըսաւ. «Օ՛, Տէրը հոն է»:

Ո՛չ: Ան աղաղակեց. «Վայ ինծի, ահա՛ կը կորսուիմ, որովհետեւ ես պիղծ շրթունք ունեցող մարդ մըն եմ» (Եսայիի 6.5): Նկատի առ այն իրականութիւնը, որ ասիկա բարեպաշտ մարդ մըն է՝ մարգարէ մը, մէկը, որ իր գիրքի նախորդ գլուխին մէջ աղաղակեց. «Վայ անոնց, որոնք չարին բարի կ’ըսեն եւ բարիին՝ չար, վայ անոնց, որոնք հպարտ

են, վայ անոնց, որոնք գինով են»: (Եսայիի 5.20–22, հեղինակին բառերով): Սակայն հիմա՝ մէկ գլուխ ետք, մէկ ակնարկ Աստուծոյ մեծութեան վրայ եւ անոր աղաղակը այլեւս «վայ մեղաւորներուն» չէ, այլ՝ «վայ ինծի, ահա՛ կը կորսուիմ» է (Եսայիի 6.5): Ան կը կարծէր, թէ կը ճանչնար զԱստուած, բայց հիմա անելի գիտակից է Ամենազօր Աստուծոյ ով ըլլալուն: Ան նաեւ լաւ գիտէ, թէ ինք ով է այդ սուրբ Աստուծոյ առջեւ: Ինչ էր արդիւնքը այդ հանդիպումին: Անոր սուրբ վախը քանի մը մակարդակ անելցաւ:

Աստուածաշունչին մէջ նոյնանման կեցուածքներ կը տեսնենք մարդոցմէ, որոնք կը տեսնեն Տէրը Իր փառքին մէջ: Յօբը, օրինակի համար: Ամենակարողը անոր մասին կ'ըսէ. «Իմ ծառայիս՝ Յօբի ուշադրութիւն դարձուցի՛ր: Երկրի վրայ անոր պէս պարկեշտ եւ ուղիղ, աստուածավախ եւ չարութենէ հեռացող մարդ չկայ» (Յօբի 1.8): Կրնան պատկերացնել, որ Աստուած ատիկա կ'ըսէ քեզի եւ ինծի համար: Մենք ուրախութենէն վեր վար պիտի ցատկէինք: Եւ սակայն այդ մարդը կը հանդիպի Աստուծոյ փառքին եւ կ'աղաղակէ. «Ես քու համբաւդ ականջովս լսեր էի, բայց հիմա աչքս կը տեսնէ քեզ: Ուրեմն իմ անձս կ'անարգեմ» (Յօբի 42.5–6):

Իսկ Եզեկիէլը... Ան տեսաւ Տէրը եւ գրեց. «Ասիկա Տէրոջ փառքին նմանութեան երեւոյթն էր. երբ տեսայ, երեսիս վրայ գետին ինկայ» (Եզեկիէլի 1.28):

Ինչ կրնանք ըսել Աբրահամի մասին: Կը կարդանք, որ երբ զԱստուած տեսաւ՝ «Աբրամ իր երեսին վրայ ինկաւ» (Ծնունդներու 17.3):

Երբ Աստուած փառաւոր կերպով յայտնուեցաւ Սինա Լեռան վրայ, «Ա'յնքան ահաւոր էր տեսարանը, որ Մովսէս ալ կ'ըսէր. *“Զարհուրանքէս կը դողամ”*» (Եբրայեցիներուն 12.21):

Յովհաննէս՝ այն առաքեալը, զոր Յիսուս կը սիրէր, կը գրէ մեր փառաւորեալ Յիսուսի հետ իր հանդիպումին մասին. «Երբ տեսայ, մեռելի նման ինկայ անոր ոտքերուն առջեւ» (Յայտնութիւնը 1.17):

Վերի օրինակներու ցանկը ամբողջական չէ անշուշտ: Մեծաթիւ նոյնանման դէպքեր կան արձանագրուած Աստուածաշունչին մէջ:

Եկեղեցւոյ անելի նոր պատմութեան մէջ, շուրջ 1266–ի եւ 1273–ի միջեւ Թոմըս Աքրոյայնըս կը գրէր «Սումմա Թէոլոգիէ»ն, զոր կը համարէր իր ամէնէն կարեւոր գործը: Բայց օր մը ան ունեցաւ Աստուծոյ հետ հանդիպում մը, որ այնքան հզօր էր, որ յաւիտենապէս փոխեց իր ամբողջ տեսակէտը, եւ ան ամբողջութեամբ դադրեցուց գրելը: Իր բարեկամը՝ Ռեճինըլտ պնդեց, որ ան շարունակէր, բայց Աքրոյայնըս պատասխանեց. «Իմ աշխատանքիս վերջը հասած է: Բոլոր գրածներս կը թուին հարթ ըլլալ ինծի յայտնուածէն ետք»:

Իսրայէլի պատմութեան մէջ ատեն մը Աստուած կը փորձէ բարձրացնել Իր ժողովուրդին սուրբ վախի մակարդակը՝ անոնց կարճ, որոշակի հարցումներ հարցնելով: Եսայի՝ որ տեսաւ Տիրոջ փառքը, կը հարցնէ. «Ո՞վ չափեց Տէրոջ Հոգին, եւ անոր խորհրդատու ըլլալով՝ անոր սորվեցուց: Ան որո՞ խորհուրդ հարցուց, ո՞վ անոր իմաստութիւն տուաւ [...] Աստուած որո՞ կը նմանցնենք, կամ զինք ինչ նմանութեան հետ կը բաղդատենք» (Եսայիի 40.13-14,18):

Ապա Աստուած ուղղակի կը հարցնէ. «Ուրեմն զիս որո՞ կը նմանցնենք, որ ես անոր հաւասարը ըլլամ» (Եսայիի 40.25):

Եթէ երբեք եղած է ժամանակ մը պատմութեան ընթացքին երբ այդ հարցումներուն մասին խորապէս պէտք է մտածուի եւ ոչ միայն անոնց վրայէն անցուի, ատիկա հիմա է: Այս օրերուս շատերս այնքան բազմազբաղ ենք տեղեկութիւններու կատաղի հոսքին պատճառով՝ որ շարունակ կը լեցնէ մեր միտքը, որ չենք ունենար ժամանակը կամ վայրը խոկալու այդ ճակատագրական հարցումներուն մասին: Արգելքներ կան մեր սուրբ վախ զարգացնելուն դէմ, եւ հետեւաբար մեծ թիւով հաւատացեալներ խոցելի կ'ըլլան եւ դիւրութեամբ կը գրաւուին ցանկութեան, շահի եւ մարդկային իրագործումներով հպարտանալու աշխարհի համակարգին մէջ:

Նոյնպէս, մենք շարունակ կը հանդիպինք տաղանդաւոր մարզիկներու, Հոլիուուտի գեղեցիկ աստղերուն, շնորհալի երաժշտական արուեստագէտներու, առաջատար գործարարներու, հեղինակաւոր առաջնորդներու եւ այլ կարեւոր անձնաւորութիւններու մասին գովասանքներու: Անոնց համբաւը կը գովաբանուի ընկերային հաղորդամիջոցներու, ամանդական մամուլի եւ շատ մը ուրիշ հանրային բեմերու վրայ: Յաւալի իրականութիւնը այն է, որ այդ անվնաս թուացող տեղեկութիւնները եւ մարդկային իրագործումները կը շեղեն մեզ եւ նոյնիսկ ետ կը պահեն մեզ Աստուծոյ մօտենալու եւ Անոր նայելու հոյակապ հրաւերէն:

Եթէ միայն կանգ առնենք, դէպի ներս կեդրոնանանք եւ մեր աչքերը սեւեռենք Անոր մեծափառութեան, պիտի հարստանանք, զօրանանք եւ խաղաղինք: Մեզի խոստացուած է.

Որովհետեւ Աստուած ինք, որ ըսաւ՝ «Խաւարին մէջ լոյս թող ծագի», ինք մեր սիրտերուն մէջ ծագեցաւ, որպէսզի լուսաւորուինք եւ Աստուծոյ փառքը ճանչնանք՝ Յիսուս Քրիստոսի անձին մէջ: (Բ.Կորնթացիներուն 4.6)

Երբ հանդարտ կ'ըլլանք մեր հոգիին մէջ եւ Սուրբ Հոգիին հետ

միութեան մէջ, կրնանք տեսնել Յիսուսը մինչ կը խոկանք Իր Խօսքին վրայ: Անոր դէմքին սեւեռելը կը լուսաւորէ Աստուծոյ փառքը մեր սիրտին մէջ, ինչ որ կը բարձրացնէ մեր *սուրբ ահը*: Կ'ըլլանք Եսայիի նման եւ վերը նշուած միւս մեծերուն, որոնք հանդիպում ունեցան Անոր հետ, քալեցին Անոր հետ, հաճելի եղան Անոր, ուխտի խոստումներ ստացան եւ լաւ կերպով աւարտեցին իրենց կեանքը: Ամէնէն լաւը, սակայն, այն խոստումն է, որ զինք տեսնելով՝ «նոյն այդ պատկերով [պիտի փոխակերպուինք]՝ հետզհետէ աճող փառքով» (Բ.Կորնթացիներուն 3.18):

Որո՞նք պատկերով կը փափաքիս փոխակերպուիլ. մեր օրուայ հոշակաւոր անձնաւորութիւններո՞ւն կամ Անոր՝ որ ստեղծած է տիեզերքը: Իմաստութեամբ ընտրէ, եւ ուշադրի եղիր, թէ ի՞նչ կը լսես եւ ի՞նչ բանի կու տաս ուշադրութիւնդ:

===== Անձնականացնել =====

Հատուած- Տէրոջ երկրպագեցէք սուրբ զարդարանքով. սարսափեցէք անոր առջեւ, դուք բոլորդ՝ երկրի՛ բնակիչներ: (Սաղմոսներու 96.9)

Միտք- Մեր սուրբ վախը կ'աճի Աստուծոյ մեծութեան մեր ըմբռնումին հետ համեմատաբար:

Խոկալ- Ի՞նչ պիտի պատահէր եթէ ես օրական երեք անգամ տասը վայրկեաննոց դադարներ առնէի՝ անջատուելով ամէն արտաքին ազդեցութենէ, խոկալու համար Աստուծոյ մեծութեան մասին: Կ'արժէ այդպիսի բանի մը ժամանակ տալ: Արդեօք ես ւաւելի ազդու պիտի ըլլայի՞ իմ առօրեայ կեանքիս մէջ իմ սուրբ վախս ւաւելցնելով՝ ինչ որ վերջաւորութեան զիս ւաւելի իմաստուն պիտի ընէ:

Աղօթք- Սիրելի Երկնաւոր Հայր, կը խնդրեմ, որ ինձի տաս թարմ տեսիլք մը Յիսուսի: Քու Խօսքդ կը խոստանայ, թէ՛ մինչ ես զԱյն կը տեսնեմ իմ սիրտիս մէջ, պիտի փոխակերպուիմ Իր պատկերով՝ հետզհետէ աճող փառքով: Թող իմ սուրբ վախս ւաւելնայ մինչ Անոր փառքը ւաւելի իրական կը դառնայ: Ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Ես կը փոխակերպուիմ Յիսուսի պատկերով՝ հետզհետէ աճող փառքով:

Մարդիկ մէկգմբիւսը կը մեծարեն,
սակայն ոչ զԱստուած:

– ՀԵՆՐԻ ՏԷՅՎԻՏ ԹՈՐՈՒԻ

7 | ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԸ

Չես կրնար խօսակցութիւն ունենալ սուրբ վախի մասին առանց կեդրոնանալու *Աստուծոյ փառքին* վրայ: Նախորդ դասին մէջ քիչ մը խօսեցանք այդ մասին, բայց հիմա աւելի անդին պիտի երթանք:

Մահկանացու մարմինը չի կրնար կենալ Աստուծոյ փառքին ներկայութեան մէջ: Ամբակում մարգարէն անոր մասին կ'ըսէ՝ «Անոր պայծառութիւնը լոյսի պէս էր. անոր ձեռքէն կայծակներ կը ժայթքէին. անոր զօրութիւնը հոն պահուած էր» (3.4): Պօղոս կը գրէ, թէ Յիսուս «անմարտիկ լոյսին մէջ կը բնակի, զոր մարդոցմէ ոչ ոք տեսած է եւ ոչ ոք ալ կրնայ տեսնել» (Ա.Տիմոթէոսի 6.16, շեշտադրումը՝ մեր կողմէ): Նոյնպիսի բան մըն ալ կ'ըսէ Եբրայեցիներուն Գիրքը գրողը, նշելով՝ «Մեր Աստուածը լափող կրակ է» (12.29):

Այդ հաստատումները կարդալով, մի կարծեր, թէ հոն կը խօսուի վառող փայտի կրակին մասին, որ կը լափէ, բայց տակաւին մատչելի է: Միտքդ բեր աւելի փայլուն սպառող կրակ մը. արեւը, օրինակի համար, որ կը լուսաւորէ մեր աշխարհը: Անիկա լափող է եւ անմատչելի, բայց նոյնիսկ արեւին օրինակը լման պատկերը չի տար, քանի որ մեզի նաեւ կ'ըսուի, թէ՛ «Աստուած լոյս է, բնաւ խաւար չկայ անոր մէջ» (Ա.Յովհաննէսի 1.5): Արեւը, որ այդքան փայլուն է, սեւ կէտեր ունի իր վրան: Իրականութեան մէջ, Պօղոս կը գրէ. «Ճամբու ընթացքին, կէսօր ատեն տեսայ, ո՛վ արքայ, արեւէն աւելի զօրաւոր լոյս մը՝ որ երկինքէն փայլատակեց իմ եւ հետս զացողներուն շուրջը» (Գործերը 26.13):

Պօղոս չի տեսներ Յիսուսի իրական դէմքը. ան միայն կը տեսնէ Անկէ ելող լոյսը, որ աւելի զօրաւոր էր քան միջին արեւելեան արեւը: Եւ ոչ առաւօտեան կամ ուշ յետմիջօրէի արեւը, այլ՝ կէսօրուայ արեւը:

Ես շատ ճամբորդութիւններ ըրած եմ աշխարհի զանազան կողմերը: Երբեմն մոռցած կ'ըլլամ արեւի ակնոցներս հետս առնելու: Մեծմասամբ վայրերու մէջ հարց չ'ստեղծեր ատիկա, կրնամ առանց անոնց շարունակել կեանքս, բայց ոչ Միջին Արեւելքի մէջ: Երբ առաջին անգամ այցելեցի հոն, յայտնաբերեցի արեւի ակնոցներուն անհրաժեշտութիւնը. առանց անոնց աչքերս հազիւ ճեղք մը կրնայի բանալ արեւին ազդեցութենէն: Հոն արեւը անելի փայլուն է երեք պատճառներով. չոր անապատային կլիմային, հողին բաց գոյնին եւ արտացոլացնող բնոյթ ունենալուն ինչպէս նաեւ հասարակածին քով գտնուելուն պատճառով: Հակառակ առտու եւ յետմիջօրէին այդքան սուր չըլլալուն, կուրցնող զօրութիւն ունէր կէսօրին եւ կարելի չէր շարունակել առանց պաշտպանող ոսպնեակներու:

Մտածենք մեր վերը կարդացածին մասին: Պօղոս ըսաւ, որ Յիսուսէն ելլող լոյսը անելի պայծառ էր քան միջին արեւելեան կէսօրուայ արեւը... Անոր փառքը կը գերազանցէ արեւին պայծառութիւնը շատ անգամներով:

Ատկէ կրնանք հասկնալ, թէ ինչն է թէ Յովէլ եւ թէ Եսայի կ'ըսեն, թէ արեւը պիտի խաւարի եւ աստղերը իրենց լոյսը պիտի չտան այն օրը երբ Յիսուս վերադառնայ (տես Եսայիի 13.9-10: Յովէլի 2.31-32): Արտօնէ բացատրեմ: Եթէ դուրս ելլենք գիշեր մը երբ երկինքը ջինջ է, ինչ կը տեսնենք: Աստղերով լեցուն երկինք մը: Բայց ինչ կը պատահի երբ առտու արեւը ծագի: Աստղերը կ'անհետանան: Պէտք է հարց տանք: Արդե՞ք բոլոր աստղերը արագօրէն կը փախչին երբ արեւը կը ծագի, եւ ապա, երբ արեւը մար մտնէ, յանկարծ ետ կը վազեն առնելու իրենց տեղերը: Այդ հարցումին պատասխանը բացայայտ է, որ «Ոչ» է: Ինչ կը պատահի: Աստղերուն փառքը մակարդակ մըն է, բայց արեւին փառքը՝ շատ անելի բարձր մակարդակ մը: Ուստի երբ արեւը կը ծագի, քանի որ անիկա շատ անելի պայծառ է քան աստղերը, կը մթագնէ զանոնք:

Երբ Յիսուս վերադառնայ, Անոր փառքը շատ անելի մեծ պիտի ըլլայ քան արեւինը եւ Ան պիտի մթագնէ արեւը, հակառակ անոր որ արեւը տակաւին պիտի շարունակէ վառիլ... Սկսմք անելի լաւ հասկնալ Անոր փառքը: Կը հաւատամ, որ ատոր համար մեզի կ'ըսուի, թէ երկրի բոլոր մարդիկը լեռներուն եւ ժայռերուն պիտի ըսեն՝ «Մեր վրայ ինկէք ու ծածկեցէք մեզ անոր աչքէն, անոր՝ որ գահին վրայ կը նստի. ազատեցէք մեզ Գառնուկին բարկութենէն» (Յայտնութիւնը 6.16):

Ուստի հիմա գլխաւոր հարցումը հետեւեալն է. Ինչ է Տիրոջ փառքը: Այդ հարցումին պատասխանելու համար, երթանք կարդալու Մովսէսի

խնդրանքը. «Կ'աղերսեմ, քու փանքդ ցոյց տուր ինձի» (Ելքի 33.18):

Փառք բառին երբայերէնը *քապոյն* է: *Սթրոնկզ Պայպըլ Տիքշընըրի* բառարանը զանիկա կը սահմանէ իբրեւ՝ «բանի մը կշիռքը»: Անիկա նաեւ կը խօսի մեծափառութեան եւ պատիւի մասին: Ուստի Մովսէս կ'ըսէ՝ «Տի՛յց տուր Ինքզինքդ քու *ամբողջ* շքեղութեանդ մէջ»: Ուշադրութեամբ կարդանք Աստուծոյ պատասխանը.

«Իմ ամբողջ *բարութիւնս* քու առջեւդ պիտի անցնեն, ու *Տէրոջ անունը* քու առջեւդ *պիտի կանչեն*»: (Ելքի 33.19, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Աստուծոյ փառքը տեսնելու Մովսէսի դիմումը Աստուած կը բնորոշէ իբրեւ՝ «Իմ ամբողջ *բարութիւնս*»: Բարութիւն բառին երբայերէնը կը սահմանուի իբրեւ՝ «բարի՝ ամէնէն ընդարձակ իմաստով»: Այլ խօսքով, ոչ մէկ բան ետ կը պահուի:

Յետոյ Աստուած կ'ըսէ. «Տէրոջ անունը քու առջեւդ պիտի կանչեն»: Նախքան որ երկրաւոր թագաւոր մը իր գահի սենեակը մտնէ, արարողապետ մը նախ կը հռչակէ անոր անունը: Փողերը կը հնչեն եւ թագաւորը կը մտնէ գահի սենեակը՝ իր ամբողջ շքեղութեամբ: Թագաւորին մեծութիւնը կը յայտնուի, եւ իր պալատին մէջ ամէն մարդու համար յստակ է, թէ ո՛վ է թագաւորը: Սակայն եթէ այդ թագաւորը սովորական կերպով շրջէր իր երկրին փողոցներուն մէջ՝ սովորական հագուստներ հագած, առանց իր օգնականներուն, կրնար մէկը չճանչնալ զինք:

Նախորդ դասին մէջ տեսանք, թէ Աստուծոյ փառքը կը յայտնուի Յիսուս Քրիստոսի դէմքին վրայ: Շատեր կ'ըսեն, թէ տեսիլքի մէջ Յիսուսը տեսած են: Ատիկա հաւանական է, բայց ո՛չ Անոր ամբողջական փառքին մէջ: Պօղոս այսպէս կը նկարագրէ իր այդ փորձառութիւնը. «Մենք այժմ զԱստուած կը տեսնենք աղօստ կերպով, կարծես հայելիի մը մէջէն, բայց երբ ամէն բանի կատարումը գայ՝ զայն պիտի տեսնենք դէմ առ դէմ» (Ա.Կորնթացիներուն 13.12): Անոր փառքը ծածկուած է, ինչպէս մարախուղով մը ծածկուած էր Հին Կտակարանին մէջ: Ինչո՞ւ: Ոչ մէկ մարմին կրնայ նայիլ Անոր քողազերծուած փառքին եւ շարունակէ ապրիլ:

Առաջին անձը, որուն հետ Յիսուս խօսեցաւ Իր յարութենէն ետք Մարիամ Մագդաղենացին էր, որ սակայն զայն պարտիզպանը կարծեց (տես Յովհաննէսի 20.15–16): Աշակերտները ձուկ նախաճաշեցին Յիսուսի հետ ծովեզերքը, բայց սկիզբը չճանչցան զինք (տես Յովհաննէսի 21.9–10): Երկու աշակերտներ Յիսուսի

հետ քալեցին Եմմաուսի ճամբուն վրայ, բայց «անոնց աչքերը [...] ծածկուած էին» (Ղուկասի 24.16): Այդ բոլորը տեսան Անոր դէմքը, որովհետեւ Ան բացայայտօրէն չցուցադրեց Իր փառքը:

Կային ոմանք, որոնք Տէրը տեսան Հին Կտակարանին մէջ, բայց Ան չէր բացայայտուած Իր փառքով: Տէրը Աբրահամին երեցաւ Մամբրէի կաղնիներուն քով, բայց ո՛չ Իր փառքով (տես Ծնունդներու 18.1-2): Յակոբ գօտեմարտեցաւ Աստուծոյ հետ, բայց ո՛չ Իր փառքին մէջ: Երիքովի մօտ Յեսու տեսաւ Տէրը մերկ սուրով եւ ուզեց գիտնալ, թէ Ան Իսրայէլի կրօնն էր կամ ոչ: Գիտնալէ ետք, որ Տէրն էր, Յեսու իր երեսին վրայ գետին ինկաւ եւ երկրպագեց Անոր: Յանկը կրնանք շարունակել Գեդէոնով, Սամփսոնի ծնողներով եւ շատ ուրիշներով:

Ատոնց հակառակ, Յովհաննէս Առաքեալ Տէրը տեսաւ Հոգիով՝ Իր ամբողջ փառքով, Պատմոս կղզիին վրայ: Յովհաննէս Անոր դէմքը նմանցուց կէսօրուայ արեւին՝ որ կը փայլի, եւ մեռելի նման ինկաւ Անոր ոտքերուն առջեւ: Յովհաննէս ինչպէս կրնար նայիլ Անոր: Ան իր մարմինին մէջ չէր, այլ՝ հոգիին մէջ: Նոյնն է պարագան Եսայիի եւ քանի մը ուրիշներու: Մովսէս, միա կողմէ, չէր կրնար Աստուծոյ երեսին նայիլ, որովհետեւ Մովսէս իր մահկանացու մարմինին մէջն էր:

Տիրոջ փառքը այն ամէնն է, որ Աստուած Աստուած կ'ընէ: Անոր բոլոր յատկանիշները, իշխանութիւնը, զօրութիւնը, իմաստութիւնը. բառացիօրէն՝ անչափելի կշիռքը եւ մեծութիւնը Աստուծոյ: Ոչ մէկ բան ծածկուած է կամ ետ պահուած: Ասիկա Ան է, որ աստղերը դրաւ իրենց տեղը Իր մատներով եւ ամէն մէկուն անուն մը տուաւ: Ան է, որ չափեց ամբողջ տիեզերքը Իր թիզով: Ան, որ ամբողջ երկիրը կրնայ վերցնել աւազի հատիկի մը պէս: Ան, որ Իր ափով ջուրերը կշռեց: Ան, որ երկիրը եւ լեռները նժարով կշռեց: Ասիկա Ան է, զՈր կրնանք տեսնել մեր սիրտերուն մէջ եւ հետեւաբար փոխուիլ Իր պատկերին նմանութեամբ՝ հետզհետէ աճող փառքով:

Ասիկա Ան է, որ խորապէս կը սիրէ մեզ. այնքան կը սիրէ, որ ընտրեց մեր մեղքերուն սոսկալի դատաստանին գինը, որպէսզի մաս կազմենք Իր ընտանիքին: Չեմ գիտեր քու պարագայիդ, բայց ասիկա իրապէս կը խանդավառէ զիս...

Անձնականացնել

Հատուած- Ան՝ որ երանելի է եւ միակ հզօրը, թագաւորներու Թագաւորը եւ տէրերու Տէրը, միակը՝ որ անմահ է. ան՝ որ անմատչելի լոյսին մէջ կը բնակի. զոր մարդոցմէ՛ ճիշդ տեսած է եւ ոչ ոք ալ կրնայ տեսնել: Յաւիտեան անհրն են պատին ու զօրութիւնը: Ամէն: (Ա.Տիմոթէոսի 6.15-16)

Միտք- Տիրոջ փառքը այն ամէնն է, որ Աստուած Աստուած կ'ընէ: Անոր բոլոր յատկանիշները, իշխանութիւնը, զօրութիւնը, իմաստութիւնը. բառացիօրէն՝ անչափելի կշիռքը եւ մեծութիւնը Աստուծոյ: Ոչ մէկ բան ծածկուած է կամ ետ պահուած:

Խոկալ- Պատկերացո՛ւր լոյս մը այնքան պայծառ եւ մաքուր, որ ոչ մէկ խաւար, շուք, աղօտութիւն կամ մթագնութիւն կրնայ գոյութիւն ունենալ անոր մէջ: Պատկերացո՛ւր, որ այդ լոյսը կը փայլի սիրտիս մէջ: Ինչո՞ւ երբեւէ մտածեմ կամ ուզեմ որեւէ բան պահել Իրմէ: Անկարելի է:

Աղօթք- Սիրելի Երկնաւոր Հայր, կը խնդրեմ, որ ինծի տաս սուր ըմբռնում մը Քու փառքիդ: Չեմ ուզեր, որ ասիկա ըլլայ չնչին իրականութիւն մը, սովորական բան մը կամ բան մը, որուն մասին պարբերաբար կը մտածեմ. այլ՝ կ'ուզեմ, որ անոր մեծութիւնը միշտ ներկայ ըլլայ եւ ւելի իրական ըլլայ քան զիս շրջապատող աշխարհը: Թող Քու փառքդ շարունակ ըլլայ իմ սիրտիս եւ միտքիս առջեւ: Ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Քրիստոսով, ես աշխարհի լոյսն եմ եւ կ'արտացոլացնեմ Իր փառքը բոլոր անոնց, որոնց կը հանդիպիմ:

ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԱԾ՝
ԻՆՉՊԷՍ ՈՐ
ԵՆՔ

ԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ

Մենք պէտք է Աստուծմէ
վախնանք՝ զԻնք սիրելնուս
համար, եւ ոչ թէ սիրենք զԻնք՝
Իրմէ վախնալնուս պատճառով:

– ՍՈՒՐԲ ՖՐԱՆՍԻՍ ՍԱԼԵՑԻ

8 | ՔՈՒ ԱՐԺԷՔԴ

Այս բաժինը պիտի պարունակե կարգ մը ծանր եւ հաւանաբար նաեւ դատապարտող (սխալներ մէջտեղ հանող) նիւթեր: Ուստի նախքան որ շարունակենք, պահ մը կանգ առնենք եւ ակնի խորունկ կերպով հասկնանք մեզի հանդէպ Աստուծոյ սէրը: Բացումը պիտի ընեմ զօրաւոր եւ գրեթէ վախնալիք Յիսուսի մէկ խօսքովը, որ կարեւոր մէկ մասը պիտի ըլլայ այս բաժինին մէջ մեր խօսելիքներուն: Իրենց պարունակին մէջ չկարդացուելու պարագային, Անոր խօսքերը կրնան սխալ հասկցուիլ, եւ հաւանաբար մեր մէջ դնել ոչ–առողջ վախ մը: Ուստի կը խնդրեմ, որ անոնք կարդաս Աստուծոյ հանդէպ ենթարկուած սիրտով եւ մեծարանքով:

Ըսեմ, թէ որմէ պէտք է վախնաք: *Վախցէք Աստուծմէ*, որ ձեզ սպաննելէ ետք իշխանութիւն ունի դժոխք նետելու: Այո՛, կ'ըսեմ ձեզի, անկէ *վախցէք*: (Ղուկասի 12.5, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Յիսուս մեզի կ'ըսէ, որ *Աստուծմէ վախնանք*: Եւ Ան մէկ անգամ միայն չ'ըսեր ատիկա. Ան կը շեշտէ այդ պատուէրը՝ զանկէ կրկնելով: Իրական ուշադրութիւն գրաւողը Անոր այս խօսքերն են՝ «իշխանութիւն ունի դժոխք նետելու»: Ասիկա խիստ լեզու է: Սակայն տես Անոր յաջորդ խօսքը.

Հինգ ճնճղուկը տասը դահեկան չ'աճեր, եւ սակայն անոնցմէ մէկն իսկ Աստուծոյ կողմէ մոռցուած չէ: Գալով ձեզի, ձեր գլխուն իրաքանչիւր մազն իսկ համրուած է: Հետեաբար *մի՛ վախնաք*, որովհետեւ դուք բոլոր ճնճղուկներէն ակնի *արժէք* ունիք Աստուծոյ աչքին: (Ղուկասի 12.6–7, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

Նկատի ա՛ն, որ ես 5–րդ համարին մէջ շեշտեցի «վախցէք»ը, իսկ 7–րդ համարին մէջ՝ «մի՛ վախնաք»ը: Անգամ մը ես կը տեսնենք տարբերութիւնը *սուրբ վախի* եւ *անսուրբ վախի* միջեւ: Շեշտեմ, որ սուրբ վախը չի նշանակեր Աստուծմէ վախնալ եւ հետեաբար ետ կենալ Անկէ: Ատիկա *անսուրբ* վախն է: Շատ կարեւոր է, որ գիտնանք տարբերութիւնը եւ հաստատուինք այդ ճշմարտութեան մէջ:

Յիսուս Իր խօսքը կը սկսի ցնցիչ, գրեթէ սարսափեցուցիչ հաստատումով մը, եւ սակայն անմիջապէս ետք կը հոչակէ Աստուծոյ համար մեր չափազանց *արժէքաւոր* ըլլալը: Ան կը յայտնէ, թէ Աստուած խորապէս կ'արժեւորէ մեզ եւ հետեաբար մեզի կու տայ սուրբ վախի պարգեւը: Այդ պարգեւը կը պահպանէ մեզ՝ մեզ մօտիկ պահելով կեանք Տուողին եւ մեզ հեռու պահելով անկէ, որ կրնայ կործանել մեզ. *մարդոց վախը*, որ ուղղակի հակառակ բեւեռն է սուրբ վախին: Այդ երկուքը մեծ մասը պիտի կազմեն յառաջիկայ էջերուն մէջ մեր խօսելիքներուն, բայց նախքան որ սկսինք, պիտի խօսինք մեր *արժէքին* մասին:

Ըստ Յիսուսի, Աստուած այնքան խորունկ ձեւով կը սիրէ քեզ, որ Ան գիտէ գլխուդ վրայի մազերուն համրանքը: Գիտութիւնը կ'ըսէ, թէ մարդոց մեծ մասը շուրջ 100 հազար մազ ունի գլխուն վրայ: Եթէ 10 հազար մարդ դնես սենեակի մը մէջ, կրնան գիտնալ, թէ ո՛վ է, որ գլխուն վրայ 99,569 մազ ունի: Նոյնիսկ եթէ ճիշդ ենթադրութիւնը ըրիր, քանի մը վայրկեանէն նորէն սխալ պիտի ըլլաս, քանի որ միջին հաշիւով մարդ 50–էն 100 մազ կը կորսնցնէ ամէն օր: Աստուած մեր մազի ճիշդ թիւը գիտէ ամէն երկվայրկեան... Ինչ կ'ըսէ ատիկա մեր մասին: Այնքան արժէքաւոր ենք, որ Ան շարունակ մեր մասին կը մտածէ: Դաւիթ կը գրէ.

Ո՛րչափ պատուական են ինձի քու մտածումներդ, ո՛վ Աստուած,
որչափ մեծ է անոնց թիւը: Եթէ հաշուեմ զանոնք՝ աւազէն շատ
են: (Սաղմոսներու 139.17–18)

Ամբողջ աւազէն... Միտքդ բեր երկրի ամբողջ աւազը.. ամէն ծովեզերք, անապատ եւ *կուֆի* դաշտ: Ատիկա հսկայական քանակ է: Գիտութեան եւ ուսողութեան մասնագէտներ մեզի կ'ըսեն, թէ՛ իրենց չափին եւ որքան խիտ կերպով շարուած ըլլալուն համաձայն, շուրջ կէս միլիառէն մէկ միլիառ աւազի հատիկներ կան մէկ խորանարդ քառակուսի ոտք ծովեզերքի մէջ: Մեր միտքը դժուարութիւն կ'ունենայ ըմբռնելու միայն Ֆլորիտայի ծովեզերքներուն աւազի հատիկներուն չափը: Բայց մտածէ՛ պահ մը. եթէ մեր մոլորակի աւազի բոլոր հատիկները գումարես, տակաւին պիտի չունենաս թիւը այն մտածումներուն, զորս Աստուած ունի քու մասիդ:

Դուն քեզի հետեւեալ հարցումը հարցուր. ամէնէն շատը ինչ բանի մասին կը մտածես: Չես մտածեր բանի մը մասին, որ արժէք չունի քեզի համար: Լիսան եւ ես ունինք ապրանքներ, որ ամէն տարի Ծնունդի եղանակին կը յայտնաբերեմ մեր պահեստին մէջ: Կը գործածեմ *յայտնաբերել* բառը, քանի որ մոռցած կ'ըլլամ, որ ունինք զանոնք: Ամբողջ տարուան ընթացքին մէկ անգամ իսկ չեմ մտածեր այդ ապրանքներուն մասին, որովհետեւ արժէքաւոր չեն: Սակայն եթէ հաշուէի բոլոր խորհուրդները, զորս Լիսայի մասին ունեցած եմ մեր ամուսնութեան քառասուն տարիներուն, եւ եթէ ամէն մէկը աւագի հատիկ մը ըլլար, հաւաքած աւագս կրնար կօշիկի տուփի մը կէսը լեցնել: Ատիկա շուրջ երկու հարիւր միլիոն խորհուրդ կ'ընէր, ինչ որ կը նշանակէ՝ խորհուրդ մը ամէն 6.3 երկվայրկեանը: Ամուսին մը, որ յաճախ իր կնոջ մասին կը մտածէ, կը համարուի իր կնոջ սիրահարուած ամուսին մը:

Քու մասիդ Աստուծոյ խորհուրդները անլի են քան երկիր մոլորակի աւագի բոլոր հատիկները: Կը հասկնամ ըսուածը: Ահա, թէ ինչը ապշեցուցիչ է. Աստուած չի կրնար չափազանցել: Հակառակ անոր որ բոլորս ալ եղած ենք մարդոց շուրջ, որոնք կը չափազանցեն եւ ճշմարտութենէն հեռու եղող բաներ կ'ըսեն, Աստուած չի կրնար մէկ դոյզն ինչ շեղիլ ճշմարտութենէն. Ան չի կրնար ստել: Ուստի երբ կ'ըսէ, թէ քու մասիդ Աստուծոյ խորհուրդները անլի շատ են քան երկիր մոլորակի ամբողջ աւագը, աստիկա շատ մեծ բան մըն է:

Քիչ մը անլի անդին երթանք: Ճիշդ ինչ է մեր արժէքը: Արժէքը կ'որոշուի գնողին կողմէ: Տղաս մարգաշխարհի աճուրդի մը մասնակից եղաւ, քանի որ այնընկերութիւնը, որուն մէջ ինք կ'աշխատի, ուր հետաքրքրուած էր 1960–ականներուն տեղի ունեցած փխոյանութեան մը ընթացքին Պիլ Ռասըլի հազած մարգական շապիկը գնելով: Անոնք չկրցան գնել զանիկա, քանի որ ուրիշներ ամէնէն բարձր գինը առաջարկեցին, որ էր՝ 1,044,000 տոլար: Որքան ալ որ լաւ խաղցող էր Պիլ Ռասըլ, ես անձնապէս քանի մը հարիւր տոլարէն անլի պիտի չվճարէի անոր մարգական շապիկին համար կամ ռեւէ ուրիշ *էն.Պի.էյ.*–ի խաղցողի մարգական տարագին համար: Անիկա պարզապէս կտոր մը հագուստ է:

Հարցը այն չէ, թէ մեր արժէքը ինչ է մարդոց քով, որովհետեւ աստիկա կրնայ տարբերիլ մարդէ մարդ: Առաւել, աշխարհը մարդոց պէտք եղած ձեւով արժէք տալու մէջ լաւ անցեալ մը չունի: Միլիոնաւոր մանուկներ սպաննուած են իրենց մօր արգանդին մէջ: Մարդիկ արժէք տուին այդ մանուկներուն կեանքերուն: Եւ ինչ կրնանք ըսել այն աղջիկներուն եւ կիներուն մասին, որոնք

սեռային մաքսանենգութեան զոհ կ'երթան, ներառեալ պոռնիկները: Եթէ անոնց արժէքը չափենք այն մարդոց համաձայն, որոնք այդ պայմաններուն մէջ դրին զիրենք, անոնց արժէքը պակսեցուած է քանի մը հարիւր տոլարի:

Աստուած է Ան, որ արժէքի իրական չափը կը ճշդէ այս տիեզերքին մէջ, ոչ մարդիկը: Եւ նոյնիսկ այն բաներուն համար, զորս կ'արժեւորենք Յիսուս մեզի կը յիշեցնէ, թէ՛ «Մարդոց աչքին փառաւորը Աստուծոյ աչքին անարգ է» (Ղուկասի 16.15): Ան նաեւ կ'ընէ հետեւեալ նշանակալից հաստատումը. «Ինչ օգուտ, եթէ մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ, որովհետեւ ինչ փրկագին պիտի տայ իր կեանքը ետ առնելու համար» (Մատթէոսի 16.26):

Պահ մը նկատի առ աշխարհի ամբողջ հարստութիւնը: Նկատի առ բազմամիլիոն տոլարի ապարանքները, գեղեցիկ կալուածները, գոհարները, թանկարժէք մետաղները, աղուոր ինքնաշարժները, նաւերը եւ օդանաւները: Գրեթէ աներեւակայելի է: Վերջին ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, թէ աշխարհի արտադրութիւններու ընդհանուր գումարը 84.97 եռիլիոն տոլար է: Ատիկա անըմբռնելի չափի դրամ է: Սակայն Յիսուս մեզի կ'ըսէ, թէ եթէ կեանքդ տայիր այդ բոլորին փոխարէն, վստահ կ'ապրիր:

Ուստի ինչ է քու արժէքդ: Պողոս կը գրէ. «Աստուած քեզ գնեց բարձր գինով մը» (Ա.Կորնթացիներուն 6.20): Աստուծոյ առաջարկած գինը քեզի համար կը գտնուի հետեւեալ բառերուն մէջ. «Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին *տրուաւ*» (Յովհաննէսի 3.16, շեշտադրումը՝ մեր կողմէ): Ունու, ատիկա շատ անելին է քան Պիլ Ռասըլի մարզական շապիկը: Աստուած մեր արժէքը հաւասար համարեց Իր ամէնէն թանկարժէք ստացուածքին: Ահա հիանալի ճշմարտութիւնը. եթէ մենք Աստուծոյ համար Յիսուսի արժէքէն մէկ դահեկան պակաս արժէք ունենայինք, ապա այդ փոխանակումը պիտի չկատարուէր, որովհետեւ Աստուած անշահաւէտ համաձայնութիւն մը պիտի չընէր. անելի արժէքաւոր բան մը տար նուազ արժէքաւոր բան մը առնելու համար: Կ'ըմբռնէ՞ս ճիշտ թանկագին ես Աստուծոյ համար:

Ո՛րքան հսկայական սէր ունի Աստուած քեզի հանդէպ: Յիսուս ամէնէն ցնցիչ արտայայտութիւնը կ'ունենայ աղօթքի մը ընթացքին.

«Աշխարհը պիտի գիտնայ, թէ դուն [Աստուած] զրկեցիր զիս [Յիսուս Քրիստոս], եւ թէ կը սիրես զիրենք *այնքան որքան* զիս կը սիրես»: (Յովհաննէսի 17.23, շեշտադրումը՝ մեր կողմէ)²

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Ասիկա հասկնալը գրեթե վեր է մեր կարողութենէն... Աստուած կը սիրէ քեզ այնքան որքան կը սիրէ Յիսուսը... Տակաւին կրնաս մտածել. *Ան միայն կը խօսի աշակերպներուն մասին*: Ատիկա ճիշդ չէ, որովհետեւ Յիսուս կը յստակացնէ. «Չեմ աղօթեր միայն իրենց համար, այլ նաեւ անոնց համար՝ որոնք անոնց քարոզութեամբ ինծի պիտի հաւատան» (Յովհաննէսի 17.20): Եթէ կը հաւատաս Յիսուս Քրիստոսի, ատիկա ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն աշակերտներուն վկայութեան շնորհիւ է: Աստուծոյ սիրոյ խորքը եւ այն արժէքը, որ Ան կու տայ քեզի անըմբռնելի են:

Այս ճշմարտութիւնը ամբօրէն հաստատելէ ետք, շարունակենք պարզել, թէ ինչո՞ւ սուրբ վախի այդ պարզելը այդքան կարեւոր է Աստուծոյ հետ մեր յարաբերութեան մէջ:

===== Անձնականացնել =====

Հատուած– Անոնք չեն կրնար իրենք զիրենք մահէն ազատել՝ Աստուծոյ փրկագին մը վճարելով: Փրկութիւնը այդքան դիւրութեամբ չի գար, որովհետեւ ոչ ոք կրնայ երբեւէ վճարել այնքան, որ յաւիտենապէս ապրի: (Սաղմոսներու 49.7–9)¹

Միտք– Իմաստուն մարդ մը անշահաւէտ համաձայնութիւն մը չ'ըներ. ւաւելի արժէքաւոր բան մը տալ նուազ արժէքաւոր բանի մը փոխարէն: Նոյնպէս, Աստուած ալ երբեք անշահաւէտ համաձայնութիւն մը չ'ըներ: Այն գինը, որ Աստուած վճարեց քեզի համար Իր միածին Որդիին կեանքն էր, ինչ որ կը նշանակէ, թէ Ան քեզի կու տայ այն արժէքը, զոր կու տայ Յիսուսի:

Խոկալ– Նկատի առնելով Յիսուսի համար մեծ արժէք ունենալս, հիմա ինքզինքս ինչպէս կը տեսնեմ: Ատիկա ինչպէս կը փոխէ ամէն օր տեսած մարդոցս հանդէպ վարմունքս:

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, շնորհակալ եմ, որ իմ կեանքս այնքան արժէքաւոր կը համարես, որ Յիսուսը տուիր, որ իմ տեղս մեռնի: Յիսուս, շնորհակալ եմ, որ զիս Քու Անձէդ ւաւելի արժէքաւոր համարեցիր՝ իմ տեղս առնելով եւ իմ վրաս եղած դատապարտութիւնը վրադ առնելով: Սուրբ Հոգի, կը խնդրեմ, որ իմ սիրտիս եւ միտքիս մէջ դնես այն անդրադարձը, թէ Դուն ինչքան կը սիրես եւ կ'արժեւորես զիս, եւ թող ես ալ ուրիշները նոյնպէս սիրեմ: Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն– Ես պիտի սիրեմ եւ արժեւորեմ ուրիշները նոյն ձեւով, որ Աստուած կը սիրէ եւ կ'արժեւորէ զիս:

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Երբ Աստուծոյ սէրը կը
քարոզենք,
կայ այն վտանգը, որ մոռնանք,
թէ Աստուածաշունչը
նախ կը յայտնաբերէ ոչ թէ
Աստուծոյ սէրը,
այլ՝ Աստուծոյ բուռն, վառող
սրբութիւնը՝
Անոր սէրը ըլլալով այդ
սրբութեան կեդրոնը:

– ՕՐՈՒՈԼՏ ՉԷՅՄՊԸՐՁ

9 | ՄԱՀԱՅՈՒ ԲԱԽՈՒՄԸ

Առաջին բաժինին մէջ խօսեցանք Աստուծոյ փառքին մասին, եւ տակաւին միայն մակերեսը տեսանք: Այս գլուխին մէջ պիտի կեդրոնանանք Աստուծոյ ներկայութեան տարբեր չափերուն կամ տեսակներուն վրայ: Սկսինք՝ երթալով ժամանակաշրջան մը երբ Ամենակարողը ընտրեց ապրիլ վրանի մը մէջ. այն ատեն Իսրայէլի ժողովուրդը կ'ապրէր անապատին մէջ:

Ժամանակ սպառող, մանրակրկիտ եւ նուրբ աշխատանքէ մը ետք, վրանին շինութիւնը ասարտեցաւ՝ խումբ մը աշխատատարներու շնորհիւ: Անիկա շինուեցաւ ճիշդ լեռան վրայ Աստուծոյ կողմէ Մովսէսի տրուած ծրագիրին համաձայն եւ անիկա նման էր երկնային խորանին (տես Եբրայեցիներուն 8.1–5): Երբ գործը ասարտեցաւ, Աստուած յայտնեց Իր փառաւոր ներկայութիւնը.

Ամպ մը ծածկեց Հանդիպումի Վրանը, ու Տէրոջ փառքը լեցուց խորանը: Մովսէս չէր կրնար մտնել Հանդիպումի Վրանը, որովհետեւ ամպը անոր վրայ կը կենար ու Տէրոջ փառքը լեցուցեր էր խորանը: (Ելքի 40.34–35)

Անգամ մը եւս Աստուած ամպով մը Իսրայէլը պահեց Իր փառքէն: Ան Իր ժողովուրդին միջեւ պիտի ապրէր այն ձեւով, որ անոնք կրնային տանիլ: Միայն քահանայապետին արտօնուած էր տարին մէկ անգամ՝ անասունի մը արհնով, մտնել Ամէնէն Սուրբ Տեղը: Այդ պաշտօնին համար մարդիկ Աստուծոյ կողմէ կ'ընտրուէին, եւ առաջինը Ահարոնն էր՝ Մովսէսի եղբայրը:

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

Օր մը Ահարոնի երկու որդիները, որոնք եւս քահանաներ էին, Հանդիպումի Վրան մտան՝ «օտար կրակ [մատուցանելու], որ ինք չէր պատուիրեր անոնց» (Ղեւտացիներու 10.1): Կան տարբեր կարծիքներ այդ ատեն պատահածին մասին, բայց մեր նիւթին հետ կապը պահելու համար, չխօսինք անոնց արարքներուն մասին, այլ՝ կեդրոնանանք անոնց շարժառիթներուն վրայ: Հոս գործածուած *օտար* բառին մէկ սահմանումն է՝ «սուրբ բանի մը հետ անպատկառ ձեւով վարուիլ»: Կը նշանակէ՝ սուրբ բանի մը հետ վարուիլ իբրեւ սովորական բան մը: Այլ խօսքով, Ահարոնի որդիները Աստուծոյ փառաւոր ներկայութեան մէջ մտան առանց ակնածանքի: Ատիկա ընելէ ետք անոնց հետ պատահածը սթափեցուցիչ է եւ նոյնիսկ վախնալիք.

Ուստի Տէրոջ առջեւէն կրակ ելաւ եւ սպառեց զանոնք, ու Տէրոջ առջեւ մեռան: (Ղեւտացիներու 10.2)

Այդ երկու մարդիկը՝ որոնք իրաւասութիւն ունէին Աստուծոյ ներկայութեան մտնելու, անմիջապէս մեռան իրենց անպատկառ վարմունքին պատճառով: Արդեօք Աստուած դաժանօրէն յարձակեցաւ անոնց վրայ: Ո՛չ, անոնք իրենք զիրենք վտանգի մէջ դրին: Այս ձեւով մտածէ. երկիրը 93 միլիոն մղոն հեռու է արեւէն: Ծովեզերքը արեւին տակ պառկիլը հաճելի է շատերու համար, բայց եթէ այդ արեւի լոգանքը ընես նոյն արեւէն միայն 10 հազար մղոն հեռաւորութեան վրայ, անմիջապէս կը մեռնիս:

Անոնց սխալը այն էր, որ Աստուծոյ սուրբ եւ փառաւոր ներկայութեան վարժուեցան եւ հետեաբար վարուեցան այնպիսի ձեւով մը, որ փորձանք բերաւ իրենց վրայ: Մտիկ ըրէ, թէ Մովսէս ինչ ըսաւ ուղղակի Ահարոնին՝ անոր որդիներուն մահէն ետք.

Մովսէս Ահարոնի ըսաւ. «Ա՛յս է, որ Տէրը խօսեցաւ՝ ըսելով. “Ինծի մօտեցողներուն մէջ սուրբ պիտի ըլլամ, եւ ամբողջ ժողովուրդին առջեւ պիտի փառաւորուիմ”»: (Ղեւտացիներու 10.3)

Մովսէսի ըսածը տիեզերական եւ յաւիտենական հրովարտակ մըն է: *Տիեզերական* կը նշանակէ, թէ անիկա կիրարկելի է ամէն ստեղծուած արարածի վրայ՝ ըլլայ անիկա մարդ կամ հրեշտակ: *Տիեզերական* կը նշանակէ, թէ անիկա միշտ եղած է եւ միշտ ալ պիտի ըլլայ. բնաւ պիտի չփոխուի: Կրնաս Անոր ներկայութեան գալ միայն ակնածանքով լեցուն սիրտով եւ վարմունքով:

Ետ երթանք Պրագիլի մէջ այդ երեկոյին: Աստուծոյ ահաւոր

ներկայութեան մէջ երբ հովը կը փչէր, ես անդամալուծուած էի սուրբ վախով: Հետեւեալ խորհուրդը կը դառնար միտքիս մէջ. *Ճոն Պըվիր, եթէ մէկ սխալ քայլ առնես, մէկ սխալ բառ խօսիս, կը մեռնիս...*

Այդպիսի բան իրապէս կրնամբ պատահիլ: Չեմ գիտեր, բայց ինչ որ կրնամ վստահութեամբ ըսել այն է, որ Նոր Կտակարանին մէջ տղամարդ մը եւ կին մը սխալ քայլ մը առին նոյնանման մթնոլորտի մը մէջ եւ երկուքն ալ ինկան մեռան: Այո, «մեռան» այն իմաստով, որ 2 մեթր գետնին տակը թաղուեցան (տես Գործերը 5.1–10): Այդ զոյգը իրենց նուիրատուութիւնը բերին եկեղեցւոյ ղեկավարներուն եւ հաւատակիցներուն առջեւ: Սակայն երկուքն ալ իսկոյն մեռան եւ թաղուեցան նոյն օրը: Երբ ատիկա պատահեցաւ, միւս հաւատացեալներուն հակազդեցութիւնը ինչ եղաւ:

Մեծ վախ մը պատեց ամբողջ եկեղեցին եւ բոլոր անոնք՝ որ լսեցին այս դէպքը: (Գործերը 5.11)

Քանի մը նշումներ ընեմ: Չ'ըսեր, թէ «մեծ վախ մը պատեց ամբողջ քաղաքը»: Ո՛չ, կ'ըսէ՝ «Մեծ վախ մը պատեց ամբողջ եկեղեցին»: Երկրորդ՝ նկատի առ, որ չ'ըսեր միայն «վախ», այլ՝ «մեծ վախ»: Երբայեցի գրողները չէին չափազանցեր ինչպէս մենք յաճախ կ'ընենք արեւմտեան մշակոյթին մէջ: Երբ Սուրբ Գիրքը կ'ըսէ «մեծ», այսինքն՝ շատ սաստիկ սուրբ վախ:

Առաքեալներուն Գործերը 2–ին մէջ երբ Աստուծոյ Հոգին առաջին անգամ Ինքզինք յայտնեց Պետտէկոստէի Օրը, վայրին մէջ եղող շատերը եզրակացուցին, թէ աշակերտները գինիով գինովցած էին առտու ժամը 9–ին: Կանգ առ եւ պահ մը մտածէ, թէ գինով մարդ մը ինչպէս կը վարուի: Ընդհանրապէս լուռ եւ վերապահ չ'ըլլար: Ընդհակառակը շատ յաճախ շատ կը խնդայ եւ ուրախ կ'ըլլայ: Այդպէս էր այդ օրուան մթնոլորտը: Մեր սիրալիր Աստուծոյ ներկայութիւնը թարմացնող եւ զուարթ ազդեցութիւն մը ունէր: Բայց երբ Անոր ահաւոր, եւ նոյնիսկ սոսկայի, ներկայութիւնը կը յայտնուի նոյն այդ մարդոց միջեւ, եկեղեցին մեծ վախով եւ ահով կը պատուի: Այդ դէպքը մեծապէս անեցուց Աստուծոյ սրբութեան վերաբերեալ անոնց գիտակցութիւնը:

Ինծի յաճախ հարցուած է, թէ՝ «Ինչո՞ւ մեր արդի ժամանակներուն մարդիկ չեն իյնար մեռնիր»: Լաւ եւ ճիշդ հարցում մըն է: Այդ զոյգը սուտ խօսեցաւ Պետրոսին եւ վերջաւորութեան Սուրբ Հոգիին: Շատ հովիւներու սուտ խօսուած է 21–րդ դարուն, ուստի ինչո՞ւ այդ յանցանքը գործողները նոյն ճակատագիրը չեն ունեցած: Նայինք, թէ ինչ պատահեցաւ անմիջապէս այդ զոյգին մեռնելէն ետք.

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

Պետրոսի անցած ատեն՝ մարդիկ պատգարակներով ու մահիճներով հիւանդներ կը բերէին եւ հրապարակներու վրայ կը դնէին, որպէսզի գոնէ անոր շուքը իյնայ անոնցմէ մէկուն վրայ [...] [եւ] բոլորն ալ բժշկուեցան: (Գործերը 5.15–16)

Ատիկա խելքէ հանող բան մըն է: Նկատի առ, որ կ'ըսէ «հրապարակներու վրայ» (յոզնակի): Եւ ոչ «ոմանք», այլ՝ «բոլորը» բժշկուեցան: Եթէ արդիականացնենք պատահաձը, կրնանք պատկերացնել, որ Պետրոս Առաքեալ կը մտնէ մեծ հիւանդանոց մը եւ ամէն յարկի բոլոր անկողիները կը պարպէ պարզապէս միջանցքներէն քալելով: Այդ չափի զօրութիւն միայն կը գտնուի Տիրոջ փառքի մթնոլորտին մէջ:

Աւելի եւս հաստատենք այդ մէկը՝ մէկ ուրիշ աստուածաշնչական օրինակով: Ահարոնի որդիներուն հետ պատահածէն հարիւրաւոր տարիներ ետք, ուրիշ զոյգ մը եղբայրներ, որոնք եւս քահանաներ էին՝ Ոփնի եւ Փենտեիս, շնութիւն կ'ընէին կիներու հետ, որոնք կը հաւաքուէին նոյն վրանին դրան դիմաց: Ատիկա կ'ընէին միայն շուրջ 25 մեթր հեռու այն վայրէն, ուր Ահարոնի որդիները մեռան: Կարծես անոնց ըրածը բաւարար չէր, անոնք նաեւ նեղութիւն կու տային զոհ մատուցանելու համար եկողներուն՝ բռնի կերպով անոնց անասունները անոնց ձեռքէն առնելով: Անոնք «անպիտան մարդիկ էին, որոնք ոչ մէկ յարգանք ունէին ոչ Տիրոջ հանդէպ ոչ ալ իբրեւ քահանայ իրենց պարտականութիւններուն» (Ա.Թագաւորներուն 2.12–13): Աստուած այդ մարդոց մասին ըսաւ. «Երդում ըրի, որ Հեղիի տան անօրէնութեան յալիտեան քաւութիւն չըլլայ՝ զոհերով կամ ընծաներով» (Ա.Թագաւորներուն 3.14): Բնաւ պիտի չուզէիր այդ բառերը լսել Ամենակարող Աստուծոյ բերանէն:

Անոնց վարմունքը չափազանց ծանր կամ վիրաւորական էր Աստուծոյ համար՝ Ահարոնի որդիներուն ըրածէն քանի մը աստիճան աւելի անպատկառ, եւ սակայն այդ մարդիկը անմիջապէս չմեռան նոյն այդ վրանին դիմաց: Ինչո՞ւ: Պատասխանը կը գտնուի հետեւեալ բառերուն մէջ. «Այդ օրերը Տէրոջ խօսքը հազուադէպ էր, ու յայտնի տեսիլք չկար» (Ա.Թագաւորներուն 3.1, շեշտադրումը՝ մեր կողմէ): Աստուծոյ յայտնութեան պակասը կը խօսի Անոր ներկայութեան բացակայութեան մասին. գոյութիւն չունէր, ինչպէս էր կացութիւնը Պրագիլի ծառայութեան սկիզբը: Սակայն Մովսէսի օրերուն այդ ներկայութիւնը ամբողջութեամբ հոն էր:

Ինչ կրնանք եզրակացնել այդ օրինակներէն: Որքան մեծ ըլլայ Աստուծոյ յայտնուած փառքը, այդքան մեծ եւ արագ կ'ըլլայ անպատկառ

վարմունքի դատաստանը: Հետեաբար *ուշացուած դատաստան չի նշանակեր չկայ դատաստան*: Այդ պատճառով Պողոս կը գրէ.

Շատ մը մարդոց մեղքերը յայտնի կ'երեւին, նոյնիսկ որեւէ դատաստանէ առաջ, իսկ ուրիշներու պարագային ետքը կը յայտնուին: (Ա.Տիմոթէոսի 5.24)

Իմաստութիւն է բնաւ չարտօնել՝ որեւէ պայմանի տակ, անպատկառ, սովորական կամ ծանօթ բանի մը հետ վարուելու պէս վարմունքը Աստուծոյ հանդէպ: Իրականութեան մէջ վտանգը անելի մեծ է երբ Իր փառքը չի յայտնուիր: Ինչո՞ւ: Քանի որ դատաստանի բացակայութեան պատճառով անելի դիրքին է անպատկառութեան վիճակի մէջ իյնալ՝ այն խաբուսիկ համոզումին պատճառով թէ՛ ընդունուած ենք: Եթէ ատիկա պատահի, մենք կրնանք դիրութեամբ իյնալ այն համոզումին մէջ, թէ Աստուծոյ հոգը չէ մեր անպատկառութիւնը, ինչպէս պիտի տեսնենք յաջորդ գլուխին մէջ:

Անձնականացնել

Հատուած– «Ինծի մօտեցողներուն մէջ սուրբ պիտի ըլլամ, եւ ամբողջ ժողովուրդին առջեւ պիտի փառաւորուիմ»: (Դեւտացիներու 10.3)

Միտք– Որքան մեծ ըլլայ Աստուծոյ յայտնուած փառքը, այդքան մեծ եւ արագ կ'ըլլայ անպատկառ վարմունքի դատաստանը: *Հետեաբար ուշացուած դատաստան չի նշանակեր չկայ դատաստան*:

Խոկալ– Ինչպէս կրնամ Տիրոջ մօտենալ աղօթքով, եկեղեցիին մէջ, պաշտամունքի ընթացքին, մինչ Աստուծոյ Խօսքը կ'ուսուցանուի կամ ամենօրեայ կեանքի մէջ: Արդե՞ծք սովորական ձեւով կը նայիմ Իրեն մօտենալուն: Արդե՞ծք մոռցած եմ այն իրականութիւնը, որ Աստուած միայն իմ Հայրս չէ, այլեւ սուրբ Աստուածն է, որ լափող կրակ է:

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, ներողութիւն կը խնդրեմ Քեզի սովորական եւ անպատկառ ձեւով մօտենալուս համար: Մոռցած եմ, թէ Դուն ճիշդ ո՞վ ես եւ շատ ծանօթ դարձած ես ինծի: Կը զղջամ, եւ այլեւս Քեզ պիտի չտեսնեմ իբրեւ «բարեկամ մը», այլ՝ պիտի պատուեմ Քեզ իբրեւ այն սուրբ Աստուածը, որ ես: Շնորհակալ եմ, որ այդքան ազնիւ ես եւ գթառատ եւ անպատկառ վարմունքիս համար ինծի ներելուդ համար: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն:

Դաւանութիւն– Պիտի պատուեմ զԱստուած որքան ալ հզօր կամ մեղմ կերպով յայտնէ Իր ներկայութիւնը:

Արդարեւ մարդուն
ճամբաները Տէրոջ աչքերուն
առջեւ են, Եւ ինք անոր բոլոր
քայլերը կը քննէ:

– ԱՌԱԿՆԵՐՈՒ 5.21

10 | ԱՍՏՈՒԱԾ ՉԻ ՏԵՄՆԵՐ

Ինչպէս արդէն ըսինք, մեր սուրբ վախը կ'աճի Աստուծոյ փառքի մեր ըմբռնումին հետ համեմատաբար: Հակառակն ալ ճիշդ է. որքան քիչ վախնանք Իրմէ այդքան կը պակսեցնենք Անոր մեծութիւնը՝ նոյնիսկ մարդկային սահմանափակումներու մակարդակին:

Աշխարհի համակարգը կը նմանի գետերու ամէնէն ալիքոտ տեղերուն, ուր գետը իր ամէնէն կատաղի ընթացքին մէջ է եւ զօրութեամբ կը զարնուի մարդուն շունչին կամ ներքին անձին՝ փորձելով փարատել անոր Աստուծոյ փառքի գիտակցութիւնը: Այդ գետին նիւթը խօսքեր են, խորհուրդներ, պատկերներ, *վիպէտներ* կամ որեւէ ուրիշ միջոց, որ կրնայ գործածուիլ բարձրացնելու համար մահկանացու մարդը՝ պակսեցնելով մեր Ստեղծիչին մեծութիւնը:

Ան, որ չունի սուրբ վախ դիպրութեամբ տեղի կու տայ այդ ոյժին դիմաց եւ կը սահի այն մտայնութեան մէջ, որ կը հաւատայ, թէ Աստուած նկատի չ'առներ իր ըրածները կամ հոգը չէ: Այս ձեւի խորհուրդներ կը սկսին կազմուիլ՝ *Ես բացառութիւն մըն եմ, Ես զերծ եմ դատապարտութենէ, Ես մարդոց մեծամասնութենէն տարբեր չեմ, Աստուած աչք կը խփէ իմ շարժառիթներուս, խօսքերուս կամ արարքներուս... մինչեւ՝ Այնքան բան կը պատահի, որ Աստուած որոն պիտի հասնի...*

[Ամբարիշտը] իր սիրտին մէջ կ'ըսէ. Աստուած մոռցեր է իր երեսը ծածկեր է, որպէսզի ամենեւին չտեսնէ: (Սաղմոսներու 10.11)

Շատ մը տարբերակները կան այդ սխալ եւ վտանգաւոր մտայնութեան, բայց բոլորն ալ վերջաւորութեան կը տանին մտածելու,

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

որ Աստուծոյ կարողութիւնները աւելի ստորադաս են քան ինչ որ իրապէս են: Տարբեր չէ անկէ, որ կը մտածենք, թէ ծնող մը, գործատէր մը, ուսուցիչ մը, մարզիչ մը կամ ոեւէ ուրիշ ղեկավար մը կրնայ չնկատել մեր վարմունքը կամ չկարենայ հետեւիլ անոր: Այդ ծուղակին մէջ բռնուած անծերը իրենք զիրենք կը մխիթարեն մտածելով, թէ՛ հետեւելիք չափազանց շատ մանրամասնութիւններ կան եւ այդպիսով կը պզտիկցնեն Աստուծոյ կարողութիւնը:

Մէկ քայլ անդին երթանք: Եթէ մէկը շարունակէ քալել ոչ միայն սուրբ վախ չունենալու այլեւ անկէ փախուստ տալու այդ սահուն ճամբուն մէջ, վտանգին տակ կ'ըլլայ այն սատանայական համոզումին թէ՛ *Աստուած չի տեսներ իմ շարժառիթներս, խօսքերս կամ արարքներս*: Բան մըն է հաւատալը, թէ Աստուած չի տեսներ քեզ, անպատկառութեան ուրիշ մակարդակ մըն է մտածելը, թէ Ան *անկարող է տեսնելու...*

Կարելի է ծածկել կամ պահել մեր խօսքերը, արարքները եւ շարժառիթները ուրիշ մարդ արարածներէ: Կրնանք բաներ ընել գաղտնի՝ մութին մէջ, շուքին մէջ, ուր ուրիշներ չեն տեսներ: Բայց երբ կը հաւատանք, թէ կրնանք մեր խորհուրդները կամ ճամբաները ծածկել Ամենակարող Աստուծմէ՛ ինքնախաբէութեան մէջ ենք: Այդ սխալ ենթադրութիւնը՝ ըլլայ անիկա գիտակցաբար կամ անգիտակցաբար, կը բնակի ամէն շունչի կամ անձի մէջ, որ զուրկ է սուրբ վախէ: Աստուածաշունչը մեզի կ'ըսէ.

Վայ անոնց, որ խորունկ տեղ կը փնտռեն՝ իրենց ծրագիրները Տէրոջմէն պահելու համար, իրենց գործերը խաւարին մէջ կը կատարեն ու կ'ըսեն. «Մեզ ո՞վ կը տեսնէ, մեզ ո՞վ կը ճանչնայ»: (Եսայիի 29.15)

Սկիզբը կրնաս մտածել, թէ Եսայի կը խօսի ամբարիշտներուն մասին. անհաւատներուն, որոնք չեն ուզեր եկեղեցի մտնել կամ պաշտամունքի մը ներկայ ըլլալ: Սակայն վերի տողերը յատուկ կերպով գրուած են *Քրիստոսը դաւանող հաւատացեալներու* համար: Իրապէս: Քանի որ այդ հաստատումէն առաջ կը կարդանք.

Հետեւաբար Տէրը կ'ըսէ. «Քանի այս ժողովուրդը իր բերանով կը մօտենայ ինձի, միայն իր շրթունքով կը պատուէ զիս. բայց իրենց սիրտը ինձմէ հեռացած է, եւ ինձմէ ունեցած իրենց վախը մարդոց սորվեցուցած պատուիրան մըն է»: (Եսայիի 29.13)

Արդիականացնենք այդ խօսքը: Այդ մարդիկը կը դաւանին

Յիսուսի հետ յարաբերության մէջ ըլլալը, որովհետեւ փրկուած են Անոր շնորհքով: Անոնք բերանացիօրէն կը պատուեն զԱյն, ներկայ կը գտնուին Քրիստոնէական խորհրդատողովներու, *Սփորթիֆայի* վրայ մտիկ կ'ընեն պաշտամունքի երգեր, սակայն իրենց ներքին անձին մէջ համոզուած են, որ Տէրը *կարող չէ* տեսնելու կամ լսելու այն ինչ որ կը մտածեն կամ կ'ընեն: Անոնց մտային վիճակը աւելի վատ է քան այն շատերունը, որոնք բնաւ չեն հետեւիր Յիսուսի: Անոնք կը հաւատան սուտի մը, եւ աւելի վատը այն է, որ գիտակից չեն իրենց սխալին:

Կրնաս ըսել. «Անկարելի է: Այդպիսի բան չի կրնար ըլլալ»: Ետ երթանք Նոր Կտակարանի այդ զոյգին, որոնց մասին խօսեցանք նախորդ գլուխին մէջ. Անանիան եւ Սափիրան (կարդա՛ Գործերը 5): Անոնց պատմութեան ետին գտնուող իրականութիւնները կարելու դեր կը խաղան այդ զոյգի սխալ վարմունքը հասկնալու մէջ: Անոնց պատմութիւնը իրականութեան մէջ կը սկսի 4–րդ գլուխին մէջ.

Բառնաբաս [...] Կիպրոս ծնած Ղեւտացի մըն էր, որ իր ունեցած արտը ծախեց եւ դրամը բերաւ առաքեալներուն յանձնեց: (Գործերը 4.36–37)

Այդ ժամանակաշրջանին Կիպրոս շատ հարուստ կղզի մըն էր. հարուստ՝ թանկարժէք քարերով, պղինձի եւ երկաթի հանքերով եւ փայտի մեծ պաշարով: Անիկա հռչակաւոր էր իր ծաղիկներով, պտուղներով, գինիով եւ իւղով: Եթէ Կիպրոսի մէջ հողաշերտ մը ունենայիր, շատ հաւանաբար բարեկեցիկ էիր:

Հետեւեալը պատկերացուր. Կիպրոսէն հարուստ Ղեւտացի մը կը բերէ մեծ գումար մը՝ իր հողատարածքի վաճառքէն ձեռք ձգուած, եւ ամբողջ եկեղեցիին դիմաց առաքեալներուն կու տայ զանիկա: Ատկէ ետք ինչ կը պատահի:

Բայց Անանիա անունով մէկը, որուն կինն էր Սափիրա, իր կալուածը ծախեց: (Գործերը 5.1)

Նկատի առ առաջին բառը՝ «Բայց»: Անիկա շաղկապ մըն է, որ կը կապէ գաղափարները եւ կը շարունակէ նախադասութեան միտքը: Այս պարագային նոր գլուխը այդ շաղկապով սկսիլը կը դադրեցնէ պատմութեան շարունակականութիւնը:

Այդ հարուստ նորեկը եկեղեցիին կը միանայ եւ կ'ընէ շատ մեծ նուիրատուութիւն մը, որուն ականատես կ'ըլլան բոլորը: Անոր այդ նուէրը հակազդեցութիւն մը կը յառաջացնէ այդ զոյգին մէջ: Անոնք անմիջապէս կալուած կը ծախեն եւ...

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

Իր կնոջ գիտութեամբ [Անանիա] դրամին մէկ մասը մէջէն վերցնելով՝ մնացեալ մասը բերաւ յանձնեց առաքեալներուն: (Գործերը 5.2)

Ինչն էր պատճառը անոնց այդ արարքին կամ հակազդեցութեան: Կրնայ ըլլալ, որ այդ զոյգը մինչեւ այդ ժամանակ եկեղեցիին մէջ ամէնէն մեծ նուիրատուութիւն ընողներն էին: Եթէ այդպէս էր, արդեօք անհկա գրաւմ իր ղեկավարներուն եւ ժողովուրդին ուշադրութիւնը: Պէտք է յիշենք, որ տալը պարգեւ մըն է, եւ ճիշդ ինչպէս շատեր նկատի կ'առնեն կամ կը գնահատեն զանազան պարգեւները, ինչպէս՝ ծառայելը, քարոզելը, հիւրընկալութիւնը, ուսուցանելը, ղեկավարութիւնը եւ ուրիշներ, առատաձեռնութեան պարագային ալ նոյնն է. անհկա կը գնահատուի (տես Բ.Կորնթացիներուն 9.12–13): Արդեօք այդ զոյգը պէտք եղածէն աւելի հաճոյք կը ստանար իր ստացած յարգանքէն եւ ուշադրութենէն: Արդեօք իրենց անապահովութիւնները գրգռուեցան երբ զգացին, որ եկաւ նոր մէկը, որ իրենցմէ աւելին ըրաւ: Արդեօք ամբողջ ժողովուրդը կը տօնէր այդ մարդուն հսկայական նուէրը եւ թէ անհկա հրքան օգտակար պիտի ըլլար իրենց աւետարանչութեան եւ աղքատներուն օգնելու գործին, ինչ որ անոնց ուշադրութիւնը շեղած էր Անանիայէն եւ իր կնոջմէն:

Թերեւս այդ զոյգը կը ցանկար իր կորսնցուցած ուշադրութիւնը, ուստի հողաշերտ մը ծախեց. թերեւս իրենց մեծագոյն կալուածն էր անհկա: Անոնք մտածեցին. «Անհկա շատ մեծ գումար մըն է, բոլորը չենք կրնար տալ: Բայց կ'ուզենք *այնպէս երեսիլ*, թէ կու տանք բոլորը: Ուստի եկուր միայն մէկ մասը տանք, բայց ըսենք, թէ անհկա լման գինն է»: Այդ խաբէական մտածելակերպը կրնար ինքն իրեն համար արդարացում գտած ըլլար այն պատճառաբանութեան մէջ, թէ՛ իրենց այդ ըրածը կրնար քաջալերել ուրիշները, որ աւելի մեծ նուէրներ տային:

Երեսոյթը աւելի կարեւոր էր քան ճշմարտութիւնը եւ հետեւաբար առաջնորդեց խաբէութեան: Ինչպէս կրնայ ըլլալ, որ այդ զոյգը բնաւ մտածած էր, թէ Աստուած պիտի չտեսնէր իրենց այդ ըրածը:

Անոնք կանխամտածեցին, որոշեցին եւ համաձայնեցան այդ մօտեցումին շուրջ: Հաւատալով, որ կրնային իրենց ծրագիրը ծածկել Տիրոջմէ, անոնք իրենց չար արարքը ըրին խաւարին մէջ... Եւ տեղ մը իրենց ներքին անձին մէջ մտածեցին. *Տէրը չի գիտեր եղածը...* (Եսայիի 29.15–ին մէջ մեր կարդացածին նման:) Անոնք իրենց կեանքով վճարեցին իրենց այդ արարքին գինը. երկուքն ալ նոյն օրը թաղուեցան...

Ինչպէս կրնայ ըլլալ, որ երկու Քրիստոսը դաւանող հաւատացեալներ, որոնք ակնատես եղած էին նախորդ գլուխներուն մէջ մեր կարդացած հրաշքներուն՝ հովին փչելուն եւ ամբողջ քաղաքին ուշադրութիւնը գրաւելուն, մէկ անակնկալ հաւաքի ընթացքին հազարաւորներու փրկութեան, անդամալոյծի մը հրաշքով ելլել-քալելուն, Աստուծոյ զօրութեամբ շէնքի մը շարժելուն եւ շատ ուրիշներու, մտածեն, որ կրնան իրենց շարժառիթները պահել Ամենակարող Աստուծմէ:

Կամ ինչպէս Ադամը եւ Եւան՝ որոնք Աստուծոյ հետ քալեցին պարտէզին մէջ, կրցան հաւատալ, թէ կրնային պահուիլ Իրմէ մեղք գործելէն ետք (տես Ծնունդներու 3.8):

Ինչպէս կրցաւ Իսրայէլի ժողովուրդը ըսել. «Տէրը մեզ չի տեսներ» (Եզեկիէլի 9.9):

Կամ ինչ կը մտածէք հետեւեալ ցնցիչ հաստատումին մասին. «Մարդն որդի, կը տեսնես, թէ ինչքի կ'ընեն Իսրայէլի տան երէցները խաւարին մէջ. իրաքանչիւրը իր ծածուկ պատկերատան մէջ. որովհետեւ կ'ըսեն. "Տէրը մեզ չի տեսներ. Տէրը երկիրը լքած է"» (Եզեկիէլի 8.12):

Ո՛րքան յաճախ անմտօրէն կը մտածենք, թէ կրնանք Տիրոջմէ ծածկել մեր հեռացած սիրտերը:

Մէկ խօսքով, այդ բոլոր պատմութիւնները ունին հասարակաց արմատ մը, որ ծնունդ կու տայ այդ սխալին. այդ արմատը սուրբ վախի պակասն է: Ինչ աստիճանի, որ է անոր պակասը մեր մէջ, այդ չափով ալ մեր ներքին անձին կամ հոգեբանութեան մէջ պզտիկ կամ նուազ կը տեսնենք Աստուծոյ կարողութիւնները: Եւ ամէնէն վախնալիք բանը այն է, որ մենք անգիտակից կ'ըլլանք մեր վիճակին. մեր զանազանութեան կարողութիւնը կը բթանայ: Այդ պարագային մասին է, որ պիտի խօսինք յաջորդ քանի մը գլուխներուն մէջ:

Անձնականացնել

Հատուած- Բոլոր եկեղեցիները պիտի գիտնան՝ թէ նա եւ որ կը ճանչնամ մարդոց ցանկութիւններն ու մտածումները, եւ իրաքանչիւրին կը հատուցանեմ իր գործերուն համաձայն: (Յայտնութիւնը 2.23)

Միտք- Աստուած գիտէ ոչ միայն մեր ըրածները, այլեւ մեր ըրածներուն ետին գտնուող մեր շարժառիթները:

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

Խոկալ– Արդեօք ես շարունակ կ’ապրիմ այն գիտակցութեամբ, թէ Աստուած գիտէ իմ ամէնէն խորունկ խորհուրդներս, շարժառիթներս եւ մտադրութիւններս: Ինչպէս կրնամ աւելցնել այդ ճշմարտութեան վերաբերեալ իմ արթնութիւնս:

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, կը խնդրեմ, որ իմ շարժառիթներս եւ մտադրութիւններս ըլլան Յիսուսի շարժառիթներուն եւ մտադրութիւններուն չափ մաքուր: Թող զտեմ բոլոր խորհուրդներս, փափաքներս, խօսքերս եւ արարքներս այն հասկացողութեամբ, որ Դուն շարունակ կը քննես իմ ճամբաներս: Թող բնաւ չնուազեցնեմ այդ ճշմարտութիւնը Քու մասիդ իմ ըմբռնումիս մէջ: Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն– Կեանքս պիտի ապրիմ գիտնալով, որ Աստուած ամբողջապէս տեղեակ է մտադրութիւններէս, խորհուրդներէս, խօսքերէս եւ արարքներէս:

Ինչո՞ւ այս Երուսաղեմի
ժողովուրդը մշտապես
ուխտադրժութեամբ շեղեցաւ:

– ԵՐԵՄԻԱՅԻ 8.5

11 | ԱՇ ՈՒ ԴՈՂ

Աստուծոյ ահաւոր ներկայութիւնը եւ ատոր իբրեւ արդիւնք Անանիայի եւ Սափիրայի վրայ եկած դատաստանը «մեծ վախ» բերաւ եկեղեցիին վրայ: Դարձեալ պէտք է շեշտենք, թէ *քաղաք* բառը չէ գործածուած, այլ՝ *եկեղեցի*. սուրբերուն հաւաքոյթը: Երբ սերտենք *մեծ վախ* եզրին յունարէնը, աւելի խոր կերպով կը հասկնանք, թէ ինչ կ'ըսուի մեզի:

Առաջին բառը՝ *մեծ*, յունարէն *մե'կաս* բառն է, որ *Կրիք-Ինկլիշ Լեքզիքոն աֆ տը Նիու Թեսթիմընթին* համաձայն կը սահմանուի իբրեւ՝ «կշիռքի մը վերի սահմանը... մեծ չափով, սաստիկ, սուկալի»: Մեր անգլերէնի *մեկա* (շատ մեծ, հսկայ) բառը անկէ կու գայ: Շատ յստակ է մեզի հաղորդուածը. կրնանք ըսել՝ «*մեկա* վախ»: Ի մտի ունեցիր, որ Աստուածաշունչը գրողները չեն չափազանցեր:

Երկրորդ բառը՝ *վախ*, յունարէն *ֆո'կոս* բառն է, որ ամբողջ Նոր Կտակարանին մէջ յաճախ կը գործածուի *սուրբ վախ* ըսելու համար: Անիկա կը սահմանուի իբրեւ՝ «վախ, սուկում, ականածանք, յարգանք, պատիւ»: *Կրիք-Ինկլիշ Լեքզիքոն աֆ տը Նիու Թեսթիմընթ. Պէյսթ ան Սեմանթիք Տոմէնզը* զանիկա կը սահմանէ իբրեւ՝ «խորունկ յարգանք եւ ահ աստուծոյ մը հանդէպ. ականածանք, ահ»: Դարձեալ կը հանդիպինք *ահ* եւ *սուկում* բառերուն, որոնք բարձր աստիճանի վախ կ'ենթադրեն: Պօղոս կը գործածէ նոյն բառերը երբ կը գրէ.

Հետեալբար, սիրելիներս, ինչպէս ամէն ատեն հնազանդեցաք, ո՛չ միայն իմ ներկայութեանս մէջ, հապա ակ աւելի հիմա՝ իմ բացակայութեանս ատեն, գործադրեցէք ձեր փրկութիւնը՝

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

ահով ու դողով: Որովհետեւ Աստուած է որ ձեր մէջ կը ներգործէ թէ՛ կամենալը եւ թէ՛ ընելը՝ իր բարեհաճութեան համաձայն: (Փիլիպպեցիներուն 2.12-13, շեշտադրումը՝ մեր կողմէ)՝

Մեր փրկութիւնը չի գործադրուիր *սիրով եւ ազնուութեամբ*, այլ՝ *ահով ու դողով*, ինչ որ մանրամասնօրէն պիտի քննարկենք յետագային: Անգամ մը եւս մեզի հաղորդուածին լրջութիւնը կամ խստութիւնը մէկ աստիճան եւս կը բարձրանայ նոր բառով մը՝ *դողով*: Անիկա յունարէն *թորմոս* բառն է, որ կը սահմանուի իբրեւ՝ «դողալ վախի, սոսկումի... կամ խորունկ ակնածանքի, յարգանքի, սարսափի կամ ահի պատճառով»: Միայն հոս չէ գործածուած այդ եզրը. Պօղոս առաքեալ այդ երկու բառերը միասին կը գործածէ չորս անգամ Նոր Կտակարանին մէջ:

Հակառակ անոր որ *սուրբ վախի* մասին մեր քննարկումը ամբողջական ձեւով չենք կատարած, հասած ենք տեղ մը, ուր կրնանք հարց տալ, թէ Աստուծոյ Խօսքի ռեւէ ուսուցիչ ինչպէս կրնայ զանիկա սահմանափակել միայն «մեծարական պաշտամունք» սահմանումին մէջ: Միայն այս գլուխին մէջ եւ այն քանի մը համարներուն, զորս լուսարձակի տակ առինք, դէմ յանդիման գտնուեցանք բաւական զօրաւոր բառերու: Ահա անոնց ցանկը. *մեկա* (շատ մեծ կամ հսկայական) վախ, ահ, սոսկում, խորունկ յարգանք, դող եւ սարսափ:

Ասոնք միայն բառեր չեն, որոնք կը նկարագրեն Քրիստոսի մէջ մեր կեանքի մէկ պզտիկ բաժինը. այլ՝ անոնք կը թելադրեն, թէ մեր *փրկութիւնը ինչպէս կը գործադրուի*. Եզր մը, որ կը նկարագրէ, թէ ինչպէս մեր ջանքերը՝ Սուրբ Հոգիին հետ համագործակցաբար եւ Անոր կողմէ լիազօրուած, իրենց ամբողջական հասունութեան կը հասցնեն այն ինչ որ Յիսուս ձրիաբար կը հայթայթէ մեզի: Ասկէ անդին այսպէս պիտի ըսենք. *մեր փրկութիւնը կը հասուննայ ահով ու դողով*:

Ասիկա ի մտի ունենալով, ինչհիւ սուրբ վախը այն ամէնէն առաջին ճշմարտութիւններէն մէկը չէ, որ կը սորվեցուի մեր եկեղեցիներուն, տնային խմբակներուն եւ Աստուածաշունչի Դպրոցներուն մէջ: Կրնայ ըլլալ, որ ատիկա է պատճառը արեւմտեան աշխարհին մէջ այդքան մեծ թիով գաղջ Քրիստոնեաներու գոյութեան: Եւ կրնայ ըլլալ, որ այդ պատճառով է, որ Աստուածաշունչը կը զգուշացնէ վերջին օրերուն «հաւատքի մեծ նահանջ»ի մը մասին: Պօղոս կը գրէ, թէ Նեռը կամ հակաՔրիստոսը պիտի ջլատնուի մինչեւ որ «ապստամբութիւնը չըլլայ

1 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

[մինչեւ որ չգայ ակնկալուած հաւատքի մեծ նահանջը անոնց, որոնք իրենց Քրիստոնէայ ըլլալը դաւանած են]» (Բ.Թեսաղոնիկեցիներուն 2.3): Կրնայ ըլլալ, որ այդ հաւատքի նահանջին պատճառը մեր կողմէ սուրբ վախը պարզի առնելն է: Քառասուն տարի աղօթքի եւ սերտողութեան նուիրուած ըլլալով եւ Ամերիկայի բոլոր նահանգներուն ինչպէս նաեւ վաթսուն երկիրի մէջ ծառայած ըլլալով, կը հաւատամ, որ այդպէս է:

Մէկ քայլ անդին երթանք: Եկեղեցւոյ ամէնէն նախնական կամ հիմնական ուսուցումներէն մէկը «յաւիտենական դատաստան»ն է: Ուշադրութեամբ կարդա՛մ հետեւեալ բառերը.

Ուստի, քրիստոնէական հաւատքի *նախագիտելիքները* ձգելով՝ գանք չափահասներու յատուկ գիտելիքներուն: Չենք ուզեր վերստին խօսիլ այն *հիմնական* գիտելիքներուն մասին [...] յաւիտենական դատաստանին: (Եբրայեցիներուն 6.1-2, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Իրականութիւնը այն է, որ բոլորս ալ հաշիւ պիտի տանք երկրի վրայ մեր ապրելու ձեւին համար: Այդ դատաստանի արդիւնքը յաւերժական է՝ յաւիտենական: Հաւատացեալին համար անիկա կը կոչուի՝ «Քրիստոսի դատարանը»:

Խօսինք երկու շեշտադրուած բառերուն մասին: Առաջին՝ *նախագիտելիք*: Պզտիկ մը ինչ կը սորվի նախակրթարանին մէջ: Ինչպէս կարդալ, գրել, գումարել, հանել եւ ուրիշ հիմնական հմտութիւններ: Այլ խօսքով, ձեռք կը ձգենք մեր կրթութիւնը յառաջ տանելու համար անհրաժեշտ աղիւսները: Կրնան պատկերացնել երկրորդական վարժարան կամ գոլէճ անցնիլ առանց կարդալու, գրելու, գումարելու կամ հանելու կարողութիւններուն: Անկարելի է:

Յայտնաբերած եմ, որ մեծ թիով հաւատացեալներ անտեղեակ են այն դատաստանէն, զոր պիտի դիմագրաւեն, կամ, լրագոյն պարագայի, միայն ծանօթ են այդ բառին, բայց լման չեն քննած, թէ ինչ է անիկա: Կը նմանի անոր, որ կը գիտնաս, թէ նախակրթարանին մէջ սորվելիք հմտութիւնները կարեւոր են, բայց բնաւ չես սորվիր զանոնք: Շատ կարեւոր հարցում մը, զոր պէտք է հարցնենք հետեւեալն է. հաւատացեալները ինչպէս կը կերտեն իրենց կեանքերը Քրիստոսի մէջ առանց այդ *նախնական* ճշմարտութեան:

Նկատի առնենք միւս շեշտադրուած բառը. *հիմնական*: Կրնան պատկերացնել շէնք մը կառուցանել առանց հիմերու: Եթէ կլիման

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անկոլիֆայտ Պայպլը*, *Քլասիք Էրիշըն* (AMPC) տարբերակէն

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

հանդարտ է, շէնքը կրնայ բարձրանալ եւ ոտքի մնալ: Բայց երբ զօրաւոր փոթորիկ մը ելլէ, կը փլի շէնքը: Ատիկա կրնայ ներկայացնել հաւատքէն հեռանալը: Պարնա Կրուփը՝ վիճակագրութիւններ ընող աւետարանական Քրիստոնէական կազմակերպութիւն մը, կը տեղեկացնէ, թէ աւելի քան քառասուն միլիոն ամերիկացիներ հաւատքէն հեռացած են 2000–ի եւ 2020–ի միջեւ: Անոնց կէտը ներկայիս կ'ըսեն, թէ Քրիստոնէայ չեն. անաստուած կամ անգիտական (*ակնոսթիք*) են: Կրնայ ըլլալ, որ մեր *հիմնական* ուսուցումի պակասը կը նպաստէ այդ աղիտալի վիճակագրութեան:

Արագ ձեւով նայինք, թէ ինչ բանի հետ կապ ունի մեր դատաստանը:

Բայց վստահութիւն ունինք, եւ շատ աւելի պիտի ուզէինք այս մարմինէն դուրս գալ եւ Տիրոջ քով ըլլալ: (Բ.Կորնթացիներուն 5.8)

Անմիջապէս կը գիտնանք, թէ Պօղոս կը խօսի միայն հաւատացեալներու: Երբ անհաւատ մը կը ձգէ իր մարմինը, ան Աստուծոյ ներկայութեան մէջ չ'ըլլար:

Ուստի, այս մարմինին մէջ մնանք թէ հեռանանք, մեր միակ ձգտումն է՝ Աստուծոյ *հաճելի* ըլլալ: (Բ.Կորնթացիներուն 5.9, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Երբ մեր տղաքը դեռահաս տարիքի մէջ էին, Լիսան եւ Ես միշտ առիթներ կը փնտռէինք զիրենք բարեպաշտութեան մէջ մարզելու: Անոնց մարզումին մէջ կարեւոր էր, որ սորվէին իրենք զիրենք բնականաբար ամէն առանձնաշնորհումի կամ յատուկ վարմունքի արժանի չտեսնել: Երեկոյ մը անոնց ըսի. «Տղաք, չկայ բան մը, որ կրնաք ընել, որ պատճառ ըլլայ, որ ձեր մայրը եւ Ես ձեզ աւելի կամ պակաս սիրենք քան որքան որ հիմա կը սիրենք»:

Իրենց քով արձանագրուեցաւ մեր անպայմանական սէրը: Ատիկա ըսելէս ետք, հետեւեալը ըսի. «Բայց դուք էք պատասխանատուն ձեր մեզի հրճան հաճելի ըլլալուն»: Ատիկա զարմացուց զիրենք եւ նորութիւն մըն էր իրենց համար:

Ահա՛ ճշմարտութիւնը: Մենք չենք կրնար որեւէ բան ընել, որպէսզի Աստուած մեզ սիրէ աւելի շատ կամ քիչ, բայց մենք ենք պատասխանատուն մեր Անոր հրճան հաճելի ըլլալուն: Ատոր համար Պօղոս կ'ըսէ, թէ իր նպատակն է «Աստուծոյ հաճելի ըլլալ»: Ինչո՞ւ:

Որովհետեւ պէտք է որ բոլորս ալ [հաւատացեալներս] ներկայանանք Քրիստոսի դատարանին առջեւ, որպէսզի

իրաքանչիւրը ստանայ այն բաներուն համեմատ՝ որ իր մարմինին մէջ եղած ատեն ըրած է, բարի կամ չար: Ուրեմն՝ գիտնալով *Տիրոջ վախը*՝ կը համոզենք մարդիկը: (Բ.Կորնթացիներուն 5.10–11, շեշտադրումը՝ մեր կողմէ)՝

Այդ դատարանին առջեւ պիտի չդատուինք այն մեղքերուն համար, որոնց համար զղջացած ենք. անոնք արդէն իսկ ջնջուած են Յիսուսի արինով: Աստուած «Ո՛րչափ արեւելքը արեւմուտքէն հեռու է, այնչափ հեռացուց մեզմէ մեր յանցանքները» (Սաղմոսներու 103.12): Դարձեալ, Աստուած կ'ըսէ՝ «Ես պիտի քաւեմ իրենց անիրաւութիւնները, ալ պիտի չիշեմ իրենց մեղքերն ու անօրէնութիւնները» (Եբրայեցիներուն 8.12):

Ուրեմն ինչպէս պիտի ըլլայ մեր դատաստանը: Պիտի քննուի իբրեւ հաւատացեալներ մեր ապրած կեանքը. թէ՛ լաւը եւ թէ՛ վախը պիտի քննուի:

Մեր ներկայի նիւթին համար կարեւոր բանը այն է, որ Պօղոս Տիրոջմէ վախնալը կը կապէ հաւատացեալին դատաստանին հետ: Ինչպէս նախապէս նշեցինք, վախին յունարէնը *Ֆոփոսն* է, որ գործածուեցաւ նկարագրելու համար Անանիայի եւ Սափիրայի հետ պատահածին նկատմամբ եկեղեցիին հակազդեցութիւնը: Ասիկա մեզ կը մղէ հարցնելու կարեւոր հարցում մը. այդ գոյգին հետ պատահածը կրնայ նախապատկերը ըլլալ հաւատացեալի դատաստանին: Այդ հաւանականութիւնը պիտի քննենք յառաջիկայ քանի մը գլուխներուն մէջ:

Անձնականացնել

Հատուած– Որպէսզի ընթանաք (ապրիք եւ դուք ձեզ պահէք) Տիրոջ արժանի կերպով՝ ամբողջութեամբ հաճելի իրեն եւ ամէն բանի մէջ զի՛նք հաճեցնելու փափաքով, պտուղ տալով ամէն բարի գործի մէջ: (Կողոսացիներուն 1.10)²

Միտք– Չկայ բան մը, որ կրնաս ընել, որուն պատճառով Աստուած քեզ աւելի կամ պակաս պիտի սիրէ քան որքան որ հիմա կը սիրէ: Բայց դուն ես պատասխանատուն անոր թէ՛՛ որքան հաճելի ես Իրեն:

1 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանում, 2001

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի ԱմփոխՖայր Պայպլը, Քլասիք Էփիշոն* (AMPC) տարբերակէն

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

Խոկալ– Արդեօք կեանքս հաճելի է Աստուծոյ: Ինչպէս կրնամ գիտնալ, թէ ինչ բանը կը հաճեցնէ զԻնք եւ ինչ բանը՝ ոչ:

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, կը խնդրեմ, որ Խօսքին միջոցաւ եւ Սուրբ Հոգիովդ յայտնես ինծի այն ինչ որ հաճելի է քեզի եւ այն ինչ որ չէ: Տո՛ւր ինծի սիրտ մը եւ միտք մը, որոնք ամէն բանէ աւելի կ'ուզեն Քեզ հաճեցնել եւ ուրախացնել: Ատիկա ընելով, թող գամ ճանչնալու Քու սիրտդ եւ ապրիլ այնպէս, որ պատիւ կը բերէ Քեզի: Թող իմ այս խնդրանքներս պատրաստեն զիս օր մը Քու դատաստանիդ առջեւ կենալու եւ ստանալու այն յաւիտենական վարձատրութիւնները, զորս կ'ուզես ինծի տալ: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն:

Դաւանութիւն– զԱստուած հաճեցնելը կեանքի մէջ թիւ մէկ առաջնահերթութիւնս է: Ան իմ մէջս կը գործէ թէ՛ կամենալը եւ թէ՛ կատարելը Իր կամքը եւ Իրեն հաճելի եղածը:

Աստուծոյ հետ կապուած
նշանակալի բանը այն է, Որ երբ
Աստուծմէ կը վախնաս, ուրիշ
որեւէ բանէ չես վախնար: Մինչ
երբ Աստուծմէ չես վախնար,
ուրիշ ամէն բանէ կը վախնաս:

– ՕՐՈՒՈԼՏ ՉԷՅՄՊԸՐՁ

12 | ՎԱՐԱԿԻՉ ԿԵՂԾԱԽՈՐՈՒԹԻՒՆ

Անհրաժեշտ է յստակացնել կարելու կէտ մը այն զոյգին վերաբերեալ, որոնք իրենց կեանքը կորսնցուցին Առաքեալներուն Գործերը գիրքին մէջ: Հարցը Անանիայի եւ Սափիրայի արարքները չէին. անոնք պարզապէս սիրոյ նուէր տուին եկեղեցոյ ծառայութեան ատեն: Բարեպաշտ, սուրբ եւ գեղեցիկ արարք մըն է Աստուծոյ գործին համար ֆինանսական նուէր տալը: Անոնց մեղքը անոնց շարժառիթն էր. որոշ տպաւորութիւն մը ձգելու փափաքը:

Ասիկա կը մղէ, որ հարցնենք կարելու հարցում մը. արդեօք միայն մեր խօսքերը եւ գործերը պիտի քննուին դատարանին առջեւ: Կամ մեր խորհուրդները եւ շարժառիթներն ալ պիտի ներառուին:

Սկսինք՝ կարդալով այն զգուշացումը, որ Յիսուս տուաւ իր աշակերտներուն.

Մինչ հազարաւոր մարդիկ սկսան Յիսուսի շուրջ խոնուիլ, այնքան որ իրար կը կոխկռտէին, Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Նախ եւ առաջ զգուշացէ՛ք Փարիսեցիներուն թոխմորէն, այսինքն՝ անոնց *կեղծաւորութենէն*: Չկայ ծածուկ բան, որ ջլայտնուի եւ ոչ ալ գաղտնի բան՝ որ չգիտցուի»: (Ղուկասի 12.1-2, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Շատ բաներ ըսուած են այս երկու համարներուն մէջ: Պատկերացուր, որ Աւետարանի ծառայող մըն ես եւ քեզ լսելու կը հաւաքուի այնպիսի մեծ բազմութիւն մը, որ կարգ մը Աստուածաշունչի տարբերակներու մէջ արձանագրուած է իբրեւ «անհամար»: Ատիկա քարոզիչներուն մեծ մասին երա՛զն է: Եւ

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

սակայն ինչ կ'ընէ Յիսուս: Իր խումբին չի փսփսար, ըսելու համար. «Տղաք, ես այս գործին համար եկած եմ: Մէկ կ'ողմ կեցէք եւ ձգեցէ՛ք, որ գործս ընեմ»: Ոչ: Փոխարէնը ան կ'ընէ երեք բաներ.

Առաջին՝ Ան այդ իրականութիւնը իբրեւ կենդանի օրինակ կը գործածէ՝ աշակերտներուն տալու համար ուսուցում մը թէ՛ *ինչ ընեն, որ այդ պահին ազդեցութեան կամ հակակշիռին տակ չըլլան*: Ան այդ ապագայ ղեկավարներուն թէ՛ օրինակով եւ թէ՛ ուսուցումով կը զգուշացնէ *կեղծաւորութեան* դէմ: Անիկա յունարէն *հիփոթրիսի* բառն է եւ կը սահմանուի իբրեւ՝ «տալ տպաւորութիւն մը՝ որոշ նպատակներ կամ շարժառիթներ ունենալու մինչ իրականութեան մէջ ունենալ բոլորովին ուրիշ նպատակներ կամ շարժառիթներ»:

Փարիսեցիները կեղծաւորութեան մասնագէտներ էին. ցուցադրութեան եւ ձեւակերպութեան համար բաներ կ'ընէին: Յիսուս կը զգուշացնէ չիյնալ այդ ծուղակին մէջ՝ միշտ մաքուր շարժառիթներ ունենալով: Այլ խօսքով, Ան կը թելադրէ, որ չարտօնենք, որ ժողովրդականութիւնը կամ մարդոց հաւանութիւնը ըլլան մեզ մղողները, այլ՝ Սուրբ Հոգիով առաջնորդուինք՝ ամուր կառչելով ճշմարտութեան թէ՛ մեր սորվեցուցած բաներուն մէջ եւ թէ՛ մեր ապրելու ձեւին մէջ:

Երկրորդ՝ Յիսուս կը մատնանշէ, թէ ճիշտ արագ կեղծաւորութիւնը կրնայ տարածուիլ: Ան զանիկա կը նմանցնէ թախմորի, որ կը տարածուի ամբողջ խմորին մէջ եւ կ'ուռեցնէ զանիկա: Յիսուսի օրինակէն կը հասկնանք, թէ՛ կեղծաւորութիւնը փոխանցիկ է, բայց անիկա թախմորին պէս չէ, այլ՝ շատ վսասակար է մեր բարօրութեան:

Երրորդ՝ Ան կը շեշտէ, թէ կեղծաւորութիւնը ծածուկ չի մնար: Վստահաբար մէկու մը խօսքերուն կամ արարքներուն ետին եղող մտադրութիւնը վերջ ի վերջոյ կը բացայայտուի: Յիսուսի ըրած յաջորդ հաստատումը կը յայտնաբերէ, թէ ինչն է, որ մեզ կը պաշտպանէ անմաքուր շարժառիթներէն.

Սիրելիներ, ձեզի կ'ըսեմ.– Մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ ապա ուրիշ բան չեն կրնար ընել: Ըսեմ, թէ որմէ՛ պէտք է վախնաք: Վախցէ՛ք Աստուծմէ, որ ձեզ սպաննելէ ետք իշխանութիւն ունի դժոխք նետելու: Այո՛, կ'ըսեմ ձեզի, անկէ վախցէ՛ք: (Ղուկասի 12.4–5)

Անգամ մը եւս Յիսուս հզօր բառեր կը գործածէ *վախի* վերաբերեալ: Հոս գործածուածը յունարէն *ֆոպէօ* բառն է, որ նման է *ֆոպիսին*, զոր լուսարձակի տակ առինք նախորդ գլուխին մէջ: *Տոպէօն* կը սահմանուի իբրեւ՝ «վախի մէջ դնել, սուկում պատճառել,

վախցնել»: Յիսուս դժոխք նետուիլը կը կապէ սուրբ վախը անտեսելուն հետ: Ատիկա սարսափելի խորհուրդ մըն է, որ պէտք չէ թեթելի առնուի: Դարձեալ, կը տեսնենք սուրբ վախի կարեւորութիւնը, եւ անգամ մը եւս կը հաստատուի, որ անիկա մեծարական պաշտամունք չէ միայն:

Յիսուս մեզի կ'ըսէ, որ վախնանք Աստուծմէ, ոչ մարդոցմէ: Պարզ ձեւով ըսելով, *Աստուծոյ վախը մեզ կ'ազապէ մարդոց վախէն*, եւ *մարդոց վախը կը գերէ մեզ՝ Աստուծմէ վախնալու մեր կարողութիւնը վերցնելով մեր մէջէն*: Վստահ եղէք, որ երբ կը վախնանք մարդոցմէ, մեր շարժառիթները կ'ազդուին: «Մարդոց վախ»ը կը նմանի «Աստուծոյ վախ»ին այն իմաստով, որ անիկա անպայմանօրէն մարդոցմէ փախուստ տալը չէ, այլ՝ ընդհակառակը անիկա ունեցողը կը ջանայ գոհ պահել մարդիկը՝ իր այդ արարքին ետին ունենալով անձնական գոհացումի, պաշտպանութեան կամ շահի մը շարժառիթը: Մարդոց վախը մեզ կը ձգէ կեղծաւորութեան թթխմորի ծուղակին մէջ: Անիկա կ'առաջնորդէ մեզ ապրելու մարդոց հաւանութեան համար:

Դարձեալ, Անանիայի եւ Սափիրայի արարքը շատ ճիշդ կամ տեղին կը թուէր ըլլալ: Սակայն անոնց շարժառիթը մղեց զանոնք, որ որոշ պատկեր մը դրսեւորեն իրենց համայնքին դիմաց, եւ ատիկա էր, որ զանոնք կործանեց: Մարդիկ կրնան ընել բաներ եւ խօսիլ խօսքեր, որոնք բարեպաշտ են, բայց առանց սուրբ վախի անոնք կրնան մեղք գործել իրենց մտադրութիւններով:

Երբ եւս կը ծառայէի իմ տեղական եկեղեցիիս մէջ 1980-ականներուն, սոսկալիօրէն կապուած էի մարդոց վախով: Չէի անդրադարձած ատոր մինչեւ որ Սուրբ Հոգին բացայայտեց իմ շարժառիթներս: Այդ ատեն եւ բարձր դիրք մը ունէի մեր մեծ եկեղեցիին մէջ: Միշտ ազնուութեամբ կը վարուէի անոնց հանդէպ, որոնց հետ գործակցութեան մէջ էի եւ շարունակ գովասանքի խօսքեր կ'ըսէի, նոյնիսկ եթէ ըսածներս ճիշդ չէին: Չէի սիրեր խնդիրներ դիմագրաւելը, եւ կը խուսափէի անկէ ինչպէս մէկը կը խուսափի ժանտախտէն: Կը լսէի, որ իմ մասիս կ'ըսէին, թէ ամէնէն սիրալիր մարդոցմէ մէկն եմ եկեղեցիին մէջ: Ատիկա ուրախութիւն եւ գոհունակութիւն կու տար ինձի:

Օր մը աղօթքի ատեն լսեցի, որ Տէրը կ'ըսէ. «Տղաս, մարդիկ կ'ըսեն, թէ դուն սիրալիր եւ ազնիւ մարդ մըն ես»: Յատուկ կերպով կը յիշեմ այն ոճը, որով Աստուած ատիկա ըսաւ ինձի սիրտիս մէջ. բնաւ չզգացի, որ կը հաստատէ ատոնց ճիշդ ըլլալը:

Ուստի զգուշաւոր կերպով ըսի. «Այո, այդպէս կ'ըսեն»:

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

Ան պատասխանեց. «Գիտեն ինչն՝ աղուոր ձեով կը խօսիս եւ գովասանքի խօսքեր կ'ըսես մարդոց նոյնիսկ որ ատոնք ճիշդ չեն»:

«Ինչո՞ւ»:

«Որովհետեւ կը վախնաս, որ մերժեն քեզ: Ուստի ո՞վ է քու սիրոյդ կեդրոնը. դո՞ւն կամ իրենք: Եթէ իրապէս կը սիրես մարդիկը, ճշմարտութիւնը կը խօսիս եւ չես ստեր, նոյնիսկ մերժումի գնով»: Տնցուեցայ: Ամէն մարդ զիս սիրալիր մարդ կը համարէր, բայց երեւոյթին տակը գտնուող ճշմարտութիւնը բաւական տարբեր էր:

Նոյնպէս ալ, առաջին եկեղեցւոյ անդամները շատ հաւանաբար Անանիան եւ Սափիրան կը համարէին բարեպաշտ մարդիկ, յատկապէս, որ անոնք մեծ նուէր մը ըրին իրենց հովիւին եկեղեցւոյ ամբողջ համայնքին առջեւ: Բայց անոնց իրական շարժառիթները բացայայտուեցան: Նոյնպէս ալ իմ շարժառիթներս ինքզինքս բարձրացնել, ինքզինքս պաշտպանել եւ ինքզինքս վարձատրել էին: Իմ այդ վարմունքիս իրական պատմութիւնը կեղծաւորի մը պատմութիւնն էր:

Դիւրին է ընել բարեպաշտ, օգտակար գործեր մարդոց դիմաց եւ այդ ամբողջ ընթացքին ունենալ քու օգուտիդ ծառայող ծածուկ շարժառիթներ: Մենք կրնանք դպչիլ մարդոց սիրտերուն աղուոր քարոզով մը, բայց ներքնապէս մեր շարժառիթը անձնասէր փառասիրութիւնը ըլլայ (տես Փիլիպպեցիներուն 1.15–16): Կրնանք մեծ նուէրներ ընել աղքատներուն, բայց ատիկա ընել առանց սիրոյ (տես Ա.Կորնթացիներուն 13.3): Կրնանք մարդիկը պաշտամունքի առաջնորդել, բայց ճանչցուած կամ հռչակաւոր ըլլալու ծածուկ մտադրութիւնը ունենալ: Կրնանք ազնիւ ըլլալ մարդոց հետ մեր վարմունքին մէջ, բայց ներքնապէս քննել եւ քննադատել զանոնք: Կրնանք ցաւ արտայայտել հովիւի մը համար, որմէ խնդրուած է, որ հրաժարի իր պաշտօնէն անբարոյութիւն գործած ըլլալուն համար, բայց ներքնապէս ուրախանալ, թէ ան ստացաւ այն, ինչին որ արժանի էր: Կրնանք համեստ երեւիլ եւ հռչակել՝ «Ամէն փառք Յիսուսին կը պատկանի», մինչ ներքնապէս սիրել մարդոց գովասանքը: Տանկը անվերջանալի է:

Ահա պարզ ճշմարտութիւնը. առաջին՝ ոչ մէկ շարժառիթ կամ մտադրութիւն կը ծածկուի Աստուծմէ, եւ երկրորդ՝ վերջ ի վերջոյ պիտի յայտնաբերուի: Կարելոր հարցումը հետեւեալն է. մեզմէ ծածկուած է: Տիրոջ վախը մեզ կապի մէջ կը պահէ մեր սիրտի շարժառիթներուն հետ՝ ինչ որ չափազանց կարելոր է, քանի որ ատոր պակասը մեզ խոցելի կը դարձնէ կեղծաւորութեան խաբկանքին դիմաց:

Եկեղեցւոյ անդամները բոլորը ցնցուեցան Անանիայի

դատաստանէն, բայց ոչ անելի քան ինքը՝ Անանիա եւ ապա Սափիրա: Այդ զոյգին սուրբ վախ չունենալը կուրցուցած էր զիրենք իրենց շարժառիթներուն չարութեան նկատմամբ: Դարձեալ, պէտք է հարց տանք, թէ արդեօք անոնց պատմութիւնը նախապատկէր մըն է Քրիստոսի դատարանին առջեւ պատահելիքներուն: Յաջորդ գլուխին մէջ պիտի տեսնենք:

Անձնականացնել

Հատուած– Որովհետեւ Աստուծոյ խօսքը կենդանի է եւ ազդու, անելի հատու՝ քան որեւէ երկսայրի սուր [...] [որ] կը քննէ մտածումներն ու սրտին խորհուրդները: (Եբրայեցիներուն 4.12)

Միտք– Տիրոջ վախը մեզ կապի մէջ կը պահէ մեր սիրտի շարժառիթներուն հետ՝ ինչ որ չափազանց կարելոր է, քանի որ ասոր պակասը մեզ խոցելի կը դարձնէ կեղծաւորութեան խաբկանքին դիմաց:

Խոկալ– Ինչ ձեւերով կը միտիմ ուրիշները հաճեցնել անձնական գոհացում, պաշտպանութիւն կամ շահ ապահովելու ծածուկ շարժառիթով: Արդեօք ատիկա բան մըն է, որուն կ'ուղղուիմ երբ ճնշումի տակ ըլլամ: Ինչ մարզերու մէջ այդ միտումս պատճառ դարձած է, որ զիջիմ պարկեշտութենէս:

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, կը խնդրեմ, որ ներես ինձի իմ օգուտիս համար ուրիշներուն հաճելի ըլլալ ջանալուս համար: Սուրբ Հոգի, կը խնդրեմ, որ բացայայտես իմ կեանքիս այն բոլոր մարզերը, որոնց մէջ դիւրութեամբ տեղի կու տամ այդ ճնշումին: Կը զղջամ մարդիկը իմ զուարթութեան եւ ուրախութեան աղբիւրս դարձնելու համար փոխանակ Յիսուսը իմ աղբիւրս դարձնելը: Կը խնդրեմ, որ սիրտս լեցնես սուրբ վախով, որպէսզի շարունակ ուրիշները սիրեմ ճշմարտապէս եւ որպէսզի ջանձնուիմ կեղծաւորութեան: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն:

Դաւանութիւն– Ես պիտի սիրեմ անոնք, որոնց հետ կը գործակցիմ՝ ճշմարտութիւնը խօսելով եւ իմինիս փոխարէն իրենց օգուտը փնտռելով:

Որովհետեւ բոլորս ալ պէտք է երեւինք եւ յայտնաբերուինք ինչպէս որ ենք Քրիստոսի դատարանին դիմաց:

– Բ.ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ 5.10¹

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անկլիիֆայտ Պայպը, Քլասիք Էդիշըն* (AMPC) տարբերակէն

13 | ԵՐԵՔ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Մօտէն նայինք «յայտնաբերուինք ինչպէս որ ենք» եզրին՝ նախորդ էջին վրայ նշուած համարին մէջ: Ամէն մարդ արարած ունի երեք պատկերներ իր անձին համար. *հասկցուած* պատկերը, *դրսետորուած* պատկերը եւ *իրական* պատկերը:

Հասկցուած պատկերը մեր այն պատկերն է, զոր ուրիշները կը տեսնեն: *Դրսետորուած* պատկերը այն պատկերն է, որով կ'ուզենք երեւիլ մարդոց: *Իրական* պատկերը մեր իսկական էութիւնն է, որ կրնայ ծածկուիլ կամ չնկատուիլ ուրիշներու կողմէ, բայց ամբողջապէս տեսանելի է Աստուծոյ համար: Այդ պատկերով է, որ պիտի յայտնուինք դատարանին դիմաց:

Նկատի առ Յիսուսը: Ան սխալ հասկցուած էր, սուս ամբաստանութիւններու ենթարկուած, գինով եւ որկրամոլ համարուած, հերետիկոս պիտակուած եւ նոյնիսկ ամբաստանուած իբրեւ դիւային մղումներով գործող մէկը: Ան մերժուած էր կրօնաւոր ղեկավարներու եւ ուրիշներու կողմէ: Անոր *հասկցուած* պատկերը նպաստաւոր պատկեր մը չէր շատերու աչքին, յատկապէս նշանաւոր մարդոց:

Յիսուսի մօր կողմէ եղբայրները, որոնք իր վրայ կասկածներ ունէին օրին, ճնշում կը բանեցնէին վրան, որ որոշ պատկերով մը *դրսետորէր* Ինքզինք. «Հրէաստան գնա, որպէսզի հետետորդներդ ալ տեսնեն քու կատարած գործերդ: Որովհետեւ ով որ կ'ուզէ հրապարակի վրայ յայտնի ըլլալ՝ գաղտնաբար չի գործեր [...] Դուն քեզ ճանչցուր աշխարհին» (Յովհաննէսի 7.3–4): Իրենք կը կառավարուէին իրենց մասին ուրիշներու կարծիքով եւ կը փորձէին

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

Յիսուսն ալ նոյն գերութեան տակ դնել. մարդոց վախին:

Եւ սակայն Յիսուսի *իրական* պատկերը բաւական տարբեր էր շատերու *հասկցած կամ ըմբռնած* պատկերէն, որովհետեւ «Քրիստոս ինք՝ տեսանելի պատկերն է աներեւոյթ Աստուծոյ» (Կողոսացիներուն 1.15): Մինչ շատեր կը մերժէին զԻնք, Ամենակարող Աստուած լսելի ձայնով հաստատեց. «Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ» (Մատթէոսի 3.17): Յիսուսի *հասկցուած* պատկերը չէր, որ մնաց, այլ՝ Անոր *իրական* պատկերը:

Իր երկրաւոր առաքելութեան ընթացքին, Ան մերժեց Ինքզինք ծանուցանել եւ Ինքն Իրեն համար համբաւ շահելու որեւէ առաջարկ: Երբ կարիքաւոր մը կը բժշկէր, յաճախ կ'ըսէր՝ «Չգոյշ եղէք, որ մարդ չիմանայ» (Մատթէոսի 9.30): Ան խուսափեցաւ ժողովրդականութիւն շահելէ, հանրաճանօթ ըլլալէ եւ մարդոց գովաբանութենէն ու անոնց հաճութիւնը շահելէն (տես Ղուկասի 5.14: Յովհաննէսի 6.15: Փիլիպպեցիներուն 2.7: Եբրայեցիներուն 5.4–6 եւ Եսայիի 42.2): Երբ մարդիկ կ'ուզէին զԻնք բարձրացնել եւ թագաւոր ընել, Ան կը հեռանար այդ վայրէն: Չունէր դիմակներ եւ Անոր մէջ չկար պատրանք կամ խաբէութիւն: Ան Տիրոջ վախով հրճուեցաւ (տես Եսայիի 11.3, ըստ անգլերէն *Նիու Ինթըրնաշնըլ Վըրժըն* (NIV) տարբերակին), ինչ որ զԻնք կեդրոնացած պահեց Հօր վրայ:

Մենք ալ պէտք է ըլլանք Յիսուսի պատկերը: Ազատութիւնը կը գտնուի մեր ներքին անձին մէջ ճշմարտութեան համաձայն ապրելուն մէջ՝ խուսափելով ինքզինք ծանուցանելէ կամ ինքնապահպանումէ: Ինքզինքն վրայ կեդրոնացած վարմունքի ծագումը կը տեսնենք Ադամի եւ Եւայի մէջ: Կը կարդանք, թէ այն պահուն, որ ինկան, «Անոնց երկուքին աչքերը բացուեցան, ու գիտցան թէ մերկ էին» (Ծնունդներու 3.7): Անոնց կեդրոնացումը Աստուծմէ շեղեցաւ եւ ուղղուեցաւ դէպի իրենց անձերը, որմէ ետք սկսան փորձել մեղմացնել իրենց նոր յայտնաբերուած թերութիւնները: Առաջին գոյգը փորձեց *ծածկել* իրենց մերկութիւնը: Մեր պարագային անիկա տարբեր ձեւով կրնայ դրսեւորուիլ, բայց արմատի հարցը տակաւին նոյնն է: Եթէ ինքզինքիս վրայ կեդրոնացած եմ, ապա պիտի փորձեմ դրսեւորել պատկեր մը, որ պիտի *ծածկէ* իմ յայտնի անատակութիւններս: Յիսուս Իր կեանքը տուաւ մեզ ազատելու համար այդ ստրկութենէն: Պօղոս գրեց. «Անշուշտ չենք համարձակիր մենք մեզ բաղդատել կամ դասել անոնց հետ՝ որոնք ձեր դիմաց իրենք զիրենք կը գովեն: Ա՛յնքան անմիտ են, որ իրենք իրենցմով կը չափեն եւ իրենք իրենց հետ կը բաղդատեն իրենց անձերը» (Բ.Կորնթացիներուն 10.12):

Եթէ մենք մեզ ենթարկենք բաղդատութեան ճնշումին, ընդգծած կ'ըլլանք մեր թերութիւնները եւ այդ պատճառով մենք մեզ կը գովենք, կը ծանուցանենք կամ մենք մեզ պաշտպանելու ջանք կ'ընենք, եւ

այդ բոլորը կը սկսին մեր շարժառիթներուն եւ մտադրութիւններուն մէջ: Այսօրուան աշխարհին մէջ մեր *հասկցուած* պատկերը աւելի ծանր կը կշռէ քան մեր *իրական* պատկերը: Պարզ ձեռով ըսելով, մեր համբաւն է, որ պիտի փորձենք պաշտպանել: Մեր ջանքերը պիտի կեդրոնանան երեւոյթներու, կարգավիճակի, տիտղոսներու, ժողովրդականութեան, ընդունելութեան, համբաւի եւ այդ ձեւի բաներու վրայ, որովհետեւ անոնք *կը ծածկեն* մեր թերութիւնները:

Այդ պատկերը չէ, որ պիտի բացայայտուի եւ քննուի դատաստանի ատեն. այլ՝ մեր *իրական* պատկերը, որ կը կեդրոնանայ մեր շարժառիթներուն եւ մտադրութիւններուն վրայ:

Ուստի դուք ալ ունէ՛ մէկը մի՛ դատէք ժամանակէն առաջ, մինչեւ գայ Տէրը, որ մարդոց *մութ գաղտնիքները* լոյսին պիտի բերէ եւ երեւան պիտի հանէ *միտքերուն մէջ ծածկուած խորհուրդները*: Ահա այն ատեն իւրաքանչիւրը Աստուծմէ պիտի ստանայ արժանի *գովասանքը*: (Ա.Կորնթացիներուն 4.5, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Շատեր կը զեղչեն այս համարը, մտածելով, որ անիկա կը խօսի անհաւատներու դատաստանին մասին: Բայց այդպէս չէ, քանի որ անհաւատները գովասանք պիտի չստանան իրենց դատաստանի ատեն: Ասիկա կրնայ միայն խօսիլ հաւատացեալներու մասին:

Երբ լսես, թէ քու «մութ գաղտնիքներ»դ եւ «ծածկուած խորհուրդներ»դ պիտի բացայայտուին ամբողջ երկինքին դիմաց, հաւանաբար առողջ վախ մը կը զգաս մէջդ: Ատիկա կրնայ պատճառներէն մէկը ըլլալ, որ Պօղոս հաւատացեալներուն դատաստանը «Տիրոջ վախը» կը կոչէ [*«Տիրոջ սարսափը»*, ըստ անգլերէն *Քինկ Ճէյմզ Վըրժըն* (KJV) տարբերակին– *Թարգմանիչ*]: Անոր իրական ըլլալուն վերաբերեալ մեր գիտակցութիւնը սուրբ վախ մը կը ստեղծէ մեր մէջ, որ իր կարգին մեզ զուսպ կամ հակակշիռի տակ կը պահէ եւ կարող կը դարձնէ մեզ ապրելու մեր *իրական* պատկերին համաձայն: Սակայն հակառակն ալ ճիշդ է. որքան չունենանք Տիրոջ վախը, այդքան կը յենինք մեր *դրսետրուած* պատկերին վրայ:

Այդ էր այն մահացու ծուղակը, որուն մէջ ինկան Անանիան եւ Սափիրան: Անոնք աւելի հետաքրքրուած էին անով, թէ ինչպէս *կը հասկցուէին* իրենց մրցակիցներուն, բարեկամներուն, եկեղեցոյ անդամներուն եւ ղեկավարներուն կողմէ:

Անոնց պատմութիւնը մեզի համար աւելի հասկնալի դարձնելու համար, զիրենք անկումի առաջնորդող այդ ճամբորդութիւնը պատկերացնենք այնպէս որ կարծես պատահած ըլլար մեր ներկայի

օրերուն: Եկեղեցին տակաւին քանի մը ամիս միայն գոյութիւն ունէր: Առաքեալները եւ եկեղեցւոյ անդամները բոլոր կը հետեւէին տեսնելու, թէ որոնք օժտուած էին ղեկավարի ձիրքերով եւ պիտի յայտնուէին ըլլալու ղեկավարներ տարբեր մարզերու մէջ:

Այդ զոյգը շատ ուրախ էր այն օրը երբ Յիսուսը ընդունեցին եւ իրենց բոլոր մեղքերը ներուեցան: Անոնք ազդուած էին Աստուծոյ սէրէն եւ իրենց հաւատակիցներու համայնքի սէրէն:

Սակայն անոնց կեդրոնացումը վերջաւորութեան շեղեցաւ: Հետաքրքրականօրէն ատիկա հաւանաբար սկսաւ երբ Աստուած սկսաւ գործել իրենց միջոցաւ. հաւանաբար մղեց, որ նուէր տան եկեղեցիին, քաջալերեց զիրենք ձեռով մը կամ ալ պաշտամունքի խումբին մէջ սկսան ծառայել... հաւանականութիւնները անհամար են: Սկսան հաճոյք առնել այն գոհունակութեան զգացումէն, որ կ'ունենային երբ իրենց ծառայութիւնները կը ճանչցուէին: Լաւ տրամադրութիւն տուող հորմոնները (*էնդորֆինզ*) մեծ քանակութեամբ կը թափէին իրենց արեան շրջագայութեան մէջ՝ իրենց հետ բերելով ուրախութեան եւ գոհունակութեան զուարճալի զգացումներ:

Անոնք աւելի ճանաչում գտան համայնքին մէջ: Սակայն իրենց նոր ձեռք ձգած համբաւը պահելու համար, պէտք ունէին *ծածկելու* կարգ մը կասկածելի վարմունքներ՝ անվնաս թուացող խօսքերով եւ արարքներով: Թերեւս իրենք զիրենք գտան ընտանեկան բուռն անհամաձայնութեան մը մէջ, որուն յաջորդեց կոհի մը: Անոնց բարկութիւնը եւ վիճաբանութիւնները սկսան տգեղնալ եւ երկարեցան, բայց երբ ժամանակը եկաւ հաւատացեալներուն հետ համախմբուելու, անոնք ամբողջովին փոխեցին իրենց վարմունքը՝ իրենց թերութիւնը *ծածկելու* համար: Զոյգը չուզեց, որ իրենց բարեկամները գիտնային, թէ անհամաձայնութեան եւ կոհի մէջ էին՝ ինչ որ պիտի սպառնար իրենց *հասկցուած* պատկերին, ուստի *դրսետրեցին* սիրալիր եւ հոգատար վերաբերում իրարու հանդէպ:

Ինսթակրամի եւ *Թիքթոքի* վրայ նկարներ եւ *վիդէոներ* կը հրապարակեն, որոնց մէջ իրարու փաթթուկ կ'ընեն, կը ժպտան եւ հաճելի ժամանակ կ'անցընեն: Անոնց տակը կը գրեն՝ «Երազային պահեր», «Կատարեալ յարաբերութիւն» կամ «Կը սիրեմ կեանքը ապրիլ իրեն հետ»: Կան շարք մը ուրիշ հրապարակումներ, որոնք ցոյց կու տան իրենց յաջող կեանքը (որ տազնապի մէջ էր), աճող գործը (որ անկումի մէջ էր), գեղեցիկ զաւակները (որոնք անհնազանդ էին, առանձնաշնորհումներ կը պահանջէին եւ անձնասէր էին) եւ այլ յաջողութիւններ: Իրենց դրսետրած այդ պատկերը կը թուէր յաջող ըլլալ, քանի որ իրենց ընկերային

հաղորդամիջոցներու հետեւորդներուն թիւը արագօրէն կ'աճէր:

Անանիա եւ Սափիրա իրենց *դրսետորուած* պատկերը պահելու ետեւէն էին: Այդ բոլորը անվսաս կը թուէին ըլլալ, սակայն անոնց աստուածային վախը աստիճանաբար կը պակսէր իւրաքանչիւր կեղծաւորութեան արարքի հետ: Անոնք այլեւս յանցաւոր չէին զգար իրենց երկերեսութեան համար: Ամէն բան լաւ կը թուէր ըլլալ եւ բարի համբաւ կը վայելէին՝ յատկապէս իբրեւ եկեղեցւոյ ամէնէն առատաձեռն տուողները:

Օրը եկաւ երբ Բառնաբաս իր նուէրը բերաւ եկեղեցիին: Անոնց բարեկամներուն ուշադրութիւնը յանկարծ շեղեցաւ: Բառնաբաս իրենցմէ աւելին ըրեր էր, եւ իրենց հասկցուած պատկերը սպառնալիքի տակ էր: Յաւօք սրտի, իրենց ստեղծած պատկերին վրայ իրենց դրած շեշտը արդէն բաւական յառաջ գացած էր: Եւ մնացեալը պատմութիւն է:

Այդ բոլորը անվսաս եւ ներշնչիչ թուեցան բոլորին, բայց զիրենք տարին վտանգաւոր եւ կործանարար ճամբով մը: Արդեօք Սուրբ Հոգին այդ զոյգին պատմութիւնը Սուրբ Գիրքին մէջ տուաւ մեզի, որպէսզի զգուշացնէ մեզ եւ մեզի տայ ականարկ մը, թէ որքան լուրջ պիտի ըլլայ դատաստանը: Պօղոս կը գրէ.

Կարգ մը մարդոց մեղքերը ականերեւ են (բացայայտ են բոլորին) եւ իրենց առջեւէն կ'երթան դէպի դատաստան[ի] [աթոռ] եւ սկիզբէն կը հոչակեն անոնց վճիռը. բայց ուրիշներու մեղքերը յետագային կ'երեւին [մեղաւորին ետեւէն կը հասնին դատաստանի աթոռին առջեւ եւ հոն կ'երեւին]: (Ա.Տիմոթէոսի 5.24, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹

Անանիայի եւ Սափիրայի մեղքը բոլորին յայտնի եղաւ այդ յիշատակալից օրը: Անոնց դատաստանը սկիզբէն հոչակուեցաւ: Սակայն ինչ որ աւելի սթափեցուցիչ պէտք է ըլլայ այն է, որ մարդոց մեծ մասին մեղքերը յետոյ պիտի բացայայտուին: Կը խնդրեմ, որ յիշես, որ Աստուծոյ վճիռը կը վերաբերէր անոնց գաղտնի շարժառիթին, ոչ թէ անոնց արարքին:

Ահա լաւ լուրը. կրնանք ապաշխարել մեր խաւար շարժառիթներէն, եւ Աստուած ոչ միայն պիտի ներէ, այլեւ եթէ աղաղակենք Աստուծոյ՝ սուրբ վախը ունենալու համար եւ նորոգենք մեր միտքը Սուրբ Գիրքով, կրնանք օրհնուիլ մաքուր շարժառիթներով:

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անիլիֆայր Պայպը, Քրիստոս Էփիզոն* (AMPC) տարբերակէն

Անձնականացնել

Հատուած- Չկայ ծածուկ բան, որ ջայտնուի եւ կամ գաղտնի բան՝ որ չգիտցուի եւ երեւան չգայ: (Դուկասի 8.17)

Միտք- Ամէն մարդ արարած ունի երեք պատկերներ իր անձին համար. *հասկցուած* պատկերը, *դրսետրուած* պատկերը եւ *իրական* պատկերը:

Խոկալ- Ինչ պատկերի կը յարիմ: Կ'ապրիմ ճշմարտութեամբ կամ արդեօք սուտ կամ խաբէական բաներ կ'ըսեմ՝ համբաւ պաշտպանելու համար: Արդեօք անկեղծ եւ ուղիղ եմ անոնց հանդէպ, որոնց հետ յարաբերութեան մէջ եմ:

Աղօթք- Կ'ապաշխարեմ հասկցուած եւ դրսետրուած պատկերիս վրայ աւելի շեշտ դնելու համար քան իրական պատկերիս: Ես զիջում ըրած եմ իմ պարկեշտութեանս մէջ, եւ ներողամտութիւնդ կը խնդրեմ: Մաքրէ շարժառիթներս եւ մտադրութիւններս: Թող իմ կեդրոնացումս ըլլայ Յիսուսի եւ ուրիշներու վրայ, ո՛չ իմ:

Դաւանութիւն- Ես պիտի արտօնեմ, որ Աստուծոյ Խօսքին երկսայրի սուրը բացայայտէ իմ սիրտիս խորհուրդները եւ մտադրութիւնները:

Մահուան եւ դատաստանի
վախը մեզմէ կ'ելլէ մինչ
Աստուծոյ ճշմարիտ վախը կու
գայ մեր մէջ, եւ այդ վախը չի
տանջեր, այլ՝ թեթեւ եւ դիւրին
լուծ մըն է շունչին համար. վախ
մը, որ մեզ կը հանգստացնէ
փոխանակ սպառելու:

– ԱՅՏԸՆ ՈՒԻԼՍԸՆ ԹՈՂԸՐ ԵՒ
ՀԵՐԻ ՎԸՐՓԼՈՒԿ

14 | ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Յափտենականության հետ բաղդատաբար, այս ներկայի կեանքը մշուշի պես է: Բայց եթե անելի ճշգրիտ պիտի ըլլանք, այս կեանքը ոչինչ է, տրուած ըլլալով, որ պարզ ուսողութիւնը (mathematics) կը հաստատէ, թէ որեւէ հունաւոր թիւ (finite number) երբ կը բաժնենք անհունութիւնով (infinity), կը ստանանք զերօ: Հետեաբար ինիսուն կամ անելի տարին եթէ բաղդատենք յափտենականութեան հետ, ոչինչ է: Այդ ցնցիչ իրականութեան լոյսին տակ, իմաստուն կ'ըլլանք եթէ պատրաստուինք յաւերժականին համար:

Դատաստանի ատեն մեզի համար Յիսուսի տուած որոշումները յափտենական են (Եբրայեցիներուն 6.1–2): Այսինքն՝ Անոր յայտարարած վճիռին մէջ որեւէ փոփոխութիւն, վերանայում կամ վերափոխում պիտի չըլլայ: Ուստի հիմնականօրէն խաչին հանդէպ մեր կեցուածքը պիտի որոշէ մեր յափտենականութիւնը *հիր* անցընելը: Սակայն իբրեւ հաւատացեալներ մեր ապրելու *ձեւը* պիտի որոշէ, թէ *ինչպէս* պիտի ապրինք յափտենականը:

Երկինքի վերաբերեալ շատերու գաղափարը այն է, որ անիկա անմարմին, ոչ-ֆիզիքական փորձառութիւն մըն է՝ սիրոյ, խաղաղութեան եւ առանց տանջանքի վիճակի մը մէջ: Անոնք կ'ակնկալեն, որ սուրբերը ըլլան եթերային էակներ, որոնք կը ծփան ամպերու վրայ, տալիզ կը նուագեն եւ խաղող կ'ուտեն: Տակաւին ուրիշներ երկինքը կը համարեն ծանծրացուցիչ, չդադրող պաշտամունքի ծառայութիւն մը: Այդ գաղափարները ունեցողներուն համար դժուար է խանդավառ ըլլալ այդ ծանծրացուցիչ յափտենական գոյութեամբ:

Բայց ատոնք առասպելներ են, որոնք գոյութիւն չունին

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

Աստուածաշունչին մէջ: Այս կեանքի լաւագոյնը միայն շուք մըն է յաւիտենականին քով: Յաւիտենական կեանքին մէջ պիտի ըլլան համայնքներու կազմակերպում, քաղաքներու շինութիւն, ազգերու վերակացութիւն, ծիր կաթիններու հետախուզում եւ զարգացում ու անսահմանօրէն աւելի բաներ, որոնք կը համընկնին ապրելու այն ձեւին հետ, որուն համար ստեղծուած ենք: Պատասխանատուութեան դիրքեր կան, որոնք պէտք է գրաւուին Տիրոջ յաւիտենական քաղաքին մէջ: Ուստի Քրիստոսի դատարանը կրնաս նկատի առնել իբրեւ հարցաքննութիւն եւ արժեւորում՝ որոշելու համար յաւիտենական դիրքդ նոր երկինքի եւ նոր երկիրի Իր մայրաքաղաքին մէջ:

Ատիկա ի մտի ունենալով, ետ երթանք քննարկելու, թէ մեր այսօրը եւ հոսը ինչպէս պիտի քննուին դատաստանի ատեն.

Որովհետեւ բոլորս ալ պէտք է ներկայանանք եւ բացայայտուինք ինչպէս որ ենք Քրիստոսի դատարանին առջեւ, որպէսզի իւրաքանչիւրս ստանայ [իր վճարումը] այս մարմինին մէջ եղած ատեն իր կատարածներուն, բարի կամ չար [նկատի առնելով, թէ ինչ եղած է իր նպատակը եւ շարժառիթը, եւ ինչ իրագործած է, ինչով զբաղած է կամ լեցուցած է իր ժամանակը եւ իր անձն ու ուշադրութիւնը ինչ ընելու տրամադրած է]: (Բ.Կորնթացիներուն 5.10)¹

Իբրեւ հաւատացեալներ, մեր մեղքերը՝ որոնք մեզ դժոխքի պիտի արժանացնէին, ջնջուած են Յիսուսի արիւնով եւ յաւիտենապէս մոռցուած են (տես Եբրայեցիներուն 8.12): Սակայն տակաւին կան չար կամ վատ վարմունքներ, որոնց համար պէտք պիտի ունենանք հաշիւ տալու դատաստանի ատեն: Ասիկա պէտք է գրաւէ մեր ուշադրութիւնը:

Չար բառը յունարէն *քարնոս* բառն է, որ կը սահմանուի իբրեւ՝ «վատ ըլլալու հետ առնչուած՝ վնասակար կամ կործանարար իմաստով» եւ «տեղի տալ, ետ քաշուիլ, նահանջել ճակատամարտի ատեն»: Այդ բառին իմաստը կապ ունի վնաս հասցնելու հետ, որուն պատճառը կրնայ ըլլալ ոչ միայն այն ինչ որ կ'ընենք, այլեւ երբ ետ կը քաշուինք կամ կը նահանջենք, կամ աւելի պարզ ձեւով ըսելով՝ երբ բան մը, որ պէտք է ընենք՝ *չենք* ըներ: Հետեւաբար անիկա կը պարունակէ ոչ միայն այն ինչ որ ըրած ենք, այլեւ այն առիթները, զորս փախցուցած ենք: Սուրբ վախը մեզ զգաստ կը պահէ Թագաւորութեան պատասխանատուութիւններուն մէջ ինչպէս

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անկոլիֆայտ Պայպլը, Քրիստոս Էրիշըն* (AMPC) տարբերակէն

նաեւ որեւէ աննպաստ շարժառիթներու կամ վարմունքներու նկատմամբ, որոնք վնաս կը հասցնեն կեանքերուն անոնց, զորս Աստուած կը սիրէ:

Աստուածաշունչը յաճախ մեզ կ'անուանէ՝ «շինողներ»: Կրնաք ատիկա հասկնալ իբրեւ ենթակապալառուներ (պայմանագիր կնքած աշխատատերեր), որոնք կը կառուցանեն Աստուծոյ յատուկ տունը, որուն մէջ պիտի բնակի Ան յաւիտեան: Անոր տունը ունի անուն մը՝ *Սիոն* (տես Սաղմոսներու 132.13-14), եւ անոր նիւթերը կը բաղկանան կենդանի քարերէ՝ Իր բոլոր սուրբերէն (տես Ա.Պետրոսի 2.5)՝ Յիսուսը ըլլալով պատուական անկիւնի քարը (տես Եսայիի 28.16):

Պօղոս յտակօրէն կը նշէ մեր պարտականութիւնները. «Աստուծոյ նոր ստեղծագործութիւնն ենք մենք, քանի Քրիստոս Յիսուսի միացած ենք. ստեղծուած՝ կատարելու համար այն բարի գործերը, որոնց համար Աստուած սկիզբէն մեզ պատրաստեց, որպէսզի անոնցմով լեցնենք մեր կեանքը» (Եփեսացիներուն 2.10): Անգլերէն տարբերակը կ'ըսէ, թէ՛ «պէտք է ընենք այդ գործերը»: Եթէ ետ կենանք մեր պարտականութիւններէն՝ ընտրելով ապրիլ ձեռով մը, որուն շարժառիթը ժամանակատար անձնասէր շահն է, ատիկա պիտի համարուի «չար» վարմունք մը:

Պօղոս նաեւ կը գրէ. «Ամէն ոք զգոյշ պէտք է ըլլայ, սակայն, թէ ինչպէս կը շինէ» (Ա.Կորնթացիներուն 3.10): Յստակ է, որ մեր ինչպէս շինելը շատ կարեւոր է: Արդեօք կը շինենք Աստուծոյ յաւիտենական Խօսքին հիման վրայ կամ մտիկ կ'ընենք այս դարու հոգիին: Արդեօք կը շինենք Աստուծոյ Հոգիով կամ կը ծառայենք մեր անձնասէր փափաքներուն: Պօղոս կը շարունակէ, ըսելով.

Այդ հիմին վրայ շինուածը կրնայ ոսկի, արծաթ կամ թանկագին քար ըլլալ, եւ կամ կրնայ փայտ, խոտ կամ եղէգ ըլլալ: Իւրաքանչիւրին գործը դատաստանի օրը պիտի յայտնուի, եւ ատիկա կրակը պիտի յայտնէ, որովհետեւ իւրաքանչիւրին գործին որակը կրակով պիտի փորձուի: (Ա.Կորնթացիներուն 3.12-13)

Կան այլազան ձեւեր, զորս կրնանք ընտրել՝ Աստուծոյ կողմէ մեզի տրուած ժամանակը գործածելու համար: Եթէ ապրինք մեր անձնական օգուտին՝ ժամանակատրին համար շինելով, ատիկա կրակով պիտի այրի: Եթէ ապրինք անձնուրաց կերպով՝ Իր յաւիտենական Թագաւորութիւնը շինելու համար, ատիկա պիտի ըլլայ նիւթ մը, որ կրակէն չ'այրիր, այլ՝ կը մաքրուի անով: Մեր կեանքերը քննող կրակը պիտի ըլլայ Աստուծոյ Խօսքը, այլ խօսքով՝ թէ ինչպէս մեր շարժառիթները, խօսքերը եւ վարմունքը կը համընկնին անոր հետ:

Յայտնաբերուած՝ Ինչպէս որ ենք

Պօղոս կը շարունակէ, ըսելով. «Եթէ մէկուն շինածը կրակին դիմանայ՝ ենթական [շինողը, ըստ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակին] պիտի վարձատրուի» (հմր 14): Եթէ մեր վարմունքը եւ աշխատանքը հիմնուած են Իր Խօսքին եւ մեր կեանքերուն համար Իր կամքին վրայ, մեր իրագործումները պիտի մնան յաւիտեան: Երկու բան կայ նշելու. առաջին՝ մեր իրագործումներուն մէջ կան մեր ուրիշներու կեանքերուն մէջ ունեցած ազդեցութիւնը եւ թէ մեր աստուածատուր տաղանդները ինչպէս գործածեցինք Իր Թագաւորութիւնը շինելու համար: Երկրորդ՝ մեր յաւիտենական վարձատրութիւնը պիտի որոշէ Իր Թագաւորութեան մէջ մեր յաւիտենական դիրքը:

Պօղոսի յաջորդ ըսածը հետաքրքրական է.

Բայց եթէ գործը այրի, շինողը *մեծ* կորուստ պիտի ապրի: Շինողը պիտի *փրկուի*, բայց բոցավառ պատի մը մէջէն հազիւ փախուստ տուող մէկու մը պէս: (Ա.Կորնթացիներուն 3.15, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹

Շատ բան կայ նկատի առնելիք այս համարին մէջ: Առաջին՝ կը կարդանք, թէ շինողը կը *փրկուի*: Ասիկա չի վերաբերիր անհաւատի մը, որ յաւիտենապէս դատապարտուած է կրակի լիճին, այլ՝ անոր, որ յաւիտենապէս պիտի բնակի Աստուծոյ Թագաւորութեան մէջ:

Երկրորդ՝ կորուստը մեծ է: Հոս գործածուած յունարէն բառը կրնայ նշանակել պատիժ կամ կորուստ: Ուսումնասիրողներուն մեծ մասը չի հաւատար, որ անիկա պատիժի իմաստը ունի: Նոյնպէս եւ ես: Սակայն այդ բառը կ'ենթադրէ խորունկ կորուստ: Ի մտի ունեցէք, որ այդ սաստիկ կորուստը ոչ միայն պիտի զգացուի դատաստանի ատեն, այլեւ պիտի ազդէ մեր յաւիտենապէս ապրելիք կեանքին վրայ:

Երրորդ՝ կ'ըսուի, թէ ան կրակի մէջէն անցած մէկու մը պէս պիտի փրկուի: Կրնանք հետեւեալ ձեւով արդիականացնել ատիկա: Արեւմուտքցիները յաճախ կը պատրաստուին հանգստեան կոչուելու համար: (Ես անձնապէս չեմ բաժնեկցիր այդ մտայնութիւնը, տրուած ըլլալով, որ հանգստեան կոչուիլը կը խօսի պարտականութենէ մը նահանջելու մասին՝ ինչ որ «չար»ի (*քաքոս*) մէկ սահմանումն է: Սակայն մեր նիւթին յարմարելուն պատճառով պիտի տամ այդ օրինակը):

Պատկերացուր, որ մէկու մը հանգստեան կոչուած օրը, դրամատունը սնանկութիւն կը հոչակէ: Հանգստեան կոչուած անձին

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

ամբողջ խնայողութիւնը կը կորսուի, եւ այդ մարդուն միակ ունեցածը իր գրպանին մէջի քանի մը տուարը կ'ըլլայ: Այդ նոյն օրը Ընկերային Ապահովութիւնը եւ իր հանգստեան կոչուելուն համար հաւաքուած գումարները պահող բոլոր ընկերութիւններն ալ կը սնանկանան: Ոչ միայն այդքան, բայց հանգստեան կոչուող այդ մարդուն տունն ալ կ'այրի եւ գետնին հաւասար կ'ըլլայ, եւ ան փախուստ կու տայ իր վրայի հագուստներով միայն: Ան ամէն բան կը կորսնցնէ: Ատիկա պարագայ մըն է, որ աղէտ կը համարուի: Սակայն այդ է այն նկարագրութիւնը, զոր Պօղոս կը գործածէ բացատրելու համար, թէ կարգ մը հաւատացեալներ ինչպէս յաւիտենականութիւն պիտի մտնեն: Եւ ատիկա քսանհինգ տարուայ համար չէ (հանգստեան կոչուելէ ետք կեանքի միջին ժամանակաշրջանը). ատիկա յաւիտեան է:

Դարձեալ, Պօղոս կ'ըսէ, թէ հաւատացեալը պիտի փրկուի, բայց իր բոլոր գործերը պիտի այրին եւ յաւիտենապէս կորսուին: Յիշէ՛, որ անիկա յաւիտենական դատաստան մըն է (որոշում մը): Կը խնդրեմ, որ սխալ չհասկնաք. փրկուիլը աննշան բան մը չէ: Անիկա անսահմանօրէն աւելի լաւ է քան կրակի լիճին մէջ յաւիտենապէս կորսուիլը: Բոլորս ալ պիտի ցնծանք մեր հիմա ըմբռնածէն աւելի, բայց մարդիկ պիտի ըլլան, որոնք պիտի մտածեն թէ ճիշտն աւելի տարբեր կրնար ըլլալ իրենց վիճակը:

Զարմանալի չէ, որ Պօղոս ատկէ ետք կ'ըսէ. «Ուրեմն՝ գիտնալով *Տէրոջ վախը*¹ կը համոզենք մարդիկ» (Բ.Կորնթացիներուն 5.11, շեշտադրումը՝ մեր կողմէ)!: Կը խնդրեմ, որ լսես սիրտիս աղաղակը. կը յուսամ, որ այդ սուրբ վախը, որուն մասին կը խօսի Պօղոս համոզէ քեզ, որ ժամանակդ չվատնես բաներու վրայ, որոնք օգուտ մը չունին, կամ զանիկա սպառես կեդրոնացած ըլլալով քու դրսեւորուած եւ հասկցուած պատկերներուդ վրայ: Կը յուսամ, որ ժամանակի պարգեւդ կը գործածես Իր Խօսքին եւ Հոգիին հնազանդելու համար:

Անձնականացնել

Հատուած– Որովհետեւ պէտք է որ բոլորս ալ ներկայանանք Քրիստոսի դատարանին առջեւ, որպէսզի իւրաքանչիւրը ստանայ այն բաներուն համեմատ՝ որ իր մարմինին մէջ եղած ատեն ըրած է, բարի

¹ Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

Ահարկու Աստուած մը

կամ չար: Ուրեմն՝ գիտնալով Տիրոջ վախը՝ կը համոզենք մարդիկ:
(Բ.Կորնթացիներուն 5.10–11)

Միտք– Խաչին հանդէպ մեր կեցուածքը կ'որոշէ մեր
յաւիտենականութիւնը *նոր* անցընելը: Սակայն իբրեւ հաւատացեալ
մեր ապրելու *ծելը* կ'որոշէ, թէ *ինչպէս* պիտի ապրինք յաւիտենականը:

Խոկալ– Արդեօք ամէն օր կը կեդրոնանամ յաւիտենականին
համար շինելու վրայ՝ ուրիշներու կեանքերուն մէջ ճշմարտութեամբ եւ
սիրով շինութիւն բերելու վրայ, կամ իմ ոյժս, եռանդս եւ ժամանակս
կը տրամադրեմ ինծի համար բան մը շինելու:

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, ներէ ինծի՝ իմ կեդրոնացումս,
ուշադրութիւնս, եռանդս, ոյժս եւ ժամանակս ժամանակաւորին մէջ
բաներ շինելու տրամադրելուս համար: Կը խնդրեմ, որ ինծի ցոյց
տաս ինչպէս կերտել Յիսուսի Թագաւորութեան համար ամէն օր:
Կը խնդրեմ, որ զօրացնես զիս, որ ազդեցութիւն բերեմ մարդոց
կեանքերուն մէջ յաւիտենականին համար: Շնորհակալ եմ, Յիսուսի
անունով: Ամէն:

Դաւանութիւն– Ես պիտի փնտռեմ եւ օգտագործեմ յաւիտենական
առիթներ, եւ ոչ միայն առիթներ, որոնք պիտի կորսուին այս
կեանքին հետ:

ԱՆԴԻՄԱԴՐԵԼԻ ՍՐԲՈՒԹԻՒՆ

ԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

Մարմնաւոր անձը կը վախնայ
մարդոցմէ, ոչ Աստուծմէ:
Զօրաւոր Քրիստոնեան
կը վախնայ Աստուծմէ, ոչ
մարդէն: Տկար Քրիստոնեան
մարդոցմէ շատ կը վախնայ,
իսկ Աստուծմէ՝ քիչ:

– ՃՈՆ ՖԼԱԻԷԼ

15 | ՄԱՐԴՈՑ ՎԱԽԸ

Ճշմարիտ սրբութիւն կը նշանակէ՝ ամբողջութեամբ Աստուծոյ ըլլալ: Սրբութեան նախնական սահմանումներէն մէկը «Աստուծոյ համար զատուած կամ անջատուած ըլլալ»ն է (*Տը Քոմփլիթ Ուըրտ Սթապի Տիքշընըրի*): Անոր իմաստը այնքան ընդարձակ է, որ հատորներ կրնան գրուիլ անոր մասին: Հոս միայն պիտի խօսինք կարեւոր կէտերուն մասին, տրուած ըլլալով, որ Աստուծոյ վախը անբաժանելի մէկ մասն է սրբութեան: Սակայն սկսելէ առաջ, կարեւոր է, որ յստակօրէն ըսենք հետեւեալը. իսկական սրբութիւնը կապանք չէ, անիկա ճշմարիտ ազատութիւն է:

Բաւական հաւանական է, որ Անանիայի եւ Սափիրայի դատաստանը ներածական մըն է անոր, զոր ամէն մարդ արարած պիտի դիմագրաւէ օր մը. դատաստան: Յամեցող հարցումը հետեւեալն է՝ արդեօք այդ զոյգը օրինակ մըն է անոնց, որոնք «մեծ կորուստ» պիտի ունենան երկինքի մէջ, կամ արդեօք անոնք իրենք զիրենք գտան դժոխքի մէջ:

Այն աստուածաշնչական համարը, որ կը գործածուի այդ զոյգին յաւիտենական դատապարտութիւնը բացատրելու համար կը գտնուի քանի մը գիրք առաջ՝ Աւետարաններուն մէջ Յիսուսի խօսքերուն մէջ. «Բայց յաւիտեան պիտի չներէ անոր՝ որ Սուրբ Հոգիին կը հայիոյէ» (Մարկոսի 3.29): Այդ տեսակէտին սխալ ըլլալը կը բացայայտուի *հայիոյութեան* սահմանումին միջոցաւ, որն է՝ «խօսիլ մէկու մը դէմ այնպիսի ձեւով մը, որ կը վնասէ անոր համբաւին» (Լաու եւ Նիտա, *Կրիք–Ինկլիշ Լեքզիքոն*, էջ 433): Այդ զոյգը *սպեց* Սուրբ Հոգիին, բայց սահմանումին համաձայն, անոնք *չհայիոյեցին*: Ատիկա անորոշ կը դարձնէ անոնց վախճանը: Ամէն պարագայի, ոչ մէկս պէտք է նախանձի անոնց վախճանին:

Ուստի ունինք օրինակը Աստուածաշունչէն մէկու մը, որուն մասին

գիտենք, որ երկինքն է, բայց որոշ կորուստ մը պիտի ունենայ դատաստանի ատեն: Կը հաւատամ, որ այո՛ր, ունինք: Նիւթը սկսինք Պօղոսի հետեւեալ խօսքով.

Արդեօք ըսածս այնպէս կը հնչէ՞, թէ կը փորձեմ մարդոց հաւանութիւնը շահիլ: Ի՞րապէս ոչ: Իմ ուզածս Աստուծոյ հաւանութիւնն է: Արդեօք ես կը փորձեմ ժողովրդականութիւն շահիլ: Եթէ ես տակաւին այդպիսի բան մը կը փորձէի ընել, Քրիստոսի ծառայ պիտի չըլլայի: (Գաղատացիներուն 1.10)¹

Ինչ զօրաւոր խօսք: Կը կորսնցնենք Քրիստոսի ծառան ըլլալու առանձնաշնորհումը եթէ ենթարկուինք ժողովրդականութիւն փնտռելու մղումին: Եթէ ատիկա ընենք, մենք մեզ պիտի փորձենք ներկայացնել մարդոց հաճելի պատկերի մը մէջ: Պօղոս չէր ուզեր գործ ունենալ այդպիսի բանի մը հետ, մենք ալ պէտք չէ ատկէ տարբեր ըլլանք:

Պօղոս բարձր մակարդակի սուրբ վախի մէջ կը քալէր: Յիշէ՛, որ ան էր, որ գրեց. «Գործադրեցէ՛ք ձեր փրկութիւնը՝ ահով ու դողով» (Փիլիպպեցիներուն 2.12)²: Ան կեդրոնացած մնաց իր *իրական* պատկերին վրայ՝ այն, որ պիտի յայտնուի դատաստանին, եւ ոչ թէ իր *դրսետորուած* պատկերին վրայ: Ատիկա զինք պահեց իսկական սրբութեան եւ Քրիստոսի հնազանդութեան մէջ, նոյնիսկ երբ հանդիպեցաւ յուսախաբութեան, անհաւանութեան կամ մերժումի:

Պէտք է ամէն ժամանակ մեր առջեւը պահենք հետեւեալ ճշմարտութիւնը. *Կը ծառայես անոր, որմէ կը վախնաս...* Եթէ կը վախնաս Աստուծմէ, պիտի հնազանդիս Անոր: Եթէ կը վախնաս մարդոցմէ, վերջաւորութեան մարդոց փափաքներուն պիտի հնազանդիս: Յաճախ աւելի կը մտահոգուինք մեր առջեւը գտնուող մարդը վիրաւորելով քան Ան, զոր ֆիզիքապէս չենք տեսներ, յատկապէս երբ մեր այդ դիմացի անձին սէրը կամ բարեկամութիւնը կը փափաքինք: Այդ պատճառով է, որ մեզի կ'ընտի՛ «Մարդոց վախը որոգայթի մէջ կը ձգէ» (Առակներու 29.25). Ճուղակ մը, որուն մէջ ինկան Անանիան եւ Սափիրան:

Ես միայն կրնամ պատկերացնել, թէ ինչպէս ուրիշ ղեկավարներու հետ հանդիպումը քարիւղ թափեց Պօղոսի կրակին վրայ՝ մղելով զայն, որ գրէ հետեւեալ ճակատում ենթադրող բառերը նոյն նամակի

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Կուր Նիուզ Թրանսլէյշըն* (GNT) տարբերակէն

2 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

շարունակութեան մէջ.

Երբ Պետրոս Անտիոք եկաւ, ես դէմ առ դէմ ճակատում մը ունեցայ իրեն հետ, որովհետեւ ան յստակօրէն սխալ էր: Հետեւեալն էր պատահածը. առկէ առաջ՝ նախքան Յակոբոսի քովէն կարգ մը մարդոց ժամանելը, Պետրոս շարունակ ճաշի կը նստէր ոչ-հրեաներուն հետ: Բայց երբ պահպանողականներու խումբը եկաւ Երուսաղէմէն, ան զգուշաւոր կերպով ետ քաշուեցաւ եւ կրցածին չափ հեռու մնաց իր ոչ-հրեայ բարեկամներէն: Այնքան կը վախնար այդ պահպանողական հրեաներու խմբակցութենէն, որ կը փորձէր թլփատութեան հին օրէնքը յառաջ տանիլ: Դժբախտաբար, Անտիոքի եկեղեցոյ մնացեալ հրեաներն ալ միացան այդ կեղծաւոր վարմունքին, այնքան որ նոյնիսկ Բառնաբաս հետեւեցաւ անոնց այդ ցուցադրութեան մէջ:

Բայց երբ տեսայ, որ անոնք ուղիղ եւ կայուն ընթացք մը չէին պահեր Պատգամին սկզբունքներուն մէջ, անոնց բոլորին առջեւ ըսի Պետրոսին. «Եթէ դուն՝ հրեայ մը, ոչ-հրեայի մը պէս կ'ապրիս երբ Երուսաղէմի դէտերուն աչքերուն առջեւ չես, ինչ իրաւունք ունիս ոչ-հրեաներէն պահանջելու, որ համակերպին հրէական սովորութիւններուն՝ պարզապէս լաւ տպաւորութիւն ձգելու համար Երուսաղէմի հին բարեկամներուդ վրայ»: (Գաղատացիներուն 2.11-14)¹

Պետրոսը, Բառնաբասն ու միւս հրեայ հաւատացեալները կը վախնային իրենց յարգած մարդոց անհաւանութենէն: Ընդունուելու իրենց փափաքը պատճառ դարձաւ կեղծաւոր վարմունքի նախ Պետրոսի կողմէ ետքը նաեւ միւսներուն: Իրենց դրսեւորած պատկերը աւելի առաջնահերթ եղաւ քան իրենց պարկեշտութիւնը, ինչ որ պատճառ դարձաւ անսուրբ վարմունքի մը: Առակներու 29.25-ի անգլերէն ուրիշ տարբերակ մը կ'ըսէ. «Վտանգաւոր է մտահոգ ըլլալ ուրիշներու քու մասիդ ունեցած կարծիքներով» (Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Կուր Նիուզ Թրանսլէյշըն* (GNT) տարբերակէն):

Պօղոս՝ որ պահեց իր պարկեշտութիւնը, յանդիմանեց Պետրոսը դէմ առ դէմ, նաեւ Բառնաբասը եւ միւսները, որոնք տեղի տուին իրենց բարեկամներուն ճնշումներուն: Պօղոս նշեց, որ պահպանողական հրեայ ղեկավարներուն բացակայութեան, Պետրոս եւ միւսները կ'ապրէին ճշմարտութեան համաձայն՝ իրենց

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տը Մասէճ* (MSG) տարբերակէն

իրական պատկերով: Անոնք լիազօրուած էին ըլլալու ճշմարիտ ներկայացուցիչներ Յիսուս Քրիստոսի՝ սիրելով նորադարձ հեթանոս կամ ոչ-հրեայ հաւատացեալները եւ բարեկամանալով անոնց հետ: Բայց երբ կացութիւնը փոխուեցաւ, Պետրոս եւ միւսները ուզեցին *դրսետորել* պատկեր մը՝ գոհ ձգելու համար իրենց ժամանակակիցները: Անոնց այդ վարմունքին հետեւանքները շինութիւն չբերին, այլ՝ վնասակար էին:

Պետրոս սուրբ մըն է. ան երկինքն է: Սակայն ասիկա օրինակ մըն է այն չար կամ վնասակար շարժառիթներուն, խօսքերուն եւ արարքներուն, որոնք պիտի քննուին դատաստանի ատեն: Եթէ մենք ապրինք Յիսուսին հաճելի ըլլալը ունենալով իբրեւ մնայուն նպատակ, պիտի չիյնանք մեր մասին ուրիշներու *հասկցած* պատկերով կառավարուելու ծուղակին մէջ. փոխարէնը, պիտի ապրինք ճշմարտութեան մէջ: Ասիկա կարեւոր երես մըն է ճշմարիտ սրբութեան: Ուշադրութեամբ կարդա՛ հետեւեալը.

Աստուծոյ Խօսքը ողջ է ու կը գործէ եւ աւելի սուր է քան երկսայրի սուր մը: Անիկա կը կտրէ մինչեւ մեր ընդերքը՝ ուր մեր շունչը եւ հոգին միացած են, մինչեւ մեր յօդերուն եւ ոսկորներուն կեդրոնը: Եւ անիկա կը դատէ խորհուրդները եւ զգացումները մեր սիրտի: Ոչ մէկ բան ամբողջ աշխարհի մէջ կրնայ ծածուկ մնալ Աստուծմէ: Ամէն բան յստակ է եւ բաց անոր առջեւ, եւ իրեն է, որ պիտի բացատրենք, թէ ինչպէս ապրեցանք: (Եբրայեցիներուն 4.12-13)¹

Ներս առհր այս խօսքերը: Եթէ պարզապէս անոնց վրայէն անցար քանի որ ծանօթ էին արդէն քեզի, անգամ մը եւս կարդա՛ զանոնք դանդաղօրէն եւ խոկա՛ իւրաքանչիւր հաստատումի վրայ:

Նկատի առ, որ Աստուծոյ Խօսքը կը թափանցէ մինչեւ մեր ամէնէն խորունկ խորհուրդները եւ փափաքները: Անիկա կը բացայայտէ մեր ճիշդ ընդ ըլլալը, եւ ոչ թէ այն պատկերը, որով կ'ուզենք դրսետորել մենք մեզ: Եթէ մտիկ ընենք եւ հնազանդինք Աստուծոյ Խօսքին, անիկա կը պաշտպանէ մեզ ինքնախաբէութենէ, ինչպէս՝ *Տէրը մեզ չի տեսներ* խորհուրդը, որ պատճառ կը դառնայ անբարեպաշտ կամ անսուրբ վարմունքի:

Աստուծոյ Խօսքին ուշադրութեամբ մտիկ ընելը Տիրոջ վախը վառ կը պահէ մեր սիրտին մէջ: Անիկա մեզ ամբողջութեամբ արթուն կը պահէ այն իրականութեան, թէ՛ «Չկայ արարած մը, որ Աստուծոյ

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Սենչըրի Վըրժըն* (NCV) տարբերակէն

տեսողութենէն վրիպի: Անիկա պարզ ու յստակ կը տեսնէ ամէն ինչ, իրենց ամբողջ մերկութեամբ» (Եբրայեցիներուն 4.13): Հիմա աւելի լաւ կը հասկնանք, թէ ինչո՞ւ Սուրբ Հոգին կը խրատէ մեզ.

Որդեակս [Դ՛ուստրս], եթէ իմ խօսքերս ընդունիս եւ պատուիրաններս քովդ պահես, որպէսզի ականջդ իմաստութեան ուշադիր ըլլայ ու սիրտդ հանճարին բանաս, եթէ դուն խելացութիւնը քեզի կանչես եւ ծայնդ հանճարին ուղղես, եթէ զայն արծաթի պէս խնդրես, այն ատեն Տէրոջ վախը պիտի հասկնաս եւ Աստուծոյ գիտութիւնը պիտի գտնես: (Առակներու 2.1–5)

Իմաստութիւն է Իր Խօսքը փնտռելը մեր խոր անձին մէջ. այն տեղը, ուրկէ մեր շարժառիթները եւ մտադրութիւնները կը կառավարուին: Երբ Աստուծոյ Խօսքը կը տեսնենք իբրեւ մեծագոյն գանձը, զոր կարելի է գտնել եւ կը հնազանդինք յայտնուածին, կը մտնենք *ապահովութեան գօրին*: Երբ ամենայն լրջութեամբ կը ջանանք գիտնալ Իր ճամբաները այն ձեով, որ կարծես աւելի գերադաս վարձատրութիւն չկայ, այն ատեն կը գիտնանք եւ կը հասկնանք Տիրոջ վախը եւ կը խուսափինք սխալ պատկեր մը արտացոլացնելու կամ դրսեւորելու խաբկանքէն: Այդ ատեն է, որ զօրացած կ'ըլլանք ապրելու պարկեշտութեամբ եւ ճշմարտութեամբ եւ ապահովաբար հաստատած կ'ըլլանք մեր ոտքերը սրբութեան ճամբուն մէջ:

Անձնականացնել

Հատուած- Երկինքի Բանակներուն Տէրը սուրբ ըրէք ձեր կեանքին մէջ: Անկէ է, որ պէտք է վախնաք: Ան է, որ ձեզ պէտք է դողացնէ: Ան ձեզ ապահով պիտի պահէ: (Եսայիի 8.13-14)¹

Միտք- Կը ծառայես անոր, որմէ կը վախնաս: Եթէ կը վախնաս Աստուծմէ, պիտի հնազանդիս Անոր: Եթէ կը վախնաս մարդոցմէ, վերջաւորութեան մարդոց փափաքներուն պիտի հնազանդիս: Եթէ ջանաս հնազանդիլ ուրիշներու փափաքներուն, չես կրնար Յիսուս Քրիստոսի ճշմարիտ ծառայ մը ըլլալ:

Խոկալ- Ինչհո՞ւ ւաւելի ջանք կը թափեմ չնեղացնելու դիմացի անձս քան Ան, զոր ֆիզիքապէս չեմ տեսներ: Ինչհո՞ւ սէր, ընդունելութիւն եւ բարեկամութիւն կը փափաքիմ մարդոցմէ ւաւելի քան Աստուծմէ: Ինչպէս կրնամ փոխել ատիկա:

Աղօթք- Սիրելի Երկնաւոր Հայր, կը խնդրեմ, որ ներես ինձի այն ժամանակներուն համար երբ ես մարդոց հաւանութիւնը փնտռած եմ ւաւելի քան Քուկդ: Յիսուս, կը զղջամ մարդոց մէջ ժողովրդականութիւն փնտռելուս համար ւաւելի քան Քու հաւանութիւնդ: Կ'ընտրեմ ըլլալ սուրբ՝ Քեզի համար զատուած: Այս պահէն անդին Դուն եմ Ան, զոր պիտի փորձեմ հաճեցնել: Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Ես Քրիստոսի ծառայ մըն եմ: Ես Անոր հաւանութիւնը կը փնտռեմ ւաւելի քան ուրիշներունը:

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Հոն, ուր Աստուծոյ վախը կը
տիրէ սիրտին մէջ, անհկա պիտի
երեւի թէ՛ բարեգործութեան եւ թէ՛
բարեպաշտութեան ձեւով,
եւ մէկը միւսին արգելք
պիտի չըլլայ:

– ՄԱԹԻՈՒ ՀԵՆՐԻ

16 | ԻՐԱԻՈՒՆՔ ՀԱՄԱՐԵԼ

Գաղատացիներուն Գիրքը գրուած է շուրջ Ք.Ե. 49 թուականին, ուստի կրնանք եզրակացնել, որ Պողոսի կողմէ Պետրոսի եւ միւս հրեայ ղեկավարներուն յանդիմանութիւնը ատկէ առաջ էր: Աւելի քան տասը տարի ետք, շուրջ Ք.Ե. 63 թուականին, Պետրոս գրեց իր առաջին նամակը: Վստահ եմ, որ այդ առճակատումը, որ ծանօթ եղաւ ամբողջ Գաղատիայի եկեղեցիին, տակաւին վառ էր անոր յիշողութեան մէջ երբ գրեց հետեւեալ բառերը.

Մի՛ սահիք նորէն ձեր առաջուայ կեանքի ձեւերուն՝ ձեր ցանկութիւնները գոհացնելու համար: Այն ատեն ավելի լաւը ընել չէիք գիտեր [...] Եւ յիշեցէք, որ Երկնաւոր Հայրը, որուն կ'աղօթէք աչառութիւն չ'ընէր: Ան պիտի դատէ կամ վարձատրէ ձեզ ձեր ըրածներուն համեմատ: Ուստի պէտք է ապրիք *մեծարական վախով* իբրեւ «Ժամանակաւոր բնակիչներ» երկրի վրայ ձեր ունեցած ժամանակին ընթացքին: (Ա. Պետրոսի 1.14,17)¹

Յստակ է, որ Պետրոս կը գրէ հաւատացեալներու. անոնց, որոնք ուրացած են իրենք զիրենք, խաչուած են աշխարհին եւ ամբողջովին նուիրուած են հետեւելու Յիսուսի: Այդ հիմերէն դուրս որեւէ ձեւի դարձ հարազատ չէ (տե՛ս Մատթէոսի 16.24: Մարկոսի 8.34: Ղուկասի 9.23: Գաղատացիներուն 6.14): Վերստին ծնունդէն ետք աստուածային բնութիւն մը կը շինուի մեր մէջ: Այդ բնութեան յանձնուիլը կ'ազատէ մեզ մեր զգացումներուն թելադրանքներէն եւ կը զօրանանք ընելու այդ մէկը Աստուծոյ Հոգիին եւ Աստուծոյ յայտնուած Խօսքին միջոցաւ (Բ. Պետրոսի 1.4):

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Առաքեալը կը զգուշացնէ մեզ, որ ետ չերթանք եւ ապրինք մեր ցանկութիւններուն համաձայն, որոնք նախապէս կը կառավարէին մեզ: Մեծագոյն մղումներէն մէկը, զոր պէտք է ուրանանք եւ խաչենք՝ ինքնապահպանութիւնն է: Անիկա հիմնական մղումն է ուրիշներու կողմէ լաւ տեսնուելու համար մենք մեզ որոշ ձեւով մը դրսեւորելու ետին. այլ խօսքով՝ մարդոց վախին: Ատիկա պատճառ դարձաւ ոչ միայն Պետրոսի վնասակար վարմունքին, այլեւ Անանիայի, Սափիրայի, Բառնաբասի եւ ուրիշներու:

Պետրոս կը զգուշացնէ, որ մեր դատաստանը մեզի նպաստաւոր պիտի չըլլայ, ոչ այս կեանքին մէջ ոչ ալ յաջորդին, եթէ տեղի տանք այդ մղումներուն: Իսկ հակառակը, պիտի վարձատրուինք Աստուծոյ փափաքներուն մօտէն կառչած մնալնու համար: Այդ թելադրանքներուն հետ միասին ան կ'ընէ խիստ զգուշացում մը. *Աստուած աշտուութիւն չ'ըներ*: Մտածենք, թէ ինչ կրնար ըլլալ այդ խօսքին պատճառը:

Այդ առաքեալը հզօր առաքելութիւն մը ստացած էր Յիսուսէն: Ան առաջին եկեղեցւոյ գլխաւոր ղեկավարներէն մէկն էր, սակայն տարիներ առաջ Անտիոքի մէջ եղած ատեն ինք եւ իր հրեայ ղեկավար բարեկամները ինկած էին այդ ինքնասպասարկող ծուղակին մէջ: Թերեւս Պողոսի աչք-բացող առճակատումը մղեց զինք, որ անկեղծ գնահատում մը ընէ իր սեփական շարժառիթներուն եւ արարքներուն վերաբերեալ: Հիմնականօրէն Պետրոս պէտք ունէր դիմագրաւելու իր կեղծաւորութեան ետին գտնուող «ինչո՞ւ»ն:

Թերեւս այդ առճակատումին ատեն ան մտածեց ուրիշ աստուածաշնչական ղեկավարներու, ինչպէս՝ Սաւուղ Թագաւորի եւ Դաւիթ Թագաւորի, սխալ վարմունքներուն մասին: Սաւուղ անհնազանդ գտնուեցաւ երկինքէն իրեն եկած յստակ թելադրանքի մը՝ իր բանակին հաճութիւնը շահելու համար. մարդոց վախն էր պատճառը: Դաւիթ շնութիւն գործեց եւ ապա սպաննեց այդ կնոջ ամուսինը՝ իր համբաւը փրկելու համար. մարդոց վախն էր պատճառը: Երկու ղեկավարներուն ալ սխալները իրենց երեսին ըսուեցան եւ երկուքն ալ տարբեր տեսակի դատաստաններ բերին իրենք իրենց վրայ: Սաւուղի պարագային, ատիկա եղաւ իր թագաւորութիւնը կորսնցնելը: Դաւիթի պարագային, սուրը երբեք չհեռացաւ իր տունէն: Իյնալով Աստուծոյ հաճութիւնը շահած ըլլալ կարծելու ծուղակին մէջ, երկուքն ալ զիջեցան իրենց առողջ անձնական սահմաններէն եւ հետեւաբար շեղեցան անբարեպաշտ կամ անհնազանդ վարմունքի մէջ:

Պետրոս գիտէր, թէ որքան դիւրութեամբ կրնար ատիկա

պատահիլ: Ան զգուշացուց մեզ, որ խուսափինք «մեզի իրաւունք համարելու» խորհուրդներէն, որոնց պատճառով կը կարծենք, թէ զերծ ենք դատաստանէ, ինչպէս՝ «Ես ժրաջանօրէն կ'աշխատիմ Աստուծոյ համար», «Ես շատ տուած եմ Իր Թագաւորութիւնը կերտելու համար», «Ես տարիներ անցուցած եմ բարեխօսելով, աղօթելով» կամ «Ես շատ բան իրագործած եմ իբրեւ եկեղեցոյ ղեկավար մը»: Անկեղծ ըլլանք, այս խաբէական պատճառաբանութիւնները անվերջ են, բայց բոլորը կը յանգին անոր, թէ՛ *Անցնելու ազատ իրաւունք տրուած է ինծի*: Այդ մտայնութիւնը կը լքէ սուրբ վախի գանձը:

Պետրոս սկսաւ աւելի ամբողջական ձեւով հասկնալ Յիսուսի հետեւեալ խօսքին կշիռքը. «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք» (Ղուկասի 17.10): «Անպիտան»ին տեղ գործածուած յունարէն բառը կը սահմանուի իբրեւ՝ «յատուկ գովաբանութեան արժանի չեղող, որոշակի գովասանքի արժանի չեղող» (Լաու եւ Նիտա, *Կրիք-Ինկլիշ Լեքզիքոն*, էջ 429): Անկախ անկէ, թէ որքան ժրաջանօրէն ծառայած ենք Աստուծոյ, բնաւ պէտք չէ իյնանք որեւէ բան մեզի իրաւունք համարելու կեցուածքի ծուղակին մէջ: Ատիկա այն խաբէական հոգեբանութիւնն է, որ դիւրութեամբ թակարդը կ'իյնացնէ բոլորս, յատկապէս ղեկավարները:

Իր նամակներուն մէջ Պետրոս հիմա արդէն կը գրէ փորձառութենէ եւ յայտնութենէ մղուած: Ան գիտէ, որ մարդոց վախի դարմանը Աստուծոյ հանդէպ մեծարական վախի մէջ ապրիլն է: Դարձեալ, ատիկա խորունկ յարգանքի եւ ահի մասին կը խօսի: Պետրոս մեզի կու տայ բանալին, որ մեզ կը դնէ Աստուծմէ վարձատրութիւն ստանալու դիրքին մէջ, փոխանակ ենթարկուելու մեզի նպաստաւոր չեղող դատաստանի մը:

Այդ լոյսին տակ, եթէ քննենք Յիսուսի «նեղ դրան եւ դժուար ճամբուն» ուսուցումը, մեր առջեւ պարզուած կը տեսնենք ցնցիչ իրականութիւն մը, որ կը վրիպի շատերէն:

Մտէք նեղ դռնէն, քանի կորուստի տանող դուռը լայն է եւ ճամբան՝ ընդարձակ, եւ շատեր կը մտնեն անկէ: Մինչ դէպի կեանք տանող դուռը նեղ է եւ ճամբան դժուարին, եւ քիչեր միայն կը գտնեն զայն: (Մատթէոսի 7.13-14)

Յիսուս կը խօսի նեղ դրան մասին, զոր շատեր կը հաւատան, որ յաւիտենական կեանքի մուտքն է՝ Յիսուսի տիրութեան միջոցաւ: Համաձայն եմ:

Սակայն ես յայտնաբերած եմ, որ շատերու համաձայն, «ճամբան» անհաւատին ուղին է, որ կ'առաջնորդէ կործանումի: Բայց եթէ մօտէն նայիս, պիտի տեսնես, թէ Ան հաւանաբար չի խօսիր դուռը գտնելէ առաջ ճամբուն մասին, այլ՝ դուռէն ներս մտնելէ ետք ճամբուն մասին: Լէոն Մորիս կը գրէ. «Մենք դուռէն կը մտնենք ամէնէն սկիզբը (այսինքն՝ կը նուիրուինք Քրիստոսին հետեւելու) եւ ատկէ ետք է, որ կ'առնենք մեր առջեւ եղող ճամբան»: Յիսուս կը խօսի մեր փրկուելէն ետք Քրիստոսի մէջ մեր կեանքին մասին: Ան կ'ըսէ, թէ անիկա դժուար է (կամ նեղ):

Արեւմտեան եկեղեցիին համար շատ ծանօթ եղող Աստուծոյ շնորհքին նիւթը լայնցուցած է այդ ճամբան: Անիկա կը հռչակէ. «Մեր բոլոր մեղքերը՝ անցեալի, ներկայի եւ ապագայի ներուած են»: Ատիկա ճիշդ է իր պատշաճ պարունակին մէջ, բայց ներկայի քարոզներուն մէջ յաճախ կ'ըսուի, թէ այդ ճշմարտութիւնը անոր համար է, որ մենք լայն կեանքը ապրինք՝ ոչ շատ տարբեր կորսուած աշխարհէն, եւ նոյն ատեն ընկերութեան մէջ մնանք Աստուծոյ հետ: Ատիկա ճիշդ չէ, քանի որ Պետրոսի վերի գրութեան շարունակութիւնը կ'ըսէ.

Մի սահիք նորէն ձեր առաջուայ կեանքի ձեւերուն՝ ձեր ցանկութիւնները գոհացնելու համար: Այն ատեն աւելի լաւը ընել չէիք գիտեր: Բայց հիմա *պէտք է* սուրբ ըլլաք ամէն բանի մէջ, որ կ'ընէք, ճիշդ ինչպէս Աստուած՝ որ ընտրեց ձեզ, սուրբ է: Քանի որ Սուրբ Գիրքերը կ'ըսեն. «Պէտք է սուրբ ըլլաք, որովհետեւ ես սուրբ եմ»: (Ա. Պետրոսի 1.14–16, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Սրբութիւնը «լաւ է, որ ըլլայ»-ի պէս յանձնարարութիւն մը չէ, այլ՝ «պէտք է ըլլայ»-ի պէս պատուէր մը: Իմաստուն կ'ըլլանք եթէ մտիկ ընենք առաջինին, բայց անմիտ կ'ըլլանք եթէ թեթեւօրէն առնենք Աստուծոյ պատուէրները: Առաւել, Պետրոս չի խօսիր Քրիստոսի մէջ մեր դիրքին մասին, այլ՝ մեր արարքներուն: Մենք պէտք է ապրինք *Ֆրիպոսով* (սուրբ վախով)՝ այդ կենցաղը ունենալու համար: Աստուած երկու մեծ ոյժեր տուած է մեզի, որպէսզի մեզի օգնեն, որ հեռու մնանք այն փոսերէն, որոնց մէջ կրնանք իյնալ նեղ ճամբուն երկու կողմերուն: Առաջին փոսը օրինապաշտութիւնն է, իսկ երկրորդը՝ անօրէնութիւնը:

Տարիներ առաջ եկեղեցիին մէջ շատեր *օրինապաշտութեան* փոսին մէջն էին: Այդ օրերուն սրբութիւնը կը կեդրոնանար մարդուն կողմէ հնարուած կենցաղային պահանջներու վրայ,

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

որոնք աստուածաշնչական չէին: Անոնք գործերով փրկութեան սուտ աւետարան մը քարոզեցին: Անիկա սոսկալի կապանք մըն էր եւ շատերուն վրդովում պատճառեց եւ ոմանց նոյնիսկ առաջնորդեց հաւատքէն հեռանալու: Մեծ յայտնութիւն մը ազատեց մեզ այդ ահաւոր փոսէն. *Աստուած բարի Աստուած մըն է*: Մեր Երկնաւոր Հօր սէրը իրական դարձաւ եւ շատերը քաշեց–հանեց օրինապաշտութեան փոսէն:

Բայց մենք ըրինք այն ինչ որ մարդ արարածները յաճախ կ'ընեն. որոշեցինք այնքան հեռու երթալ օրինապաշտութեան փոսէն, որ շեղելով գացինք դէպի հակառակ կողմը եւ ինկանք *անօրէնութեան* փոսին մէջ: Այդ փոսը այն ծուղակն է, որ մեզի հաւատալ կու տայ, թէ փրկուած ենք ոչ–աստուածաշնչական շնորհքով մը, որ կ'արտօնէ մեզ, որ ապրինք մնացեալ աշխարհին նման. այդ մտայնութիւնը կ'ըսէ, թէ՛ կրնանք ապրիլ մեր զգացումներէն բխող ցանկութիւններուն համաձայն փոխանակ խաչեալ կեանք մը ապրելու, որ իր զօրութիւնը կ'առնէ իր մէջը գտնուող Քրիստոսի զօրութենէն: Ատիկա սուտ մըն է, որ արգելք կ'ըլլայ շատերուն, որ ապրին Աստուծոյ ներկայութիւնը, օրհնութիւնը եւ զօրութիւնը:

Սրբութիւնը կապանք մը չէ, այլ՝ այն ճշմարիտ ազատութիւնն է, որ ճամբայ կը բանայ, որ վայելենք թէ՛ զԱստուած եւ թէ՛ այս կեանքը: Մենք կանչուած ենք ապրելու կեանք մը, որ արժանի է Անոր, որ փրկեց մեզ: Տիրոջ վախով է, որ կը քալենք անոր մէջ, եւ այդ ճշմարտութեան մասին աւելի պիտի խօսինք յաջորդ քանի մը գրութիւններուն մէջ:

Անձնականացնել

Հատուած– Հոն պողոտայ ու ճամբայ պիտի ըլլայ, եւ ան Սրբութեան պողոտայ պիտի կոչուի: Անկէ անմաքուր մէկը պիտի չանցնի, հապա ան միայն անոնց համար պիտի ըլլայ. այդ ճամբայէն գացողները–մինչեւ անգամ յիմարները– պիտի չմոլորին: (Եսայիի 35.8)

Միտք– Աստուծոյ սէրը մեզ կը պաշտպանէ օրինապաշտութեան փոսէն: Իսկ միւս կողմէ Տիրոջ վախը կը պաշտպանէ մեզ անօրէնութեան փոսէն: Սուրբ վախը կը զօրացնէ զիս մնալու ճշմարիտ սրբութեան մայրուղիին վրայ:

Խոկալ– Ինչ ձեւերով կ'անտեսեմ սուրբ վախը եւ կը հանդուրժեմ անսուրբ վարմունք իմ կեանքիս մէջ: Թագաւորութեան մէջ իմ

Անդիմադրելի Սրբություն

Ճառայությունս ինչ ձեռով արտօնություն տուած է ինծի անտեսելու Աստուծոյ նման սուրբ ըլլալու պատուէրը: Եւ ինչ իրաւունքի զգացում պատճառ դարձած է, որ սխալիմ եւ իյնամ անօրէնութեան փոսին մէջ:

Աղօթք- Սիրելի Տէր, ներէ ինծի Քու Թագաւորութեանդ մէջ ճառայելուս պատճառով Աստուծոյ դատաստանէն զերծ ըլլալ ենթադրելուս համար: Կը զղջամ եւ մտիկ պիտի ընեմ Քեզի պէս սուրբ ըլլալու պատուէրին: Կ'ընտրեմ ընդունիլ ինծի հանդէպ Քու սէրդ ինչպէս նաեւ Քեզի հանդէպ սուրբ վախը: Երկուքը ընտրելով, Քու Խօսքդ կը խոստանայ, որ պիտի մնամ կեանքի առաջնորդող մայրուղիին վրայ: Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Ես կ'ընտրեմ ըլլալ սուրբ ինչպէս Աստուած սուրբ է:

Զաւակներ, Աստուծմէ վախցէք.
այլ խօսքով, սուրբ ահ ունեցէք
ձեր միտքին մէջ,
որպէսզի խուսափիք
անկէ, որ չար է, եւ անշեղ
հետաքրքրութիւն՝ ընդունելու
եւ ընելու այն ինչ որ բարի է:

– ՈՒՒԼԻԱՄ ՓԷՆ

17 | ՀԵՌԱՅԻՐ ՉԱՐԷՆ

Տիրոջ վախը պարզեւ մըն է մեր սիրող Երկնային Հօրմէն, որ կը պաշտպանէ մեզ Յիսուսէն բաժնուելէն: Ան է աղբիւրը յաւիտենական կեանքի, սիրոյ, ուրախութեան, խաղաղութեան, բարութեան, յոյսի եւ անոր բոլոր սքանչելիքներուն: Իրմէ հեռանալ կը նշանակէ՝ մօտենալ դէպի մահ, խաւար եւ վերջաւորութեան յաւիտենական գերեզման: Մեզի կ'ըսուի. «Տէրոջ վախով մարդ չարութենէն կը հեռանայ» (Առակներու 16.6):

Պատմեմ ձեզի, թէ այդ ճշմարտութիւնը երբ իրական դարձաւ ինձի համար: 1980–ականներու վերջերը հեռատեսիլի վրայ հռչակաւոր ատետարանիչի մը փտածութիւնը լայնօրէն հրապարակուեցաւ: Ան աշխարհի ամէնէն հանրածանօթ անձերէն մէկը դարձաւ, եւ սխալ պատճառներով: Այդ ատեն անոր առաքելութիւնը ամէնէն մեծն էր աշխարհի մէջ, թէ՛ հասողութեամբ եւ թէ՛ ֆինանսներով, բայց անոր մեծ համբաւը ատելի ընդարձակեցաւ երբ ամէն գլխաւոր լրատուամիջոց օրական դրութեամբ սկսաւ հաղորդել անոր ոճիրներուն պատմութիւնը, դատավարութիւնը, վճիռը եւ վերջաւորութեան անոր բանտարկութիւնը:

Ան դատապարտուեցաւ քառասունհինգ տարի բանտարկութեան, որ յետագային պակսեցուեցաւ հինգ տարուայ: 1994–ին՝ իր բանտարկութեան չորրորդ տարին, օգնականս ստացաւ անակնկալ հեռաձայն մը: Հակառակ անոր որ ես անծանօթ մըն էի այդ նախկին ատետարանիչին համար, մէկը իրեն տուած էր իմ առաջին գիրքս՝ *Յաղթանակ Անապատին մէջ* վերնագիրով (զոր յետագային փոխեցինք *Աստուած, Ո՛ր ես Դունի*): Ան զանիկա կարդացած էր բանտին մէջ եւ խորապէս ազդուած: Ան իր օգնականէն խնդրած էր,

որ հետս կապուէր եւ հարցնէր եթէ կ'ուզէի այցելութիւն տալ իրեն:

Գացի եւ բնաւ չեմ մոռնար մեր հանդիպումը: Ան այցելուներու սրահ մտաւ իր բանտի տարազով: Մօտեցաւ ինձի, ձեռքերը մեկնեց եւ խոշոր փաթթուկ մը տուաւ ինձի, որ շուրջ մէկ վայրկեան տեւեց: Ապա ան բռնեց զիս իմ ուսերէս, արցունքոտ աչքերով նայեցաւ աչքերուս մէջ եւ անկեղծօրէն հարցուց. «Դուն գրեցիր գիրքը կամ քութելադրութեամբդ ուրիշ մէկը գրեց»:

Պատասխանեցի. «Ես գրեցի զանիկա: Ես տառապանք կրած եմ, բայց ոչ այնքան որքան դուն կրած ես»:

Ապա ան ըսաւ. «Շատ խօսելիք ունինք եւ միայն ինիսուն վայրկեան»:
Ես տակաւին քիչ մը կը քաշուէի, քանի որ առաջին անգամն էր, որ կը հանդիպէի իրեն հետ: Այդ մարդուն մասին այնքան զրպարտութիւն եւ վարկաբեկիչ բաներ լսած էի, որ անկեղծօրէն չէի գիտեր, թէ ճիշդ որո՞ւ հետ կը խօսիմ: Բայց երբ նստանք, ան իր առաջին իսկ խօսքէն զինաթափ ըրաւ զիս: Աչքերուս մէջ նայելով, ըսաւ. «Ճո՛ն, այս բանտը Աստուծոյ դատաստանը չէր իմ կեանքիս համար. Անոր գութն էր: Եթէ ես շարունակէի քալել այն ճամբով, որով կ'ընթանայի, վերջաւորութիւնս դժոխքը պիտի ըլլար յաւիտեան»:

Այդ խօսքով ան իմ լման ուշադրութիւնս գրաւեց: Պատմեց, թէ ճիշդան չարութիւն ըրած էր ինք եւ ճիշդան մեծ էր Աստուծոյ ազատագրութիւնը իր կեանքին մէջ: Շուտով անդրադարձայ, որ կը խօսէի անկեղծ, կոտորած եւ ճմլուած սիրտով Աստուծոյ մարդու մը հետ: Ան պատմեց նաեւ, թէ Աստուած ինչպէս ազատած էր զինք խաւարէն իր բանտարկութեան առաջին տարին:

Ըսաւ, թէ ամէն օր ժամեր կ'անցնէր՝ առանձին եւ խումբի մը հետ, Աստուածաշունչ կարդալով եւ աղօթելով: Խանդավառօրէն պատմեց իրենց բանտի եկեղեցիին եւ իրենց հովիւին մասին, որ իրենց պէս բանտարկեալ մըն էր: Մտածելով, որ ինք անլի ատակ էր այդ ծառայութիւնը յանձն առնելու համար, հարցուցի, թէ ինք ինչն հովուութիւն չէր ըներ: Ան բացատրեց, թէ որեւէ ղեկավարութեան պաշտօն չէր ուզեր առնել մինչեւ որ իր փոխակերպումը ամբողջական չըլլար: Ըսաւ. «Ճո՛ն, ես վարպետ խաբող մըն եմ եւ չեմ ուզեր առիթ տալ, որ այդ յատկանիշս մէջտեղ ելլէ նորէն»:

Անոր այդ խօսքին ճիշդ ըլլալը փաստուեցաւ մէկ տարի ետք երբ բանտէն ելլելէն ետք ան միացաւ միսիոնարական կազմակերպութեան մը, որ կը գործէր Լոս Անճելըս քաղաքի կեդրոնին մէջ: Ան կը ծառայէր ճամբաներուն մէջ՝ հոգ տանելով անտուններուն: Կը սիրէր ատիկա ընել, քանի որ փողոցի մարդիկը երկրին մէջ այն քիչերէն էին, որոնք չէին գիտեր իր ո՞վ ըլլալը:

Շուրջ քսան վայրկեան զինք մտիկ ընելէ ետք, բաւարար հանգիստ զգացի հարցումներ հարցնելու իրեն: Սկսայ ամէնէն կարելորէն, որ կրնայի մտածել. «Երբ դադրեցար Յիսուս սիրելէն»:

Ես այդ հարցումը հարցուցի, քանի որ իր ծառայութեան սկիզբը Յիսուսի սէրը կը ճառագայթէր իրմէ: Անոր կրակը եւ բուռն սէրը յայտնի էին բոլոր անոնց, որոնք կը լսէին իր քարոզները: Կ'ուզէի գիտնալ, թէ երբ իր սէրը պաղեցաւ եւ աւելին՝ թէ ինչո՞ւ պաղեցաւ:

Աչքերուս մէջ նայելով, մեծ անկեղծութեամբ ըսաւ. «Ես բնաւ չդադրեցայ Յիսուսը սիրելէն»:

Տնցուեցայ եւ քիչ մը զայրացայ իր այդ խօսքէն: *Ինչպէս կը համարձակի այդպիսի բան մը ըսել*, մտածեցի, եւ անմիջապէս հակադարձեցի. «Ինչ կ'ըսես: Դուն շնութիւն գործեցիր զեղծարարութիւններդ մէջտեղ ելլելէն եւ բանտ դրուելէդ ետքը տարի առաջ: Ինչպէս կրնաս ինծի ըսել, թէ կը սիրէիր Յիսուսը այդ ետքը տարիներուն ընթացքին»:

Առանց աչքերը աչքերէս շեղելու, հանդարտօրէն ըսաւ. «Ճո՛ն, ես այդ լման ժամանակը կը սիրէի Յիսուսը»:

Շփոթս բացայայտ էր: Ան կանգ առաւ եւ ապա ըսաւ. «Ճո՛ն, ես Աստուծոյ վախը չունէի»: Անգամ մը եւս կանգ առաւ եւ ապա աւելի յստակօրէն պարզեց. «Ես կը սիրէի Յիսուսը, բայց Աստուծոյ վախը չունէի»:

Անխօս մնացի, եւ անկեղծօրէն, ահի մէջ էի անոր այդ ըսածին պատճառով: Շուրջ 15 երկվայրկեան լռութիւն տիրեց մեր միջեւ, եւ այդ լման ատենը միտքս կ'աշխատէր: Ապա ան ըսաւ բան մը, որ տակաւին կ'արձագանգէ էութեանս մէջ. «Ճո՛ն, միլիոնաւոր ամերիկացիներ կան ճիշդ ինծի պէս. կը սիրեն Յիսուսը, բայց Աստուծոյ վախը չունին»:

Կարծես Աստուած խօսեցաւ իր շրթունքներուն մէջէն: Բազմաթիւ հարցումներ յանկարծ պատասխանուեցան այդ հաստատումով: Տնցուած էի եւ չէի գիտեր ինչ ընել, եւ մեծագոյն յայտնութիւնը եղաւ այն, որ իր պատմութիւնը պարզեց մեր երկրին մէջ բազմաթիւ մարդոց հաւատքէն նահանջելու արմատական պատճառը: Եւ դժբախտաբար, այն ատեն ընթացքի մէջ եղող հաւատուրացութեան այդ ալիքը աւելի եւս մեծցած է ներկայիս:

Աստուածաշունչը շատ յստակօրէն կ'ըսէ, թէ զԱստուած մտերմօրէն ճանչնալու մեկնակէտը Տիրոջ վախն է: Առանց անոր, մենք կ'ունենանք կեղծ յարաբերութիւն մը շինծու Յիսուսի մը հետ. ան, որ փառքի Տէրը չէ: Կը հաւատանք անհրական փրկիչի մը: Ես այդ ճշմարտութեան մասին խորունկ կերպով պիտի խօսիմ այս գիրքին մէջ յետագային: Բայց նախ փաստեր ներկայացնեմ՝ երկու արագ օրինակներով:

Մինչ կը գրեմ այս գիրքը, տակաւին այս շաբաթ լսեցի սրտաճմլիկ լուրը երիտասարդուհիի մը, զոր մանկութենէն ի վեր կը ճանչնամ: ան հաւատացեալ ընտանիքի մը մէջ հասակ նետած է եւ կը դաւանէր Քրիստոսի հետեւորդ ըլլալը, բայց կ'ապրի անառակ կեանք մը՝ իր տարեկից երիտասարդներուն քով «դիւրին» ըլլալու համբաւը ունենալով: Վերջերս ան իր *Ինսթակրամ*ի էջին վրայ հրապարակեց, թէ Յիսուս իր ձեռքը բռնած էր իր վիժում ընելու ընթացքին: Ինչ Յիսուսի մասին կը խօսի ան:

Ուրիշ երիտասարդուհի մը, որ ամուսնացած էր բարեպաշտ տղամարդու մը հետ երեսիս ըսաւ, որ Յիսուս իրեն խոստացած էր հոգ տանիլ եթէ որոշէր ամուսնալուծուիլ իր ամուսինէն: Ան ամուսնալուծուեցաւ եւ իր ետին կործանում ձգեց իր ամուսինին, պզտիկներուն, ընտանիքին եւ ընկերներուն կեանքերուն մէջ: Ամուսնալուծման անոր պատճառը խայտառակութիւն մը չէր. ան պարզապէս այլեւս չէր սիրեր իր ամուսինը: Չկային բռնաբարում, անբարոյութիւն, նիւթական խնդիրներ. այս բոլորը ինք անձամբ ըսաւ: Իրականութեան մէջ ըսաւ, որ ամուսինը ազնիւ, հոգատար ամուսին մը եւ հայր մըն էր: Ինչ Յիսուսի մասին կը խօսէր ան:

Ասոնք պարզապէս երկուքն ալ այն անհամար օրինակներէն են, որ կրնամ տալ մարդոց մասին, որոնք կը դաւանին Յիսուսը, բայց կ'ապրին այնպիսի ձեւով մը, որ հակառակը կը խօսի:

Ինչպէս է, որ այդ երկուքը եւ շատ ուրիշներ այդքան խաբուած են: Կը հաւատամ, որ սուրբ վախի բացակայութիւնն է:

Սիրելի բարեկամներս, դուք միշտ հնազանդ էիք Աստուծոյ երբ ես ձեր հետ էի: Հիմա որ ձեզմէ հեռու եմ, աւելի կարեւոր է, որ հնազանդ ըլլաք: Շարունակեցէք աշխատիլ ձեր փրկութեան համար ահով ու դողով: (Փիլիպպեցիներուն 2.12)¹

Պօղոս չգրեց, թէ պէտք է մեր փրկութեան մէջ աճինք *սիրով* եւ *քաղցրութեամբ*: Շատեր պիտի հաստատէին, թէ այդ երկու երիտասարդուհիներն ալ սիրալիր եւ քաղցր էին: Անոնք պիտի հաստատէին անոնց տարիներ շարունակ եկեղեցի յաճախելը եւ Յիսուսի նուիրումի դաւանութիւնը: Բայց անոնք ինչպէս կրցան իրենց գլուխն ի վար սուզուիլ այդպիսի անօրէն վարմունքներու մէջ: Անոնցմէ կը բացակայէր այն ինչ որ այդ հռչակաւոր աւետարանիչէն կը բացակայէր: Տիրոջ վախով է, որ մենք կը հեռանանք չարէն, ոչ թէ

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Սենչըրի Վըրժըն* (NCV) տարբերակէն

Աստուծոյ սիրով: Աստուծոյ սէրը մեզ դէպի Իրեն կը քաշէ. Աստուծոյ վախը մեզ հեռու կը պահէ չարէն, որ կը ջանայ կործանել մեզ:

===== Անձնականացնել =====

Հատուած- Տէրոջը վախը՝ չարութիւնը ատելն է. ես կ'ատեմ ամբարտաւանութիւնը, խրոխտութիւնը, չար ընթացքը, նաեւ նենգաւոր բերանը: (Առակներու 8.13)

Միտք- Տիրոջ վախը պարգեւ մըն է մեր սիրող Երկնային Հօրմէն, որ կը պաշտպանէ մեզ Իրմէ բաժնուելէն: Այն պահուն, որ հանդուրժողութիւն կը ցուցաբերենք մեղքին նկատմամբ, փոխանակ ատելութիւն ունենալու, այն պահն է, որ կը սկսինք Անկէ հեռանալը:

Խոկալ- Հաւատքէն նահանջելը չի պատահիր այն պահուն երբ անձ մը ինքզինք անկողինին մէջ կը գտնէ ուրիշի մը հետ, որուն հետ ամուսնական ուխտ չունի: Անիկա չ'սկսիր այն պահուն երբ անձ մը կը սկսի դրամ շորթել իր գործատերէն: Անիկա կը սկսի ատկէ շատ առաջ երբ կը սկսինք հանդուրժել այն բաները, որոնցմէ մեզ ազատելու համար Յիսուս Իր կեանքը տուաւ: Ինչն է, զոր կը հանդուրժեմ, որմէ զիս ազատելու համար Յիսուս մեռաւ:

Աղօթք- Սիրելի Տէր, կը խնդրեմ, որ ներես ինձի մեղքը հանդուրժելուս համար ոչ միայն իմ կեանքիս մէջ, այլեւ այն հաւատացեալներուն, որոնց հետ յարաբերութեան մէջ եմ: Ներէ ինձի, որ անոնց հետ մեղմութեամբ եւ սիրով լեցուն սիրտով չեմ խօսած, որպէսզի չջարունակեն քալել սխալ ճամբու մը մէջ: Կը զղջամ այդ հանդուրժողութեանս համար: Շնորհակալ եմ ինձի ներելուդ համար: Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Ես պիտի սիրեմ մարդիկը, որովհետեւ Աստուած կը սիրէ մարդիկը: Պիտի ատեմ մեղքը, որ կը կործանէ սիրած անձերս:

Պահէ՛ք բայլերս քու
արահետներուդ մէջ,
որպէսզի ոտքերս չսահին:

– ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 17.5

ԵՐԿԱՅՆԱԿԵՑՈՒԹԻՒՆ

1994 տարուան ընթացքին ունեցած երկու նշանակալից փորձառութիւններէս ետք՝ եկեղեցոյ խորհրդաժողովը, ուր Աստուծոյ վախին մասին պատգամս սրբագրեց հովիւը եւ հեռատեսիլի հանրածանօթ աւետարանիչին տուած բանտի այցելութիւնս, մէջս բռուն փափաք մը արթնցաւ հասկնալու սուրբ վախը եւ անոր մէջ աճելու: Երկու դէպքերն ալ ունէին նոյնանման պատգամներ, բայց երկու տարբեր տեսանկիւններէ:

Այդ եկեղեցին, որ ամէնէն մեծ եւ ազդեցիկ եկեղեցին էր շրջանին մէջ, այլեւս գոյութիւն չունի: Եւ անոր հովիւը, որ Նոր Կտակարանի հաւատացեալներուն կը սորվեցնէր, թէ պէտք չունէին վախնալու Աստուծմէ, այլեւս ծառայութեան մէջ չէ: Այն ծառայողը, որուն հետ հանդիպում ունեցայ բանտին մէջ, կորսնցուց իր հսկայ առաքելութիւնը, բայց սուրբ վախը յայտնաբերելէն եւ զանիկա ընդունելէն ի վեր մնացած է Աստուծոյ եւ մարդոց հաւատարմօրէն ծառայելու ընթացքի մը մէջ: Ան ներկայիս ունի ուրիշ ծառայութեան կազմակերպութիւն մը, որ ազդեցութիւն կը բերէ շատերու կեանքերուն մէջ:

Այդ երկու իրարմէ անջատ պատահարները ցոյց կու տան, թէ Տիրոջ վախը ճիշդն է՝ խուսափելու համար մեզ ծուղակը իյնացնել ջանացող Չարէն, որ կրնայ կարճեցնել իբրեւ Քրիստոսի ազդու դեսպաններ մեր պաշտօնավարութիւնը: Նիւթս կրնանք ամփոփել մէկ բառի մէջ. *երկայնակեցութիւն*: Վերջերս յարգուած հովիւ մը ինձի հետ բաժնեկցեցաւ իր ունեցած մէկ գրոյցը Աստուածաշունչի համալսարանի դասախօսի մը հետ, որ ընդարձակ կերպով ուսումնասիրած էր Աստուածաշունչին մէջ այն անհատները, զորս Աստուած

կանչած էր եւ յանձնարարած: Ան յայտնաբերած էր, որ ընտրուած պատգամաբերներուն 75 տոկոսին ազդուութիւնը ընդհատուած էր որոշ ժամանակ մը ետք եւ անոնցմէ շատերը լաւ կերպով չէին աւարտած իրենց կեանքը: Մեր ներկայի օրերուն տեղի ունեցող ծառայութեան ողբերգութիւններուն եւ այդ դասախօսին ուսումնասիրութեան արդիւնքներուն լոյսին տակ, *երկայնակեցութիւնը* մարտահրաւէր մըն է, զոր բոլորս ալ պէտք է անելի լուրջի առնենք:

1990–ականներու վերջաւորութեան երկայնակեցութեան մէջ սուրբ վախի կարեւորութիւնը անգամ մը եւս հաստատուեցաւ ուրիշ նշանակալից փորձառութեամբ մը եւ անկէ յառաջ եկած յայտնութեամբ: Կը ծառայէի Քուալա Լամփուրի մէջ, Մալիզիա: Տասը ծառայութիւններէն վերջինն էր, եւ վայրը խոնուած էր հաւատացեալներու մեծ բազմութեամբ մը, որոնք եկած էին երկրին բոլոր կողմերէն: Պատգամը աւարտելէս ետք շատեր ընդառաջեցին ծառայութեան նուիրուելու կանչին: Խիտ բազմութիւն մը կեցած էր լայն բեմին առջեւ՝ սպասելով աղօթքի:

Ես սկսայ բեմի աստիճաններէն վար իջնել երբ յանկարծ Աստուծոյ ներկայութիւնը եկաւ սրահին մէջ շօշափելի եւ նշանակալից ձեւով մը: Անիկա յատկանշուեցաւ Աստուծոյ սիրով եւ երջանկութեամբ: Իմ առջեւ կեցած մարդիկը սկսան ժպտալ, որ շուտով վերածուեցաւ խնդրի, եւ այդ երջանկութիւնը արագօրէն տարածուեցաւ մինչեւ որ առջեւ եկողներուն բոլորը այդ ազդեցութեան տակ եղան: Այնպէս կը թուէր, թէ Աբբա Հայրը ուզեց թարմացնել Իր զաւակները: Երկար ժամանակ չառաւ, որ հասկնամ, թէ ես պէտք չունէի բան մը ընելու, ուստի նստայ բեմին ծայրը եւ ուրախութեամբ կը դիտէի ինչպէս Աստուած կը զօրացնէր եւ կ'օրհնէր Իր զաւակները:

Հինգէն եօթը վայրկեան ետք Անոր գեղեցիկ ներկայութիւնը վերցուեցաւ եւ հանդարտութիւն մը տիրեց մթնոլորտին մէջ: Բոլորս ալ լուռ էինք եւ կը վայելէինք սրահին մէջ տիրող նշանակալից խաղաղութիւնը: Սակայն քանի մը վայրկեան ետք Աստուծոյ ներկայութիւնը ինքզինք յայտնեց տարբեր ձեւով մը, որուն նմանը կը յիշեմ, որ ունեցած էինք Պրագիլի մէջ: Ոտքի ելայ՝ փոփոխութիւն մը տեսնելու ակնկալութեամբ: Այդ ներկայութիւնը անելի եւ անելի զօրացաւ. հով չէր փչեր այս անգամ, բայց Անոր իշխանութիւնը եւ հրաշալիութիւնը բացայայտօրէն իրական էին: Անոնք, որոնք քանի մը վայրկեան առաջ կը խնդային, յանկարծ միեւնոյն ատեն սկսան աղաղակել եւ լալ, ոմանք՝ շատ սաստիկ կերպով:

Ներկայութիւնը անելի զօրացաւ եւ լալը անելի շատցաւ: Կարծես այդ լուռ ասիացիները կը մկրտուէին Աստուծոյ կրակով: Դարձեալ,

կարելի չէ նկարագրել այդ ներկայութեան դրսեւորումը եւ ասիկա ալ չէ նպատակս այդ սուրբ պահը բաժնեկցելու, այլ՝ կարեւորը Անոր ներկայութեան հոյակապութիւնն էր: Անիկա զօրացաւ այնքան, որ սկսայ մտածել, որ այլեւս պիտի չդիմանայինք:

Այդ հանդիպումին ընթացքին ես քաջատեղեակ եղայ մեր շունչին եւ հոգիին տարբերութեան: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ՛ Աստուծոյ Խօսքը «կը թափանցէ մարդու շունչին ու հոգիին մէջ» (Եբրայեցիներուն 4.12): Միտքս (շունչս) կը մտածէր՝ *Ասկէ աւելի չեմ կրնար տանիլ: Աստուած, ասիկա շար շար է...* Եւ սակայն սիրտս (հոգիս) կ'աղաղակէր՝ *Աստուած, հաճիս մի՛ վերցնէր ներկայութիւնդ, կը խնդրեմ, որ չդադրիս:*

Անգամ մը եւս մտածեցի. *Ճոն Պրվիր, մէկ սխալ քայլ, մէկ սխալ բառ, կը մեռնիս:* Ինչպէս Պրագիլի պարագային, վստահ չեմ կրնար ըսել, որ այդպիսի բան կրնար պատահիլ, բայց գիտէի, որ անպատկառութիւն պիտի չհանդուրժուէր այդ մթնոլորտին մէջ:

Անոր հրաշալի ներկայութեան ամբողջ դրսեւորումը տեսց երեք կամ չորս վայրկեան եւ ապա վերցուեցաւ: Երբ վերցուեցաւ, առանց որեւէ ցուցմունք ստանալու, ներկաները անգամ մը եւս միակամօրէն լռեցին: Ես լուռ մնացի քանի մը վայրկեան Աստուծոյ ներկայութենէն ետք տիրող այդ հանդարտութեան եւ խաղաղութեան մէջ:

Երբ դուրս կու գայինք այդ վայրէն, մթնոլորտը հանդիսաւոր, լուռ եւ ակնածու էր: Կանգ առի խօսելու տղամարդու մը եւ իր կնոջ հետ, որոնք Հնդկաստանէն էին եւ մեծապէս ազդուած էին Աստուծոյ ներկայութենէն: Պարզապէս իրարու նայեցանք հիացմունքի եւ լռութեան մէջ քանի մը երկվայրկեան, որմէ ետք կինը մեղմօրէն ըսաւ. «Ճոն, ներսս շատ մաքուր կը զգամ»: Ամուսինը գլուխը շարժեց հաւանութեամբ:

Երբ ան այդ բառերը ըսաւ, սիրտս տեղէն ցատկեց: Վերջապէս մէկը ճշգրտօրէն նկարագրեց այն ինչ որ զգացած էի Պրագիլի մէջ եւ հիմա՝ Մալիգիայի մէջ: Զգացումներս զսպելով, պատասխանեցի. «Ես ալ»: Այլեւս չխօսեցանք, բայց անոր այդ խօսքը շարունակեց մէջս արձագանգել ամբողջ գիշերը:

Յաջորդ առտու պանդոկի սենեակս էի եւ կը պատրաստուէի *պասքէթպոլ* խաղալու երթալու եկեղեցոյ եւ Աստուածաշունչի դպրոցի անձնակազմին մէջ ծառայող երիտասարդներուն հետ: Յանկարծ լսեցի, որ Սուրբ Հոգին ինձի ըսաւ. «Տղան, Սաղմոս 19-ը կարդան»:

Բացի Աստուածաշունչս, գտայ այդ հատուածը եւ սկսայ կարդալ: Երբ հասայ 9-րդ համարը, կարդացի.

Տիրոջ վախը մաքուր է, յաւիտեան կը գոյատեւէ: (Սաղմոսներու 19.9, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹

Պոռացի սենեակիս մէջ. «Ա՛յս է: Ահա՛ հոս գրուած է»: Ահ մը տիրեց վրաս: Ճիշդ ատիկա էր, որ այդ կինը ըսած էր ինծի նախորդ օրը: Աննկարագրելի մաքրութիւն մը կար, խորունկ անբծութիւն մը, որ զգացինք մեր շունչին մէջ:

Ապա «յաւիտեան կը գոյատեւէ» բառերը ցատկեցին էջէն դուրս: Սուրբ Հոգին անմիջապէս խօսեցաւ սիրտիս, ըսելով.

Տղաս, Արուսեակը պաշտամունք կը ղեկավարէր ճիշդ. Իմ գահիս առջեւ, եւ ան երկինքի ամբողջ բանակը կ'առաջնորդէր, քանի որ օծուած էր աստիկա ընելու: Ան մօտիկ էր Ինծի, կը տեսնէր Իմ փառքս, բայց Իմ վախս չունէր: Հետեւաբար ան չգոյատեւեց Իմ գահիս առջեւ յաւիտեան: (Տեն Եզեկիէլի 28.13–17)

Հրեշտակներուն մէկ երրորդը, որ կը տեսնէր Իմ փառքս, Արուսեակի կողմը անցաւ: Անոնք Իմ վախս չունէին իրենց մէջ, ուստի չգոյատեւեցին Իմ ներկայութեանս մէջ յաւիտեան: (Տեն Յայտնութիւնը 12.4,7)

Աղամ եւ Եւա Իմ ներկայութեանս փառքին մէջ քալեցին օրուան զով արեւնը: Անոնք Իմ վախս չունէին, ուստի չգոյատեւեցին Եդեմի պարտէզին մէջ յաւիտեան:

Տղաս, ամէն ստեղծուած արարած՝ որ յաւիտենապէս պիտի ըլլայ Իմ գահիս շուրջը, անցած պիտի ըլլայ Տիրոջ վախի սուրբ քննութենէն: (Տեն Ծնունդներու 3.8)

Աչքերս բացուեցան այդ ճշմարտութեան: Սկսայ մտածել այն բոլոր հովիւներուն մասին, որոնց ծառայութեան ազդեցութիւնը դադրած է կամ որոնք իրենց ծառայութիւնը կամ կեանքը լաւ կերպով չեն ամարտած: Շատերը սկսան բուռն փափաքով, մեծապէս սիրեցին Յիսուսը, հնազանդեցան եւ զոհուեցան՝ Աստուծոյ ժողովուրդին ծառայելու համար, բայց սպառեցան, մարդոց վրայ իրենց վստահութիւնը կորսնցուցին եւ շատերը ձգեցին ծառայութիւնը. չդիմացան:

Ուրիշներ տակաւին ծառայութեան մէջ էին, բայց անիկա կը գործածէին իբրեւ շահի միջոց եւ զանազան ուրիշ անձնասէր նպատակներով: Ուրիշներ սեռային յափշտակիչներ դարձան՝ իրենց ղեկավարութեան դիրքը գործածելով անմեղ կիներ ծուղակը ձգելու համար: Ուրիշներ դարձան խորհրդականներ եւ սկսան

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* (NKJV) տարբերակէն

գանձել մեծ գումարներ՝ հմտութեամբ պատրաստելու համար խաբեբայական պատգամներ հովհներու համար, որոնք կ'ուզէին իրենց հետետորդներուն խաբելով համոզել, որ մեծ գումարներ նուիրեն: Ուրիշներ սկսան ստել Աստուծմէ եկած մարգարէական խօսքերու վերաբերեալ՝ անձնական տեղեկութիւններ ձեռք ձգելու ձեւեր գտնելով այն անձերուն մասին, որոնց սկզբունքով կը ծառայեն, եւ ապա այդ տեղեկութիւններուն հիման վրայ հռչակումներ ընելով՝ իբրեւ թէ Աստուծոյ կողմէ յայտնուած ըլլային անոնք: Փտած վարմունքի ցանկը գրեթէ անվերջանալի է:

Ինչպէս է, որ անոնք, որոնք այդքան մաքուր կը սկսին այդքան կ'ապականին: Ինչո՞ւ համար չունին ազդուութեան երկայնակեցութիւն: Սուրբ վախի բացակայութիւնն է: Այն ինչով, որ Յիսուս կը հրճուէր պարզի կ'առնուի կամ կը մերժուի, ինչպէս Միացեալ Նահանգներու հարաւարեւելքի այդ հովիւին պարագային: Այն ինչ որ Աստուած «Իր գանձը» կը կոչէ, անոնք անոր հակառակին ճիշդ ըլլալով կը համոզեն իրենք զիրենք եւ ուրիշները: Բայց տեսէք Աստուած ինչ կ'ըսէ սուրբ վախի եւ երկայնակեցութեան մասին.

Ո՛րքան երջանիկ են անոնք, որոնք կը վախնան Տիրոջմէ [...] Անոնց բարի գործերը յաւիտեան պիտի մնան: Այդպիսի մարդիկը [...] երկար ատեն պիտի յիշուին: (Սաղմոսներու 112.1,3,6)¹

Պէտք չունինք ողբերգութիւններ ապրելու, որպէսզի գիտնանք, թէ ի՞նչքան կարեւոր է սուրբ վախը: Կը խնդրեմ՝ Աստուծոյ փառքին եւ քու երկայնակեցութեանդ սիրոյն, սուրբ վախը քու գանձդ ըրէ:

Անձնականացնել

Հատուած– Տիրոջ սէրը յաւիտեան կը մնայ անոնց հետ, որոնք կը վախնան Իրմէ: (Սաղմոսներու 103.17)²

Միտք– Միայն Աստուծմէ վախցողները յաւիտենապէս պիտի ըլլան Աստուծոյ գահին շուրջը:

Խոկալ– Լաւ ապրելու մէկ բաժինը լաւ վերջացնելն է: Տիրոջ վախը յաւիտեան կը մնայ: Ինչպէս կրնամ սուրբ վախը ամրակ մը դարձնել

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Անդիմադրելի Սրբութիւն

Կեանքիս մէջ: Ինչ գործնական ձեւերով կրնամ սուրբ վախը իբրեւ զտիչ գործածել բոլոր ըսածներուս եւ ըրածներուս համար:

Աղօթք- Սիրելի Երկնաւոր Հայր, Խօսքդ կ'ըսէ, թէ Դուն կարող ես զիս պահելու, որպէսզի չիյնամ, եւ զիս մեծ ուրախութեամբ Քու փառաւոր ներկայութեանդ մէջ պիտի բերես՝ առանց մէկ թերութեան: Գիտեմ, որ Տիրոջս՝ Յիսուսի փրկագործութեամբ եւ սուրբ վախը ունենալով է, որ կրնամ ունենալ այդ յաւիտենական յարաբերութիւնը: Կը խնդրեմ, որ սուրբ վախը միշտ բնակի մէջս, որպէսզի յաւիտենապէս ապրիմ Քու ներկայութեանդ մէջ: Ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Սուրբ վախով պիտի ապրիմ Տիրոջ տան մէջ, Իր ներկայութեան մէջ, յաւիտեան:

Եթէ չհրճուիս այն
իրականութեամբ, որ Հայրդ
սուրբ, սուրբ, սուրբ է, ապա
ուրեմն հոգեւորապէս մեռած
ես: Կրնաս եկեղեցիի անդամ մը
ըլլալ: Կրնաս Քրիստոնէական
դպրոց մը յաճախած ըլլալ: Բայց
եթէ շունչիդ մէջ հրճուանք չկայ
Աստուծոյ սրբութեան համար,
չես ճանչնար զԱստուած: Չես
սիրեր զԱստուած: Աստուծոյ
հետ կապ չունիս: Քնացած ես
Անոր նկարագրիին նկատմամբ:

– ԴՈՊԸՐԹ ՉԱՐԼՁ ՍՓՐՈԸԼ

19 | ՄԱՔՐԵԼ ՄԵՐ ԱՆՁԵՐԸ

Տիրոջ վախը *մաքուր է, յափտեան կը գոյատևի* (Սաղմոսներու 19.9, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹: Սաղմոսողը կը նշէ սուրբ վախի երկու նշանակալից պտուղներ, զորս պէտք չէ շրջանցենք կամ թեթեւութեամբ առնենք. *մաքրութիւն եւ երկայնակեցութիւն*: Խօսինք առաջինին մասին, իսկ երկրորդը պիտի ձգենք յաջորդ գլուխներէն մէկուն: Պօղոս կը գրէ.

Հետեաբար, սիրելիներ, այս խոստումները ունենալով, եկէք *մաքրենք մենք մեզ* ամէն մարմնական եւ հոգեկան պղծութենէ՝ կատարելագործելով *մեր սրբութիւնը* Աստուծոյ վախով: (Բ.Կորնթացիներուն 7.1, շեշտադրումը՝ մեր կողմէ)²

Հոս կը տեսնենք նոյն այն ճշմարտութիւնը, զոր սաղմոսողը կը հաղորդէ, սակայն աւելի խորունկ կերպով: Նախ կ'ուզեմ մատնանշել, թէ սրբութիւնը իր հասունութեան կը հասնի Տիրոջ վախին միջոցաւ, եւ ոչ՝ Աստուծոյ սիրոյն: Յիշեցնեմ այն հոչակաւոր ատետարանիչին մասին, որ անբարեպաշտ կեանք մը կ'ապրէր մինչ կը սիրէր Յիսուսը: Մէյ մը, որ ան ճանչցաւ սուրբ վախը, ինքզինք մաքրեց եւ շարունակեց ընթացքը՝ ազատ իր նախկին անմաքրութիւններէն: Ատիկա զինք առաջնորդեց Յիսուսի հետ աւելի հարազատ կամ իսկական յարաբերութեան մը, որ ատկէ առաջ բնաւ չէր ունեցած: Անոր փորձառաբար սորվածը կը տեսնենք Աստուածաշունչին մէջ:

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* (NKJV) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* (NKJV) տարբերակէն

Ինչպէս ասկէ առաջ ըսինք, սրբութիւնը ամէնէն շատ խօսուած նիւթերէն մէկը չէ այս օրերուս: Շատերու համար անիկա տհաճ է, որովհետեւ զուարճալի չէ եւ արգելքներ կը դնէ մարդուն կեանքին մէջ: Անոր կը նային կամ իբրեւ օրինապաշտական կապանք մը կամ ալ իբրեւ արժանիք մը, որ ազնուական է, բայց անհասանելի: *Սի. Էս. Լուիս* այդ տգիտութեան մասին հետեւեալը գրեց. «Ո՛րքան քիչ բան գիտեն այն մարդիկը, որոնք կը կարծեն, թէ սրբութիւնը ձանձրացուցիչ բան մըն է: Երբ մարդ իրականին կը հանդիպի... անիկա անդիմադրելի է»: Ուստի դուն քեզ պատրաստէ անդիմադրելիին համար մինչ կը սուզուիսք նիւթին մէջ:

Ինչպէս ասկէ առաջ ըսի, սրբութեան հիմնական սահմանումը «Աստուծոյ համար զատուիլը կամ անջատուիլ»ն է, եւ ատիկա վստահաբար կը պարունակէ մաքրութիւնը: Պատկերացուր հարս մը: Ան ինքզինք կ'անջատէ կամ կը զատէ իր ամուսինին համար՝ մերժելով փափաքիլ ուրիշ մը կամ գործ ունենալ ուրիշի մը հետ: Ատիկա սրբութեան մաքրութեան երեսն է: Ատով հանդերձ Պօղոս մեզի կը թելադրէ, որ մաքրենք մենք մեզ: Ան չ'ըսեր. «Յիսուսի արիւնը պիտի մաքրէ մեզ»: Հետեւեալ կէտը յստակացնեմ. Յիսուսի արիւնը իրապէս կը մաքրէ մեզ ամէն մեղքէ. սակայն շփոթի կը մատնուինք երբ *արդարութեան* գործը կը խառնենք *սրբութեան* գործին հետ:

Երբ ապաշխարեցինք եւ Յիսուս Քրիստոսը իբրեւ մեր Տէրը ընդունեցինք, մեր մեղքերը ներուեցան եւ ամբողջութեամբ մաքրուեցանք: Աստուած մեր մեղքերը թաղեց մոռացութեան ծովուն մէջ: Ան չի յիշեր զանոնք: Այդ գործը ամբողջացած է, կատարեալ է եւ կարելի չէ անելի բարելաւել: Մենք բան մը չըրինք այդ հոյակապ իրականութեան արժանի ըլլալու համար. անիկա նուէր մըն էր Աստուծմէ: Ա՛յդ է *արդարացման* գործը:

Բայց այն պահուն, որ մենք արդարացում ստացանք, *սրբագործման* (սրբութեան) ընթացքը սկսաւ: Այդ ատեն է, որ մեր ներսը կատարուած գործը դուրսը կը *գործադրուի*. մեր նոր բնութիւնը արտաքին իրականութիւն մը կը դառնայ (կամ երեւելի կը դառնայ) մեր ապրած ձեւին միջոցաւ: Ճիշդ այդ մասին է, որ կը խօսի Պօղոս երբ կ'ըսէ.

Գործադրեցէք ձեր փրկութիւնը՝ ահով ու դողով. որովհետեւ Աստուած է, որ ձեր մէջ կը ներգործէ թէ՛ *կամենալը* եւ թէ՛ *ընելը*՝ իր բարեհաճութեան համաձայն: (Փիլիպպեցիներուն 2.12-13, շեշտադրումը՝ մեր կողմէ)՝

1 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանում, 2001

Յստակօրէն անիկա Աստուծոյ շնորհքին գործն է, բայց պէտք է համագործակցինք այն զօրութեան հետ, որ Ան կու տայ թէ՛ *կամենալու* եւ թէ՛ *ընելու*: Ճիշդ ինչպէս անն ու դողը Պրագիլի ժողովուրդը դրաւ Աստուծոյ ներկայութեան մէջ մտնելու եւ Անկէ ստանալու դիրքին մէջ, նոյնպէս ալ սուրբ վախը եւ դողը կայծ կու տան եւ կը դիրքաւորեն մեզ, որ զօրանանք Իր շնորհքով՝ հնազանդութեան համար:

Արեւմտեան Եկեղեցիին մէջ մեծ թիւով ուսուցիչներու սխալը այն է, որ կը հռչակեն թէ՛ սրբութեան գործը նոյնն է ինչպէս արդարութեան գործը: Այլ խօսքով՝ մենք պէտք չունինք բան մը ընելու, Յիսուս ամէն բան ըրաւ: Ուստի առարկութիւնը այն է, թէ՛ նոյնիսկ որ մենք կը շարունակենք ապրիլ աշխարհէն ոչ տարբեր ձեւով մը՝ մեր զանազան կիրքերով կառավարուելով, մենք սուրբ ենք, որովհետեւ Յիսուս մեր սրբութիւնն է: Ինչ որ անելի խրթին կը դարձնէ հարցը այն է, որ իրապէս կան աստուածաշնչական հատուածներ Նոր Կտակարանին մէջ, որոնք կը թուին նեցուկ կանգնիլ անոնց թեզին: Սակայն անոնց սխալը կը բխի անկէ, որ իրարու հետ կը խառնեն մեր *դիրքային* սրբութիւնը եւ մեր վարմունքային սրբութիւնը: Բացատրեմ:

Դիրքային սրբութիւնը մեզի համար Յիսուսի ըրածին շնորհիւ է միայն եւ կը խօսի Քրիստոսի մէջ մեր դիրքին մասին: Անիկա Քրիստոսի կատարած արդարութեան գործի օրհնութիւններէն մէկն է. «Նոյնիսկ նախքան որ աշխարհը ստեղծէր, Աստուած սիրեց մեզ եւ ընտրեց մեզ Քրիստոսով, որպէսզի *սուրբ ըլլանք* եւ առանց թերութեան իր աչքին» (Եփեսացիներուն 1.4, շեշտադրումը՝ մեր կողմէ): Մենք երբեք չէինք կրնար աշխատանքով շահիլ այդ դիրքը: Դարձեալ Պօղոս կը գրէ. «Քրիստոս մեզ հաշտեցուց Աստուծոյ հետ. ան մեզ մաքուր եւ սուրբ ըրաւ եւ ազատեց մեզ մեղքէն» (Ա.Կորնթացիներուն 1.30)²:

2 Հոկտեմբեր 1982–ին Լիսա Թոսքանոն եւ ես ամուսնական ուխտ մը կնքեցինք, եւ ան դարձաւ Լիսա Պըվիր: Ա՛յդ օրը ան ստանձնեց իմ կինս ըլլալու *դիրքը*: Ան այսօր անելի իմ կինս չէ քան այն օրը որ ամուսնացայ իրեն հետ. ոչ ալ ան անելի իմ կինս պիտի ըլլայ ասկէ քառասուն տարի ետք: Դիրքի առումով, ան ամբողջովին իմ կինս եղաւ այդ պսակի օրը. գործը ամբողջացաւ այդ օրը: Նոյնպէս ալ, Քրիստոսով մենք սուրբ եւ մաքուր եղանք մեր փրկութեան օրը, եւ մենք տակաւին անելի սուրբ պիտի չըլլանք բնաւ:

Բայց երբ Լիսան իմ կինս եղաւ, անոր *վարմունքը* սկսաւ համապատասխանել իր դիրքին: Նախքան որ ան իմ կինս ըլլայ, ան

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

դուրս կ'ելլէր տղաներու հետ, հեռաձայնի թիւը կու տար անոնց, իր ցանկութիւններուն համար կ'ապրէր եւ կ'ընէր այն բոլոր բաները, որ միա չամուսնացած աղջիկները կ'ընէին: Բայց ամուսնանալէն ետք, ան այլեւս այդ բաները չ'ընէր: Անոր արարքները սկսան համապատասխանել մեր միասին ըրած ուխտին: Ժամանակի ընթացքին այդ վարմունքը հասուննալով՝ աւելի եւս համապատասխանած է մեր ուխտին: Տէն Պետրոս Առաքեալ ինչ կը գրէ.

[Ապրեցէք] [Աստուծոյ] հնազանդութեան զաւակներու պէս. մի՛ փոխակերպուիք այն չար ցանկութիւններուն համաձայն [որոնք կը կառավարէին ձեզ] ձեր նախկին տգիտութեան մէջ [երբ տեղեակ չէիք Աւետարանի պահանջներէն]: Բայց ինչպէս Ան, որ կանչեց ձեզ սուրբ է, դուք ալ սուրբ եղէք ձեր բոլոր վարմունքներուն եւ *ապրելակերպին մէջ*: Որովհետեւ գրուած է՝ Սուրբ եղի՛ր, քանի որ ես սուրբ եմ: (Ա.Պետրոսի 1.14–16, շեշտադրումը՝ մեր կողմէ)՝

Նկատի առ, որ Պետրոս չի խօսիր մեր *դիրքային* սրբութեան մասին, այլ՝ կը խօսի մեր *վարմունքային* սրբութեան մասին, որ ճիշդ այն է, որուն կ'ակնարկէ Պօղոս երբ մեզի կ'ըսէ մաքրենք մեր անձերը ամէն պղծութենէ: Ա՛յդ է սրբագործման գործընթացը, ոչ թէ արդարացած ըլլալու ծրի դիրքային պարզելը:

Կա՛ն ուրիշ հատուածներ Նոր Կտակարանին մէջ, որոնք կը խօսին վարմունքային սրբութեան մասին: Պատասխանը «Այո» է: Յանկը շատ երկար է եւ չենք կրնար բոլորը նշել, բայց մէկ հատ եւս նշեմ.

Աստուծոյ կամքը՝ ձեր սրբացումն է, որ ետ կենաք պոռնկութենէ, ու ձեզմէ իւրաքանչիւրը գիտնայ իր անօթին տիրանալ սրբութեամբ եւ պատիով. ո՛չ թէ ցանկութեան կիրքով, ինչպէս հեթանոսները՝ որ չեն ճանչնար Աստուած: (Ա.Թեսաղոնիկեցիներուն 4.3–5, շեշտադրումը՝ մեր կողմէ)՝

Վերջերս, Կիրակի առաւօտեան ծառայութենէ մը ետք մարդ մը ինձի ըսաւ. «Ես ամուրի Քրիստոնեայ մըն եմ: Կը պառկիմ կիներու հետ, քանի որ անկարելի է ամուրի կեանքը ապրիլ: Կը դադրիմ քանի մը

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անկոլիֆայտ Պայպը, Քլասիք Էփիշոն* (AMPC) տարբերակէն

2 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ երբայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

ամիս, բայց յետոյ կը վերադառնամ նոյն սովորութեան: Բայց ատիկա չէ այն գլխաւոր հարցը, որուն մասին եկած եմ խօսելու: Գլխաւոր հարցումս է՝ ինչո՞ւ այդքան խնդիրներ կը դիմագրաւեմ գործիս մէջ»:

Տնցուեցայ: Արդեօք շնորհքի վերաբերեալ մեր անհաւասարակշռուած պատգամները մարդիկը հասցուցած են այն համոզումին, թէ՛ պիտի բնակին Աստուծոյ ներկայութեան եւ օրհնութիւններուն մէջ մինչ կ'ապրին բացայայտ մեղքի մէջ: Եկեղեցիի մը կիներու խորհրդաժողովի մը ընթացքին կատարուած հարցում-պատասխանի պահի մը ընթացքին կին մը հարցուց կնոջս. «Ես իրապէս կը սիրեմ ամուսինս, բայց ան շատ կը ճամբորդէ եւ ես շարունակ ուրիշ տղամարդոց հետ կը պառկիմ: Ի՞նչ պէտք է ընեմ: Պէ՞տք է ըսեմ իրեն»:

Այդ երկուքը կը հաւատան, թէ իրենք յարաբերութեան մէջ են Յիսուսի հետ, բայց արդեօք ատիկա այն Յիսուսն է, որ Աստուծոյ աջին նստած է կամ *շինծու* Յիսուս մըն է: Այդ օրինակները պարզապէս ծայրն են սացալերան: Ես նոյնանման հանդիպումներ կամ զրոյցներ ունեցած եմ ուրիշ շատերու հետ: Արդեօք սուրբ կեանք մը ապրելու կոչը այնքան լռեցուցած ենք, որ ամէն յանցաւորի զգացում ալ լռած է: Եւ սակայն Պօղոս կը գրէ. «Ով որ սրբութեան այս պատուէրը կ'արհամարիէ՛ մարդ մը անարգած չ'ըլլար, այլ՝ նոյնինքն զԱստուած, որ իր Սուրբ Հոգին կու տայ մեզի» (Ա.Թեսաղոնիկեցիներուն 4.8):

Միտքդ պահէ՛, որ կայ սրբութեան անդիմադրելի երեսը, եւ մենք ատիկա յստակօրէն պիտի տեսնենք մինչ կը շարունակենք հետապնդել զանիկա:

Անձնականացնել

Հատուած- Ով որ կ'ըսէ՛ «Ես կը ճանչնամ զայն», բայց անոր պատուիրանները չի կատարեր, սուտ կը խօսի եւ իր մէջ ճշմարտութիւն չկայ: (Ա.Յովհաննէսի 2.4)

Միտք- Սրբագործութիւնը այն է երբ մեր ներսը կատարուած գործը դուրսը կը գործադրուի. մեր նոր բնութիւնը արտաքին իրականութիւն մը կը դառնայ (կամ երեւելի կը դառնայ) մեր ապրած ձեւին միջոցաւ:

Խոկալ– Սրբությունը Աստուծոյ շնորհքին մէկ գործն է, բայց պէտք է գործակցիմ այն զօրութեան հետ, որ Ան կու տայ թէ՛ կամենալու եւ թէ՛ կատարելու այն ինչ որ Ան կը փափաքի ինծի համար: Կը հաւատամ աստոր: Արդեօք անտեսմծ եմ այդ ճշմարտութիւնը եւ սուրբ կեանք մը ապրելու Անոր պատուէրը որովհետեւ դիրքային սրբութիւնը կը շփոթեմ վարմունքային սրբութեան հետ: Կամ արտօնած եմ, որ անցեալի ձախորդութիւնները յաղթեն իմ մէջս զօրութիւն ներգործելու Աստուծոյ կատարելիք գործին հանդէպ հաւատքիս: Ինչպէս կրնամ վերադառնալ առաջուան հաւատքիս, որպէսզի անիկա իրականութիւն մը դառնայ կեանքիս մէջ:

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, կը խնդրեմ, որ գործադրես մէջս Քու հաճութեանդ համաձայն թէ՛ կամենալը եւ թէ՛ կատարելը: Կը փափաքիմ արտաքնապէս ապրիլ այն ինչ որ դուն արդէն կատարած ես ինծի համար ներքնապէս: Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն– Ես կը գործադրեմ փրկութիւնս սուրբ վախով եւ դողով:

Ուղիղ ճամբայ մը
պատրաստեցէք ձեր ոտքերուն
համար [...] եւ աշխատեցէք
ապրիլ սուրբ կեանք մը:

– ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ 12.13–14¹

1 Բառացի թարգմանություն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլեյշըն* (NLT) տարբերակէն

20 | ԻՆՉ ԲԱՆԻ ՀԵՏԱՄՈՒՏ ԸԼԼԱԼ

Սրբութիւնը ինքնանպատակ չէ: Այլ՝ անիկա անցումի ճամբայ մըն է դէպի անելի կարեւորը: Հիմա խօսինք անոր անդիմադրելի երեսին մասին՝ նկատի առնելով վերը՝ այս գլուխին սկիզբը, նշուած համարին մէկ ուրիշ թարգմանութիւնը.

Հետամուտ եղէք [...] սրբութեան՝ առանց որուն ո՛չ մէկը պիտի տեսնէ Տէրը: (Եբրայեցիներուն 12.14)¹

«Հետամուտ ըլլալ» եզրը յունարէնի մէջ *τηρίβο* բառն է, որ կը սահմանուի իբրեւ՝ «ընել բան մը մեծ ջանքով եւ որոշակի նպատակով» (Լաու եւ Նիտա, *Կրիք-Ինկլիշ Լեքզիքոն*, էջ 662): Երկու թարգմանութիւնները կարդալէն եւ *τηρίβο* յի սահմանումը տեսնելէն ետք, կասկած չկայ, որ այդ հաստատումը կը խօսի բուն փափաքով սրբութեան հետամուտ ըլլալու մասին՝ զանիկա բռնելու նպատակով:

Մեր առաջին հարցումը պէտք է ըլլայ՝ ատիկա *դիրքային* սրբութիւն է կամ *վարմունքային* սրբութիւն: Ետ երթանք Լիսայի եւ իմ ամուսնութեան օրինակին: Կրնան պատկերացնել, որ օր մը Լիսան իր մտերիմ բարեկամուհիներէն մէկուն ըսէ. «Ես մեծ ջանքով հետամուտ եմ, որ Ճոնին կինը ըլլամ»:

Բարեկամուհին պիտի խնդայ եւ պիտի ըսէ. «Դուն արդէն ես: Դուն անոր կինը եղար ձեր պսակի օրը»:

Կին մը հետամուտ չ'ըլլար իր ամուսինին կինը ըլլալու *դիրքին*, զոր արդէն կը գրաւէ: Բայց կին մը կրնայ հետամուտ ըլլալ իտէպլ կնոջ մը

¹ Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանում, 2001

վարմունքին: Նոյնն է պարագան սրբութեան. մենք հետամուտ չենք ըլլար *դիրքի* մը, զոր արդէն ունինք, այլ՝ այն *վարմունքին*, որ «Տիրոջ վայել» է (Կողոսացիներուն 1.10):

Մեզի ամենայն վստահութեամբ կ'ըսուի, թէ այդ պատուէրը անտեսելու հետեանքը *Տէրը չտեսնելն* է: Ատիկա սթափեցնող խորհուրդ մըն է: Անիկա վստահ որ մեր վրայ կ'ազդէ յաւիտենապէս, բայց ատիկա չէ մեր նիւթին կեդրոնացումը հիմա: Ինչ որ կարելի է մեր քննարկած նիւթին հետ կապակցաբար այն է, թէ ինչպէս ատիկա կ'ազդէ մեր վրայ հոս եւ հիմա:

Քանի որ ես Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքացի մըն եմ, կրնամ ըսել, որ «յարաբերութիւն» մը ունիմ նախագահին հետ: Ես անոր իշխանութեան տակ եմ եւ կ'ազդուիմ անոր տուած որոշումներէն, ինչպէս որ է պարագան 332 միլիոն միւս ամերիկացի քաղաքացիներուն: Բայց նոյնիսկ որ այդ յարաբերութիւնը ունիմ նախագահին հետ, մինչեւ այսօր ես հրաւեր մը չեմ ստացած անձնապէս հանդիպելու նախագահի մը հետ: Պարզ կերպով եթէ պիտի ըսենք, ես մեր նախագահներէն ոեւէ մէկուն ներկայութեան մէջ չեմ եղած կամ անոր հետ որեւէ խօսակցութիւն չեմ ունեցած:

Միւս կողմէ, կան ուրիշ ամերիկացիներ, որոնք հերթական դրութեամբ *կը տեսնեն* նախագահը. անոնք կամ անոր բարեկամներն են կամ ալ մօտէն կ'աշխատին անոր հետ: Երկու պարագաներուն ալ, անոնք կը ճանչնան Սպիտակ Տան մէջ բնակող այդ մարդը շատ ատելի լաւ կերպով քան ես: Անոնք զայն կը ճանչնան մտերիմ ձեով, իսկ ես զայն կը ճանչնամ միայն իբրեւ մեր երկրի ղեկավարը:

Նոյնպէս ալ կան միլիոնաւոր հաւատացեալներ, որոնք Յիսուս Քրիստոսի իշխանութեան տակ են: Ան կը պաշտպանէ, կը սիրէ զանոնք, կը հայթայթէ անոնց եւ կը պատասխանէ անոնց խնդրանքներուն: Սակայն հարցումը այն է, որ անոնք կը *տեսնեն* զինք: Այլ խօսքով, կ'ըլլամ Անոր *յայտնուած ներկայութեան* մէջ:

Պրագիլի բազմահազար հաւատացեալները զուրկ էին այն վարմունքէն, որ զիրենք պիտի բերէր Տիրոջ ներկայութեան մէջ: Երբ ապաշխարեցին, անոնք հրաւիրուեցան Թագաւորին հետ հանդիպումի: Ատիկա կրնայ պատահիլ ամէն օր, եւ նոյնիսկ ամէն վայրկեան: Եթէ չունինք բարեպաշտ վախ, չենք ունենար մղումը հետամուտ ըլլալու սուրբ վարմունքի, որ մեզի պիտի տայ պատիւը կամ առանձնաշնորհումը ըլլալու Անոր յայտնուած ներկայութեան մէջ: Յիսուս կ'ըսէ. «Ով որ կ'ընդունի իմ պատուիրաններս եւ կը գործադրէ զանոնք [...] ես ալ պիտի սիրեմ զայն եւ ինքզինքս յայտնեմ անոր» (Յովհաննէսի 14.21):

Կ'արժէ կրկնենք. *առանց վարմունքային սրբութեան, չենք տեսներ*

Տէրը: Ինչո՞ւ աստիկա այդքան կարեւոր է: Առաջին, եթէ չտեսնենք զինք՝ եթէ զուրկ ըլլանք Անոր յայտնուած ներկայութենէն, չենք կրնար զինք մտերմօրէն ճանչնալ: Կրնանք միայն գիտնալ Իր *մասին*, ինչ որ նման է Միացեալ Նահանգներու նախագահներուն հետ իմ յարաբերութեանս: Կամ, աւելի վատ պարագայի, կը խաբենք մենք զմեզ՝ ստեղծելով շինծու Յիսուս մը: Այդ խաբկանքը ամէնէն վտանգաւորն է, որովհետեւ կը հաւատանք, թէ կը ճանչնանք Մէկը, զոր իրականութեան մէջ չենք ճանչնար: Յակոբոս մեզի կ'ըսէ. «Այդ պատուիրանները լսելով մի՛ գոհանաք, այլ՝ կատարեցէք զանոնք. այլապէս դուք ձեզ խաբած կ'ըլլաք» (1.22): Խաբուած անձը կը հաւատայ, թէ կը ճանչնայ մէկը կամ բան մը, բայց իրականութեան մէջ չի ճանչնար:

Երկրորդ պատճառը նոյնքան կարեւոր է: Առանց զինք տեսնելու՝ առանց Անոր ներկայութեան մէջ ըլլալու, չենք կրնար փոխուիլ կամ փոխակերպուիլ Իր պատկերին եւ նմանութեան պէս: Պօղոս կը նշէ, թէ անոնք, որոնք Տէրը կը տեսնեն՝ «նոյն այդ պատկերով կը փոխակերպուի[ն]՝ հետզհետէ աճող փառքով մը» (Բ.Կորնթացիներուն 3.18): Այդ փոխակերպումը կը սկսի մեր ներսիդին, եւ դուրսը կը գործադրուի հոն, ուր ուրիշներ կը տեսնեն զանիկա:

Մեր մաքրութիւնը չի կրնար փարիսեցիներուն պէս ըլլալ: Յիսուս ըսաւ. «Արտաքնապէս մարդոց արդար կ'երեւիք, բայց ներքնապէս լեցուն էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ» (Մատթէոսի 23.28): Անոնց շարժառիթները նոյնքան անմաքուր եւ պիղծ էին որքան դիակ մը: Անոնք չունէին Տիրոջ վախը, ինչ որ իր կարգին պատճառ եղաւ, որ հետամուտ ըլլան արդարութեան մը, որ միմիայն հիմնուած էր արտաքին վարմունքներու վրայ՝ մարդոց ուշադրութիւնը դարձնելով իրենց դրսեւորած պատկերին: Ատիկա արգելք կ'ըլլար ներքին փոխակերպումին, որ դուրս կը բերէ համապատասխան վարմունք մը: Անոնք կը կարծէին, թէ կը ճանչնային զԱստուած, բայց իրականութիւնը այն է, որ անոնք չէին ճանչնար իրենց Ստեղծիչը՝ որ իրենց առջեւ կանգնած էր, եւ հետեւաբար տեղեակ չէին Անոր փափաքներէն: Անոնք իրենք զիրենք կը խաբէին:

Նոյնպէս ալ այսօր, այն սրբութիւնը, որուն հետամուտ ենք, պէտք է ծնունդ առնէ մեր սիրտին մէջ. մեր խորհուրդներուն, շարժառիթներուն եւ մտադրութիւններուն: Եւ անկէ է, որ պիտի բխի մեր արտաքին վարմունքը: Ատոր համար Յիսուս կ'ըսէ. «Երանի անոնց, որոնք սիրտով մաքուր են, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն» (Մատթէոսի 5.8): Առանց զինք տեսնելու, ներքին փոխակերպում իսկական սրբութիւն, չենք ունենար, եւ հետեւաբար չենք տեսներ զինք: Այդ երկու հանգամանքները ուղղակիօրէն կապուած են իրարու:

Բաւարար չէ ունենալ բարեպաշտութեան արտաքին երեւոյթը բայց

ուրանալ մեր ներքին փափաքներուն փոխակերպումին զօրութիւնը: Պէտք է ճշմարտութիւնը ցանկանք մեր ներքին բաժիններուն մէջ (շարժառիթներուն եւ մտադրութիւններուն). ասիկա պէտք է ըլլայ մեր հետապնդումը: Յակոբոս Առաքեալ խիստ ձեռով կ'արտայայտուի անոնց, որոնք սրբութիւնը թերթութեամբ կ'առնեն: Ան կը գրէ.

Ձեր շարժառիթները բոլորովին սխալ են. միայն կ'ուզէք այն ինչ որ հաճոյք պիտի պատճառէ ձեզի: *Շնացողներ*: Չէք անդրադառնար, որ աշխարհին հետ բարեկամութիւնը Աստուծոյ թշնամի կը դարձնէ ձեզ: (Յակոբոսի 4.3–4, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Յակոբոս կը գործածէ *շնացողներ* բառը. եզր մը, որ կը գործածուի ամուսնական ուխտի խափանումի պարագային: Աստուած յաճախ ամուսնութեան հետ կապուած պատկերներ կամ օրինակներ կու տայ՝ Իրեն հետ մեր ուխտը նկարագրելու համար. Յիսուս փեսան է, իսկ մենք՝ Անոր հարսը: Պօղոս կ'ըսէ, թէ տղամարդու մը եւ կնոջ մը միջեւ ամուսնութիւնը օրինակ մըն է, թէ ինչպէս Յիսուս Քրիստոս եւ Եկեղեցին միացած են իրարու (տես Եփեսացիներուն 5.31–32):

Աշխարհը կ'ապրի անձնասէր շահի կամ հպարտութիւն գրգռող իրագործումներու համար, եւ հետեւաբար կը կեդրոնանայ դրսեւորուած եւ հասկցուած պատկերներուն վրայ: Երբ սրբութեան հետապնդումը անտեսելով մենք մեզ կը համապատասխանեցնենք աշխարհի ցանկութիւններուն, շնացողներ կը դառնանք: Մեծ նախատինք է մեր Ամուսինին երբ մենք մեզ կը յանձնենք Իր թշնամիներուն: Հետեւաբար Յակոբոս կը շարունակէ, ըսելով. «Մաքրեցէք ձեր սիրտերը, քանի որ ձեր հաւատարմութիւնը բաժնուած է Աստուծոյ եւ աշխարհին միջեւ» (4.8): Կրնանք մեր սիրտերը մաքրել միայն Տիրոջ վախը ճանչնալով, ինչ որ մեզ կը մղէ հետամուտ ըլլալու իրական սրբութեան:

Ես Լիսային հետ ամուսնացած եմ աւելի քան քառասուն տարիէ ի վեր, եւ կարգ մը լուրջ պատճառներով է որ ես անոր հանդէպ շնութիւն չեմ գործած: Առաջին պատճառը այն է, որ ես կը վախճամ Աստուծմէ: Ես Անոր հետ ուխտ մը ըրի սիրելու Լիսան եւ հոգ տանելու անոր՝ հակառակ անոր կեցուածքներուն կամ վարմունքին:

Երկրորդ պատճառը այն է, որ չեմ ուզեր մտերմութիւնս կորսնցնել այդ հիանալի կնոջ հետ: Կը սիրեմ այն իրականութիւնը, որ ան կը վստահի ինձի եւ իր ամէնէն խորունկ գաղտնիքները եւ փափաքները կը բաժնեկցի ինձի հետ: Հիմնականօրէն, կը սիրեմ մեր մօտիկութիւնը:

Նոյնն է պարագան Յիսուսի հետ յարաբերութեանս: Անոր դէմ

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

շնութիւն ընելէ բռուն կերպով կը խուսափիմ, որովհետեւ չեմ ուզեր կորսնցնել մեր մտերմութիւնը: Կը սիրեմ Անոր ներկայութեան մօտիկութիւնը եւ այն մտերմիկ խօսակցութիւնները, զորս կ'ունենանք իրարու հետ: Կը սիրեմ երբ Ան ինծի հետ կը բաժնեկցի գաղտնիքներ, որոնք ասկէ առաջ չէի գիտեր: Թերեւս ասոր համար է, որ մեզի կ'ըստի.

Տիրոջ գաղտնիքը իրմէ վախճողներուն հետ է, եւ Ան անոնց ցոյց պիտի տայ Իր ուխտը: (Սաղմոսներու 25.14, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Հիմա մենք տակաւին նոր կը սկսինք յայտնաբերել սրբութեան անդիմադրելի երեսը: Պիտի շարունակենք քողագերծել անոր գեղեցկութիւնը յաջորդ գլուխին մէջ:

===== Անձնականացնել =====

Հատուած– Սիրտի մաքրութիւն սիրողին շրթունքին վրայ շնորհք կայ, եւ թագաւորը անոր բարեկամ կ'ըլլայ: (Առակներու 22.11)

Միտք– Առանց հետամուտ ըլլալու վարմունքային սրբութեան՝ զանիկա բռնելու նպատակով, չենք կրնար Տիրոջ ներկայութեան մէջ մտնել: Հարցը մեր էրբ կատարեալ սրբութեան հասնիլը չէ, այլ՝ կարելորդ անիկա մեր սիրտին փափաքը ընելը եւ անոր հետամուտ ըլլալն է:

Խոկալ– Աստուած գիտէ, թէ ես հետամուտ եմ սուրբ վարմունքի կամ շարունակ պատրուակներ կու տամ աշխարհային բաներ սիրելուս, աշխարհային փափաքները հանդուրժելուս եւ իրագործումներու հպարտութիւնը ունենալուս համար: Ամէն բան կը սկսի սիրտիս մտադրութիւններով: Հետամուտ պիտի ըլլամ սիրտի եւ միտքի մաքրութեան, որ կ'առաջնորդէ արարքներու մէջ փոփոխութեան: Պիտի ընեմ ասիկա նոյնիսկ երբ ինծի մօտիկ եղող անձերը չեն ըներ:

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, ներէ ինծի սրբութեան հետամուտ ջրլլալուս համար: Անտեսած եմ անոր կարելորդութիւնը, բայց հիմա կը տեսնեմ, որ անիկա պէտք է իմ փափաքս ըլլայ, որովհետեւ անիկա է միջոցը Քու ներկայութեանդ մէջ ըլլալու: Կը խնդրեմ, որ ներես ինծի իմ աշխարհային վարմունքիս եւ հետապնդումներուս համար եւ մաքրես զիս Յիսուսի արիւնով: Կը զղջամ սրբութեան նկատմամբ իմ սովորական վերաբերումիս համար: Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն– Ես սրբութեան հետամուտ եմ՝ ամբողջովին մտադրած ըլլալով բռնել զանիկա: Իմ նպատակս է ըլլալ սուրբ ինչպէս Աստուած սուրբ է:

Բայց անոնց համար, որոնք
արդար են, ճամբան զառիվեր եւ
խորտուբորտ չէ: Դուն Աստուած
մըն ես, որ կ'ընէ այն ինչ որ
ճիշդ է եւ Դուն կը հարթես
անոնց դիմացը գտնուող
ճամբան:

– ԵՍԱՅԻԻ 26.7¹

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

21 | ՓԱՓԱՔ ԵՒ ԶՕՐՈՒԹԻՒՆ

Թերեւս հիմա կ'ողբաս այն իրականութեան համար, որ *փորձած* ես ապրիլ սուրբ կեանք մը, բայց, եթէ անկեղծ ըլլանք, ձախողած ես արեւի քան յաջողած ես: Կ'ուզես Աստուծոյ հետ մտերմութիւն, բայց դժուարութիւն ունիս հնազանդութեան հետ: Կը խնդրեմ, որ սկիզբէն գիտնաս ասիկա. Ան քեզի հետ մտերմութիւն կ'ուզէ արեւի քան դուն կ'ուզես ատիկա: Յնձմ, որովհետեւ Աստուած քու կողմդ է, քեզի հետ է: Թող այս ճշմարտութիւնը մեղմացնէ ճնշումը:

Շատ հաւանական է, որ հարցը այն է, որ *փորձած* ես: Մովսէսի օրէնքը փաստեց Աստուծոյ պատուէրները պահելու մեր անկարողութիւնը. մենք պէտք ունինք աստուածային օգնութեան: Այդ օժանդակութիւնը, որուն պէտք ունինք, ինքնին Աստուծոյ շնորհքն է: Հաւատացեալներէն շատեր գիտեն, թէ Յիսուս Քրիստոսի շնորհքը կ'ազատէ մեզ Օրէնքին պահանջներէն, բայց ինչ որ շատեր չեն գիտեր այն է, թէ անիկա մէկ քայլ անդին եւս կ'երթայ. անիկա մեզի կու տայ նոր բնութիւն մը՝ մեզի տալով մեղքէ ազատ ապրելու կարողականութիւնը (տես Հռոմայեցիներուն 6.6–7):

Եթէ նայինք մենք մեզ մարմինի եւ հոգիի ամէն պղծութենէ մաքրելու Պօղոսի պատուէրին, անիկա կու գայ հաստատումէ մը ետք, որ յաճախ կ'անտեսուի: Ատկէ քանի մը պարբերութիւն առաջ ան կը գրէ.

Արդ, որովհետեւ Աստուծոյ գործակիցներն ենք, կ'աղաչենք ձեզի, մի՛ վատնէք Աստուծմէ ձեր ստացած շնորհքը: Որովհետեւ Աստուած կ'ըսէ. «Երբ յարմար ժամանակը եկաւ՝ [...] օգնեցի քեզի»: (Բ.Կորնթացիներուն 6.1–2)

Յարմար ժամանակը հասած է. մենք կրնանք սուրբ կեանք մը ապրիլ Իր օգնութեամբ: Դժբախտաբար, Աստուծոյ շնորհքին մասին անոր իրական կարողականութենէն աւելի պակաս ձեռով կը խօսուի: Անիկա կը մէջբերուի յափտենական փրկութեան, մեղքերու թողութեան, մեղքի պատիժէն ազատ ըլլալու եւ մեր անոր արժանի չըլլալուն մասին նիւթերու մէջ: Մինչ այդ իրականութիւնները ամբողջովին ճիշդ են, այն ինչ որ նոյնքան ընդարձակ կերպով չէ խօսուած անոր զօրացնելու կարողութիւնն է: Աստուած Պօղոս Առաքեալին կը խօսի, ըսելով. «Իմ շնորհքս կը բաւէ քեզի. որովհետեւ իմ զօրութիւնս ամբողջապէս կը յայտնուի՝ մարդուս տկարութեանը մէջ» (Բ.Կորնթացիներուն 12.9): Պարզ ձեռով ըսելով, «Պօղոս, այն ինչ որ քու անձնական կարողութիւնովդ չէիր կրնար ընել, հիմա պիտի կրնաս ընել Իմ զօրութիւնովս՝ որ կը կոչուի շնորհք»:

Պետրոս կը հաստատէ այդ ճշմարտութիւնը. «Շնորհքը] թող շատնայ]] ձեր վրայ [...] Արդարեւ իր աստուածային զօրութիւնը [շնորհքը] պարգեւեց մեզի ամէն ինչ՝ որ կը վերաբերի կեանքի ու բարեպաշտութեան» (Բ.Պետրոսի 1.2–3)¹: Ուրիշ թարգմանութիւն մը՝ *Նիու Լիվինկ Թրանսլէյշընը* (NLT), աւելի ուղղակի կերպով կ'ըսէ. «Իր աստուածային զօրութեամբ [շնորհքով] մեզի պարգեւեց ամէն ինչ որ անհրաժեշտ է աստուածապաշտ կեանքի մը համար» [բառացի թարգմանութիւն– *Թարգմանիչ*]: Աստուած կը զօրացնէ մեզ՝ կարենալ ապրելու համար սուրբ կեանք մը:

Ինչո՞ւ համար այդ ճշմարտութիւնը այդքան կարեւոր է: Քրիստոնէութիւնը հաւատքի կեանք է: Ամբողջ պատգամը կը կոչուի՝ «հաւատքի պատգամը» (Հռոմայեցիներուն 10.8): Այլ խօսքով, մենք Աստուծմէ բան մը պիտի չստանանք եթէ չհաւատանք, եւ չենք կրնար հաւատալ այն ինչ որ չենք գիտեր: Ուստի եթէ անգիտակից ենք շնորհքի զօրութեան, պիտի շարունակենք փորձել զԱստուած հաճեցնել մեր սեփական կարողութիւնով: Եւ առիկա պիտի տանի անպտուղ, թշուառ կեանքի մը:

Նկատի առ վերածնունդի օրինակը: Կան բազմաթիւ չփրկուած մարդիկ, որոնք կը խոստովանին, թէ Աստուած կրնայ փրկել զիրենք: Սակայն մինչեւ որ չապաշխարեն եւ Աւետարանին չհաւատան, անոնք փրկող շնորհք չեն ունենար: Նոյնն է պարագան մեր սրբութեան հետամուտ ըլլալուն: Կան բազմաթիւ Քրիստոնէաներ, որոնք կը հաւատան, թէ Աստուած կրնայ տալ սուրբ կեանք մը ապրելու կարողութիւնը, բայց մինչեւ որ ամբողջ սրտով չհաւատան թէ՛

1 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

շնորհքը զօրութիւն կու տայ, պիտի չօգտուին:

Պօղոս կ'աղաչէ կորնթացի հաւատացեալներուն, ըսելով՝ «Մի վատնէք Աստուծմէ՛ ձեր ստացած շնորհքը» (Բ.Կորնթացիներուն 6.1): Ինչ կը նշանակէ բան մը վատնել: Պարզապէս կը նշանակէ՝ բան մը իր ամբողջական կարողականութեամբ չգործածել: Եթէ մարդու մը հողագործութեան գործիքներ տաս եւ հունտեր, ան կրնայ ուռեստեղէն աճեցնել, ուտել եւ ապրիլ: Բայց եթէ ան չգործածէ իրեն հայթայթուածը, սովահար կ'ըլլայ եւ կը մեռնի: Մեռնելէն ետք, ինչ պիտի ըսէր իր դրացին... «Ան վատնեց իր ստացած գործիքները եւ հունտերը»:

Այ՛դ է, որ Պօղոս կ'ըսէ. Աստուած քեզի շնորհք տուած է, որպէսզի օգնէ, որ ապրիս այնպիսի ձեւով մը, որ պիտի չկարենայիր ապրիլ քու սեփական կարողութեամբդ: Անիկա քեզի զօրութիւն կու տայ հետամուտ ըլլալու սուրբ կենցաղի մը եւ ձեռք ձգելու զանիկա: Մի անտեսեր այդ զօրութիւնը գործածելը անհաւատութեան պատճառով:

Եթէ Աստուծոյ շնորհքը միայն այն է ինչ որ կ'ուսուցանուի Արեւմտեան մշակոյթին մէջ, այսինքն՝ ոչ ւելլին գան փրկութիւնը, ներում եւ դէպի երկինք տոմսակ մը, ինչպէս կրնայ մէկը վատնել զանիկա: Բան մը չկայ վատնուելու, ուստի Պօղոսի ըրած հաստատումը անիմաստ կ'ըլլայ:

Եթէ հետեւինք առաքեալին մտածողութեան գիծին, ամէն բան յստակ կը դառնայ: Կորնթոսի եկեղեցին աշխարհային էր. թերի էին սրբութեան հետամուտ ըլլալու մէջ: Այդ կէտը հաստատելու համար, Պօղոս նոյն նամակին մէջ քիչ մը ւելլի վար կը գրէ. «Ձեզմէ շատերը չեն հրաժարած իրենց հին մեղքերէն: Չէք ապաշխարած ձեր պղծութիւններէն, սեռային անբարոյութենէն եւ հեշտասէր հաճոյքի ձգտումէն» (Բ.Կորնթացիներուն 12.21): 6-րդ գլուխին մէջ Պօղոս հաւատացեալներուն կ'աղերսէ, որ չվատնեն Աստուծոյ շնորհքը, ապա կը մէջբերէ անոնց հանդէպ իր սէրը եւ կը հարցնէ, թէ ինչո՞ւ չէին փոխադարձեր զանիկա: Ապա կը վերադառնայ գլխաւոր միտքին, թէ՛ ինչպէս յայտնի էր, որ Աստուծոյ շնորհքը կ'անտեսէին, քանի որ կ'արտօնէին, որ անբարեպաշտ մարդիկ ազդէին իրենց վրայ.

Դուք նոյնը չէք ինչպէս անոնք, որոնք չեն հաւատար: Ուստի մի՛ միանաք անոնց հետ: Բարին եւ չարը իրարու քով չեն պատկանիր: Լոյսը եւ խաւարը չեն կրնար բան մը բաժնեկցիլ իրարու հետ: (Բ.Կորնթացիներուն 6.14)²

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Սենչըրի Վըրժըն* (NCV) տարբերակէն

Պէտք է յիշենք, որ տարբերութիւն կայ անհաւատները Քրիստոսի բերելու համար աշխարհ երթալուն եւ անոնց հետ անպատշաճ նոյնութեան մէջ ըլլալուն միջեւ: Ատիկա միայն պիտի արտադրէ վարմունք մը, որ կրնայ հանել մեզ կեանքի արահետէն: Դարձեալ, ատիկա կը համարուի հոգեւոր շնութիւն:

Ապա Պօղոս այդ մարմնաւոր հաւատացեալներուն կը յիշեցնէ, թէ անոնք Աստուծոյ բնակութեան վայրն են եւ թէ Անոր փափաքն է, որ՝ «ապրի իրենց մէջ եւ քալէ իրենց միջեւ: Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ, եւ իրենք՝ իմ ժողովուրդս: Հետեւաբար դժուար ելէք անհաւատներուն մէջէն, եւ անշատեցէք դուք ձեզ անոնցմէ», կ'ըսէ Տէրը: Մի դպչիք անոնց պիղծ բաներուն, եւ *ես պիտի ողջունեմ ձեզ*» (Բ.Կորնթացիներուն 6.16–17, շեշտադրումը՝ մեր կողմէ)՝:

Դարձեալ, կը տեսնենք Աստուծոյ յայտնուած ներկայութեան խոստումը, բայց աւելի բարձր մակարդակի վրայ: Ան չի խօսիր պարբերաբար մեզի այցելելու մասին, այլ՝ մեր մէջ բնակելու եւ մեզի հետ բնակելու մասին: Անգամ մը եւս կը տեսնենք, որ զԱստուած տեսնելու խոստումը (Անոր յայտնուած ներկայութիւնը) պայմանական է: Եթէ հեռու մնանք անձնասէր եւ հպարտ փափաքներէ, որոնց կառչած է աշխարհը, մեզի կը խոստացուի մնայուն ներկայութիւնը Թագաւորին. «Եւ ես պիտի ողջունեմ ձեզ»: Հակառակն ալ ճիշդ է. եթէ մենք մեզ ապականենք աշխարհի պղծութիւնով, Անոր ներկայութիւնը պիտի չունենանք: Պօղոս կ'եզրակացնէ հետեւեալ գլխաւոր գաղափարով.

Ուրեմն ունենալով այդ խոստումները, սիրելիներ, թող մաքրենք մեր անձերը մարմինի եւ հոգիի ամէն ապականութենէ՝ կատարելագործելով սրբագործումը Աստուծոյ վախով: (Բ.Կորնթացիներուն 7.1)²

Հիմա կրնանք աւելի ամբողջական կերպով հասկնալ փիլիպպեցիներու եկեղեցիին ուղղուած Պօղոսի խօսքը, որ կ'ըսէ. «Գործադրեցէք ձեր փրկութիւնը՝ ահով ու դողով. որովհետեւ Աստուած է, որ ձեր մէջ կը ներգործէ թէ՛ *կամենալը* եւ թէ՛ *ընելը*՝ իր բարեհաճութեան համաձայն» (Փիլիպպեցիներուն 2.12–13, շեշտադրումը՝ մեր կողմէ)³: Աստուծոյ վախը կը մղէ մեզ, որ կամենանք (մեզի կու տայ փափաքը), եւ Տէր Յիսուս Քրիստոսի

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Եանկ'զ Լիթըրըլ Թրանսլէյշըն* (YLT) տարբերակէն

3 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

շնորհքը մեզ կարող կը դարձնէ *ընելու* (կը զօրացնէ մեզ):

Մէկ քայլ անդին երթալով, հոն ուր փափաք չկայ (սուրբ վախի պակասի պատճառով), զօրանալը առաջնահերթութիւն պիտի չըլլայ, ուստի պիտի չգործածուի. պիտի վատնուի: Այդ պատճառով է, որ սուրբ վախը այդքան կարեւոր է մեր ազդուութեան եւ երկայնակեցութեան համար:

Կը յուսամ, որ յստակ դարձաւ արդէն, որ մաքրակենցաղութիւնը մեծ մասն է սրբութեան, բայց ո՛չ անոր ամբողջական սահմանումը: Դարձեալ, սրբութեան գլխաւոր սահմանումը *Աստուծոյ համար նուիրագործուած* ըլլալն է, *ամբողջապէս Իրը* ըլլալը: Սրբութեան բուն իմաստին մասին աւելի ամբողջական օրինակ մը տամ. երբ հարս մը կ'ամուսնանայ փեսայի մը հետ, ան ինքզինք ամբողջութեամբ անոր կու տայ: Այդ նուիրագործումին մէջ կայ մաքրութիւն թէ՛ անոր դիրքին եւ թէ՛ անոր վարմունքին մէջ: Մաքրութիւնը վերջնական նպատակը չէ. նպատակը իր փեսային համար նուիրագործուած հարս մը ըլլալն է, որ կը պարունակէ մաքրակենցաղութիւն:

Հետեալքար ճշմարիտ սրբութիւնը վերանցական, նուիրագործուած մաքրակենցաղութիւն մըն է, որ դուռ կը բանայ Աստուծոյ հետ խորունկ մտերմութեան: Այս է այն *անդիմադրելիութիւնը*, զոր պիտի շարունակենք քննարկել մինչեւ այս գիրքին աւարտը: Բայց նախ պէտք է շարունակենք խօսիլ անոր մասին, թէ գործնապէս ինչ երեսոյթ ունի մեր Փեսային համար նուիրագործուած ապրիլը: Պատասխանը կը գտնուի մէկ բառի մէջ. *հնազանդութիւն*:

Անձնականացնել

Հատուած- Քրիստոս Յիսուսի շնորհքովը զօրացիր: (Բ.Տիմոթէոսի 2.1)

Միտք- Եթէ գիտակից չըլլանք շնորհքի զօրութեան մասին, պիտի շարունակենք զԱստուած հաճեցնել մեր անձնական կարողութիւնով եւ այդպիսով վատնած պիտի ըլլանք Աստուծոյ շնորհքը:

Խոկալ- Արդեօք ես *փորձած* եմ սուրբ կեանք մը ապրիլ եւ ձախողւած եմ աւելի քան յաջողած: Արդեօք փորձած եմ իմ սեփական կարողութեամբս: Արդեօք Աստուծոյ շնորհքին վստահւած եմ՝ սուրբ կեանք մը ապրելու մէջ զիս զօրացնելու համար: Եթէ ոչ, ինչպէս կրնամ փոխել ատիկա:

Անդիմադրելի Սրբություն

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, կ'անդրադառնամ, որ միայն Քու շնորհքիդ զօրութեամբ է, որ կրնամ ապրիլ բարեպաշտ կեանք մը. կեանք մը, որ կ'ողջունէ Քու փառաւոր ներկայութիւնդ: Ներէ՛ ինծի ատիկա իմ սեփական կարողութիւնովս ընել փորձելու համար: Այս պահէն անդին պիտի զօրանամ Քու շնորհքովդ՝ ապրելու համար Քեզի համար զատուած կամ անջատուած կեանք մը, որ կը փառաւորէ Յիսուսը: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն:

Դաւանութիւն– Ես մղուած եմ սուրբ վախով՝ սրբութեան հետամուտ ըլլալու համար եւ անիկա պիտի իրագործեմ Աստուծոյ շնորհքին զօրութեամբ:

ԻՆՉՊԷՍ ԿԸ
ՊԱՏԱՍԽԱՆԵՆՔ
ԱՍՏՈՒԾՈՅ
ԽՕՍՔԻՆ

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ

Օգնէ, որ քալեմ Քու
պատուիրաններուդ ճամբով,
որովհետեւ հոն է, ուր իմ
ուրախութիւնս կը գտնուի:

– ՍԱՂՄՈՍՆԵՐՈՒ 119.35¹

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

22 | ԴՈՂԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ ԴԻՄԱՑ

Մեր առաջին բաժինին մէջ ըսինք, թէ Տիրոջ վախին կարելի է տալ երկու դասակարգային սահմանումներ. դողալ Աստուծոյ ներկայութեան մէջ եւ դողալ Անոր Խօսքին դիմաց: Խօսեցանք Աստուծոյ փառաւոր ներկայութեան մասին, անշուշտ ոչ սպառիչ կերպով, որովհետեւ մենք շարունակ այդ ահին մէջ պիտի ըլլանք ամբողջ յաւիտենականութեան ընթացքին: Այս բաժինին մէջ մեր կեդրոնացումը պիտի ըլլայ Իր Խօսքին նկատմամբ մեր կեցուածքին վրայ:

Սկսելու համար, նկատի առնենք ժամանակաշրջան մը երբ Աստուծոյ ժողովուրդը շեղեցաւ Աստուծոյ հետ հարազատ կամ իրական յարաբերութենէ մը եւ զանիկա փոխարինեց սոսկ ձեւակերպութիւններով: Անոնց ուշադրութիւնը գրաւելու համար, Աստուած կը հարցնէ. «Երկինքը իմ գահս է, եւ երկիրը՝ իմ ոտքերուս պատուանդանը: Կրնա՞ք այդքան լաւ տաճար մը կառուցանել ինձի համար» (Եսայիի 66.1):

Եթէ կարդանք առաջին հինգ համարները մեր նիւթին պարունակին մէջ, կը տեսնենք, որ Ամենակարողը կը խօսի մարդոց, որոնք փորձած են իրենց պայմաններով յարաբերութիւն մը մշակել Իրեն հետ: Անոնք գաղջ կերպով շարունակած են քալել Անոր ճամբաներուն մէջ՝ ենթադրելով, որ ատիկա բաւարար պիտի ըլլար զԱյն գոհացնելու համար: Աստուած կը յստակացնէ, թէ իրենց

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

ընտրած ճամբան անարգական է, եւ ուղղակիօրէն անոնց կու տայ այն ինչ որ պէտք է՝ իրական յարաբերութեան մը մէջ մտնելու համար.

Պիտի օրհնեմ անոնք, որոնք խոնարհ եւ զղջացած սիրտ ունին, որոնք *կը դողան խօսքիս դիմաց*: (Եսայիի 66.2, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹

«Պիտի օրհնեմ» եզրը եբրայերէն *նապաթ* բայն է, որ կը սահմանուի իբրեւ՝ «նայիլ, դիտել, զննել: Բանի մը կեդրոնացած ձեռով նայելու իմաստը ունի»: Հիմնականօրէն Աստուած կ'ըսէ. «Այդ է այն անձը, որուն մօտէն ուշադրութիւն պիտի ընեն»: Երեք արժանիքներ կը նշուին. խոնարհութիւն, զղջացած սիրտ եւ անոնք, որոնք «պիտի դողան իմ խօսքիս դիմաց»: Ասոնք պիտի ըլլան մեր կեդրոնացումը այս բաժինին մէջ:

Ան, որ կը դողայ Աստուծոյ Խօսքին դիմաց, միշտ Անոր ըսածը կը մեծարէ ամէն բանէ վեր: Ոչ մէկ բան ամէն կարեւոր կ'ըլլայ: Ատիկա է սուրբ վախի ճշմարիտ ապացոյցը: Այդ անձը ամէնէն ամէն օրհնուած կ'ըլլայ: Այդ իմաստով Պօղոս կը գրէ.

Հետեւաբար, սիրելիներս, ինչպէս ամէն ատեն հնազանդեցաք, ո՛չ միայն իմ ներկայութեանս մէջ, հապա ա՛լ ամէնի հիմա՝ իմ բացակայութեանս ատեն, գործադրեցէք ձեր փրկութիւնը՝ ահով ու դողով: (Փիլիպպեցիներուն 2.12–13, շեշտադրումը՝ մեր կողմէ)²

Այս հաստատումը առ ոչ այնպէս իբրեւ Պօղոս կը խօսի Փիլիպպէի հաւատացեալներուն, այլ՝ իբրեւ Աստուած ուղղակի մեզի կը խօսի: Կեդրոնացիր «ամէն ատեն հնազանդեցաք» բառերուն վրայ, որ կը նշանակէ՝ անպայմանական ձեռով: Այսինքն՝ Անոր ներկայութիւնը զգաս կամ ոչ, կեանքիդ մէջ Անոր գործելը տեսնես կամ ոչ, աղօթքդ քու ակնկալած ժամանակամիջոցիդ մէջ պատասխանուի կամ ոչ:

Դիւրին է հնազանդիլ Աստուծոյ երբ խորհրդաժողովի մը մթնոլորտին մէջ ես, ուր մարդիկ ազնիւ են իրարու հանդէպ եւ ուր Աստուծոյ ներկայութիւնը զգալի է: Բայց եթէ վստահելի գործակից մը սուտ խօսի քու մասիդ եւ կորսնցնես քու պաշտօնդ... Պիտի ներքն Աստուծոյ Խօսքին համաձայն կամ պիտի փորձես վրէժ լուծել:

Եթէ գործի բերումով ճամբորդած ես եւ առանձին կը զգաս, կը սկսիս յիշել, թէ ամուսինդ կամ կինդ որքան քննադատող դարձած է

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլեյշըն* (NLT) տարբերակէն

2 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

քեզի հանդէպ վերջերս: Եւ յանկարծ հակառակ սեռին պատկանող գործընկերներէդ մէկը կը գովէ քեզ՝ խօսելով ճիշդ քու պէտքիդ համաձայն, եւ ապա հրապուրիչ ձեւով մը կը հրաւիրէ քեզ, որ գիշերը միասին անցընէք պանդոկի սենեակին մէջ: Ոչ ոք պիտի գիտնայ: Փախուստ կու տաս կամ կ'ընդունիս:

Եթէ ուշ ժամի տակաւին կ'աշխատիս՝ համացանցին վրայ փնտռուքներ կ'ընես գործիդ համար, երբ յանկարծ պոռնկաբանութեան կը հանդիպիս: Կը դիտես:

Ասոնք դէպքեր են, ուր Աստուծոյ ներկայութիւնը կը թուի բացակայ ըլլալ: Եթէ կը դողաս Անոր խօսքին դիմաց՝ հնազանդ կ'ըլլաս անոր որեւէ պայմանի մէջ, որովհետեւ չկայ աւելի կարեւոր կամ առաջնահերթ բան: Ատիկա ցոյց կու տայ, որ դուն սուրբ վախի մէջ կը քալես, որովհետեւ «Տէրոջ վախով մարդ չարութենէ կը հեռանայ» (Առակներու 16.6):

Սաղմոսողը կը գրէ.

Երանի՛ այն մարդուն՝ որ Տէրոջմէ կը վախնայ, եւ անոր պատուիրաններէն յոյժ կ'ախորժի: (Սաղմոսներու 112.1)

Աստուծոյ վախը ունեցող տղամարդը կամ կինը ոչ միայն կը հնազանդի, այլեւ յոյժ կ'ախորժի ատիկա ընելով: Հնազանդութիւնը բեռ մը չէ. ուրախութիւն է: Այդ անձը ունի այն հիմնական հասկացողութիւնը թէ՛ Աստուած մեր Ստեղծիչն է, եւ հետեւաբար Ան գիտէ, թէ ինչ բանը շինութիւն կը բերէ մեզի եւ ինչ բանը՝ կործանում:

Կը յիշեմ երբ մեր չորս որդիները տակաւին շատ փոքր էին: Ծնունդի Օրը հիմնականօրէն գործի օր էր: Փոքր տարիքի զաւակներ ունեցող հայրերուն մեծ մասը լաւ պիտի հասկնայ յաջորդ ըսելիքս: Երբ բոլոր նուէրները կը բացուէին, անոնց մէջ կը գտնուէին նուէրներ, որոնց փոքր մասերը պէտք էր կազմուէին: Ես՝ ընդհանրապէս բոլոր հայրերուն պէս, տուփը կը բանայի, մասերը գետին կը թափէի, տուփը եւ ցուցմունքներու ձեռագիրքը մէկ կողմ կը դնէի եւ կը սկսէի կազմել: Անշուշտ նուէրէ նուէր կը տարբերէր, բայց ընդհանրապէս շուրջ մէկ ժամ ետք կը վերջացնէի: Բայց՝ ի զարմանս ինձի, տակաւին տասը կտոր մնացած կ'ըլլար գետինը: Կոճակը կը կոխէի եւ բան մը չէր պատահեր: Ինչ կ'ընէի: Կը գտնէի ցուցմունքներու ձեռագիրքը, կը քակէի խաղալիքը եւ կը վերաշինէի զանիկա՝ խաղալիքը հնարողներուն ցուցմունքներուն համաձայն: Եւ ահա՛, կ'աշխատէր:

Աստուծոյ վախը ունեցող անձը միշտ կը հնազանդի: Այդ անձը՝ իր էութեան խորքը, անշեղ կը մնայ հետեւեալ հիմնական ճշմարտութիւններէն.

1. Աստուած գիտէ, թէ ինչ բանը ճիշդ է ինծի համար:
2. Աստուած մաքուր սէր է, եւ ես Անոր սիրոյն կեդրոնն եմ:
3. Աստուած ինծի բնաւ պիտի չըսէ, որ ընեմ բան մը, որ վնասակար է: Ինչ որ ինք ըսէ, վերջաւորութեան լաւագոյնը պիտի ըլլայ:
4. Հետեւաբար ինչ ալ ըսէ Ան, ուրախութեամբ կ'ընտրեմ հնազանդիլ անոր:

Իսրայէլի որդիները շարունակ կը գանգատէին: Դժգոհ էին իրենց ղեկավարուելու ձեւէն եւ իրենց կեանքին մէջ պատահածներէն: Անոնք զԱստուած մեղադրեցին իրենց անհանգիստ պայմաններուն, կարօտութեան եւ որեւէ բանի համար, որ չէր գոհացներ զիրենք: Անոնց կը պակսէր սուրբ վախը եւ չէին դողար Աստուծոյ Խօսքին դիմաց: Աստուած ըսաւ.

Քանի որ *ուրախութեամբ եւ յօժար սիրտով* Տէրոջ՝ քու Աստուծոյդ չճառայեցիր՝ ամէն բանի առատութեան մէջ [...] պիտի ծառայես քու թշնամիներուդ: (Բ.Օրէնքի 28.47-48, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Աստուծոյ Խօսքին դիմաց դողալը կը պարունակէ ուրախութիւն եւ յօժարութիւն մեր էութեան խորքը: Եթէ անիկա բացակայ ըլլայ, միայն ժամանակի հարց է, որ պայմանները յայտնաբերեն ուրախութեան բացակայութիւնը: Բնաւ չեմ մոռնար այն ժամանակը երբ յայտնաբերեցի այն հինգ մեղքերը, որոնք Իսրայէլը հեռու կը պահէին իր հասնելիք տեղէն. չար բաներ ցանկալը, կուռքեր պաշտելը, սեռային անբարոյութիւնը, զԱստուած փորձելը եւ տրտնջալը (տե՛ս Ա.Կորնթացիներուն 10.6-10): Երբ «տրտնջալ» կարդացի, տեղէն ցատկեցի եւ պոռացի՝ «Ինչ: Տրտնջալ: Ինչպէս կրնայ տրտնջալը նոյն ցանկին մէջ ըլլալ միւս բոլոր *մեծ* մեղքերուն հետ»:

Լսեցի Սուրբ Հոգին ինծի կ'ըսէր. «Որդիս, տրտնջալը լուրջ մեղք մըն է Իմ աչքիս»: Ան ինծի ցոյց տուաւ, թէ տրտնջալը կը բողոքէ՝ «Աստուած, չեմ սիրեր կեանքիս մէջ Քու ըրածներդ, եւ եթէ ես տեղդ ըլլայի, տարբեր ձեռով պիտի ընէի»:

Ապա Ան ըսաւ. «Անիկա անարգանք է Իմ նկարագիրիս, անիկա ըմբոստութիւն է Իմ կամքիս դէմ, եւ ընդհանուր առումով, սուրբ վախի կոպիտ բացակայութիւն է»:

Ես ասիկա բաժնեկցեցայ Լիսային հետ եւ մենք համաձայնեցանք մեր զաւակները պատժել տրտնջալու համար՝ այն հասկացողութեամբ, որ անիկա ըմբոստութիւն էր: Ես ասիկա լուրջի

առի: Սկսայ խուսափիլ որեւէ տեսակի մրմնջալէ եւ տրտնջալէ, եւ կը ջանայի մէկ գանգատի բառ չըսել: Սակայն յետագային՝ երբ չորս օրուայ ծոմապահութեան մէջ էի, լսեցի Սուրբ Հոգին կ'ըսէր. «Որդիս, ես սիրտիդ մէջի տրտունջը կը լսեմ»:

Անմիջապէս ինկայ ծունկերուս վրայ, զղջումով: Աստուած հետագային ինծի ցոյց տուաւ, թէ Տիրոջ չէի ծառայեր *ուրախութեամբ եւ յօժար սիրտով*, եւ թշնամիներս իմ վրաս առաւելութիւն ունէին: Դարձեալ տեսնենք Պօղոս ինչ կ'ըսէ.

Հետեաբար, սիրելիներս, ինչպէս ամէն ատեն հնազանդեցաք, ո՛չ միայն իմ ներկայութեանս մէջ, հապա ակ աւելի հիմա՝ իմ բացակայութեանս ատեն, գործադրեցէք ձեր փրկութիւնը՝ ահով ու դողով: Որովհետեւ Աստուած է որ ձեր մէջ կը ներգործէ թէ՛ կամենալը եւ թէ՛ ընելը՝ *Իր բարեհաճութեան համաձայն: Ըրէ՛ք ամէն ինչ՝ առանց տրտնջանքի եւ առարկութիւնների:* (Փիլիպպեցիներուն 2.12-14, շեշտադրումը՝ մեր կողմէ)՝

Այդ չորս օրուայ ծոմապահութենէն կարճ ժամանակ ետք էր, որ հասկցայ խորութիւնը այդ համարին մէջ գրուածին: Անիկա իմ աչքերս բացաւ այն իրականութեան թէ՛ տրտնջալը հակառակն է սուրբ վախին. անիկա *Իր Խօսքին դիմաց դողալ* չէ: Մենք անպատուած կ'ըլլանք զԱստուած եւ Իր Խօսքը երբ կը մտածենք կամ կը խօսինք դժգոհութեան կեցուածքով:

Անոնք, որոնք կը վախնան Աստուծմէ ամուր կերպով հաստատուած են այն իրականութեան մէջ թէ՛ չկայ աւելի կարեւոր կամ օգտակար բան քան հնազանդութիւնը: Անոնք կը հնազանդին ինչ ալ ըլլայ վճարուելիք գինը եւ Աստուծոյ Խօսքը չեն անցըներ ներկայ օրերու ընկերութեան նորոյթներուն կամ մշակոյթին մաղէն: Անոնք նաեւ Աստուծոյ Խօսքի իրենց հնազանդութիւնը չեն հիմներ ուրիշ հաւատացեալներու վարմունքին վրայ. պարզապէս կը հնազանդին:

1 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

Անձնականացնել

Հատուած- Եթէ ուզէք հնազանդիլ՝ երկրին բարիքը պիտի ուտէք: (Եսայիի 1.19)

Միտք- Սուրբ վախի ապացոյցը հնազանդութիւնն է, որ կ'ենթադրէ թէ ճիշդ կեցուածք եւ թէ անոր հետեւող արարքներ՝ ինչ ալ ըլլան պայմանները:

Խոկալ- Արդեօք միայն կը հնազանդինք երբ պայմանները նպաստաւոր են: Սովորութիւն ունիմ տրտնջալու երբ բաներ իմ ուզածիս պէս չեն ընթանար: Ինչպէս կրնամ ուրախութեան եւ յօժարութեան կեցուածք ունենալ ամէն ատեն: Ինչպէս կրնամ ամրապնդել հնազանդելու որոշումս:

Աղօթք- Սիրելի Երկնաւոր Հայր, ներէ ինծի Քու Խօսքիդ դիմաց չղոյալուս համար: Իմ հնազանդութիւնս պայմանական եղած է մինչեւ հիմա, եւ ուրախութեան եւ յօժարութեան վերաբերում չեմ ունեցած: Կը զղջամ եւ ներում կը խնդրեմ Քեզմէ: Կ'ընդունիմ սուրբ վախը: Կը խնդրեմ, որ սորվեցնես ինծի եւ զօրացնես, որպէսզի ուրախութեամբ հնազանդիմ ամէն ատեն: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն:

Դաւանութիւն- Կը վախնամ Աստուծմէ եւ հետեւաբար Ան իմ մէջս կը գործէ, որպէսզի ես թէ կամենամ եւ թէ ընեմ Իր բարեհաճութեան համաձայն:

Աւելի լաւ է դողալ Տիրոջ
խօսքին դիմաց եւ խոնարհիլ
աստուածային սիրոյ անսահման
վեհափառութեան դիմաց քան
պոռալ մինչեւ որ ձայնդ քաշուի:

– ՉԱՐԼՁ ՀԱՏԸՆ ՍՓԸՐՃԸՆ



MessengerX

Ձեր «Էփիլեյշըն»-ը՝ ամենօրեայ աշակերտության համար

Բոլորովին անվճար

Պարզապես ներբեռնեցե՛ք ձեր շարժական սարքին վրայ և օգտագործեցե՛ք:
Կամ օգտագործեցե՛ք «ուեյ» տարբերակը հետևեալ հասցեով.



[MessengerX.com](https://messengerx.com)



125+ լեզուներ, որոնց թիւը կ'աւելնայ



Դիտեցե՛ք և ներբեռնեցե՛ք բովանդակութիւնը աւելի քան 125 լեզուներով:



Բաժնեկցեցե՛ք աղբիւրներ ձեր բարեկամներուն հետ կամ սերտողութեան խումբ մը սկսե՛ք:



Մենք մշտապէս նորութիւններ կ'աւելցնենք պարունակութեան:

Դիտեցէք: Կարդացէք: Լսեցէք:

Յետագօտեցէք բովանդակութեան ընդարձակ գրադարանը, որ կ'ընդգրկէ դասընթացքներ, էլեկտրոնային գիրքեր, օտեօ-գիրքեր, կարճ ֆիլմեր, եւ աւելին, զորս կրնաք դիտել, կարդալ եւ լսել:



Աճեցէք Ամենակարեւոր Մարզերուն Մէջ

Յետագօտեցէք այնպիսի սիւթեր, ինչպիսիք են՝ ընտանեկան փոխյարաբերութիւններ, առողջ յարաբերութիւններ, գտնել ձեր կեանքին նպատակը , պոռնկագրութենէ ազատագրութիւն, ինչպէս ձեր հաւատքը կառուցել, Աստուծոյ ձայնը լսել, գործարքի ղեկավարութիւն, եւ աւելին:

Ձեր Աճին Ճամբորդութիւնը


MessengerX-ին նպատակն է ձեզի օգնել, որ ձեր յաջորդ քայլը առնէք ձեր կեանքին մէջ: Ուստի մենք ծրագրած ենք աշակերտական ճամբորդութիւն մը, օգտագործելով հզօր միջոցներ, որպէսզի յարատեւելով ճամբորդութեան աւարտին հասնիք:



Աւելի շատ հնարաւորութիւններ, գործ ախտի սիրէք

- Պարզ եւ դիւրին բաժնեկցելու միջոցներ, որոնք ձեզի ախտի օգնեն, որ հօսքը տարածէք եւ նոյնիսկ սերտողութեան խումբեր սկսիք:
- «Chromecast» եւ «AirPlay»՝ ձեր նախասիրած սմարթ հեռատեսիլներով դիտելու համար:
- Պահպանեցէք ձեր յառաջադիմութիւնը ձեր բոլոր սարքերուն վրայ: Պահպանեցէք ձեր նախասիրած սիւթերը ձեր գրադարանին մէջ՝ արագ մուտքի համար:
- Ներբեռնեցէք սիւթերը ձեր սարքին վրայ՝ անցանց դիտելու համար:
- Ուժեղ որոնում եւ գտում՝ գտնելու համար այն, ինչ որ կը փնտռէք:
- Ինքնաբերաբար անցնիլ օտիօ-գիրքի մը, Աստուածաշունչերու եւ նոյնիսկ պաշտամունքի երգերու յաջորդական գլուխներուն՝ ձեր լեզուով:

MessengerX - Նոյնքան դիրին, որքան՝ 1-2-3ը





- 1 Ներբեռնեցե՛ք **MessengerX** «Էփիլեյշըն»-ը «App Store»-Էն եւ «Google Play»-Էն:
- 2 Մասնակցային հաշիւ ստեղծեցե՛ք եւ ձեր լեզուն ընտրեցե՛ք:
- 3 Փնտռեցե՛ք, կարդացե՛ք, դիտեցե՛ք, լսեցե՛ք, ներբեռնեցե՛ք եւ բաժնեկցեցե՛ք ձեր նախասիրած աղբիւրները:

Դարձե՛ք աշակերտ եւ աշակերտեցե՛ք
Իբրեւ **MessengerX**-ին մէկ մասը, դուք կ'օգնեք թարգմանուած աղբիւրները տրամադրելու աշխարհի շուրջ գտնուող բոլոր մարդոց:

Որովհետեւ ամեն մարդ արժանի է գիտնալու:



MessengerX.com



23 | ԱՆՄԻՋԱՊԷՍ

Աստուծոյ վախի գլխաւոր ստորագելիներէն մէկը անպայմանական հնազանդութիւնն է Իր Խօսքին, որ զարմանալի օգուտներ պիտի ունենայ մեր կեանքին մէջ: Աստուծոյ Խօսքին դիմաց դողալը հինգ որոշակի երեսներ ունի, եւ յաջորդ հինգ օրերուն պիտի նայինք անոնց մէկ առ մէկ: Ահա առաջինը.

1. Հնազանդիլ Աստուծոյ անմիջապէս

Հնազանդութիւնը գլխաւոր տեղ կը գրաւէ կեանքին մէջ անոնց, որոնք կը վախճան Աստուծոյ: Անոնք իրենց անձնական հետաքրքրութիւնները չեն դնէր Աստուծոյ ըսածները կատարելէն առաջ: Սուրբ վախը մեր սիրտերուն մէջ կը դնէ հետեւեալ համոզումը, թէ՛ *այն ինչ որ կարելի է Աստուծոյ համար ինծի համար առաջնահերթութիւն է:*

Կան բազմաթիւ համարներ, որոնց կրնանք նայիլ, բայց նախընթաց մը հաստատելու համար, պիտի նայինք Յիսուսի ըրած երկու հաստատումներու.

Կ'ուզեմ, որ հետեւեալ ձեռով վարուիք այս նիւթերուն մէջ: Եթէ պաշտամունքի վայր մտնես եւ կը պատրաստուիս զոհ մը մատուցանելու յանկարծ յիշես, որ ընկեր մը նեղացած է քեզմէ, ձգէ զոհդ, *անմիջապէս* դուրս ել այդ վայրէն եւ գնա այդ ընկերոջը քով ու լուծէ հարցը: Ատիկա ընելէդ ետք միայն վերադարձի՛ր եւ Աստուծոյ հետ հաշիւդ լուծէ: (Մտ 5.23–24, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Նկատի առ *անմիջապէս* բառը: Դարձեալ, ինչպէս Եսայիի 66–ին մէջ Յիսուս կը շեշտէ, թէ մենք պէտք չէ զբաղինք բաներ

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տը Մասէճ* (MSG) տարբերակէն

ընելով Աստուծոյ համար մինչ կ'անտեսենք Անոր արդէն իսկ մեզի ըսածներուն հնազանդիլը: Յիսուս յատուկ կերպով կը խօսի նեղանալու մասին, բայց ընդհանուր սկզբունքը կիրարկելի է ամէն պայմանի մէջ:

Յիշենք այն մարդ, որ բաժնեկցեցաւ ինծի հետ շարունակ ձեռով շնութեան մէջ իյնալուն մասին, եւ սակայն ան շուարած էր, թէ ինչո՞ւ իր աղօթքները չէին պատասխանուեր եւ թէ ինչո՞ւ իր գործին մէջ իր յուսացածին պէս յաջողութիւն չէր գտներ: Եկուր պահ մը կանգ առնենք եւ մտածենք այդ մասին: Եթէ իր առաջնահերթութիւնը չէր սեռային անբարոյութենէն փախուստ տալու վերաբերեալ Աստուծոյ Խօսքին հնազանդիլը, ինչո՞ւ պէտք էր ակնկալէր, որ Աստուծոյ առաջնահերթութիւնը ըլլար իր գործը օրհնելը:

Հեղի՝ Իսրայէլի քահանայապետը, ունէր երկու որդիներ, որոնք եւս քահանաներ էին իր ղեկավարութեան տակ, բայց անոնք չար էին: Անոնք շնութիւն կը գործէին եւ մարդոց զոհերը կ'առնէին բռնի կերպով: Հեղի յապաղեցաւ իր որդիներուն ըրած չարութեան հարցը լուծելու: Տիրոջ պատասխանը իր այդ անհոգութեան եղաւ. «Ինչո՞ւ [...] քու որդիներդ ինձմէ աւելի կը փառաւորես» (Ա.Թագաւորներուն 2.29):

Երբ մենք դանդաղ կը շարժինք կամ կ'անտեսենք Աստուծոյ հնազանդիլը ուրիշի մը պատճառով կամ նպատակի մը համար, մենք այդ անձը կամ նպատակը աւելի փառաւորած կամ պատուած կ'ըլլանք քան զԱստուած: Ատիկա սուրբ վախի բացակայութիւնն է: Ապա Աստուած կ'ըսէ.

Ես զիս փառաւորողները պիտի փառաւորեմ, իսկ զիս *արհամարհողները* պիտի *անարգուին*: (Ա.Թագաւորներուն 2.30, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ասոնք սթափեցնող բառեր են: *Արհամարհած* կ'ըլլանք զԱստուած երբ կ'ուշացնենք կամ կ'անտեսենք Իր Խօսքին հնազանդիլը: Մենք հիմնականօրէն ըսած կ'ըլլանք. Ան մեր առաջնահերթութիւնը չէ: Աստուած կ'ըսէ, թէ պիտի *անարգէ* անոնք, որոնք *կ'արհամարհեն* զինք: *Անարգել* բառը եբրայերէտով *զալալ* բառն է, որ կը սահմանուի իբրեւ՝ «աննշան ըլլալ, չնչին ըլլալ»: *Չնչին* կը նշանակէ՝ շատ քիչ արժէք կամ կարեւորութիւն ունենալ: Այս հաստատումը մեկնաբանելու ձեւերէն մէկը այն է, թէ Աստուած *չնչին* կը տեսնէ այն ինչ որ կարեւոր է անոնց համար, որոնք կ'արհամարհեն Իր Խօսքը: Առողջ միտք ունեցող ռեւէ մէկը պիտի չփափաքէր այդպիսի բան մը:

Եթէ այդ գործարարը պատուէր Աստուծոյ Խօսքը՝ ինչ կը վերաբերի

սեռային մաքրութեան, թերեւս Աստուած անոր գործը (*պիզնըսը*) կարեւոր պիտի համարէր: Փոխարէնը, այնպէս կը թուէր, թէ զանհկա չնչին կը համարէր:

Ուրիշ հատուած մը, որ ցոյց կու տայ անմիջական հնազանդութեան կարեւորութիւնը Յիսուսի խօսքերն են Եփեսոսի եկեղեցիին.

Ապաշխարէ՛ եւ վերադարձի՛ր նախկին գործերուդ, ապա թէ ոչ՝ եթէ չապաշխարես՝ *շուրով* կու գամ եւ կը վերցնեմ քու ճրագարանդ իր տեղէն: (Յայտնութիւնը 2.5, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ապաշխարել կը նշանակէ՝ փոխել մտածելու եւ հետեւաբար նաեւ վարուելու ձեւը՝ Աստուծոյ Խօսքին համապատասխանելու համար: Եթէ այդ եկեղեցին ուշացնէր իր հնազանդութիւնը, պիտի փախցնէին օրհնուած մնալու իրենց առիթը: Յիսուս շուտով պիտի գար եւ վերցնէր իրենց ազդեցութիւնը: Դարձեալ, ասիկա սթափեցնող խորհուրդ մըն է:

Ղուկասի Աւետարանին մէջ կը կարդանք պատմութիւն մը, ուր կը տեսնենք ժամանակի ընտրութեան եւ առաջնահերթութեան պատճառով վրիպած կամ փախցուած առիթներ: Յիսուս ըսաւ. «Մարդ մը կար, որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւիրեց: Ընթրիքի ժամուն իր ծառան ղրկեց, որպէսզի հրաւիրեալներուն ըսէ. “Եկէք, ամէն ինչ պատրաստ է արդէն”» (Ղուկասի 14.16–17): Կասկած չկայ, Տիրոջ Խօսքն է. խնճոյքը պատրաստ է: Ժամանակի ընտրութիւնը էական է:

Տես այդ հրաւիրեալներուն պատասխանները. «Հրաւիրեալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ [«պատրուակներ ընել», ըստ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակին]» (հմր 18): Երեւութապէս իրաւացի պատճառներ կը տրուին ընթրիքին չմասնակցելու: Մէկը արտ գներ էր, մէկը գործը չէր կրնար ձգել եւ ուրիշ մը նոր ամուսնացած էր եւ կինը չէր կրնար առանձին ձգել: Պատրուակները շնութիւն գործել, գողնալ, սպաննել կամ մեղք համարուող ուրիշ որեւէ բան չէին: Սակայն *երբ մեղք չեղող բան մը Տիրոջ Խօսքէն ասելի առաջ կ’անցնի, անհկա մեղք կ’ըլլայ*:

Ծառան ետ եկաւ եւ իր տիրոջ ըսաւ հրաւիրեալներուն ըսածները, եւ՝ «այն ատեն տանտէրը վրդով[եցաւ]» (հմր 21): Ոչ թէ որ ուրախ չէր, այլ՝ վրդոված էր: Ինչո՞ւ: Որովհետեւ իր հրաւէրը արհամարհուած էր. անհկա առաջնահերթութիւն չէր սեպուած:

Ինչ կ’ընէ տէրը: Կը հրաւիրէ ուրիշներ, որոնք սկիզբը չէին հրաւիրուած: Յիսուս եզրակացուց, ըսելով. «Առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը իմ ընթրիքէս պիտի ճաշակէ» (հմր 24): Անոնք իրենց առիթը

կորսնցուցին: Անոնց պատրուակները անձնաս կը թուէին, բայց կարեւոր է յիշել, թէ նոյնիսկ անձնաս բաները կրնան շեղել մեզ Աստուծոյ կամքը կատարելէն: Ատիկա դիրութեամբ կը պատահի երբ Տիրոջ վախը բացակայ է մեր սիրտերէն:

Շատ անելի մեծ թիւով կորսուած առիթներ արձանագրուած են Աստուածաշունչին մէջ, որոնք արդիւնքն էին ուշացած հնազանդութեան: Իրականութեան մէջ անոնց թիւը այնքան մեծ է, որ հոս բոլորը կարելի չէ թուել: Սակայն մէկ օրինակ եւս պիտի ընտրեմ, որ շատ խօսուն է: Ղուկասի 9-ին մէջ Յիսուս երկու տարբեր մարդիկ կը հրաւիրէ, որ հետեւին Իրեն: Ինչ հրաւիր: Ամբողջ ստեղծագործութեան Տէրը կը հրաւիրէ քեզ, որ հետը քալես... Առաջին մարդը *համաձայնեցաւ*, բայց պայմանով մը. «Տէր, թոյլ տուր որ *նախ* երթամ եւ թաղեմ հայրս» (հմր 59, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Մարդը *համաձայնեցաւ* հետեւիլ Յիսուսի, բայց *յապաղեցաւ* ատիկա ընելու մէջ՝ իր անձնական հետաքրքրութիւնները անելի առաջ դնելով: Ուսումնասիրողներ կ'ըսեն, թէ այդ օրերուն երբ հայր մը մեռնէր, անոր անդրանիկ որդին կրկնակին բաժին կը ստանար անոր ժառանգութենէն, մինչ միւս որդիները՝ իւրաքանչիւրը մէկ բաժին: Սակայն եթէ ան իր պարտականութիւնը չկատարէր, այդ իրաւունքը կը տրուէր երկրորդ որդիին: Այդ մարդուն պատրուակը օրինական էր, եւ յապաղիլը չէր իյնար մեղքի դասակարգումին տակ: Սակայն ան ետեւ մնաց: Դժբախտաբար, ատիկա փախցուած առիթ մըն էր:

Միւս մարդը ստացաւ նոյն հրաւիրը, որուն պատասխանեց. «Տէր, պիտի հետեւիմ քեզի, բայց թոյլ տուր որ *նախ* երթամ ընտանիքէս հրաժեշտ առնեմ» (հմր 61, շեշտադրումը՝ մեր կողմէ): Դարձեալ կը լսենք *նախ* բառը, եւ դարձեալ անոր յապաղումին պատճառը մեղք մը չէր համարուեր: Սակայն տակաւին ան կորսնցուց երկինքի եւ երկիրի Ստեղծիչին մօտիկ ըլլալու իր առիթը:

Յաջորդ գլուխին մէջ կը կարդանք. «Այս դէպքէն ետք՝ Յիսուս եօթանասուներկու աշակերտներ եւս նշանակեց եւ զանոնք զոյգ-զոյգ իրմէ առաջ դրկեց» (Ղուկասի 10.1): Այդ երկու մարդիկը պիտի ըլլային այդ եօթանասուներկուին մէջ, բայց անոնք հաւանաբար փախցուցին այդ առիթը, որովհետեւ յապաղեցան հնազանդելու մէջ՝ աստուածային վախի բացակայութեան պատճառով:

Տարիներէ ի վեր Աստուծոյ ժողովուրդին կը ծառայեմ եւ տակաւին կը զարմանամ երբ կը լսեմ, որ հաւատացեալ մը անվրդով կերպով կ'ըսէ. «Աստուած ամիսներէ ի վեր այդ հարցին մասին կը խօսի ինձի»: Անոնք կը ժպտան եւ երբեմն խնդալով կ'անցնին ուրիշ

նիւթի, կարծես թէ հաճելի բան մը ըլլար ատիկա: Միայն եթէ անդրադառնային, որ կը յոխորտային իրենց սուրբ վախ չունենալուն մասին, չեմ կարծեր, որ այդքան թեթեւութեամբ պիտի առնէին եղածը:

Ինչ պիտի պատահէր եթէ հօտին հոգ տանելու իր բազմազբաղութենէն Մովսէս յապաղէր ճամբայէն շեղելով երթալ տեսնելու այրող բայց չսպառող մորենիի այդ մեծ տեսարանը (տես Ելքի 3):

Ինչ պիտի պատահէր եթէ Նոյ յապաղէր տապանակը շինելու:

Ինչ պիտի պատահէր եթէ Աբրամ յապաղէր Քանան երթալու: Անոր հայրը յապաղեցաւ. ան առաջին կանչուածն էր Քանան երթալու: Այն ինչ որ իր հայրը կորսնցուց իր յապաղումին մէջ, Աբրամ կատարեց (տես Ծնունդներու 11.31):

Ինչ պիտի պատահէր եթէ Նէեմիա յապաղէր ասարտելու պատին շինութիւնը՝ կատարած ըլլալու համար երկու ղեկավարներուն՝ Սանաբաղատի եւ Գեսամի դիմումը, որ դադրեցնէ գործը եւ երթայ իրենց հետ հանդիպելու: Բայց Նէեմիա կը վախնար Աստուծմէ: Անոր պատասխանը եղաւ. «Ես մեծ գործով մը զբաղած եմ, ու չեմ կրնար իջնել: Ինչո՞ւ գործը դադրի, երբ զայն թողում ու ձեզի իջնեմ» (Նէեմիայի 6.3):

Օրինակները անվերջանալի են: Եզրակացութիւնը այն է, թէ՛ երբ կը դողանք Աստուծոյ Խօսքին դիմաց, անմիջապէս կը հնազանդինք Անոր:

Անձնականացնել

Հատուած– Քու պատուիրաններդ պահելու արտորացի, եւ չտնտնացի: (Սաղմոսներու 119.60)

Միտք– Եթէ յապաղինք անձնական պատրուակներով Աստուծոյ Խօսքին հնազանդելու, ըսել ուզած կ'ըլլանք, թէ Իր կամքը երկրորդական կարեւորութիւն ունի:

Խոկալ– Հաւանական է, որ անվնաս երեւոյցով բաներ շեղեն մեզ Աստուծոյ կամքը կատարելէն: Երբ մեղք չհամարուող բան մը ատելի առաջնահերթ կը դառնայ քան Տիրոջ Խօսքը, անիկա մեղք կ'ըլլայ: Արդեօք արտօնամբ եմ ինքզինքիս, որ շեղիմ անձնական հետաքրքրութիւններու պատճառով եւ հետեւաբար յապաղիմ հնազանդելու: Ինչպէս կարելի է փոխել ատիկա:

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, ներէ ինծի այն ժամանակներուն համար երբ Քու Խօսքիդ հետ վարուած եմ իբրեւ զանազան ընտրութիւններէն մէկը եւ առաջնահերթ չեմ համարած զանիկա: Կ'անդրադառնամ, որ ատիկա ընելով, ես ըսել ուզած եմ, որ այն ինչ որ կարելի է Քեզի համար չնչին է ինծի համար: Կ'ապաշխարեմ եւ Քեզմէ ներում կը խնդրեմ: Ես գլխաւոր առաջնահերթութիւն պիտի համարեմ Քու փափաքներդ: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն:

Դաւանութիւն– Երբ որ գիտնամ Աստուծոյ կամքը, անմիջապէս պիտի հնազանդիմ անոր:

Մենք չենք կանչուած
ապրելու մարդկային
տրամաբանութեամբ:
Միակ կարելոր բանը
Աստուծոյ Խօսքին եւ Անոր
առաջնորդութեան հնազանդիլն
է մեր կեանքերուն մէջ: Երբ Իր
կամքին մէջն ենք, աշխարհի
ամէնէն ապահով տեղն ենք:

– ԵՂԲԱՅՐ ԵՈՒՆ

24 | ԱՆՀԱՍԿՆԱԼԻ Է

Անցեալին Սուրբ Հոգին քեզ առաջնորդած է, որ ընես բան մը, որ անհասկնալի էր քեզի համար: Անոնք, որոնք որոշ ժամանակէ ի վեր Աստուծոյ հետ կը քալեն, «Այո» պիտի պատասխանեն: Բայց հարցնեն ուրիշ հարցում մը. Հնազանդելէդ ետք հասկնալի եղա՞ւ քեզի համար անմիջապէս կամ նոյնիսկ որոշ ժամանակ մը ետք: Գրեթէ միշտ, այո՛: (Կ'ըսեմ՝ «գրեթէ միշտ», քանի որ կան *հազուադէպ* պարագաներ երբ կրնայ հասկնալի չըլլալ մեզի համար մինչեւ որ դատաստանի աթոռին առջեւ կենանք:) Շարունակելով քննել, թէ ի՞նչ կը նշանակէ դողալ Աստուծոյ Խօսքին դիմաց, ան որ սուրբ վախով կ'ընթանայ, պիտի՝

1. Հնազանդի Աստուծոյ անմիջապէս

2. Հնազանդի Աստուծոյ նոյնիսկ եթէ անհասկնալի է

Միշտ պատահող բան մը չէ, որ Աստուած մեզմէ ուզէ, որ ընենք բան մը, որ հասկնալի չէ մեզի համար: Բայց կը պատահի: Հարցնենք կարգ մը հարցումներ:

Իմաստ ունէ՞ր հողին վրայ թքելը եւ ցեխը կոյրի մը աչքին դնելը եւ ապա անոր ըսելը, որ երթար եւ լուար աչքերը: Ո՛չ, իմաստ չունէր օրին, բայց այդ խորհուրդը (իմաստութիւնը) կոյրի մը աչքերուն տեսողութիւն տուաւ:

Իմաստ ունէ՞ր գինիի տակառներու մէջ ջուր լեցնել տալը հարսանեկան խրախճանքի մը ընթացքին երբ գինի էր ուզուածը: Ո՛չ, իմաստ չունէր օրին, բայց այդ խորհուրդին (իմաստութեան) իբրեւ արդիւնք խրախճանքի ամէնէն ընտիր գինին ունեցան:

Իմաստ ունէ՞ր փորձառու նաւավարներու թելադրելը, որ իրենց բնագրին եւ մարզումին հակառակ քայլ առնեն եւ չլքեն խորտակուող

Նաւը երբ փոքր նաւակներ տրամադրելի էին: Ո՛չ, իմաստ չունէր օրին, բայց այդ խորհուրդը (իմաստութիւնը) փրկեց կեանքերը նաւուն վրայ եղող 276 մարդոց. ոչ մէկը իր կեանքը կորսնցուց (կարդա՛մ Գործերը 27.27-36):

Իմաստ ունէր, որ մէկը ձգէր ամբողջ քաղաքին մէջ տարածուած վերարթնութեան շարժումը՝ զոր Աստուած սկսելու համար զինք գործածած էր, եւ հնազանդէր անապատ երթալու պատուէրի մը: Ո՛չ, իմաստ չունէր օրին, բայց այդ խորհուրդը (իմաստութիւնը) ճամբայ բացաւ, որ Եթովպիայի իշխանութեան կարգին մէջ երրորդ անձը փրկուի:

Իմաստ ունէր մեծ քաղաքի մը բարձր պատերուն շուրջը լուռօրէն քալելը եւ ապա եօթներորդ օրը եօթը անգամ նոյնը ընելը եւ վերջապէս փողերը հնչեցնելը եւ պոռալը: Ո՛չ, իմաստ չունէր օրին, բայց այդ խորհուրդը (իմաստութիւնը) թշնամիին պատերուն հյնալուն պատճառը եղաւ:

Իմաստ ունէր ալիւր դնելը պնակ մը թունաւոր ապուրին մէջ եւ ապա ըսելը, որ բոլորը ուտեն անկէ: Ո՛չ, իմաստ չունէր օրին, բայց այդ խորհուրդը (իմաստութիւնը) բոլորին մատակարարեց սննդարար կերակուր մը եւ ոչ ոք հիւանդացաւ:

Իմաստ ունի՞ ներելը անոնց, որոնք վնաս հասցուցած են քեզի, ընտանիքիդ կամ քեզի մօտիկ մէկու մը: Պէտք չէ, որ անոնք ասոր գինը վճարեն:

Իմաստ ունի՞ սիրելը զանոնք, որոնք կ'ատեն քեզ: Պէտք չէ զանոնք անտեսել:

Իմաստ ունի՞ բարիք գործելը անոնց, որոնք սխալ կերպով վարուած են քեզի հետ: Պէտք չէ վրէժ լուծել անոնցմէ:

Իմաստ ունի՞ պատուելը իշխանութեան վրայ եղողները, որոնք չարութիւն կը գործեն: Պէտք չէ՞ զանգատինք եւ ըմբոստանանք:

Իմաստ ունի՞ պատուելը զանոնք, որոնք կ'անպատուեն քեզ: Պէտք չէ՞ բարկանաս եւ յանդիմանես զանոնք:

Կրնամ այդպէս շարունակել մինչեւ այս գլուխին վերջաւորութիւնը եւ հաւանաբար մինչեւ գիրքին վերջաւորութիւնը՝ բաժնեկցելով Աստուածաշունչէն պատուէրներու մասին, որոնք անիմաստ կը թուին, բայց անոնց արդիւնքներուն վրայ հիմնուելով, բոլորն ալ փաստեցին ըլլալ Աստուծոյ իմաստութիւնը: Այդ օրինակներուն մէջ դեր ունեցողները կամ դողացին Աստուծոյ պատուէրներուն դիմաց, հնազանդեցան եւ օրհնուեցան կամ

ալ Աստուծոյ վախը չունենալով, անտեսեցին կամ անհնազանդ գտնուեցան անոնց եւ հետեւանքները կրեցին: Յուսամ աւելի յստակօրէն կը տեսնես, թէ ինչպէս Տիրոջ վախը իրապէս իմաստութեան սկիզբն է (տես Սաղմոսներու 111.10): Մեզի կ'ըսուի.

Տէրոջ վստահէ ամբողջ սիրտովդ, ու քու խելքիդ մի՛ ապաւինիր.
զայն ճանչցիր քու բոլոր ճամբաներուդ մէջ, եւ ինք պիտի շտկէ
քու ուղիներդ: (Առակներու 3.5-6, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Տիրոջ իմաստութիւնը շատ աւելի գերազանց է քան մերը. հետեւաբար պէտք չէ ապաւինինք մեր սեփական հասկացողութեան: Կրնանք դիւրութեամբ շեղիլ հնազանդութենէ, որ վերջաւորութեան օգուտ պիտի ըլլայ մեզի՝ եթէ կատարենք այն ինչ որ տրամաբանական չէ: Այն անձը, որ կը վախնայ Աստուծմէ՝ կը հնազանդի, նոյնիսկ երբ անիմաստ կը թուի պատուէրը:

Քանի մը տարի առաջ ես հանդիպեցայ միլիառատիրոջ մը: Ան պատմեց իր ասպարէզին սկիզբը իր ունեցած գործի ձախողութիւններուն մասին: Ան կարդացած էր յաջող *պիզնըս* մը հիմնելու համար բոլոր հանրաձանօթ գիրքերը եւ կիրարկած անոնցմէ քաղած իմաստութիւնը: Սակայն տակաւին դժուարութիւններ ունէր:

Օր մը երբ եկեղեցին էր եւ մտիկ կ'ընէր իր հովիւին քարոզին, խորհուրդ մը եկաւ միտքը, թէ՛ *Ան կոչուած է Աւերարանը քարոզելու եւ Սուրբ Հոգիին կը վստահի՝ իր կեանքի առաքելութիւնը կատարելու համար: Ես կոչուած եմ շուկային մէջ ըլլալու, ուստի ինչո՞նչ չեմ վստահիր Սուրբ Հոգիին՝ ընելու համար այն ինչ որ կանչուած եմ ընելու:*

Ան կ'որոշէ ամէն առտու արթննալ եւ Տիրոջմէ ուղղութիւն խնդրել այդ օրուան համար: Տետրակ մը կը բերէ եւ կը սկսի գրել ամէն բան, որ կը մղուի ընելու: Նաեւ կը սկսի ուշադրի ըլլալ, որ մէկ ականջը միշտ Սուրբ Հոգիին տուած ըլլայ օրուան ընթացքին, նոյնիսկ իր գործի հանդիպումներուն առեւն:

Ան կարգ մը մանրամասնութիւններ բաժնեկցեցաւ: Օր մը առուծախի հանդիպում մը ունէր: Այդ առտու զգաց, որ Սուրբ Հոգին իրեն կ'ըսէր, որ ընէր բան մը, որ շատ աննշան կը թուէր: Հասկնալի չէր իրեն համար, բայց նուիրուած էր ընելու:

Սուրբ Հոգին իրմէ ուզած էր, որ շարունակ կրկնէր որոշ շարժում մը: Միտքը եկաւ այն թագաւորը, որուն Եղիսէ մարգարէն ըսած էր, որ նետերը գետին զարնէր: Թագաւորը երեք անգամ ըրած էր ատիկա եւ յանդիմանուած էր մարգարէին կողմէ՝ այդ արարքը յաւելեալ կերպով

չկրկնելուն համար (կարդա՛ Դ.Թագաւորներուն 13.14-19): Ուստի այդ մարդը Սուրբ Հոգիին ըսած արարքը քսան անգամ կրկնեց: Ան ըսաւ. «Այդ օրը իմ ընկերութիւնս քսան հիւանդանոց գնեց Վիեթնամի մէջ»:

Ապա ան պատմեց, թէ ինչպէս գնած էր Եւրոպայի ամէնէն մեծ դրամատուներէն մէկը: Այդ գործընթացը տակաւին ասելի տարօրինակ էր քան քսան հիւանդանոցներ գնելունը: Չարմացած էի: Պարզօրէն այդ գործարարը ընտրեց հնազանդիլ Աստուծոյ ինչ ալ որ ըսուած ըլլար իրեն աղօթքի ատեն՝ անիկա տրամաբանական թուէր կամ ոչ: Պտուղը յայտնի է. ան այլեւս չի ձախողիր:

Երբ մեր որդիներէն մէկը իր դեռահասութեան վերջին տարիներուն մէջն էր, իրմէ խնդրեցի, որ ընէ բան մը, որ անհասկնալի էր իրեն համար: Ան դէմ դրաւ ինծի, ըսելով, որ իմ պատուէրս իմաստ չունէր, բայց ես հաստատ մնացի կեցուածքիս վրայ: Յոգնելով դիմադրելէ, վերջաւորութեան ըսաւ. «Պապ, ես հազարամեակի սերունդ եմ: Մենք պէտք է բանի մը “ինչո՞ւ”ն հասկնանք նախքան, որ ընենք զանիկա»:

Իրեն ըսի. «Լաւ: Համաձայնութիւն մը ընեմ հետդ: Բացատրեմ՝ պատմելով իրական պատմութիւն մը: Աստուած Յուդայի երիտասարդ մարգարէներէն մէկուն ըսաւ, որ երթար Բեթէլ, մարգարէանար Իսրայէլի թագաւորին, եւ Յուդա չվերադառնար իր գացած ճամբով: Առաւել՝ բան մը չուտէր ամբողջ ճամբորդութեան ընթացքին: Երիտասարդ մարգարէն չհնազանդեցաւ Սուրբ Հոգիին պատուէրներուն եւ ատոր հետեւանքները կրեց. ան առիծի մը կողմէ սպաննուեցաւ ճամբորդութեան ընթացքին (տես Գ.Թագաւորներուն 13.16,23-26): Տղանս, ահա՛ մեր համաձայնութիւնը: Այն օրը, որ ինծի կ'ըսես այդ երիտասարդ մարգարէին թելադրուածին “ինչո՞ւ”ն այդ օրը ես քեզի կ'ըսեմ իմ թելադրանքիս “ինչո՞ւ”ն»:

Մինչեւ այսօր ան չէ կրցած ինծի ըսել այդ «ինչո՞ւ»ն: Իրականութեան մէջ ատիկա շփոթի կը մատնէ գիս եւս: Կան ժամանակներ երբ Աստուած մեզի պիտի ըսէ, որ ընենք բան մը, որ իմաստ չունի մեր միտքին համար: Բայց անոր իմաստութիւնը միշտ կը հաստատուի ըսուածին հնազանդելուն արդիւնքներովը: Ատոր համար Յիսուս կ'ըսէ. «Իմաստութիւնը ճիշդ դուրս կու գայ՝ իր արդիւնքներով» (Մատթէոսի 11.19)՝:

Թող բոլորս ալ ըլլանք Պետրոսի պէս, որ ամբողջ գիշերը ծովուն բացերը աշխատելէն եւ արդիւնք չքաղելէն ետք, մտիկ ըրաւ Յիսուսի խօսքը երբ ըսաւ, որ դարձեալ ծովուն խորերը երթան եւ անգամ մը եւս ջուրը նետեն իրենց ուռկանները: Այդ պատուէրը

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Կարգ Ուրոյ Թրանսլէյշն* (GW) տարբերակէն

շատ գործ կ'ենթադրեր երբ անոնք արդէն իսկ սպառած էին: Չէս սիրեր Պետրոսի պատասխանը. «Ամբողջ գիշերը յոգնեցանք եւ ոչինչ որսացինք, բայց քու խօսքիդ համար ուռկանները նետենք» (Ղուկասի 5.5): Արդիւնքը եղաւ՝ երկու նաւակ լեցնելու չափ ձուկ:

Անձնականացնել

Հատուած– Անոնք, որոնք իրենց սեփական ներըմբռնումին կը վստահին անմիտ են, բայց ոեւէ մէկը, որ իմաստութեամբ կ'ընթանայ՝ ապահով է: (Առակներու 28.26)¹

Միտք– Տիրոջ իմաստութիւնը շատ անլի գերազանց է քան մերը. հետեւաբար պէտք չէ ապաւինինք մեր սեփական հասկացողութեան: Անիկա կրնայ դիւրութեամբ շեղել մեզ հնազանդութեան օգուտներէն: Այն անձը, որ կը վախնայ Աստուծմէ՝ կը հնազանդի, նոյնիսկ երբ անիմաստ կը թուի պատուէրը:

Խոկալ– Հարց ունիմ Աստուծոյ իմաստութեան վստահելու մէջ: Անցեալին բնաւ պատահած է, որ կասկածիմ Անոր խորհուրդին վրայ եւ ընեմ այն ինչ որ տրամաբանական եւ հետեւաբար ապահով կը թուի ինծի: Ինչ արդիւնք տուաւ ատիկա: Ինչ պիտի պատահէր եթէ Աստուծոյ նայէի՝ ուղղութիւն ստանալու համար, եւ վստահէի Իրեն: Կրնամ նուիրուիլ այդ գործընթացին:

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, ներէ ինծի՝ Քուկինիդ փոխարէն իմ սեփական իմաստութեանս վստահելուս համար: Կը խնդրեմ, որ ինծի տաս հաւատք ստանալու Քու իմաստութիւնդ մինչ կը կարդամ Խօսքդ եւ կ'աղօթեմ ինչպէս նաեւ մտիկ կ'ընեմ աստուածային խորհուրդին անոնց, որոնք կը վախնան Քեզմէ: Տուր ինծի զօրութիւնը հաւատալու եւ հնազանդելու նոյնիսկ երբ անիմաստ կը թուի պատուէրդ: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն:

Դաւանութիւն– Կ'ընտրեմ հնազանդիլ Աստուծոյ իմաստութեան փոխանակ իմ սեփականիս կամ ձայներուն անոնց, որոնք կը վստահին մարդկութեան կարողութեան եւ ոչ Աստուծոյ:

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Մարդուն պարտականութիւնն
է սիրել զԱստուած եւ վախնալ
Անկէ, նոյնիսկ առանց
վարձատրութեան յոյսի
կամ պատիժի վախի:

– ՄԱՅՄԱՆԱՏԻՉ

25 | ԱՌԱՆՑ ԲԱՑԱՅԱՅՏ ՕԳՈՒՏԻ

Հաւանաբար լսած էք ծնող մը կը դժգոհի կամ ցաւ կ'արտայայտէ այն իրականութեան համար, որ միակատեանը, որ իր համալսարանական տղան կամ աղջիկը կը կապուի իրեն հետ այն է երբ դրամի պէտք ունի: Այդ պարագային մէջ եղող զաւակը՝ իր ծնողքին հետ իր հազուադէպ հեռաձայնային խօսակցութիւններուն ընթացքին, կրնայ հետաքրքրութիւն ցոյց տալ մօրը կամ հօրը հետ խօսելու ատեն, բայց ատոր ետին գտնուող շարժառիթը անոնց աղբիւրէն իր օգտուիլն է: Սուրբ վախը կը պաշտպանէ մեզ մեր երկնաւոր Հօրը հանդէպ եւ նոյնը ընելէն եւ մեզի կը ծանօթացնէ Աստուծոյ խօսքին դիմաց դողալու այս յաջորդ երեսը: Վերաքաղ մը ընենք եւ աւելցնենք մեր նոր ցուցանիշը.

1. Հնազանդիլ Աստուծոյ անմիջապէս
2. Հնազանդիլ Աստուծոյ նոյնիսկ եթէ անհասկնալի է
3. **Հնազանդիլ Աստուծոյ նոյնիսկ երբ անձնական օգուտ մը չես տեսներ անոր մէջ**

Աւելի քան քառասուն տարի ծառայութեան մէջ ըլլալով, նկատած եմ տխուր իրականութիւն մը, յատկապէս Արեւմտեան Եկեղեցիին մէջ: Շատ յաճախ որպէսզի հաւատացեալները հետաքրքրուած ըլլան հնազանդութեամբ, անոր օգուտները պէտք է շեշտուին: Մտածէ՛ այդ մասին պահ մը: Առջեւի շարքին վրայ նստարան մը ապահովելու համար երեսուն վայրկեան կանուխ ներկայ պիտի ըլլայի՞նք եկեղեցի՝ սրբութեան մասին պատգամ մը լսելու համար: Հնազանդութեան մասին վերնագիրներ ունեցող գիրքերը ամէնէն շատ ծախսուող գիրքերու ցանկերուն վրայն են: Ղեկավարութիւնը շեղամծ

է մարդոց սխալները յայտնող ճշմարտութիւնները յայտարարելու իր առաքելութենէն՝ պատշաճելու համար այդ նորոյթին: Այլ խօսքով, մեծ թիւով ծառայութիւններ տեղի տուամ՝ են իրենց ապրած կեանքին հաւանութիւն տուող ներշնչիչ պատմութիւններ լսելու համայնքներու ճնշումին, փոխանակ Աստուծոյ ժողովուրդը հրաւիրելու, որ ուրանան իրենք զիրենք եւ Յիսուսի հետեւին:

Ինչն է, որ այդ նորոյթը այդպիսի տխուր իրականութեան մը կը վերածէ: Անտեսելով Աստուծոյ իմաստութիւնը, իրականութեան մէջ մենք մեզի վսաս կը հասցնենք: Անոր պատուերները, խորհուրդները եւ իմաստութիւնը վերջաւորութեան մեծագոյն օրհնութիւնները կը բերեն թէ՛ այս կեանքին մէջ եւ թէ՛ գալիքին: Մեզի կ'ըսուի, թէ՛ «զանոնք պահելուն վարձատրութիւնը մեծ է» (Սաղմոսներու 19.11): Բնաւ չես կրնար Աստուծմէ աւելի տալ. օգուտները շատ աւելի մեծ են քան որեւէ բան, որ դուն կրնաս ընել Իրեն համար:

Միւս կողմէ վտանգաւոր է մղել մէկը քաջաւերանքներով: Ինչո՞ւ: Եթէ օգուտը բացայայտ չէ, արդեօք պիտի ունենանք Աստուծոյ ցուցմունքներուն հնազանդելու նոյն վճռակամութիւնը: Շատ հաւանաբար այդ վճռակամութիւնը պիտի յաղթահարուի անձնական հետաքրքրութիւններով կամ շահերով: Ատոր համար է, որ Տիրոջ վախը այդքան ճակատագրական է. անիկա կը մղէ մարդը հնազանդելու՝ մրցանակը կամ վարձատրութիւնը բացայայտ ըլլայ կամ ոչ:

Մեծն Պարսկական Կայսրութեան ժամանակաշրջանին, այդ հզօր թագաւորութիւնը նուաճած էր միւս բոլորը եւ անոր ղեկավարը՝ Ասուերոս Թագաւոր, ամէնէն հզօր մարդն էր երկրի վրայ: Ան ամուսնացած էր Եսթեր անունով հրեայ կնոջ մը հետ:

Թագաւորին իշխանութեան տակ գտնուող ամէնէն բարձր պաշտօնատարը Համան անունով մարդ մըն էր: Ան դառնօրէն գայթակղեցաւ Եսթերի զարմիկին՝ Մուրթէի պատճառով, որ իր կարգին եւս թագաւորին պաշտօնատարներէն մէկն էր: Իր զայրոյթին մէջ, Համան վճռեց պատժել ոչ միայն Մուրթէն, այլեւ ամբողջ հրեայ ժողովուրդը: Ինք եւ շատեր չէին գիտեր, թէ Եսթեր Թագուհին ալ հրեայ էր:

Համան գնաց եւ դաժանօրէն զրպարտեց հրեայ ժողովուրդը թագաւորին առջեւ եւ առաջարկեց, որ ամբողջ ցեղը բնաջնջուի մէկ օրուայ մէջ: Անոր ծրագիրը յաջողեցաւ: Թագաւորը համաձայն գտնուեցաւ, հրամանագիր մը հանեց եւ կնքեց զանիկա իր մատանիով:

Հրամանագիրին լուրը առնելով, Մուրթէ պատգամաւոր մը ղրկեց իր զարմիկին՝ Եսթեր Թագուհիին՝ անոր յանձնարարելով, որ երթար թագաւորին քով եւ հրեայ ժողովուրդը ազատելու դիմում մը ընէր անոր:

Եսթեր պատասխանեց. «Թագաւորին բոլոր ծառաները եւ թագաւորին գաւառներուն ժողովուրդները լաւ գիտեն, թէ օրէնք մը կայ՝

որ մահուան կը դատապարտէ այն մարդը կամ կինը, որ թագաւորին ներքին գաւիթը կը մտնէ՝ առանց կանչուած ըլլալու. միայն ողջ կը մնայ ան՝ որուն թագաւորը իր ոսկի մականը կ'երկարէ: Իսկ ես թագաւորին քով մտնելու կանչուած չեմ երեսուն օրէ ի վեր» (Եսթերի 4.11): Հակառակ անոր որ Եսթեր Ասուերոսի կինն էր, եթէ իր ներքին գաւիթը մտնէր առանց հրաւիրուած ըլլալու, շատ հաւանաբար գլխատուէր:

Մտածենք այդ մասին: Ան թագուհին է: Հոյակապ կեանք մը ունի. իրականութեան մէջ՝ ամէն ինչ որ իր սիրտը կը փափաքի: Անձնապէս ոչ մէկ բան ունի շահելիք Աստուծոյ ժողովուրդին համար ներքին գաւիթը մտնելով, բայց կրնայ ամէն բան կորսնցնել՝ ներառեալ իր գլուխը: Ատով հանդերձ տես ինչ կը պատասխանէ Մուրթէին.

Գնահ, Շուշան գտնուող բոլոր հրեաները հաւաքէ, եւ ինձի համար ծոմ պահեցէք. երեք օր մի՛ ուտէք ու մի՛ խմէք՝ զիշեր թէ ցերեկ: Ես ալ նոյնպէս ծոմ պիտի պահեմ՝ իմ սպասուհիներովս, եւ այդպէս թագաւորին քով պիտի մտնեմ, ինչ որ օրէնքին համաձայն չէ, ու եթէ մեռնիմ՝ թող մեռնիմ: (Եսթերի 4.15–16, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Սուրբ վախը մղեց զինք, որ Աստուծոյ Թագաւորութիւնը իր անձնական բարօրութենէն առաջ դնէր: Իր հանգիստը, ապահովութիւնը, հարստութիւնը եւ դիրքը բոլորն ալ վտանգի տակ դրուեցան իր հնազանդութեամբ: Ինք շահ մը չունէր ատկէ, եւ սակայն այն ինչ որ կարելի էր Աստուծոյ համար՝ կարելի էր իրեն համար, առանց ակնկալութիւններու: Ան դողաց Աստուծոյ Խօսքին դիմաց. ան Աստուծոյ վախը ունէր:

2015–ին, Լիսան եւ ես Երեւան էինք, Հայաստան, եւ կը ծառայէինք խորհրդաժողովի մը՝ 3,500 առաջնորդներու ներկայութեամբ: Ամբողջ Արեւելեան Երոպայէն եւ Միջին Արեւելքէն հովիւներ եկած էին ներկայ ըլլալու այդ խորհրդաժողովին: Շատեր քշելով եկած էին Իրանէն: (Երեւանը միայն 30 մղոն հեռու է Իրանի սահմանէն:) Այդ ատեն, Իրանի քաղաքացիներուն արտօնուած էր Երեւան մտնել, ուստի բազմաթիւ առաջնորդներ ընդատակեայ եկեղեցիէն ներկայ էին խորհրդաժողովին: Ծառայութեան պահերը փառաւոր էին:

Վերջին ծառայութենէն ետք Լիսան եւ ես որոշեցինք ճեմել Երեւանի գլխաւոր պողոտային վրայ՝ մաքուր օդ առնելու համար: Քսաննոց երկու երիտասարդուհիներ ճաշարանէ մը դուրս վազեցին՝ մեզի բարեւելու համար: Դուրս եկաւ, որ անոնք Իրանէն եկած երկու առաջնորդներ էին: Անոնք շատ գեղեցիկ էին եւ կեանքով լեցուն. իրականութեան մէջ պահ մը մտածեցի. *Իմ երեք ամուրի որդիներէս որ երկուքին կրնամ ծանօթացնել այդ աղջիկները:*

Լիսան եւ ես իրենց հետ խօսեցանք շուրջ քսան վայրկեան: Գիտցանք, որ կրօնական ուստիկանութիւնը կը հետապնդէր զիրենք: Խորհրդաժողովին ընթացքին հեռաձայններ եկած էին իրանեան իշխանութիւններէն՝ հարցնելու համար անոնց ո՞ր ըլլալուն մասին: Անոնցմէ մէկը ըսաւ, որ մտահոգիչ պատգամ մը (*մասէճ*) եկած էր իր հեռաձայնին:

Այդ պահուն ես ըսի ամէնէն անմիտ բանը, որ երբեւէ ըսած եմ քառասուն տարուայ ծառայութեանս ընթացքին: Անոր ըսի. «Ինչո՞ւ ետ պիտի երթաս: Ինչո՞ւ չես հրաժարիր այդ երկրէն»:

Ան անկեղծօրէն, ազնուօրէն եւ վճռակամօրէն ինծի նայեցաւ եւ պատասխանեց. «Ո՞վ պիտի խօսի Յիսուսի մասին պարսիկ ժողովուրդին եթէ մենք ետ չերթանք»:

Ես ահի մէջ էի անոր պատասխանը լսելով: Տեսանք ինչպէս այդ աղջիկները մէկ կողմ դրած էին իրենք զիրենք պաշտպանելու իրենց բնագոյր. անիկա գերակշռուած էր իրենց երկրին մէջ Աստուծոյ Թագաւորութեան յառաջացման տեսիլքով: Անոնք ունէին նոյն այն սուրբ վախը, որ Եսթեր ունէր: Անոնք կը հնազանդէին Աստուծոյ, նոյնիսկ երբ բացայայտ անձնական օգուտ մը չկար իրենց համար, եւ շատ հաւանաբար նաեւ իրենց կեանքը վտանգի մէջ կը դնէին: Ես թէ՛ յանդիմանուած եւ թէ՛ ներշնչուած էի:

Այդ վճռակամութիւնը՝ ինչպէս տեսանք այդ երիտասարդուհիներուն մէջ, չ'երեւիր միայն հնազանդութեան մէկ արարքի մէջ: Անիկա սիրտի կեցուածք մըն է, որ կը զարգացուի եւ որուն համաձայն անձը կ'ապրի: Անիկա մեր բնական հակումը կ'ըլլայ նոյնիսկ այն անկարեւոր թուացող որոշումներուն մէջ, զորս կու տանք վայրկեան առ վայրկեան: Կ'ընտրենք՝ նոյնիսկ պզտիկ հարցերու մէջ, հնազանդիլ Աստուծոյ Խօսքին եւ Սուրբ Հոգիի առաջնորդութեան: Կրօնանք բազմազբաղ ըլլալ, բայց յանկարծ կը մղուինք մէկու մը հեռաձայնել: Չկայ պատճառ, չկայ բացայայտ օգուտ, բայց մեզ մղողը աստիկա չէ: Քայլը կ'առնենք եւ «ինչո՞ւ»ն յետոյ կը տեսնենք:

Կամ թերեւս կը լսենք, որ մէկը չարախօսութիւն ըրած է մեզի դէմ: Բացայայտ օգուտ մը չկայ ներելուն, հաշտութիւն փնտռելուն եւ այդ անձը օրհնելուն մէջ, բայց կ'ընտրենք ատոնք ընել միմիայն առ ի հնազանդութիւն այն պատուէրին, որ կ'ըսէ. «Ներեցէք իրարու, ինչպէս Աստուած ալ Քրիստոսի միջոցաւ ներեց մեզի» (Եփեսացիներուն 4.32) եւ «Օրհնեցէք ձեզ անիծողները» (Ղուկասի 6.28):

Թերեւս մէկը՝ որ մեզ կ'ատէ, սխալ կերպով վարուած է մեզի հետ: Ինչ է նկատելի օգուտը հնազանդելուն Յիսուսի խօսքերուն, թէ՛ «Բարիք ըրէք ձեզ ատողներուն եւ աղօթեցէք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն» (Մատթէոսի 5.44): Կամ նկատի առ հետեւեալը. ինչ օգուտ կը տեսնեն այն հաւատացեալները, որոնք

իրենց երկիրներուն մէջ հալածանքի կ'ենթարկուին, օրհնելուն մէջ զիրենք հալածողները, որոնք կը չարչարեն զիրենք կամ նոյնիսկ իրենց սիրելիները կը սպաննեն իրենց հաւատքին համար: Եւ սակայն Լիսան եւ եւ հանդիպումներ ունեցած ենք հովիւներու հետ, որոնք կու գան երկիրներէ, ուր այդպիսի բաներ կը պատահին, եւ տեսած ենք անոնց առատ ուրախութիւնը եւ կեանքը:

Ինչ օգուտ կայ ուրիշ երկիրներու մէջ եղողներուն համար ջերմեռանդօրէն աղօթելուն մէջ: Կամ երբ նիւթական նուէրներ կու տաս ուրիշ երկիրներու մէջ ապրող մարդոց, որոնք բնաւ պիտի չկարենան վերադարձնել քեզի տուածդ: Յանկը անվերջանալի է: Հարցումը այն է, թէ՛ մնայուն կերպով պիտի հնազանդիս Աստուծոյ ի պատասխան այն սուրբ սիրոյն, որ կը վառի սիրտիդ մէջ, կամ պիտի սպասես մինչեւ որ անձնական օգուտ մը ըլլայ անոր մէջ:

Անձնականացնել

Հատուած- Ո՛վ որ ուզէ իր կեանքը փրկել՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ո՛վ որ ինծի համար կորսնցնէ իր կեանքը՝ պիտի գտնէ զայն: (Մատթէոսի 16.25)

Միտք- Մենք յաճախ կը կորսնցնենք մեծագոյն օրհնութիւնները՝ անտեսելով Աստուծոյ իմաստութիւնը, որ չի թուիր մեզի անձնապէս օգտակար ըլլալ: Հիմնականին մէջ մենք մեզի վրաս հասցուցած կ'ըլլանք երկար ժամանակի վրայ: Բնաւ չենք կրնար Աստուծմէ աւելի տալ:

Խոկալ- Ինչ ըսել կ'ուզէ Յիսուս «Ո՛վ որ ուզէ իր կեանքը փրկել»ով: Արդեօք այդ համարին կը նայիմ միայն ծայրայեղ պարագաներու իմաստով, ինչպէս՝ մարտիրոսութեան: Արդեօք անիկա կիրարկած եմ պզտիկ, ամենօրեայ որոշումներու մէջ: Ինչ պիտի պատահի եթէ ատիկա ընեմ: Ատիկա ինչպէս կը փոխէ ապրելու ձեւս:

Աղօթք- Սիրելի Երկնաւոր Հայր, ներէ ինծի, որ ծարաւս եւ հնազանդութիւնս սահմանափակած եմ Քեզմէ եկող միայն այն իմաստուն խորհուրդներուն մէջ, որոնք անձիս համար օգտակար կը համարեմ: Կ'ապաշխարեմ այդ մտայնութենէն եւ ներողութիւն կը խնդրեմ Քեզմէ: Այս պահէն անդին կ'ընտրեմ այլեւս կեանքիս չկառչիլ, այլ՝ տալ զանիկա Յիսուսի սիրոյն: Հետեւաբար ծարաւս պիտի ըլլամ Քու իմաստութեանդ համար, նոյնիսկ եթէ անիկա անմիջական օգուտ մը չունի ինծի համար: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն:

Դաւանութիւն- Կ'ընտրեմ կեանքիս ամէն մէկ վայրկեանը նուիրել իմ Տէր Յիսուսիս փափաքներուն եւ իմաստութեան համար:

Առանց հնազանդութեան
չի կրնար փրկութիւն ըլլալ,
որովհետեւ փրկութիւն
առանց հնազանդութեան
ինքզինք հակասող
անկարելիութիւն մըն է:

– ԱՅՏԸՆ ՈՒԻԼՍԸՆ ԹՈՂԸՐ

26 | ԼԱՒ ՑԱՒ ՄԸ

Կնոջ մը ծննդաբերությունը հաճելի փորձառություն մը չէ. դժուար է եւ նոյնիսկ ցաւագին: Սակայն վերջնական արդիւնքը նոր, փափաքելի ընտանիքի անդամ մըն է: Առանց յղութեան եւ ծննդաբերութեան դժուարութիւններուն, այդ նոր գեղեցիկ կեանքը յառաջ պիտի չգար: Ատիկա մեզի ակնարկ մը կու տայ Աստուծոյ Խօսքին դիմաց դողալու յաջորդ երեսին մասին: Առաջին երեք ցուցանիշերը նորին հետ միասին հետեւեալներն են.

1. Հնազանդիլ Աստուծոյ անմիջապէս
2. Հնազանդիլ Աստուծոյ նոյնիսկ եթէ անհասկնալի է
3. Հնազանդիլ Աստուծոյ նոյնիսկ երբ անձնական օգուտ մը չես տեսներ անոր մէջ
4. **Հնազանդիլ Աստուծոյ նոյնիսկ երբ ցաւալի է**

Ետ երթալով մեր հիմնական աստուածաշնչական հաստատմաներէն մէկուն՝ Փիլիպպեցիներուն 2.12–13–ին, մեզի կ'ըսուի, թէ պէտք է գործադրենք մեր փրկութիւնը ահով ու դողով: Մեր *հնազանդութիւնը* պահանջող այդ բառերէն անմիջապէս առաջ, Պօղոս Յիսուսը կը մատնանշէ իբրեւ մեր օրինակը: Մեր Տէրը հրաժարեցաւ Իր աստուածային առանձնաշնորհումներէն եւ «խոնարհեցուց ինքզինք ու *հնազանդ եղաւ* մինչեւ մահ, նոյնիսկ՝ խաչին մահը» (հմբ 8, շեշտադրումը՝ մեր կողմէ): Յիսուս կամովին հնազանդեցաւ Հօրը պահանջին նոյնիսկ որ անոր մէջ կար շատ մեծ տառապանք:

Խաչելութենէն մէկ գիշեր առաջ, Գեթսեմանիի պարտէզին մէջ, Յիսուս ցաւով աղաղակեց. «Հայր իմ, եթէ կարելի է, այս բաժակը հեռացնուր ինձմէ, բայց ո՛չ թէ ինչպէս որ ես կ'ուզեմ, այլ

ինչպես որ դո՛ւն կ'ուզես» (Մատթեոսի 26.39): Հնազանդութեան եւ ինքնապահպանութեան միջեւ բախումը այնքան սաստիկ էր, որ Յիսուսի քրտինքը արիւնի կաթիլներու պէս կը հոսէր: Յիշենք, թէ՛ «Ինչ բաներով, որ մենք կը փորձուինք՝ ինք եւս փորձուած է, առանց սակայն մեղանշելու» (Եբրայեցիներուն 4.15): Ան կանխատեսաւ գալիք տակալի տառապանքը եւ աղաչեց Իր Հօրը կամքը կատարելու համար այլընտրական ճամբու մը համար, բայց կարելի չէր: Ինչն էր, որ կը մղէր զինք այդ մակարդակի հնազանդութեան:

Իր երկրի վրայ եղած ատեն ան աղօթքներ եւ աղաչանքներ ըրաւ՝ բարձրաձայն աղաղակելով եւ արցունքներով [...] Եւ Աստուած լսեց անոր աղօթքները՝ Աստուծոյ հանդէպ իր խորունկ մեծարանքին համար: (Եբրայեցիներուն 5.7)¹

Անոր խորունկ սուրբ վախը զօրացուց զինք, որպէսզի կարենար դիմագրաւել այն եւ դիմանալ անոր, որմէ մարդկային բնութիւնը փախուստ կու տայ: Նոյնպէս ալ մեզի կ'ըսուի.

Որովհետեւ Քրիստոս մեզի համար չարչարուեցաւ մարմինով, դուք ալ նոյն մտածումով *զինուեցէք*, որովհետեւ մարմինով չարչարուողը կը դադրի մեղանշելէ: (Ա.Պետրոսի 4.1, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Նախքան որ յառաջ երթանք, կ'ուզեմ կարեւոր կէտ մը նշել հոս: Սուտ կրօնը տառապանքի հետամուտ կ'ըլլայ՝ հաճեցնելու համար այն աստուածը, որուն կը ծառայէ: Ճշմարիտ Քրիստոնէութիւնը հետամուտ է Աստուծոյ հնազանդելու եւ այդ ընթացքին դէմ յանդիման կը գտնուի ինկած աշխարհի մը ընդդիմութեան, որ յաճախ պատճառ կ'ըլլայ տառապանքի: Հնազանդութիւնն է, որ կը հաճեցնէ զԱստուած, ոչ թէ դժուարութիւններու հետամուտ ըլլալը: Տառապանքը կրնայ ըլլալ ֆիզիքական կամ մտային. երկուքին ալ ցաւը շատ իրական է:

Պետրոս մեզի կը թելադրէ, որ *զինենք մենք մեզ*: Կրնանս պատկերացնել բանակ մը, որ պատերազմի կ'երթայ առանց օդանաւերու, նաւերու, հրասայլներու, զէնքերու, կապարներու եւ դանակներու... այսինքն՝ անզէն: Այդ խորհուրդը միայն ծիծաղելի կը թուի: Նոյնպէս ալ նոյնքան խենթութիւն է հաւատացեալի մը համար, որ պատրաստ չըլլայ տառապանքի, եւ սակայն շատեր այդպէս են:

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Անզէն հաւատացեալ մը կրնայ շատ դիւրութեամբ փախուստ տալ դժուարութենէն՝ ինքնապահպանման սիրոյն: Տիրոջ վախն է մեզ զինողը. անիկա մեզ հաստատ կը պահէ Աստուծոյ հնազանդելու մեր վճռակամութեան մէջ՝ ինչ տեսակի տառապանք ալ որ գայ անոր հետ:

Կան բազմաթիւ պատմութիւններ տառապանքի մասին, զորս կրնան բաժնեկցիլ եւ որոնք կրնան լեցնել ամբողջ գիրք մը: Պատմութիւններէն մէկը կապուած է ծառայութեան ճամբորդութեան մը հետ 1990–ականներու սկիզբը: Լիսան, մեր զաւակները եւ ես հեռաւոր շրջանի մը մէկ շատ փոքր գիւղին մէջ կը ծառայէինք եկեղեցիի մը, որ կորսնցուցած էր իր հովիւը, որ ձգած էր զիրենք աւելի մեծ եկեղեցի մը հովուելու համար:

Առաջին քանի մը ծառայութիւնները դժուար էին. համայնքին մեծ մասը անտարբեր էր, իսկ երիտասարդները ետեւը նստած կը կատակէին եւ կը խնդային: Սակայն երրորդ ծառայութեան ընթացքին ճեղքում մը եղաւ: Ազդեցութիւնը խորունկ էր. նոյնիսկ երիտասարդները սկսան կանուխ գալ եկեղեցի՝ առջեւի նստարանները գրաւելու համար: Ներկաներուն թիւը աճեցաւ եւ առաջարկուեցաւ, որ ծառայութիւնները շարունակենք քանի մը շաբաթ եւս: Ամէն երեկոյ կը հաւաքուէինք պզտիկ եկեղեցիի մը մէջ, ուր ունեցանք քանի մը փրկութիւններ եւ բոլորը վերաթնութեան մէջ էին:

Շատ աղօթելէ ետք առաջարկեցինք, որ մնանք հոն՝ քանի ամիս ալ որ տուէր եկեղեցին նոր հովիւի մը համար պատրաստելու գործը: Սակայն եկեղեցւոյ տնօրէն ժողովը ուրախ չէր իրենց չափուած–ծելուած կեանքին մէջ տեղի ունեցած խանգարումէն ինչպէս նաեւ եկեղեցիին գործերը վարելու մէջ իրենց ունեցած հակակշիռի խախտումէն: Յնցիչ էր, որ անոնց գանգատներէն մէկը այն էր, թէ՛ գոհ չէին, որ երիտասարդները առաջին շարքի նստարանները կը գրաւէին: Ունէին նաեւ ուրիշ նեղութիւններ, բայց նշուելու արժանի չեն: Կարճ ձեով ըսելով, անոնք վերջաւորութեան քուէարկութեամբ որոշեցին չընդունիլ մեր առաջարկը եւ խնդրեցին, որ երթանք:

Անոնց քուէարկութեան նոյն գիշերը եկեղեցիին յայտարարեցի, թէ յաջորդ գիշերը պիտի ըլլար մեր վերջին հանդիպումը: Յուսախաբութեան աղմուկ մը բարձրացաւ մարդոց մեծամասնութեան կողմէ. անիկա յուզիչ, շփոթի եւ անհանգիստ պահ մըն էր:

Յաջորդ օրը եկեղեցին հեռաձայն մը ստացաւ դժգոհ մարդէ մը, որուն կինը կու գար մեր ծառայութիւններուն, եւ ան սպառնաց ոմբահարել եկեղեցւոյ շէնքը մեր վերջին ծառայութեան ընթացքին: Ատիկա խնդուք պատճառեց ինձի մինչեւ որ ոստիկան մը հեռաձայնեց ինձի այդ մասին խօսելու համար:

Լսածներու չհաւատալով՝ պատասխանեցի. «Վստահաբար այդպիսի բան պիտի չպատահի»:

Ոստիկանը պատասխանեց. «Պարոն, ես կը ճանչնամ այս մարդը: Ան թմրեցուցիչի մեծ վաճառական մըն է եւ չեմ գարմանար եթէ այդպիսի բան մը ընէ երբ քանի մը գաւաթ խմած ըլլայ»:

Մտահոգուած, հարցուցի. «Կրնամ մեզի պաշտպանելու համար խումբ մը դրկել»:

Պատասխանը անհաւատալի էր. «Մեր ոստիկանատունը՝ որ ամէնէն մօտիկն է այս փոքր գիւղին, 35 մղոն հեռու է ձեզմէ: Իմ գործս կը վերջանայ երեկոյեան ժամը 6-ին, եւ ուրիշ ոչ ոք կրնայ ձեր քով գալ, քանի որ անձնակազմի պակաս ունինք»:

Հեռաձայնը զոցեցի՝ չհաւատալով լսածներուս, բայց ատկէ աւելի մեծապէս մտահոգ էի: Միտքս ինծի կ'ըսէր, որ անմիջապէս հաւաքենք մեր ապրանքները եւ հեռանանք այդ շրջանէն: Մենք կը մնայինք տան մը կահաւորումը ունեցող փոխադրակառքի մը մէջ (*թրէյլըր*), որ շարուած էր դաշտի մը մէջ՝ բոլորովին խոցելի յարձակումի մը դիմաց: Անպահով եւ մերժուած կը զգայինք: Ինչո՞ւ նոյնիսկ ներկայ ըլլայինք այդ գիշերուան հաւաքին: Տնօրէն ժողովը մերժած էր մեզ: Պէտք էր պարզապէս երթայինք այդ գիւղէն:

Գիտէի, որ խորհուրդներս անձնասէր էին. շատեր կային, որ մեծապէս ազդուած էին մեր երկու շաբթուայ ծառայութիւններէն, եւ եթէ ժամանակէն առաջ լքէինք զիրենք սպառնալիքի մը պատճառով, անոնք դարձեալ ղեկավարի մը կողմէ մերժուած պիտի զգային: Գիտէի, որ եթէ ձգէինք եւ երթայինք, զիջելու սովորութիւն մը պիտի մտցնէինք մեր կեանքին մէջ, որ հաւանաբար պիտի ազդէր մեր վրայ մեր մնացեալ կեանքին ընթացքին: Միտքս եկան Յիսուսի խօսքերը. «Վարձկան ծառան (*ան, որ միայն վարձք ստանալու համար կ'աշխատի*) [...] երբ կը տեսնէ, որ գայլը կու գայ, կը լքէ հօտը եւ կը փախչի» (Յովհաննէսի 10.12)¹:

Ժամերով աղօթեցինք: Շարունակ սրտիս մէջ լսեցի այն համարը, որ կ'ըսէ, թէ Աստուծոյ ներկայութեան մէջ մնացողները անոնք են, որոնք՝ «իրենց խոստումները կը պահեն նոյնիսկ երբ ատիկա ցաւ կը պատճառէ» (Սաղմոսներու 15.4)²: Վերջապէս խաղաղութիւն մը տիրեց մեր սիրտերուն մէջ եւ զգացինք, որ ապահով պիտի ըլլայինք:

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անկլիֆայտ Պայպլը, Քլասիք Էքիշըն* (AMPC) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Աղուոր ծառայութիւն մը ունեցանք այդ գիշեր: Ռումբ չպայթեցաւ, եւ մենք կրցանք պատշաճ կերպով հրաժեշտ առնել համայնքէն:

Մենք կ'ապրինք ինկած աշխարհի մը մէջ, որ հակառակ է եւ նոյնիսկ թշնամական Աստուծոյ ձեւերուն: Ատոր համար մեզի կ'ըսուի. «Աստուած ո՛չ միայն Քրիստոսի հաւատալու շնորհքը տուաւ ձեզի, այլ նաեւ՝ անոր համար չարչարուելու շնորհքը» (Փիլիպպեցիներուն 1.29): Ոչ միայն Պօղոս, այլեւ Պետրոս կը գրէ.

Որովհետեւ Աստուած ձեզ կանչեց բարիք գործելու համար, ճիշդ ինչպէս Քրիստոս չարչարուեցաւ ձեզի համար: Ան է ձեր օրինակը, եւ դուք պէտք է անոր քայլերուն հետեւիք: Ան բնաւ մեղք չգործեց, ոչ ալ մէկը խաբեց: Ան չփոխադարձեց երբ նախատուեցաւ, ոչ ալ սպառնաց վրէժ առնել երբ չարչարուեցաւ: Ան իր դատը ձգեց Աստուծոյ ձեռքերուն մէջ, որ միշտ արդարօրէն կը դատէ: (Ա.Պետրոսի 2.21–23)¹

Մենք փոխադարձելու չենք: Ընդհակառակը, պէտք է մեզի հանդէպ որեւէ անարդար վարմունք դնենք Աստուծոյ ձեռքերուն մէջ: Պէտք չէ անտեսենք զանիկա, բայց աղօթքով պէտք է զանիկա Աստուծոյ յանձնենք: Աստուած մեր վրէժը պիտի առնէ, բայց Իր ձեռով եւ ժամանակին:

Թագաւորութեան հերոսները մեծ յաղթանակներ ապրեցան իրենց հաւատքին միջոցաւ, բայց Աստուծոյ հանդէպ իրենց հնազանդութեան մէջ ոմանք ծաղրուեցան, շղթայուեցան, չարչարուեցան, բռնաբարուեցան, բանտարկուեցան, անապատին մէջ թափառեցան, քարայրներու մէջ ապրեցան եւ շարք մը ուրիշ դժուար եւ ցաւալի պայմաններու մէջ եղան: Ինչո՞ւ: Կ'ապրէին ինկած աշխարհի մը մէջ, որ թշնամի է Աստուծոյ Թագաւորութեան (տե՛ս Եբրայեցիներուն 11.36–39): Անոնք բոլորը հետեւեալ հասարակաց գիծը ունէին. իրենց սուրբ վախին պատճառով մերժեցին ետ կենալ հնազանդութենէն, նոյնիսկ եթէ ցաւ պատճառեց ատիկա: Բայց վստահ էին այն խոստումէն, որ կ'ըսէ՝ «Անոնք որ արցունքով կը սերմանեն՝ ցնծութեամբ պիտի հնձեն [...] Ցնծութեամբ պիտի վերադառնայ՝ իր ցորենի որաները բերելով» (Սաղմոսներու 126.5–6):

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Անձնականացնել

Հատուած- Տէրոջ վախին մէջ ամուր ապահովութիւն կայ, եւ անոր որդիները ապաւէն պիտի ունենան: (Առակներու 14.26)

Միտք- Տիրոջ վախն է մեզ զինողը. անիկա մեզ հաստատ կը պահէ Աստուծոյ հնազանդելու մեր վճռականութեան մէջ՝ ինչ տեսակի տառապանք ալ որ գայ անոր հետ:

Խոկալ- Արդեօք շրջանցած եմ Աստուծոյ Խօսքին հնազանդութիւնը ինքնապահպանման սիրոյն: Պատրաստ եմ զոջալու եւ Տիրոջ վախը ընդունելու: Պիտի ընտրեմ սիրել եւ հնազանդիլ նոյնիսկ եթէ ատիկա պատճառ պիտի ըլլայ, որ զին վճարեմ ֆինանսական, ընկերային կամ նոյնիսկ ֆիզիքական իմաստով:

Աղօթք- Սիրելի Երկնաւոր Հայր, ներէ ինձի ինքզինքս պաշտպանելու համար Քու Խօսքիդ հնազանդութիւնը մէկ կողմ դնելու սովորութեանս համար: Կ'անդրադառնամ, որ անիմաստուն ընտրութիւն մըն է ատիկա: Պաշտպանութիւնդ անսխալական եւ տեսական է. իմ պաշտպանութիւնս միայն ժամանակաւոր է: Այս պահէն անդին կ'ընտրեմ Տիրոջ վախը. թող անիկա ինձի տայ խորունկ վճռականութիւն մը Քեզի հնազանդելու՝ անկախ վճարուելիք գինէն: Շնորհակալ եմ այդ ոյժին համար, Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Զինուած եմ սուրբ վախով՝ հնազանդելու համար Աստուծոյ՝ նոյնիսկ եթէ ատիկա կը նշանակէ, որ աստոր պատճառով պիտի տառապիմ: Իմ անձս կը յանձնեմ Անոր՝ որ արդարօրէն կը դատէ:

Ուտքերուդ արահետները
քննէ՛, եւ բոլոր ճամբաներդ
թող հաստատուին:

– ԱՌԱԿՆԵՐՈՒ 4.26

27 | ԿԱՏԱՐՈՒԵՑԱԻ

Այս գլուխը սկսելու համար, հարցում մը հարցնեմ. Կարելի է, որ որեւէ ծրագիր իր ամբողջական կարողականութեան հասնի՝ առանց որ ամբողջապէս կատարուի: Պատասխանը բացայայտ «Ոչ» է: Մեր Տէրը ունի հսկայական ծրագիր մը, որ ընթացքի մէջ է եւ որ կը կեդրոնանայ թագաւորութիւն մը կառուցանելու վրայ: Ան մեզմէ իւրաքանչիւրիս տուած է պատասխանատուութիւնը ենթածրագիրներու, որոնք երբ աւարտին կատարուած պիտի ըլլայ Իր փառաւոր Թագաւորութեան գործը:

Այս ճշմարտութիւնը միտքիդ մէջ պահէ մինչ կ'անցնինք Աստուծոյ Խօսքին դիմաց դողալու վերջին երեսին: Ահա՛ նորէն թուենք առաջին չորսը, վերջինին հետ միասին.

1. Հնազանդիլ Աստուծոյ անմիջապէս
2. Հնազանդիլ Աստուծոյ նոյնիսկ եթէ անհասկնալի է
3. Հնազանդիլ Աստուծոյ նոյնիսկ երբ անձնական օգուտ մը չես տեսներ անոր մէջ
4. Հնազանդիլ Աստուծոյ նոյնիսկ երբ ցաւալի է
5. **Հնազանդիլ Աստուծոյ մինչեւ կատարում**

Իսրայէլի առաջին թագաւորը՝ Սաուլը, դասական օրինակն է մէկու մը, որ չէր դողար Աստուծոյ Խօսքին դիմաց: Ան դիւրաւ շեղեցաւ հնազանդութենէ երբ իրեն համար անհասկնալի էր պատուէրը, օգուտը բացայայտ չէր կամ չէր ծառայեր իր նպատակներուն: Անոր սուրբ վախ չունենալը յաճախ ցաւ կամ վնաս հասցուց ուրիշներու, ինչ որ է պարագան բոլոր այդպիսի վարմունքներուն:

Բայց ան միշտ այդպէս չէր: Նախքան թագադրուիլը, ան համեստ, աստուածավախ երիտասարդ մըն էր. իրարու հետ մօտիկ կապ ունեցող երկու արժէքներ: Երբ Սամուէլ՝ անուանի մարգարէն գտաւ զինք, ան անմիջապէս ըսաւ. «Ինչո՞ւ զիս նկատի առիր: Ես Իսրայէլի

ամէնէն փոքր տոհմէն եմ, եւ ընտանիքս մեր տոհմի ամէնէն անկարեւոր ընտանիքներէն է» (Ա.Թագաւորներուն 9.21, հեղինակին բառերով): Յետագային, ամբողջ Իսրայէլը հաւաքուեցաւ գիտնալու, թէ իրենց առաջին թագաւորը ո՞վ պիտի ըլլար: Երկար գործընթացէ մը ետք, Աստուած ընտրեց Սաուղը, բայց երբ ղեկավարները զինք կանչեցին, ան մէջտեղ չկար. պահուրտած էր: Փափաք չունէր ճանչցուելու (Ա.Թագաւորներուն 10.20–24):

Սուրբ վախը իր գանձը չէր: Ինչպէս Սողոմոնի պարագային, ան վերջաւորութեան հրաժարեցաւ անկէ երբ յաջողութիւն, հանրաժանօթութիւն եւ ղեկավարութեան օգուտները տեսաւ: Մեծամասնութեան պարագային, ներառեալ Սաուղ Թագաւորը, սուրբ վախը կորսնցնելու սկզբնական նշանները բացայայտ չեն ըլլար: Կը սկսի պզտիկ բաներու մէջ ներքին յանդիմանութիւնները անտեսելով, եւ ասոր իբրեւ արդիւնք մեր խիղճը աւելի եւ աւելի կ'անզգայանայ: Վերջաւորութեան երբ աւելի նշանակալից հարցեր կը դիմագրաւենք, գիտակից չենք ըլլար, որ անհնազանդութեան սովորութիւն մը զարգացուցած ենք:

Այդ էր պարագան Սաուղ Թագաւորի: Սուրբ վախը կորսնցուցած ըլլալու նշանները սկսան մէջտեղ գալ (տես Ա.Թագաւորներուն 13.5–14), բայց խաբուսիկ բանը այն էր, որ ան մեծ յաջողութիւններ կ'ունենար օրին (տես Ա.Թագաւորներուն 14.47):

Ժամանակ մը ետք, ան հետեւեալ պատուէրը ստացաւ. «Գնա՛ եւ Ամաղէկը զարկ: Անոր ամբողջ ունեցածը նզովէ: Մի՛ խնայեր անոր, հապա մեռցնոր այր մարդիկն ու կիները, երախաները եւ ծծկերները, եզները, ոչխարները, ուղտերն ու էշերը» (Ա.Թագաւորներուն 15.3): Տէրը պատրաստ էր վրէժ լուծելու այդ չար ազգէն:

Սաուղ ոտքի հանեց 210 հազար հաշուող զօրք մը: Ինք եւ իր մարդիկը սպաննեցին ամէն մարդ եւ անասուն, բացի Ամաղէկի թագաւորէն՝ Ագագէն, եւ լաւագոյն անասուններէն (տես Ա.Թագաւորներուն 15.7–9):

Մտածենք այդ մասին: Եթէ Սաուղ այդքան մեծ բանակ մը հանեց անոնց դէմ, ուրեմն ամաղէկացիները պէտք էր ըլլային առնուազն քառորդ միլիոն հոգի: Ուստի անոնք սպաննեցին 249,999 հոգի: Թագաւորը կատարեց իրեն ըսուածին 99 տոկոսը, բայց տես Աստուծոյ կեցուածքը անոր *գրեթէ* ամբողջական հնազանդութեան նկատմամբ:

«Կը զղջամ որ Սաուղը թագաւոր նշանակեցի, քանի որ ինձմէ հեռացաւ ու իմ հրամաններս *չգործադրեց*»: (Ա.Թագաւորներուն 15.11, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Սամուէլ այդ պատգամը թագաւորին կը փոխանցէ եւ բացայայտօրէն անոր վարմունքը *ըմբոստութիւն* կը կոչէ (տես

Ա.Թագաւորներուն 15.23): Կասկած չկայ բնաւ. Սաւուղ մեղք գործեց: Պահ մը կանգ առնենք եւ մեղքի մասին խօսինք: Յովհաննէս Առաքեալ կ'ըսէ, թէ մեղքը անօրէնութիւն է (տես Ա.Յովհաննէսի 3.4): Անոր մեղքի սահմանումը հետեւեալն է. *մեղքը չենթարկուիլ է Աստուծոյ իշխանութեան*: Ա'յս անկիւնէն նայէ հարցին. պարտէզին մէջ Ադամ անկողին չմտաւ պոռնիկի մը հետ, դրամատուն մը չկողոպտեց կամ մէկը չսպաննեց: Ան պարզապէս անհնազանդ եղաւ Աստուծոյ ըսածին: Նոյնպէս ալ Սաւուղ ընտրեց *ամբողջապէս* չհնազանդիլ այն բանին, որ Աստուած իրեն ըսած էր, որ ըներ:

Աւելի խորունկը սուգուինք: Երբ Սաւուղի ըսուեցաւ, որ պատերազմի ելլէ, ան իր ոտքը չկոխեց եւ ըսաւ. «Անկարելի է: Ես այդպիսի բան պիտի չընեմ»: Մարդոց մեծ մասը ատիկա ըմբոստութիւն պիտի համարէր: Ան հրամանը չարհամարիեց եւ ինքզինք չզբաղցուց ուրիշ անձնական հարցերով: Եթէ ատիկա ըլլար պարագան, մարդոց մեծ մասը պիտի ըսէր, թէ ան սխալ դատողութիւն մը ըրաւ՝ հնազանդութիւնը իր առաջնահերթութիւնը չընելով: Բայց քիչեր «ըմբոստութիւն» բառը պիտի գործածէին:

Նոյնպէս ալ մարդոց մեծ մասը պիտի հաստատէր, թէ ան լաւ ըրաւ պարտականութեան 99.99 տոկոսը կատարելով, բայց շատ քիչեր անոր ըրածները ըմբոստութիւն պիտի համարէին: Եթէ մենք ըլլայինք Սաւուղին տեղը եւ այդ յանդիմանութիւնը ստանայինք, մեզմէ քանիններ պիտի բողոքէին, ըսելով. «Ինչպէս կ'ըլլայ, տրամաբանական եղիր: Ինչո՞ւ այդքան կը կեդրոնանաս այն պզտիկ բաժինին վրայ, որ չըրի, փոխանակ գնահատելու այն բոլորը, որ ըրի»: Ատոր լոյսին տակ, կրնանք եզրակացնել, թէ՛ *գրեթէ ամբողջական* հնազանդութիւնը բնաւ հնազանդութիւն չէ:

Հիմա խօսինք անոր մասին, թէ ինչո՞ւ այդպիսի խիստ բառեր գործածուեցան: Առաջին՝ այդ օրերուն եթէ ըլլայիր թագաւոր մը, որ ուրիշ երկիր մը գրաւած էր, այդ երկրին թագաւորը ողջ-ողջ գերի առնելը համապատասխան էր պալատիդ մէջ կենդանի յաղթանշան մը ունենալուդ: Անկա մնայուն յիշեցում մըն էր իբրեւ ղեկավար քու գերադասութեանդ վերաբերեալ, ոչ միայն քու ես-իդ համար, այլեւ բոլոր անոնց, որոնք պալատդ պիտի մտնէին:

Երկրորդ՝ ինչո՞ւ խնայել լաւագոյն անասունները: Նախքան պատասխանելը, քիչ մը ավելի բարդացնենք հարցը: Սաւուղ արտօնեց, որ լաւագոյն անասունները խնայուին՝ զանոնք Տիրոջ նուիրելու նպատակով: Նկատի առ անոր տուած պատասխանը մարգարէին. «“Ճիշդ է, որ բանակը խնայեց ոչխարներուն, այծերուն եւ արջառին լաւագոյններուն”, ըսաւ Սաւուղ: “Բայց անոնք Տիրոջ՝ քու Աստուծոյդ պիտի զոհեն զանոնք”» (տես Ա.Թագաւորներուն 15.15): Ինչո՞ւ այդպիսի բան մը ըրաւ: Արդեօք ատիկա ըրաւ իր ժողովուրդին մօտ

շնորհք գտնելու համար: Կը խօսինք ազգի մը մասին, որ կ'ընդունէր Տէր Աստուածը: Պատկերացուր զինուորներուն, քահանաներուն եւ ժողովուրդին տեսակէտը. անոնք շատ հաւանաբար մէկը միսին կ'ըսէին. «Ո՛րքան բարեպաշտ թագաւոր մը ունինք: Ան միշտ Տէրը առաջին կարգի կը դնէ. լաագոյնը կու տայ Աստուծոյ»: Ժողովուրդը չէր գիտեր, որ բուն հրամանը բացարձակապէս ամէն բան կործանելը եւ սպաննելն էր: Հիմնականօրէն Սաւուղ իր համբաւը կ'ապահովէր: Անոր արարքներուն ետին գտնուող շարժառիթը մարդոց վախն էր: Սաւուղ անապահով էր:

Մեր այսօրուայ աշխարհին մէջ շատեր կը կարեկցին անոնց հետ, որոնք անապահովութեան հարցը ունին: Սակայն անապահովութեան ետին կը գտնուի ընդունուելու, սիրուելու կամ յարգուելու մեր փափաքը, նոյնիսկ անհնազանդութեան գնով: Մենք չենք անդրադառնար, թէ որքան ընդունուած եւ սիրուած ենք մեր Ստեղծիչին կողմէ: Անապահովութիւնը պէտք է կոչուի ճիշդ ինչ որ է. վտանգաւոր ծուղակ մը:

Սաւուղ հրամանը ամբողջական կերպով չկատարեց, քանի որ սուրբ վախ չունէր: Վերադառնանք Յիսուսի օրինակին: Ան կը դիմագրաւէր մերժում, ամօթ, ատելութիւն, կարծր ընդդիմութիւն, ֆիզիքական ծեծեր եւ սարսափելի խաչելութիւն: Երբ տաճարի պահակները եկան զինք ձերբակալելու, Անոր աշակերտները փորձեցին դէմ կենալ անոնց եւ պաշտպանել Յիսուսը, սակայն Ան ըսաւ.

«Կը կարծես, թէ չեմ կրնար Հօրս աղաչել, որ հիմա անելի քան տասներկու գունդ հրեշտակ դրկէ ինձի: Սակայն ինչպէս պիտի իրականանան Սուրբ Գիրքերուն մէջ գրուածները, թէ այսպէս պէտք է ըլլայ»: (Մատթէոսի 26.53–54)

Մինչեւ կատարում հասցնող հնազանդութիւնը շատ կարեւոր էր Յիսուսի համար:

Երկրորդական վարժարան յաճախած ատենս եւ հաւատացեալ չէի, բայց մեր հանդերձարանը կար որմազդ մը, որ ուշադրութիւնս գրաւած էր: Ամէն երեկոյ կը տեսնէի զանիկա *պասքէթպոլի* փորձէն ետք: Կը պատկերէր մարզիկ մը՝ գլուխը կախ նստած եւ կ'ըսէր. «Կը հրաժարիմ»: Անոր տակը կար Յիսուսի մէկ պատկերը խաչին վրայ, որ կ'ըսէր. «Ես չհրաժարեցայ»:

Ատիկա անշնջելի տպաւորութիւն մը ձգած էր վրաս նոյնիսկ որ անհաւատ էի: Հիմա որ կը հասկնամ, որ Յիսուս կրնար խուսափիլ այդ ահաւոր վերաբերումէն եւ վայրագ մահէն, բայց ատով հանդերձ ընտրեց հնազանդութեամբ շարունակել մինչեւ որ վերջապէս ըսաւ՝ «Կատարուեցաւ», Անոր կատարածը շատ անելի արժէք կը ստանայ

ինձի համար: Ան մեր առջեւ օրինակ մը դրաւ կատարելապէս հնազանդելու. աւարտելու այն ինչ որ Աստուած կը վստահի մեզի:

Հիմա կրնանք անել լաւ հասկնալ աշակերտներուն ուղղուած Անոր թելադրանքները երբ խնդրեցին, որ իրենց հաւատքը անելցնէր.

«Երբ ընէք ձեզի հրամայուած բոլոր բաները՝ ըսէք. “Մենք անպէտ ծառաներ ենք. ըրինք ինչ որ պարտական էինք ընել”»:
(Ղուկասի 17.10, շեշտադրումը՝ մեր կողմէ)

«Բոլոր բաները» եզրը բոլորովին նոր իմաստ մը կը ստանայ: Թող միշտ հնազանդինք մինչեւ կատարում:

Անձնականացնել

Հատուած– Բնաւ մի՛ հրաժարիք [...] Ձեր աչքերը պահեցէք Յիսուսի վրայ, որ թէ՛ սկսաւ եւ թէ՛ աւարտեց այս մրցումը, որուն մէջ կը մրցինք այժմ: Ուսումնասիրեցէք, թէ ինչպէս ըրաւ ատիկա: Որովհետեւ ան իր աչքերը բնաւ չհանեց իր հասնելիք տեղէն՝ այն բերկրալի աւարտէն, ուր պիտի հասնէր Աստուծոյ մէջ եւ Աստուծոյ հետ, ան կրցաւ տանիլ ճամբուն ընթացքին իրեն հանդիպած ամէն բան [...] Երբ կը տեսնէք, թէ կը յոգնիք կամ նուազ խանդավառ կ'ըլլաք ձեր հաւատքին մէջ, անգամ մը եւս անցէք այդ պատմութեան վրայէն՝ կէտ առ կէտ, այդ թշնամական վարմունքի երկար լիթանիայէն [«շարքէն»՝ այս պարունակին մէջ–*Թարգմանիչ*] զոր հերկեց–անցաւ ինք: Ատիկա *ապրիմալիս* պիտի թափէ ձեր շունչին մէջ: (Եբրայեցիներուն 12.2–3)¹

Միտք– *Գրեթէ* ամբողջական հնազանդութիւնը բնաւ հնազանդութիւն չէ: Յիսուս մեր առջեւ օրինակ մը դրաւ կատարելապէս հնազանդելու. աւարտելու այն ինչ որ Աստուած կը վստահի մեզի:

Խոկալ– Պատահած է, որ սկսիմ Աստուծոյ Խօսքին հնազանդիլ եւ ապա արտօնեմ, որ շեղումները, հաճոյքները, ընդդիմութիւնը, ուրիշներու անհաւանութիւնը կամ որեւէ այլ հակառակութիւն պատճառ դառնայ, որ դադրիմ եւ չաւարտեմ: Ինչպէս կարելի է փոխել ատիկա:

Աղօթք– Սիրելի Երկնաւոր Հայր, կը խնդրեմ, որ ներես ինձի, որ սկսայ հնազանդիլ ինձի ըսածներուդ, բայց չաւարտեցի գործը՝ զանիկա անտեսելով, կամ տեսնելէ ետք, որ ինձի օգուտ մը չի բերեր՝ միտքս փոխելով: Կը զղջամ սուրբ վախը չունենալուս համար եւ ներում կը խնդրեմ Քեզմէ: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն:

Դաւանութիւն– Կ'ընտրեմ հնազանդիլ Աստուծոյ Խօսքին մինչեւ կատարում:

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տը Մասէճ* (MSG) տարբերակէն

Երբ մարդիկ այլեւս չեն վախնար
Աստուծմէ, կը խախտեն Անոր
օրէնքները առանց վարանումի:
Հետեւանքներու վախը արգելք
մը չ'ըլլար անոնց երբ
Աստուծոյ վախը չկայ:

– ԱՅՏԸՆ ՈՒԻԼՍԸՆ ԹՈՋԸՐ

28 | ԻՆՉՊԷՍ ԿԱՐԾՐԱՑՆԵԼ ԽԻՂԾԸ

Ինչպէս ըսինք նախորդ գլուխին մէջ, սուրբ վախը կորսնցնելու առաջին նշանները բացայայտ չեն ըլլար. այնքան թաքուն կ'ըլլան, որ պէտք է քիչ մը աւելի մօտենանք եւ սերտենք այդ նիւթը: Բնաւ պատահած է, որ ներքին զգուշացում մը ունենաս երբ առջեւդ կ'ելլէ կասկածելի բան մը ընելու առիթ մը: Շատերս գիտենք, որ անիկա մեր *խիղճն* է, որ կը պաշտպանէ մեզ: Սակայն ինչ որ շատեր չեն գիտեր այն է, որ մեր խիղճին յստակութիւնը եւ զօրութիւնը կրնան փոփոխութեան ենթարկուիլ:

Մեր խիղճը պարգեւ մըն է Աստուծոյ, որ բնաւ թեթեւի պէտք չէ առնուի: Անիկա անբաժան մէկ մասն է մեր *սիրտին*. անոր զգայնութիւնը կը զօրանայ սուրբ վախով, նոյնպէս ալ կը բթանայ անոր բացակայութեամբ: Աստուածաշունչը մեզ կը զգուշացնէ. «Պահէ՛ *սիրտդ* ամբողջ զգուշութեամբ, քանի որ կեանքի աղբիւրները անկէ են» (Առակներու 4.23, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Երբ երեսունական տարիքի սկիզբներն էի, հանրաճանօթ քարոզիչ մը ինծի ճաշի հրաւիրեց: Ճաշի ընթացքին հարցուց. «Ճոն, ինչ կրնամ ընել, որ չիյնամ, ինչպէս շատ մը ուրիշ ղեկավարներու պատահած է»:

Քիչ մնաց կերակուրը կոկորդս պիտի մնար: Ինչո՞ւ այդպիսի հարցում մը պիտի հարցնէր ինծի: Ես երիտասարդ էի, իսկ ինք ծառայութեան մէջ էր աւելի երկար ժամանակ քան իմ փրկուիլս:

Բայց փոխանակ ձգձգելու, դէպի ներս կեդրոնացայ եւ լուսորէն Սուրբ Հոգիին հարցուցի. *Սուրբ Հոգի, ինչ պատասխանեմ իրեն:*

Գրեթէ անմիջապէս լսեցի. *Իրեն ըսէ՛, որ իր խիղճը պահէ իբրեւ իր ամէնէն թանկարժէք ստացուածքը:*

Ըսի իրեն ինչ որ լսեցի, եւ ապա յանկարծ բառեր սկսան յորդիլ շունչէս եւ այս ձեւի բան մը ըսի. «Քու առջեւդ պիտի ելլեն մեծ առիթներ, բայց ներսիդիդ պիտի գիտնաս, որ անոնք անպարկեշտ բաներ են, ապահով չեն, կասկածելի են կամ կրնան ուրիշներու վնաս հասցնել: Մտիկ ըրէ քու խիղճիդ. մի՛ անտեսեր անոր զգուշացումը: Եթէ անտեսես զանիկա, խախտած պիտի ըլլաս Աստուծոյ հանդէպ զգայնութիւնդ»:

Յաջորդող օրերուն յայտնաբերեցի, թէ «խիղճ» բառը յաճախ կ'երեւի Սուրբ Գիրքերուն մէջ. բան մը, որ ատկէ առաջ չէի նկատած: Անիկա շուրջ երեսուն անգամ նշուած է Նոր Կտակարանին մէջ միայն: Պօղոս Տիմոթէոսին գրեց.

Հաւատքդ եւ *խիղճդ* մաքուր պահելով: Շատեր իրենց *խիղճին* չանսալով՝ իրենց հաւատքը կործանեցին: (Ա.Տիմոթէոսի 1.19, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Հաւատքը կործանելը պզտիկ հարց մը չէ:

Այդ տարեց ծառայողին հետ ունեցած ճաշի հանդիպումս աչքերս բացաւ, որ տեսնեմ Պօղոսի ըսածին լրջութիւնը: Անիկա հաստատեց, թէ ինչն է շատեր լաւ կերպով չեն վերջացներ:

Երբ Աստուածաշունչը մեզ կը խրատէ, որ մեր խիղճը մաքուր «պահենք», ատիկա կը նշանակէ, թէ անիկա սկզբնականօրէն լաւ վիճակի մէջ է: Յիսուսի արիւնը կը մաքրէ եւ կը մաքրագործէ մեր խիղճը (տես Ա.Տիմոթէոսի 3.9: Եբրայեցիներուն 9.9,14): Ատիկա նոր ծնունդի մեծագոյն օգուտներէն մէկն է: Երեսմիա մարգարէ կ'ընէ հաստատում մը մեր խիղճին մասին, որ յաճախ սխալ ձեւով կը կիրարկուի: Ան կը հռչակէ. «Սիրտը ամէն բանէ աւելի խաբեբայ եւ անուղղայ է, զայն ո՞վ կրնայ ճանչնալ» (17.9): Ան չի խօսիր վերստին ծնունդ ունեցողներուն մասին, որոնք նոր բնութիւն ստացած են՝ վերստեղծուած ըլլալով Յիսուսի պատկերին նմանութեամբ: Հին Կտակարանի մարդիկը նոր սիրտ չունէին: Բայց Աստուած իրենց խոստացաւ. «Ձեզի նոր սիրտ պիտի տամ, եւ ձեր ներսը նոր հոգի պիտի դնեմ» (Եզեկիէլի 36.26): Ատիկա պիտի ըլլար երբ Յիսուս պիտի փրկէր մեր բնութիւնը եւ Իրը տար մեզի:

Քրիստոսով բոլորովին նոր մարդ ըլլալու հրաշքին շնորհիւ, մենք վստահելի խիղճ մը ունինք: Մարտահրաւերը զանիկա մաքուր պահելն է: Ուստի հիմա պէտք է հարցնենք, թէ ինչպէս կը պղծենք զանիկա: Ամբողջ փտածութիւնը մէկ վայրկեանի մէջ չի պատահիր. այլ՝ ընդհանրապէս անիկա կը սկսի պզտիկ հարցերով եւ վերջաւորութեան, եթէ անոր խնդիրը չլուծուի, կ'աւարտի կործանումով: Յակոբոս կը գրէ.

Այդ պատուիրանները լսելով մի՛ գոհանաք, այլ՝ *կատարեցէ՛ք զանոնք*. այլապէս դուք ձեզ խաբած կ'ըլլաք: (Յակոբոսի 1.22, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Դարձեալ դէմ յանդիման կը գտնուինք հնազանդութեան գաղափարին հետ: Մենք ամբողջական ձեւով խօսեցանք այն իրականութեան մասին, թէ՛ սուրբ վախի ապացոյցը անմիջական եւ ամբողջական հնազանդութիւնն է, նոյնիսկ եթէ պատուէրը անհասկնալի է մեզի համար, անկէ բացայայտ օգուտ մը չունինք կամ ցաւ կը պատճառէ: Հնազանդութեամբ քալող անձը չի կրնար ինքզինք խաբել:

Պահ մը կանգ առնենք եւ վստահ ըլլանք, որ վերը ըստածին ազդեցութիւնը չի վրիպիր մեզմէ: Վստահաբար կրնաս խաբել ծանօթներդ՝ նոյնիսկ բարեկամներդ եւ ընտանիքդ, բայց բոլորովին ուրիշ բան է ինքզինքդ խաբելը: Հիմնականօրէն, երբ անհնազանդ կը գտնուինք, *մենք մեզ խաբած կ'ըլլանք*: Կը տկարացնենք ճշմարտութեան պաշտպանութիւնը, եւ բարոյական որոշումներու մեր գիտակցութիւնը կը վտանգուի: Աւելի նուազ գիտակցութիւն կ'ունենանք, թէ վտանգի ճամբուն մէջն ենք:

Տամ ենթադրական օրինակ մը, թէ ինչպէս կ'ըլլայ գործընթացը: Բնաւ պատահմ՞ է, որ զրպարտական խօսք մը խօսիս մէկու մը մասին: Այդ պահուն, որ ատիկա կ'ընես, թերեւս դանակ մը կը զգաս, որ կը մխրճուի փորիդ մէջ. ատիկա խիղճիդ ձայնն է: Լաւ կ'ըլլայ, որ մտիկ ընես անոր, զղջաս եւ անմիջապէս սրբագրես խօսածդ: Սակայն շատ յաճախ մենք կ'արդարացնենք մեր վարմունքը եւ ատկէ ետք տրամաբանական պատճառաբանութիւն կու տանք, ըսելով. *Ըսածս ճշգրիտ է*: Դժբախտաբար, մեր սխալ պատճառաբանութիւնը կը յաղթէ եւ մենք հաստատ կը մնանք մեր խօսքին վրայ՝ անտեսելով ներքին զգուշացումը: Այդ պահուն արդէն սկսած կ'ըլլայ պղծուելու գործընթացը. մեր խիղճին զգայնութիւնը կը տկարանայ:

Յաջորդ անգամ, որ մէկու մը դէմ կը խօսինք, կը զգանք, որ դանակ մը զարնուեցաւ մեր փորին, եւ մեր ներսիդին ամուր կամօն մը կը զգանք: Անգամ մը եւս մեր խիղճը կը խօսի, բայց այս անգամ անելի նուազ ճանաչելի ձայնով մը: Հիմա արդէն ներքին տագնապը նոյնքան սաստիկ չէ. դիւրին է անտեսել զգուշացումը եւ արդարացնել մեր խօսքերը: Սակայն տակաւին անելի ապականած կ'ըլլանք մեր սիրտը եւ մեր խիղճին զգայնութիւնը անելի եւս կը պակսի:

Երբ անգամ մը եւս մէկու մը դէմ կը խօսինք, այլեւ ամուր կամօն մը չենք զգար: Պարզապէս ծակծկոց մը կը զգանք. հազիւ ճանաչելի: Շատ պէտք ալ չենք զգար մենք մեզի համոզելու տրամաբանական պատճառաբանութիւններով, որովհետեւ մեր խիղճին ձայնը շատ մեղմ է: Անելի դիւրին է արդարացնել մեր վարմունքը: Մեր խիղճին զգայնութիւնը անելի եւս կը պակսի:

Վերջապէս որեւէ մէկ բան չենք զգար: Մեր խիղճը կարծրացած կ'ըլլայ: Այլեւս կուրնալէն անդին անցած կ'ըլլանք եւ խափանած կ'ըլլանք զանազանութեան ամէն կարողութիւն: Այդ հանգրուանին մենք մեր բարոյական ուղղութիւնը կորսնցուցած կ'ըլլանք եւ մեր հաւատքի կործանումը վերահաս է: Հիմնականօրէն, մենք մեզ խաբած կ'ըլլանք. ինքնախաբէութեան մէջ կ'ըլլանք:

Այդ բոլորը կարելի էր կանխել պարզ զոջումով. միտքի եւ սիրտի ամբողջական փոփոխութեամբ: Ատիկա կը պատահի երբ կը ճանչնանք եւ կ'ընդունինք, որ մեր իմաստութիւնը անպտուղ է եւ ամբօրէն կը կառչինք Աստուծոյ իմաստութեան: «Իր յանցանքները ծածկողը պիտի չյաջողի, սակայն զանոնք խոստովանողն ու լքողը գթութիւն պիտի գտնէ» (Առակներու 28.13):

Գուրջ եւ վերականգնումը կրնան պատահիլ գործընթացին որեւէ հանգրուանին մէջ, բայց սուրբ վախի պակասը կ'ուշացնէ մեր ընդառաջումը: Մենք վտանգի մէջ կը տանինք մենք մեզ, որովհետեւ մեր սիրտը անելի եւ անելի անզգայացած կը դառնայ մեր խիղճի յանդիմանութեան դիմաց: Իմաստուն մարդը միշտ արագ կ'ըլլայ իր խիղճի զգուշացումներուն զոջումով ընդառաջելու մէջ. կը գիտնայ, որ յետաձգելը վտանգաւոր է:

Կան շատեր՝ թէ Աստուածաշունչին մէջ եւ թէ մեր օրերուն, որոնք յետաձգած են իրենց խիղճին մտիկ ընելը: Ատիկա կարելի է նմանցնել ռուսական *ռուլէթ* խաղալուն: Կրնաս խուսափիլ կործանումէ, բայց ինչպէս կը գիտնաս, թէ երբ դադրած ես զգալէ: Չկայ ձայն մը, որ կը զգուշացնէ. «Եթէ մէկ անգամ եւս անտեսես զիս, պիտի լռեմ»: Պօղոս ցաւով կը գրէ:

Բայց Սուրբ Հոգին յայտնապէս կ'ըսէ, թէ վերջին ժամանակներուն շատեր պիտի լքեն հաւատքը, ականջ տալով մոլորեցուցիչ չար ոգիներու եւ դեւերու ուսուցումներուն, որոնք կը քարոզուին կեղծաւոր եւ ստաբան մարդոց կողմէ, որոնց *խիղճը Սաբանային կնիքով խարանուած է* [«որոնց *խիղճը խանձուած է փառ երկաթով* [կամ *կարծրացած է*]], ըստ անգլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* (NKJV) տարբերակէն]: (Ա.Տիմոթէոսի 4.1-2, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Երբ մարդուն մորթը կը խառանուի կամ կը խանձուի տաք երկաթով, կը կորսնցնէ ամէն զգացում: Նոյնը կը պատահի նաեւ մեր խիղճին: Երբ ատիկա պատահի, մենք մեզ կը ներկայացնենք մեր ճիշդ ինքնութեան հակառակ ձեւով՝ առանց որեւէ ներքին դատապարտութեան կամ յանցաւորի զգացումի: Ատիկա պատահեցաւ Անանիայի, Սափիրայի, Սաւուղ Թագաւորի եւ շատ ուրիշներու հետ:

Այդ խանձուելուն կամ կարծրացումին ուրիշ մէկ հետեւանքը այն է, որ անիկա բաներ ներսը կը պահէ: Երբ կը խանձես միսը, անիկա կ'արգիլէ, որ մէջի հիւթերը դուրս փախչին: Պօղոս կը գրէ. «Քրիստոսով ճշմարիտը կ'ըսեմ, առանց ստելու, եւ *խիղճս* ալ Սուրբ Հոգիով կը վկայէ» (Հռոմայեցիներուն 9.1, շեշտադրումը՝ մեր կողմէ): Եթէ հաւատացեալ մը խանձած կամ կարծրացուցած է իր խիղճը, այլեւս չի կրնար հաղորդակցիլ Սուրբ Հոգիին հետ: Անոր վկայութիւնը չի կրնար մեր շունչին հասնիլ, ճիշդ ինչպէս միսին հիւթերը չեն կրնար միսէն դուրս ելլել: Անոնք գրկուած կ'ըլլան կեանքի մէջ իրենց ուղղութիւն տուող իրենց ներքին սարքէն կամ համակարգէն: Անոնց ճամբան կ'երթայ դէպի կործանում:

Փակելու համար, կարդանք Պօղոսի շարք մը հաստատումներէն քանի մը հատը. «Եղբայրներ, մինչեւ այսօր եւ կատարելապէս հանդարտ խիղճով ապրած եմ Աստուծոյ առջեւ» (Գործերը 23.1): Դարձեալ, «Ատոր համար ալ կ'աշխատիմ, որ թէ Աստուծոյ եւ թէ մարդոց հանդէպ խիղճս միշտ մաքուր ըլլայ» (Գործերը 24.16): Առ ի եզրակացութիւն, ժրաջանօրէն պահպանենք մեր սիրտը:

Անձնականացնել

Հատուած- Ուստի անկեղծ սրտով եւ վստահութեամբ լեցուն հաւատքով մօտենանք Աստուծոյ, մեր սիրտերը մաքրած՝ խղճմտանքը ծանրացնող յանցանքներէն եւ մեր մարմինները մաքուր ջուրով լրացած: (Եբրայեցիներուն 10.22)

Միտք- Մեր խիղճին յստակութիւնը եւ զօրութիւնը կրնան փոփոխութեան ենթարկուիլ: Մեր զգայնութիւնը կը զօրանայ սուրբ վախով, նոյնպէս ալ կը բթանայ անոր բացակայութեամբ:

Խոկալ- Մեր խիղճերը կը մաքրագործուին Յիսուս Քրիստոսի արինով: Ինչ հոգեւոր վարժութիւն կրնամ որդեգրել, որպէսզի խիղճս մաքուր պահեմ:

Աղօթք- Սիրելի Երկնաւոր Հայր, ներողութիւն կը խնդրեմ այն ժամանակներուն համար երբ ես անտեսած եմ խիղճս եւ անոր հակառակ քալած: Ներէ՛ ինծի ժրաջանօրէն խիղճս չպաշտպանելուս համար: Կը զղջամ եւ ներողութիւն կը խնդրեմ: Կը խնդրեմ, որ մաքրես զիս Յիսուսի արինով: Վերականգնէ՛ մաքուր խիղճ մը մէջս, որ կակուղ եւ զգայուն ըլլայ Քու ձայնիդ եւ առաջնորդութեանդ հանդէպ: Թող արագ ըլլամ ամէն բանի մէջ Քեզի հնազանդելու մէջ: Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Պիտի պահպանեմ սիրտս ժրաջանօրէն եւ զգայուն պիտի ըլլամ խիղճիս առաջնորդութեան եւ ձայնին:

ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

Կը նախընտրեմ գին վճարել
Աստուծոյ ձայնը անձնապէս
լսելու համար՝ անկախ
անկէ թէ որքան դժուար
կրնան ըլլալ պայմանները,
քան համակերպիլ Իր
պատգամները միշտ ուրիշէ
մը լսելուն:

– ՃՕՅ ՏՈՍԸՆ

29 | ՀՈՆ, ՈՒՐ ՄՏԵՐՄ ՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍԿՍԻ

Մինչ սուրբ վախը կ'աճի մեր մէջ Աստուծոյ փառքին վերաբերեալ մեր ըմբռնումին աճման հետ միասին, անիկա կը մաքրագործէ մեր շարժառիթները, կ'ազատէ մեզ մարդոց վախէն եւ ճշմարիտ սրբութիւն կը բերէ մեր կեանքերուն մէջ: Սուրբ վախի դրսեւորումը անմիջական եւ կատարեալ հնազանդութիւնն է Աստուծոյ՝ անկախ անկէ, որ մենք պատճառ մը կը գտնենք անոր մէջ կամ ոչ, օգուտ մը կը քաղենք կամ ոչ, կամ թէ իրքան ցաւալի է անիկա:

Այդ գիտութիւնը ունենալով, հիմա կրնանք խօսիլ այդ եզակի պարգեւին օգուտներուն մասին, եւ այս բաժինին մէջ պիտի կեդրոնանանք անկասկածօրէն ամէնէն մեծ օգուտին վրայ, որն է՝ Աստուծոյ հետ մտերմութիւնը:

Մտերիմ բառը, անգլերէնով՝ ինթիմէթ, կու գայ երկու լատիներէն բառերէ. ինթուս, որ կը նշանակէ՝ «մէջը» եւ ինթիմուս, որ կը նշանակէ՝ «շատ գաղտնի»: Երկուքը միացնելով կ'ունենանք՝ «ամէնէն խորին գաղտնիքները»: Ատիկա շատ լաւ նկարագրութիւն մըն է *մտերմութեան*. բառ մը, որ կը գործածուի նկարագրելու համար սիրոյ կապ մը երկու մօտիկ բարեկամներու միջեւ՝ շատ ասելի խորունկ մակարդակի վրայ քան յարաբերութիւն մը ծանօթի մը հետ, որ կը սահմանուի իբրեւ մէկը, որուն նոր հանդիպած ես եւ որոշ չափով գիտես զինք, բայց ոչ լաւ կերպով:

Մտերիմ ըլլալը երկու կողմ ընթացող ճամբայ մըն է. երկու

անձերն ալ պէտք է մէկը միասին ամէնէն խորունկ փափաքները եւ խորհուրդները գիտնան: Ինչ կը վերաբերի Աստուծոյ հետ մտերմութեան, նայինք թէ Իր եւ թէ մեր տեսակէտներուն՝ սկսելով Իր տեսակէտէն: Դաւիթ կը գրէ.

Ո՛վ Տէր, զիս *հեղազօրեցիր* ու *ճանչցար*: (Սաղմոսներու 139.1, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Հեղազօրեցիր բառը եբրայերէն *հա՛լգար* բառն է, որ կը սահմանուի իբրեւ՝ «խուզարկել, փնտռել, փնտռտուքի ելլել եւ գտնել»: Ատիկա կատարելապէս կը նկարագրէ մէկու մը հետ մտերիմ յարաբերութեան մէջ մտնելը: Ժամանակ եւ ջանք կը տրուի՝ ոչ թէ բեռի իմաստով՝ այլ, ուրախութեամբ, խուզարկելու համար դիմացի անձին ամէնէն խորունկ խորհուրդները եւ ճամբաները:

Ես ատիկա վայելած եմ Լիսային հետ իմ ամուսնութեանս մէջ: Երբ նոր ամուսնացած էինք, ես շատ ծանօթ չէի անոր տենչանքներուն, հաճոյքներուն, նախասիրութիւններուն, չսիրած բաներուն կամ ատած բաներուն: Պարզօրէն, զոյգիդ հետ մտերմանալը մտային, զգացական եւ ֆիզիքական կեդրոնացած ջանք կը պահանջէ:

Վերի համարին մէջ յաջորդ հետաքրքրական բառը *ճանչնայն* է. անիկա եբրայերէն *ես՛ւրա* բառն է: Հին Կտակարանին մէջ անիկա մտերմութեան գաղափարը փոխանցելու համար ամէնէն յաճախ գործածուած բառն է: Անիկա գործածուած է Ծնունդներու 4.1–ին մէջ, որ կ'ըսէ՝ «Ադամ *գիտցաւ [ես՛ւրա]* իր Եւա կինը, եւ ան յղացաւ»: Սուրբ Հոգին *ես՛ւրա* բառը կը գործածէ նկարագրելու համար այն ծայրագոյն մօտիկութիւնը, զոր երկու մարդ արարածներ կրնան ունենալ այս կեանքի մէջ: Հիմնականին մէջ Դաւիթ կ'ըսէ. «Տէր, դուն շատ խորունկ կերպով կը ճանչնաս կամ գիտես զիս»:

Դաւիթ կը գործածէ թէ *հա՛լգար* եւ թէ *ես՛ւրա* բառերը՝ մեզի յստակ պատկեր մը տալու համար, թէ ինչպէս Աստուած կը փնտռէ եւ կը գտնէ ամէնէն խորունկ փափաքները եւ ձեւերը անոնց, որոնց հետ կը փափաքի մօտիկ ըլլալ: Դարձեալ եթէ նայինք Լիսայի եւ իմ յարաբերութեան, ես անոր մասին շատ անելի բան գիտեմ տարիներ իրարու հետ ժամանակ անցընելէ ետք: Ոչ միայն գիտեմ անոր ամէնէն խորունկ փափաքները ինչպէս վերը ըսինք, այլեւ անոր սովորաբար ըրած բաները, թէ ան ինչպէս պիտի վարուի որոշ պայմաններու տակ, ինչ բան ընելէն ամէնէն անելի հաճոյք կ'առնէ ազատ ժամերուն, ինչ բաներու վրայ կը սիրէ աշխատիլ, եւ ցանկը կը շարունակուի: Նոյնպէս ալ Դաւիթ կը բացատրէ.

Դուն գիտես իմ նստիլս ու ելլելս, իմ մտածումս հեռուն կը հասկնաս: Իմ քալելս ու պառկիլս կը քննես, եւ իմ բոլոր ճամբաներուս իրազեկ ես: Արդարեւ խօսք մը տակաւին լեզուիս վրայ չեղած, ահա՛ դուն, ո՛վ Տէր, ամբողջովին տեղեակ ես անոր: (Սաղմոսներու 139.2-4)

Աստուած մեր մտերմիկ մանրամասնութիւնները գիտէ ըմբռնումէ անդին ձեռով մը: Հւճարով, Աստուած Ինքզինք տրամադրեց խուզարկելու, փնտռելու եւ գտնելու Դաւիթը, եւ ան նոյնը կ'ընէ մեզմէ իրաքանչիւրին հետ. այն ինչ որ ես եւ Լիսան ըրած ենք վերջին քառասուն տարիներուն, բայց շատ անելի խորունկ մակարդակի վրայ: Իրականութեան մէջ քանի մը համար ետք կը հանդիպինք ցնցիչ հաստատումի մը, թէ՛ մեր մասին Աստուծոյ մտածումները երկրի աւազէն շատ են (հմր 17-18): Եթէ ես վերջին քառասուն տարին ամէն տասներու երկվայրկեանը Լիսայի սիրած բաներուն, վարմունքին, տենչանքներուն եւ չսիրած բաներուն մասին մտածած ըլլայի եւ աւագի հատիկ մը մէկ կողմ դրած ըլլայի, կօշիկի տուփի մը մէջ բաւելու չափ աւազէն անելի պակաս աւագ հաւաքած կ'ըլլայի: Մեզմէ իրաքանչիւրին մասին Աստուծոյ մտածումները *մեր մոլորակին վրայ գտնուող* աւազէն անելի շատ են, եւ ան բնաւ չի չափազանցեր, քանի որ ատիկա սուտ կ'ըլլայ, եւ անկարելի է, որ Աստուած ստէ: Ասիկա ապշեցուցիչ է: Սկսամ ըմբռնել մեր մասին ամէն բան գիտնալու Անոր բուն փափաքը:

Ան խորապէս կը փափաքի մօտիկ ըլլալ մեզմէ իրաքանչիւրին հետ: Եւ սակայն կ'ուզեմ կրկնել, որ իսկական մտերմութիւնը կը ծնի *երկու* կողմերուն զիրար լաւ ճանչնալէն, ոչ միայն մէկուն: Ճիշդ ինչպէս Ան կը հետազօտէ մեր ամէնէն խորունկ խորհուրդները, մե՛նք եւս պէտք է բուն փափաքով հետամուտ ըլլանք ստեղծելու իսկական մտերմութիւն մը: Մովսէս այդ մակարդակի յարաբերութեան հետամուտ է երբ կ'աղաղակէ.

«Ըսիր. “Քեզ անունովդ կը ճանչնամ [եմ'որա]”, նաեւ՝ “Իմ առջեւ շնորհք գտար”: Ուստի հիմա կ'աղերսեմ, եթէ քու առջեւ շնորհք գտայ, ցուցնիր ինձի քու ճամբադ, կ'աղերսեմ, որ *ճանչնամ [եմ'որա]* քեզ, որպէսզի քու առջեւ շնորհք գտնեմ»: (Ելքի 33.12-13, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Աստուած մեզ չի *գիտեր* իբրեւ պարզապէս թիւ մը բազմութեան մը մէջ. Ան մեզ գիտէ անձնապէս, անհատապէս, անունով: Վերի համարին մէջ կը տեսնենք, թէ Մովսէս կ'ուզէ ատիկա փոխադարձել. ան բուն փափաք ունէր առջեւ երթալու Աստուծոյ մասին իր

գիտութեան մէջ: Ան մտերիմ յարաբերութիւն մը կ'ուզէ. ոչ միայն որ Աստուած զինք ճանչնայ, այլեւ ինք եւս խորապէս ճանչնայ զԱստուած: Հապա մե՞նք... Մեզի կ'ըսուի. «Մօտեցէ՛ք Աստուծոյ, եւ Աստուած ինք պիտի մօտենայ ձեզի» (Յակոբոսի 4.8):

Մեր մինչեւ հիմա խօսածներուն լոյսին տակ, կը կարծեմ, որ հիմա կը լսէք կանչ մը... ո՛չ, աղաղակ մը, որ կ'ելլէ Աստուծոյ սիրտէն: Ամէն անցնող վայրկեանի հետ կը սաստկանայ անիկա: «Ինչո՞ւ հեռու կը մնաս երբ կրնաս մտերմութեան մէջ ըլլալ Ինձի հետ»: Հիմնականօրէն, մեզի կ'ըսուի, թէ *մենք ենք, որ կ'որոշենք Աստուծոյ հետ մեր մտերմութեան մակարդակը*: Աւելի պարզ ձեւով ըսեմ. դո՞ւն կ'որոշես Աստուծոյ հետ մօտիկութիւնդ, ո՛չ Աստուած: Ուրեմն Աստուծոյ վախը ինչ դեր ունի ասոր մէջ: Մեզի կ'ըսուի, թէ.

Իմաստութեան [*«Գիտութեան»*, ըստ անգլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* (NKJV) տարբերակին] սկիզբը Տէրոջ վախն է: (Առակներու 1.7)

Ինչ տեսակի գիտութեան: Արդեօք հեղինակը կը խօսի բժշկական, գիտական, պատմական կամ այլ ակադեմական մարզի գիտութեան մասին: Մեր համալսարաններէն շատերը լեցուն են այդ մարզերու գիտութիւնով, եւ սակայն կան շատ քիչ ունին կամ ալ բնաւ չունին Աստուծոյ վախը: Արդեօք անիկա կը վերաբերի ընկերային կամ քաղաքական գիտութեան: Ո՛չ, աշխարհի ձեւերը անմտութիւն են Աստուծոյ համար: Արդեօք Աստուածաշունչի գիտութեան մասին կը խօսի: Բնաւ: Քանի որ փարիսեցիները մասնագէտ էին Սուրբ Գիրքերու գիտութեան մէջ, բայց չունէին Աստուծոյ վախը եւ չէին հաճեցներ զԱյն: Մեր պատասխանը կը գտնուի հետեւեալ բառերուն մէջ.

Այն ատեն Տէրոջ վախը պիտի հասկնաս եւ Աստուծոյ գիտութիւնը պիտի գտնես: (Առակներու 2.5)

Գիտութիւն բառը *Տիքընըրի աֆ Պիպլիքըլ Լանկուէյճըզ* բառարանին մէջ կը սահմանուի իբրեւ՝ «տեղեկութիւններ անձի մը մասին՝ անոր հետ յարաբերութեան մէջ ըլլալու զօրաւոր ակնարկութիւնով»: *Վայն՝զ Քոմփլիթ Էքսփոզիթորի Տիքընըրի* բառարանը մեզի կ'ըսէ, թէ այդ բառը կ'ակնարկէ՝ «Անոր [Աստուծոյ] մասին մտերմիկ, փորձառական գիտութիւն ունենալ»ուն: Եթէ պարզ ձեւով պիտի նշենք մեզի խոստացուածը, կ'ըսենք, թէ՛ *Տիրոջ վախը սկիզբն է զԱստուած մտերմաբար ճանչնալուն*:

Ճշմարտութիւնը այն է, որ մենք զԱստուած մտերիմ մակարդակի վրայ ճանչնալ սկսած չենք ըլլար եթէ Իր վախը չունենանք. անիկա մեկնակէտն է: Եթէ այդ մեկնակէտէն բացի ուրիշ որեւէ բան նախաձեռնես, չես կրնար զայն ամբողջացնել: Եթէ 100 մեթր վազքի մրցոյթը սկսիմ նշանակուած մեկնակէտէն 50 մեթր անցելի առջեւէն, չեմ կրնար օրինաւոր կերպով մասնակցած ըլլալ մրցոյթին կամ զայն աւարտել: Նոյնն է պարագան Աստուծոյ հետ մեր յարաբերութեան. առանց սուրբ վախի անկարելի է զԱստուած մտերմօրէն ճանչնալ: Փառք Իրեն, որ մեզի տուած է ճամբան զինք մտերմօրէն ճանչնալու: Բայց արդեօք մենք պիտի քալենք այդ ճամբայէն:

Յիշենք, որ Տիրոջ վախին շնորհիւ մենք կը հեռանանք չարէն կամ *անօրէնութենէն*: Ատիկա գիտնալով, նկատի առ, որ Յիսուս խօսեցաւ մեծ խումբ մը մարդոց մասին, որոնք պիտի ցնցուին Դատաստանի Օրը: Այդ տղամարդիկն ու կիները զինք իրենց Տէրը կը կոչեն, բայց Յիսուս իրենց պիտի ըսէ. «Բնան ձեզ չեմ ճանչնար: Հեռացէք ինձմէ դուք բոլորդ, որ *չարիք* [«անօրէնութիւն», ըստ անգլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* (NKJV) տարբերակին] կը գործէք» (Մատթէոսի 7.23, շեշտադրումը՝ մեր կողմէ): «Ճանչնալ» բառին համար հոս գործածուած յունարէն բառը *կինոսքոն* է, որ *եմպային* յունարէնն է: Յիսուս սուրբ վախ չունեցողներուն պիտի ըսէ. «Ես երբեք մտերմաբար չէի ճանչնար ձեզ»: Ատիկա շատ լուրջ հարց մըն է, որուն մասին պիտի խօսինք յաջորդ գլուխին մէջ:

Անձնականացնել

Հատուած– Երբ ըսիր. «Երեսս փնտռեցէք», իմ սիրտս քեզի ըսաւ. «Քու երեսդ պիտի փնտռեմ, ո՛վ Տէր»: (Սաղմոսներու 27.8)

Միտք– Իսկական մտերմութիւնը կը ծնի երկու կողմերուն զիրար լաւ ճանչնալէն, ոչ միայն մէկուն:

Խոկալ– Միտքդ բեր նախասիրած անձդ, որուն հետ ամէնէն անելի կ'ուզես ըլլալ: Ո՞րքան լաւ գիտես անոր մտածումները կամ զգացումները առանց բառ մը խօսուելու: Ո՞րքան լաւ կերպով կրնաս գիտնալ, թէ ինչ կեցուածք պիտի առնէ ան տուեալ կացութեան մը մէջ: Պարզապէս օր մը յանկամրձ գիտցար այդ բաները կամ ժամանակ առաւ, որ հետագօտես եւ մտածես մօտիկ ընկերոջդ ձեւերուն մասին: Հիմա նկատի առ քեզի վերաբերեալ Աստուծոյ մտածումներուն

Աստուծոյ Հետ Մտերմութիւն

անհամար ըլլալուն մասին: Ինչ կ'ըսէ ատիկա քեզի: Ինչ պիտի պատահէր եթէ հետազօտէիր Աստուծոյ սիրտը եւ ձեւերը եւ մտածէիր անոնց մասին անելի քան քու ամենամօտիկ ընկերոջդ:

Աղօթք– Սիրելի Տէր, կ'անդրադառնամ, որ անտեսած եմ մեծագոյն հրաւերը, որ երբեւէ ստացած եմ. Քեզի հետ մտերիմ ըլլալու հրաւերը: Արտօնած եմ, որ շատ բաներ շեղեն զիս եւ չկարենամ ժամանակ տալ հետդ այդ մօտիկութիւն մշակելու համար: Ուրախ եմ ըսելու, որ կ'ուզեմ փոխել ատիկա: Երբ բանամ Աստուածաշունչս՝ կարդալու, աղօթելու եւ խոկալու համար, թող սկսիմ ճանչնալ Քեզ խորունկ, մտերմիկ մակարդակի մը վրայ: Ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն– Կ'ընտրեմ հետամուտ ըլլալ ճանչնալու Յիսուսը այնքան խորունկ կերպով որքան Ինք ընտրած է զիս ճանչնալ:

Ճամբայ կայ՝ որ մարդուն
ուղիղ կը թուի, բայց անոր
վերջաւորութիւնը մահուան
ճամբան է:

– ԱՌԱԿՆԵՐՈՒ 16.25

30 | ՏԱՐԲԵՐ ՅԻՍՈՒՍ ՄԸ

Յաճախ բան մը ասելի լաւ հասկնալու համար օգտակար կ'ըլլայ եթէ նայինք անոր հակառակ թեզին: Ուստի նախքան Աստուծոյ հետ մտերմութեան նիւթը ասելի մանրամասնօրէն քննարկելը, եկէք խօսինք անոր հակառակին մասին, ինչպէս պիտի տեսնենք հետեւեալ պատմութեան մէջ:

Նոր Հառայի հասած էի՝ ղեկավարութեան մասին խորհրդաժողովի մը իբրեւ պատգամաբեր մասնակցելու համար: Պանդոկի սենեակս տակաւին պատրաստ չէր, ուստի հանգստանալու անկիւն մը գտայ աւազանին ծայրը գտնուող հովանոցի մը տակ: Այնպէս պատահեցաւ, որ ուրիշ խորհրդաժողովի մը ներկայ ըլլալու համար հոն գտնուող կին գործարար մը ես կը սպասէր իր սենեակին պատրաստ ըլլալուն: Սկսանք խօսիլ, եւ երբ գիտցաւ, որ Քրիստոնէայ հեղինակ եւ ծառայող մըն եմ, սկսաւ խօսիլ Յիսուսի հետ իր յարաբերութեան մասին:

Քանի մը վայրկեանէն արդէն յայտնի եղաւ, որ ան Յիսուսը չէր ճանչնար: Ան շարունակ ինքնավստահօրէն կ'ըսէր, թէ ինչ բանի *կը հաւատար*, բայց շատ քիչ բան կը համապատասխաներ Սուրբ Գիրքերուն յայտնածներուն: Լուռօրէն Սուրբ Հոգիէն իմաստութիւն խնդրեցի, եւ քանի մը երկվայրկեան ետք յայտնեց ինծի, թէ ինչ պէտք էր ըսէի:

Երբ վերջացուց խօսիլը, հարցուցի. «Կը տեսնեն աւազանին միւս կողմը նստած այդ մարդը»:

Չարմացած (շատ հաւանաբար կտրուկ կերպով նիւթը փոխելուս պատճառով), պատասխանեց. «Այո»:

Ես զուարթօրէն ըսի. «Անունը Ճիմ է, եւ ան Ֆրեզնոյէն է, Քալիֆորնիա: Ան կը հետեւի *վիկըն* սննդականոնի [միայն բոյսերէ եկած ուտելիքներով

սնանելու սննդականոն– *Թարգմանիչ*]: Անոր երազն է Միացեալ Նահանգներու ջուրի *փողոյի* ողիմպիականի խումբին մաս կազմել: Ան օրը երեք ժամ թէ մարզասրահին եւ թէ լողաազանին մէջ մարզումներ կ'ընէ: Անոր նախասիրութիւններն են՝ *փիքըլայոլ* [*թենիսի* նման խաղ մը– *Թարգմանիչ*], օդանաւ մը *փարաշիտով* նետուիլ եւ նկարչութիւն: Ճիմ ամուսնացած է տաք ջուրի աազանին քովը եղող կնոջ հետ. անոր անունը Պէթ է, եւ ան տասը տարի անելի փոքր է իրմէ:

Հետաքրքրութիւնը շարժած ըլլալով անով, թէ ես ճիշտն լաւ կը ճանչնայի ճիմը, հարցուց. «Քու ներկայ գտնուելիք խորհրդաժողովին ներկայ պիտի ըլլայ ինքն ալ»:

Արագօրէն պատասխանեցի. «Ոչ»:

Հետաքրքրութիւնը անելի շարժեցաւ: «Ուրեմն ինչպէս է, որ այդքան լաւ կը ճանչնաս ճիմը»:

Այդ պահուն իրեն դարձայ եւ աչքերուն մէջ նայելով, ըսի. «Ես բնաւ չեմ հանդիպած անոր»:

Անոր դէմքի արտայայտութիւնը փոխուեցաւ եւ հիմա արդէն քիչ մը զգուշաւոր էր եւ նոյնիսկ մտահոգ: Թերեւս կը մտածէր, թէ արդեօք ես հիւանդագին հետապնդող մըն էի, անձնական գաղտնի ոստիկան մը կամ նոյնիսկ կառավարութեան պաշտօնեայ մը:

Պահ մը լուռ մնացի եւ ապա ինքնավստահօրէն ըսի. «Ես ատիկա կը *հաւատամ* անոր մասին»:

Ան անխօս մնաց:

Շարունակեցի. «Քիչ առաջ դուն մեծ ինքնավստահութեամբ բաժնեկցեցար Յիսուսի մասին *համոզումներդ*, բայց գրեթէ ինչ որ ըսիր ճիշդ չէր. ըսածներդ հակառակ էին Աստուածաշունչի ուսուցումներուն: Ես ատիկա գիտեմ, որովհետեւ կը ճանչնամ զինք»:
Ան այլեւս չուզեց շարունակել մեր այդ խօսակցութիւնը, բայց նկատելի էր, թէ որքան ցնցուած էր:

Պօղոս Առաքեալ ցնցիչ խօսք մը ուղղեց եկեղեցիի մը, զոր շատ կը սիրէր. «Դուք ուրախութեամբ կը հանդուրժէք ամէն բան, որ ունի մէկը կ'ընէ ձեզի, նոյնիսկ եթէ կը քարոզեն տարբեր Յիսուս մը» (Բ.Կորնթացիներուն 11.4)¹: Ան չի խօսիր ուրիշ աստուծոյ մը մասին, այլ՝ տարբեր Յիսուսի մը: Ըստ երեւոյթին, անոնք կը *հաւատան* Յիսուսի, սակայն իրապէս չեն *ճանչնար* զինք: Ինչո՞ւ: Անոնք կը հաւատան այն բաներուն, որոնք կը համապատասխանեն իրենց նախասիրութիւններուն եւ հետեւաբար կ'ապրին իրական Յիսուսէն օտարացած կեանք մը: Դժուար չէ ատիկա ընելը. Տէրը անտեսանելի

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

է, ուստի կրնաս փոխել Անոր բնութիւնը՝ յարմարցնելու համար քու երեւակայութեանդ:

Իսրայէլի որդիները նոյնպիսի բան մը ըրին: Եգիպտոսէն դուրս ելլելը աշխարհէն փրկուելու մէկ օրինակն է: Կը կարդանք. «Եւ բոլորն ալ նոյն հոգեւոր ըմպելիքը խմեցին, որովհետեւ խմեցին հոգեւոր ժայռէ մը՝ որ իրենց հետ կ'երթար. եւ այդ ժայռը Քրիստոս ինքն էր: Բայց անոնց մեծագոյն մասը հաճելի չեղաւ Աստուծոյ» (Ա.Կորնթացիներուն 10.4-5): Շարք մը պատճառներով Աստուած չհաճեցաւ իրենց, բայց բոլոր պատճառներուն յատակը կը գտնուէր մէկ գլխաւոր կէտ. անոնց անհնազանդութիւնը Աստուծոյ Խօսքին, անոնց *սուրբ վախ չունենալը*:

Երբ Մովսէս լեռն էր քառասուն օր, ոսկիէ հորթ մը կը շինուի լեռան ստորոտը սպասող Իսրայէլի ժողովուրդին վրայ ղեկավար կարգուած Ահարոնի կողմէ: Մենք ատիկա կը տեսնենք եւ կը պոռանք՝ «Կռապաշտութիւն»: Այո, ճիշդ: Բայց ինչ որ շատեր չեն անդրադառնար այն է, որ Ահարոն եւ ամբողջ ժողովուրդը զանիկա *էլրհիմ* կը կոչեն: Այդ բառը 2,606 անգամ կը գտնուի Հին Կտակարանին մէջ: Անիկա կրնայ գործածուած ըլլալ սուտ աստուածներու համար, բայց տասէն ինը անգամը գործածուած է Եհովայի համար. միակ ճշմարիտ Աստուծոյ: Օրինակի համար, անիկա Ծնունդներու Գիրքի առաջին գլուխին մէջ 32 անգամ նշուած է: Աստուածաշունչի առաջին համարը կը կարդայ. «Սկիզբէն *էլրհիմ* երկինքն ու երկիրը ստեղծեց» (շեշտադրումը՝ մեր կողմէ):

Դիւրութեամբ կրնանք վստահ ըլլալ, թէ արդեօք անոնք այդ հորթը կը կոչեն *էլրհիմ* իբրեւ Ամենակարող Աստուած կամ *էլրհիմ* իբրեւ սուտ աստուած: Փաստը այն իրականութիւնն է, որ Ահարոն հորթը *Եահուէ* կ'անուանէ (տես Ելքի 32.5): Ատիկա սուրբ անունն էր մեր մէկ եւ միակ ճշմարիտ Աստուծոյ, եւ անիկա Աստուածաշունչին մէջ ուրիշ որեւէ տեղ չէ գործածուած սուտ աստուծոյ մը համար բացի այստեղ: Ահարոն եւ ժողովուրդը հորթը Նեբրովդ, Բահադ, Աստարովթ կամ ուրիշ սուտ աստուծոյ մը անունով չեն կոչեր: Անոնք կը հռչակեն. «Ասիկա *Եահուէ*ն է. ան, որ մեզ Եգիպտոսէն հանեց» (Ելքի 32.4, հեղինակին բառերով, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Ինչպէս կրնային անոնք այդքան սխալած ըլլալ: Ինչո՞ւ չճանչցան ճշմարիտ, կենդանի Աստուածը, ինչպէս Մովսէս ճանչցաւ: Անոնք տեսան Աստուծոյ հրաշքները. հետեւեցան Անոր ամպին եւ կրակէ սինին: Պատասխանը բարդ չէ: Ամիսներ առաջ երբ Աստուած առաջին անգամ իջաւ լեռան վրայ՝ Ինքզինք ծանօթացնելու համար, անոնք ետ-ետ գացին եւ Մովսէսին ըսին. «Դո՞ւն մօտեցիր ու լսէ ամէն ինչ որ Տէրը՝ մեր Աստուածը պիտի ըսէ, եւ դո՞ւն մեզի հաղորդէ ամէն

ինչ որ Տէրը՝ մեր Աստուածը քեզի պիտի խօսի, ու մենք մտիկ պիտի ընենք եւ գործադրենք» (Բ.Օրէնքի 5.27):

Ես միայն կրնամ պատկերացնել Մովսէսի բացարձակ յուսախաբութիւնը: Ան չի կրնար պատկերացնել Աստուծոյ ներկայութեան մէջ ըլլալ չուզելը: Ինչպէս կրնայ ըլլալ ատիկա: Մովսէս այդ մտահոգութիւնը Տիրոջ առջեւ կը բերէ՝ ակնկալելով, որ պատասխան ստանայ, բայց վստահաբար Աստուծոյ պատասխանը կը զարմացնէ Մովսէսը. «Այս ժողովուրդին քեզի ըսած խօսքերուն ձայնը լսեցի. ամէն ինչ որ ըսին՝ շիտակ է» (Բ.Օրէնքի 5.28):

Մովսէս կը ցնցուի: Ան շատ հաւանաբար կը մտածէ. *Մէկ վայրկեան: Անոնք ճիշդ են: Առաջին անգամ ըլլալով այս մարդիկը իրապէս ճիշդ են:* Կը պատկերացնեմ, որ անոր պատասխանը Աստուծոյ այս ձեւի բան մըն էր. «Ինչո՞ւ անոնք չեն կրնար գալ Քու ներկայութեանդ մէջ եւ վերջապէս Քեզ ճանչնալ ինչպէս ես Քեզ կը ճանչնամ»: Աստուծոյ պատասխանը ցաւալի է.

«Երանի՜ թէ անոնց մէջ այնպիսի սիրտ մը ըլլար, որ ինձմէ վախնալով իմ բոլոր պատուիրաններս ամէն օր պահէին, որպէսզի իրենց եւ իրենց որդիներուն բարիք ըլլար յաւիտեան»: (Բ.Օրէնքի 5.29, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Աստուած իր ցաւը կը յայտնէ... Եթէ միայն սուրբ վախով քալէին, պիտի կարենային գալ Իր ներկայութեան մէջ եւ մտերիմ յարաբերութիւն վայելել: Ատիկա իր կարգին անոնց պիտի տար զօրութիւնը հնազանդելու, եւ այդպիսով ամէն բան լաւ պիտի ըլլար իրենց եւ իրենց զաւակներուն համար: Ապա Աստուած հետեւեալ ցուցմունքը կու տայ Մովսէսի.

Գնա՛ անոնց ըսէ. *«Ձեր վրանները վերադարձէք»:* Բայց դուն հոս՝ իմ քովս կայնէ, քեզի պիտի ըսեմ բոլոր պատուիրանները, կանոններն ու դատավճիռները: (Բ.Օրէնքի 5.30–31, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ասիկա թէ՛ սրտաճմլիկ եւ թէ՛ ուրախացնող բան մըն է: Նախ նշենք սիրտ կոտորող բանը: Իսրայէլի ամէնէն խաւար պահը հորթը շինելը չէր, ոչ ալ երբ վատ տեղեկութիւններ տալով խոստացուած երկիրը չգրաւեցին: Ոչ, ասիկա էր անոնց ամէնէն խաւարը պահը: Աստուած զիրենք Եգիպտոսէն (աշխարհէն) հանեց՝ զանոնք Իրեն բերելու նպատակով, որպէսզի զինք ճանչնային ինչպէս Ինք մտերմօրէն կը ճանչնար զիրենք: Սակայն անոնք մերժեցին այդ

ատիրը՝ սուրբ վախ չունենալնուն պատճառով: Ողբերգական է...

Միւս կողմէ ատիկա խանդավառիչ բան մըն էր Մովսէսի համար, տրուած ըլլալով, որ ան հրաւիրուած էր Աստուծոյ քով կենալու եւ Անոր խօսքերը ուղղակի Անոր բերանէն լսելու: Ան հրաւիրուեցաւ Աստուծոյ հետ մտերմիկ յարաբերութեան մը, մինչ ժողովուրդը վերադարձաւ իրենց վրանները:

Աւագանին քով հետս գրուցող կինը *տարբեր* Յիսուսի մը մասին կը խօսէր, կորնթացիները կը ծառայէին *տարբեր* Յիսուսի մը, եւ Իսրայէլ կը հետեւէր *տարբեր* Ամենակարող Աստուծոյ մը: Կը տեսնէք կրկնուող երեւոյթը: Կրնայ ըլլալ, որ աստուածութիւն մը ստեղծենք Յիսուսի անունով եւ սակայն չճանչնանք Աստուծոյ աջին նստած *իրական* Յիսուսը: Եւ աւելի նեղացուցիչ կամ շփոթեցուցիչ բանը այն է, որ Իսրայէլ եւ Կորնթոսի եկեղեցին տեսան Աստուծոյ դրսեւորուած զօրութիւնը եւ հրաշքները՝ իրենց աղօթքներուն պատասխանուելուն մէջ:

Ուստի հիմա դառնանք այն մեծ խումբ մը մարդոց, որոնք դատաստանի ատեն պիտի դաւանին Յիսուսը իբրեւ իրենց Տէրը, բայց Յիսուս իրենց պիտի ըսէ՝ «<եռացէք ինձմէ>»: Ճիշդ այն բառերը, զորս Մովսէս լսեց Աստուած կ'ըսէր Իսրայէլի համար: Ատիկա պիտի մղէ մեզ, որ աւելի մօտէն քննենք Յիսուսի մարգարէական խօսքերը թէ՛ ինչ պիտի պատահի այդ բազմութիւններուն: Ինչպէս նշեցինք այս գլուխին սկիզբը, ատիկա մեզի պիտի տայ աւելի լաւ հասկացողութիւն մը մեր Տիրոջ հետ մտերմութիւն մշակելու մէջ սուրբ վախի կարեւորութեան մասին: Ատիկա պիտի ընենք յաջորդ գլուխին մէջ:

Անձնականացնել

Հատուած- Այդ Աւետարանով ալ կը փրկուիք, եթէ զայն պահէք այնպէս՝ ինչպէս ես ձեզի քարոզեցի. այլապէս զուր տեղ հաւատացած կ'ըլլաք: (Ա.Կորնթացիներուն 15.2)

Միտք- Կրնայ պատահիլ, որ ամբողջ սրտովդ հաւատաս մէկու մը կամ բանի մը, որ ճիշդ չէ:

Խոկալ- Ինչպէս վստահորէն կը գիտնամ, որ կը հաւատամ իրական Յիսուսին եւ ոչ շինծու կամ կեղծ Յիսուսի մը: Ատիկա կը գիտնամ Իր մասին իմ առաջնորդներուս ուսուցումներէն: Բայց չէ՞ որ Ահարոն ալ կ'ուսուցանէր Իսրայէլին եւ կ'առաջնորդէր զայն: Կրնամ վստահորէն գիտնալ միայն Աստուածաշունչ կարդալով: Բայց չէ՞ որ փարիսեցիներն ալ նոյնը կ'ընէին: Ինչպէս կրնամ գիտնալ:

Աղօթք- Հայր, Յիսուսի անունով կը խնդրեմ, որ ոչ միայն ճշմարտութիւնը գիտնամ, այլեւ ճշմարտութիւնը սիրեմ: Կ'ընտրեմ ընդունիլ Կենդանի Խօսքդ իբրեւ վերջնական իշխանութիւն եւ հնազանդիլ անոր՝ հասկնամ կամ ոչ: Երբ ատիկա ընեմ, կատարուած կ'ըլլայ այն խոստումդ, թէ՛ պիտի չխաբուիմ: Մինչ կը կարդամ Խօսքդ եւ կը հնազանդիմ Անոր, թող անիկա ալ զիս կարդայ. թող անիկա ինձի յայտնէ ո՛վ ըլլալս եւ իմ Տիրոջս՝ Յիսուսի ո՛վ ըլլալը: Ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Կ'ընտրեմ հաւատալ Աստուծոյ Խօսքին՝ զանիկա հասկնամ կամ ոչ:

Ամէն օր իմ ձեռքերս երկարեցի
ապստամբ ժողովուրդի մը,
անոնց՝ որ կը քալեն այնպիսի
ճամբայի մը մէջ՝ որ լաւ
չէ, իրենց մտածումներուն
հետեւելով:

– ԵՍԱՅԻԻ 65.2

31 | ՉԷԻ ՃԱՆՉՆԱՐ ՁԵՁ

Մենք թե՛ աւելի պիտի ըմբռնենք եւ թե՛ աւելի պիտի գնահատենք *Աստուծոյ հետ մտերմութիւնը* եթէ շարունակենք նայիլ անոր հակառակին: Նախորդ գլուխի մեր նիւթը, ինչպէս նաեւ այս գլուխի, դժուար կ'լլուելիք է: Սակայն մեր նիւթին հետ կապուած աստուածաշնչական զգուշացումները իրականութեան մէջ սիրոյ եւ պաշտպանութեան նուէրներ են մեզի մեր խորապէս հոգատար Հօրմէն: Յիսուսի խօսած խօսքերը սուրբ վախ մը պիտի դնեն մեր մէջ, որ մեզ մօտիկ պիտի պահէ Կեանք Տուողին մինչեւ վերջ:

Աստուածաշունչը յստակօրէն կը զգուշացնէ, թէ վերջին օրերուն աւետարան մը պիտի հռչակուի եւ լայնօրէն ընդունուի, որ պիտի առաջարկէ կեղծ փրկութիւն մը, որ զուրկ է Յիսուսի տիրութենէն: Պարզ ձեռով եթէ պիտի ըսենք, Յիսուսի հետ յարաբերութիւն կ'առաջարկուի առանց յանձն առնելու անպայմանական ձեռով Անոր Խօսքին հնազանդիլը: Ատիկա հակառակն է սուրբ վախին եւ յառաջ կը բերէ *երեւակայական Յիսուս* մը, ոչ տարբեր այն Յիսուսէն, զոր ընդունելով ամբաստանեց Պօղոս կորնթացիներէն շատերը:

Տարբեր Յիսուսի մը հետեւող այդ յոյն «հաւատացեալներուն» մասին խօսելէ ետք, Պօղոս կը խօսի անոնց սիրտի վիճակին մասին, որմէ յառաջ եկած էր այդ երեւակայական փրկիչը: Ան կը գրէ. «Ձեզմէ շատեր չեն հրաժարած իրենց հին մեղքերէն: Չէք ապաշխարած ձեր անմաքրութենէն, սեռային անբարոյութենէն եւ կրքոտ ցանկութիւններու եռանդէն» (Բ.Կորնթացիներուն 12.21): Անոնք կը դաւանին Տէր Յիսուսը, բայց կ'ապրին Իր Խօսքին հակառակ:

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Ատիկա հազուագիւտ պատահար մըն էր առաջին դարու եկեղեցիին մէջ, բայց մեր արդի Արեւմտեան եկեղեցիին մէջ լայն տարածում գտած է: Այդ ուսուցումին իբրեւ հետեւանք «Տէր»ը սոսկ տիտղոս մը կը դառնայ եւ ոչ թէ այն դիրքը, որ Ան ունի մարդոց կեանքերուն մէջ: Յիսուս մարգարէացաւ:

«Չկարծէք թէ ով որ ինծի. “Տէր, Տէր” կ’ըսէ, երկինքի արքայութիւնը պիտի մտնէ. այլ պիտի մտնէ միայն անիկա, որ երկինքի մէջ գտնուող իմ Հօրս կամքը կը կատարէ»: (Մատթէոսի 7.21)

Յիսուս կը ճանչնայ այն մարդիկը, որոնք զինք իրենց Տէրը կը հռչակեն. ոչ անոնք, որոնք կը մեծարեն Մուհամմատը, Ճոզէֆ Սմիթը, Պուտտան, Հարէ Քրիշնան, Քոնֆիուշըսը կամ մեր ժամանակի ուել ուրիշ սուտ մարգարէ մը: Նկատի առ, որ *Տէր* բառը ետեւ ետեւի կը կրկնուի այս համարին մէջ: Դարձեալ, եթէ բառ մը կամ եզր մը երկու անգամ կը կրկնուի Աստուածաշունչին մէջ, ատիկա պատահական բան մը չէ: Ատիկա կը նշանակէ, թէ գիրքը գրողը շեշտ մը կը դնէ անոր վրայ: Բայց այս համարին պէս պարագաներու, անիկա միայն շեշտի համար չէ, այլեւ զգացումի ուժգնութիւն կ’ենթադրէ: Օրինակի համար, երբ Դաւիթ Թագաւորին տեղեկացուցին Յովաբի բանակին կողմէ իր որդիին սպանութեան մասին, անոր հակադարձութիւնը զգացումներով լեցուն էր. «Թագաւորը իր երեսը ծածկած էր. թագաւորը *բարձր ձայնով կ’աղաղակէր*. “Որդեակս Աբիսողոմ, Աբիսողոմ, որդեակս, որդեակս”» (Բ.Թագաւորներուն 19.4, շեշտադրումը՝ մեր կողմէ): Ան անպայմանօրէն երկու անգամ «որդեակս» չըսաւ: Այլ՝ մեծ վիշտէն բխած անոր աղաղակը այնքան սաստիկ էր, որ գիրքը գրողը կրկնած է անոր բառերը:

Նոյնպէս ալ հոգ մեզի կը հաղորդուի Տիրոջ հանդէպ այդ մարդոց ունեցած խորունկ զգացումները: Անոնք միայն Յիսուս Քրիստոսի Աստուծոյ Որդին ըլլալուն մասին ուսուցումներուն համաձայն եղող մարդիկ չեն. անոնք բուն զգացումներով կապուած են իրենց այդ համոզումին: Կը խօսինք մարդոց մասին, որոնք խանդավառ են Քրիստոնեայ ըլլալուն համար, եւ հաւանաբար անոնցմէ են, որոնք կը զգացուին երբ իրենց հաւատքին մասին կը խօսին կամ նոյնիսկ կը յուզուին եւ կու լան պաշտամունքի ընթացքին:

Անոնք ոչ միայն խորունկ զգացումներ ունին Քրիստոսի դատին նկատմամբ, այլեւ կը ծառայեն Անոր.

Հիմա կը տեսնեմ ինչպէս Վերջին Դատաստանին հազարաւորներ դէպի ինծի կը վազեն, ըսելով. «Տէր, մենք

քարոզեցինք Պատգամը, մենք ջախջախեցինք դեւերը, մեր գեր-հոգեւոր ձեռնարկներուն մասին բոլորը խօսեցան»:
(Մատթէոսի 7.22)¹

Ես *Տը Մատճ* տարբերակը կը գործածեմ, քանի որ անիկա ամէնէն լաւ կերպով կը փոխանցէ այդ մարդոց լուսանցքային հաւատացեալներ չըլլալու իրականութիւնը: Անոնք ուղղակի մասնակից են կամ նեցուկ են իրենց եկեղեցիներուն գործերուն: Անոնք նաեւ իրենց հաւատքին մասին համարձակօրէն խօսող են. «Մենք քարոզեցինք Պատգամը»: Հիմնականին մէջ անոնք մաս կը կազմեն մարդոց կեանքերը բարելաւելու գործին:

Այս տարբերակը կը գործածէ *հազարատրներ* բառը, բայց գրեթէ միւս բոլոր թարգմանութիւնները կը գործածեն *շապեր* բառը: Անիկա յունարէն *փողոս* բառն է, որ կը սահմանուի իբրեւ՝ «մեծ թիւ, քանակ, տարողութիւն», եւ յաճախ կը գործածուի «մեծաւ մասամբ» իմաստով: Ամէն պարագայի Յիսուս չի խօսիր մարդոց պզտիկ խումբի մը մասին, այլ՝ հսկայական խումբի մը մասին, որոնք կը հաւատան Աւետարաններու ուսուցումներուն: Անոնք զինք «Տէր» կը կոչեն, իրենց զգացումներով Իրեն կապուած են, կը հոչակեն Իր Պատգամը եւ գործունեայ ծառայողներ են Քրիստոսի: Մենք դիւրութեամբ զանոնք պիտի կոչէինք ճշմարիտ Քրիստոնեաներ: Ուստի ինչ է զանազանող գործօնը: Անոնք ինչո՞վ տարբեր են իսկական Քրիստոնեաներէն: Յիսուս մեզի կ'ըսէ.

«Այն ատեն պիտի յայտարարեմ անոնց. “Ես բնաւ չէի *ճանչնար* ձեզ. հեռացէ՞ք քովես դուք՝ որ անօրէնութիւն կը գործէիք”»:
(Մատթէոսի 7.23, շեշտադրումը՝ մեր կողմէ)²

Բանալի եզրը հոս «անօրէնութիւն կը գործէիք»ն է: Դարձեալ, անօրէն վարմունք ունեցող մէկը չի յարիր կամ հաւատարիմ չ'ըլլար Աստուծոյ Խօսքի իշխանութեան: Այդ տղամարդիկն ու կիները երբեմն-երբեմն չէ, որ կը սայթաքին, այլ՝ երբ որ իրենց շահին կու գայ՝ կ'անտեսեն Աստուծոյ Խօսքը, կը լքեն զանիկա եւ անհնազանդ կ'ըլլան անոր. անոնք սուրբ վախ չունին:

Հետաքրքրական է նշել, թէ Յիսուս յայտարարեց. «Ես բնաւ չէի *ճանչնար* ձեզ»: Ինչպէս նախորդ գլուխներէն մէկուն մէջ նշեցինք, *ճանչնալ* բառը յունարէն *կինոնո* բառն է, որ նոյնն է ինչպէս եբրայերէն *եանփա* բառը, որ կը նշանակէ՝ մէկը ճանչնալ մտերմօրէն: Անոնք բնաւ

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տը Մատճ* (MSG) տարբերակէն

2 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

Իսկապէս մտերիմ յարաբերութիւն չեն ունեցած Յիսուսի հետ: Հակառակ անոր որ զԻնք Տէր կը կոչեն, անիկա պարզապէս տիտղոս մըն է, որովհետեւ չէին հնազանդած Անոր հրամաններուն: Յովհաննէս կը գրէ.

Կրնանք վստահ ըլլալ, որ կը ճանչնանք [*կինոսքո*] զինք եթէ հնազանդինք անոր պատուիրաններուն: Եթէ մէկը կ'ըսէ. «Կը ճանչնամ [*կինոսքո*] զԱստուած», բայց չի հնազանդիր Աստուծոյ պատուիրաններուն, այդ անձը ստախոս մըն է եւ ճշմարտութեան մէջ չ'ապրիր: (Ա.Յովհաննէսի 2.3-4)¹

Ատիկա կատարելապէս կը համապատասխանէ այն հաստատումին, որով Յիսուս կը սկսի Իր խօսքը. «Կրնաք մարդիկը ճանչնալ իրենց արարքներէն (առած քայլերէն)» (Մատթէոսի 7.20)²: Այդ արարքները Քրիստոնէական ծառայութիւնը, Պատգամը փոխանցելը կամ եկեղեցի յաճախելը չեն, որովհետեւ մերժողները պիտի ունենան այդ ատակութիւնները:

Այսպէս ըսեմ. վստահաբար այդ յատկանիշները պիտի գտնես իսկական հաւատացեալի մը մէջ: Իրականութեան մէջ անձ մը չի կրնար իրական հաւատացեալ ըլլալ առանց անոնց: Սակայն այդ յատկանիշները ունենալը չի նշանակեր, թէ ան Աստուծոյ հարազատ զաւակ մըն է: Որոշիչ գործօնը հետեւեալն է՝ ան հնազանդ է Յիսուսի խօսքերուն:

Այդ նիւթով է, որ Յիսուս կ'եզրափակէ Իր հոշակաւոր Լերան Քարոզը, Իր ցնցիչ խօսքերուն գագաթնակէտը դարձնելով հետեւեալ խօսքերը.

«Ուրեմն, ով որ իմ այս խօսքերս կը լսէ *եւ կը գործադրէ զանոնք*, պիտի նմանի այն իմաստուն մարդուն, որ իր տունը ժայռի վրայ կը շինէ: Անձրեւները կու գան, գետերը կը յորդին, հովերը կը փչեն եւ կը զարնուին տան, բայց տունը չի կործանիր, որովհետեւ ժայռի վրայ հաստատուած է:

«Իսկ ով որ իմ այս խօսքերս կը լսէ, բայց *չի գործադրեր զանոնք*, պիտի նմանի այն յիմար մարդուն, որ իր տունը աւազի վրայ կը շինէ: Անձրեւները կու գան, գետերը կը յորդին, հովերը կը փչեն եւ կը զարնուին տան, եւ տունը կը կործանի: Եւ ինչ ահաւոր կ'ըլլայ այդ տան կործանումը»: (Մատթէոսի 7.24-27, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Եթէ քննես երկու խումբերը, ամէն բան կը յանգի մէկ պարզ

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

տարբերութեան: Ան կը հաստատէ, թէ երկու խումբերն ալ կը լսեն Իր խօսքերը, բայց առաջին խումբը կը գործադրէ զանոնք, իսկ երկրորդ խումբը չի գործադրեր զանոնք. կամ՝ կրնանք ըսել, թէ առաջին խումբը կը դողայ Աստուծոյ Խօսքին դիմաց (կը վախնայ Աստուծմէ), իսկ երկրորդ խումբը չի դողար Աստուծոյ Խօսքին դիմաց (չի վախնար Աստուծմէ):

Յիսուս յստակ կը դարձնէ, թէ երկու խումբերը երեսութապէս շատ նման են իրարու: Հիմ չունեցող խումբին պարագային, Քրիստոնէութեան վարդապետութեան հանդէպ իրենց համոզումը, Յիսուսը ջերմեռանդօրէն «Տէր» կոչելը եւ իրենց գործունեայ Քրիստոնեայ ծառայողներ ըլլալը կը ներկայացնեն այն՝ թէ ինչպէս շինած են իրենց կեանքը, իրենց տունը: Ամուր հիմ ունեցող խումբը ունի բոլոր նոյն յատկութիւնները բացի անկէ, որ անոնք հնազանդեցան Յիսուսի խօսքերուն՝ կարծես իրենց սեփական կամքը ըլլային անոնք: Երկու տուներն ալ շինուած են նոյն նիւթերով, նոյն ուսուցումներով: Երկուքն ալ երեսութապէս նոյնն են պաշտամունքի եւ ծառայութեան առումով: Տարբերութիւնը հիմն է. չտեսնուածը: Մէկ խումբը մտերմութիւն ունի Աստուծոյ հետ, իսկ միւսը՝ ոչ:

Աստուծոյ հետ մտերմութիւն խոստացուած է անոնց, որոնք կը քալեն սուրբ վախով: Յաջորդ քանի մը գլուխներուն մէջ պիտի տեսնենք այն փառաւոր առանձնաշնորհումը, որուն հրաւիրուած ենք դուն եւ ես:

Անձնականացնել

Հատուած- Թող ձեր վայելած շնորհքն ու խաղաղութիւնը առատանան [...] Քրիստոս իր աստուածային զօրութեամբ [շնորհքով] մեզի պարգեւեց ամէն ինչ որ անհրաժեշտ է աստուածապաշտ կեանքի մը համար [...] Անիկա թանկագին ու մեծամեծ խոստումներ տուաւ մեզի, որպէսզի անոնցմով հաղորդակից ըլլանք աստուածային բնութեան, ձերբազատուելով աշխարհի մէջ տիրող կորստաբեր ցանկութիւններէն: (Բ.Պետրոսի 1.2–4)

Միտք- Փաստը, որ մէկը յարաբերութեան մէջ է Քրիստոսի հետ այն է, որ ան իր անձնական կարողութենէն անդին զօրութիւն մը ունի Անոր Խօսքը պահելու: Այդ զօրութիւնը կը կոչուի Աստուծոյ շնորհքը:

Խոկալ- Արդեօք Յիսուսի խօսքերուն կը փորձեմ հնազանդիլ իմ անձնական զօրութեամբս կամ կը վստահիմ Անոր շնորհքին, խոստումներուն եւ աստուածային բնութեան՝ աստիկա ընելու համար:

Ինչպէս կրնամ աւելի վստահիլ Իր կարողութեան փոխանակ իմ անձնական կարողութեանս:

Աղօթք- Հայր, ներէ ինձի իմ սեփական ոյժովս Քու Խօսքիդ հնազանդիլ փորձելուս համար: Այս պահէն անդին Յիսուսը կը հոչակեմ իբրեւ կեանքիս գերագոյն Տէրը: Ինչ որ Քու Խօսքդ կ'ըսէ վերջնական իշխանութիւն է կեանքիս մէջ: Ես միայն Քու զօրացնող շնորհքիդ եւ ինձի հաղորդած աստուածային բնութեան պիտի վստահիմ՝ Քու ճամբաներուդ մէջ քալելու համար: Ասիկա ճամբայ մըն է, զոր պիտի քալենք միասնաբար՝ մտերիմ յարաբերութեան մը մէջ: Ես շատ երախտապարտ եմ այս փառաւոր կեանքը ապրելու Քու հրաւերիդ համար: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն:

Դաւանութիւն- Ես հաւատքով պիտի քալեմ Իր կարողութեամբ: Այլեւս պիտի չվստահիմ իմ կարողութեանս, այլ՝ պիտի համագործակցիմ Իր տուած զօրութեան հետ:

Մենք բնաւ չենք լուսաւորուիր
կամ զարմանար մեր սեփական
խորհուրդներէն մեզի եկած
բաներով: Բայց երբ Աստուած
կը խօսի, միշտ կայ զարմանքի
եւ ահի մասնիկ մը:

– ՃՕՅ ՏՈՍԸՆ

32 | ՏԻՐՈՋ ԳԱՂՏՆԻՔԸ

Նախորդ երկու գլուխները դժուար էին, մարտահրավերներով լեցուն եւ սթափեցնող: Թէ՛ նեղացնող եւ թէ՛ սրտաճմլիկ է գիտնալը, թէ շատեր, որոնք կ'ակնկալեն, որ Յիսուս իրենց ըսէ՝ «Եկուր եւ մասնակից եղիր տիրոջդ ուրախութեան», փոխարէնը պիտի լսեն՝ «Հեռացէք ինձմէ»: Չկայ աւելի մեծ խաբկանք քան մտածելը, թէ յարաբերութեան մէջ ես Աստուծոյ հետ երբ իրականութեան մէջ չես: Այդ տղամարդիկն ու կիները յանկարծ սոսկումով պիտի անդրադառնան «Աստուծոյ հետ միացած ըլլալու» փոխարէն «զԱստուած օգտագործելու» իրենց անմտութեան: Անոնք Աստուծոյ Խօսքը գործածած էին իրենց անձին ծառայող նպատակներու համար փոխանակ ապրելու: Անոր հոյակապ սէրը՝ Անոր Խօսքին հնազանդելով: Իր մեծ սիրով, Յիսուս կը կանխագգուշացնէ այդ ահաւոր պատահարին մասին, որպէսզի պաշտպանէ մեզ գաղջ կամ խաբուած վիճակի մը մէջ սահելէ:

Հասկնալէ ետք մտերմութեան հակառակ վիճակին մասին, ուրախութեամբ սկսինք խօսիլ մեր Ստեղծիչին հետ իրապէս մօտիկ ըլլալու գեղեցկութեան մասին: Պիտի սկսինք *սենարհոյով* մը, զոր ամբողջապէս քննարկելը յաջորդ քանի մը գլուխներուն վրայ պիտի երկարի:

Սենարհոյին մուտքը պատրաստելու համար, պիտի հարցնեն հարցում մը. կարելի՞ է ըլլալ Թագաւորութեան մէջ անդամ մը (չլսել «Հեռացէք ինձմէ» սոսկալի բառերը), բայց տակաւին քեզմէ վրիպած ըլլայ Աստուծոյ հետ մտերմութիւն մշակելու առիթը: Արագ պատասխանն է՝ Այո: Բայց ատիկա տեսնենք Սուրբ Գիրքերուն մէջ, եւ սկսելու համար, պիտի բաժնեկցիմ իմ նախասիրած համարներէս մէկը.

Տիրոջ *գաղտնիքը* անոնց հետ է, որոնք կը վախնան Իրմէ, եւ Ան անոնց ցոյց պիտի տայ Իր ուխտը: (Սաղմոսներու 25.14, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹

Գաղտնիք բառին երբայերէնը *սուր* բառն է եւ կը սահմանուի իբրեւ՝ «խորհուրդ»: Յունարէն բառարանին մէջ նաեւ կ'ըսէ. «Գաղտնիութիւնը այդ եզրին կորիզն է»: Ուստի հիմնականին մէջ սաղմոսողը չի խօսիր մէկ գաղտնիքի մասին, այլեւ Աստուծոյ *գաղտնի խորհուրդին*, կամ մեր նպատակին ծառայեցնելու համար՝ անիկա պարզօրէն պիտի կոչենք *գաղտնիքներ* (յոզնակի): Վերի համարը կրնանք կարդալ իբրեւ՝ «Աստուած Իր գաղտնիքները կը բաժնեկցի անոնց հետ, որոնք կը վախնան Իրմէ»:

Հիմա դուն քեզի հարցուր հետեւեալ հարցումը. Որո՞նք հետ կը բաժնեկցիս գաղտնիքներդ. ծանօթներդ կամ մօտիկ բարեկամներդ: Վստահ եմ, որ «Մօտիկ բարեկամներուս» պատասխանեցիր: Աստուած ալ տարբեր չէ. Ան իր գաղտնիքները կը բաժնեկցի իր մտերիմ, մօտիկ բարեկամներուն հետ, եւ Անոր մօտիկ բարեկամները անոնք են, որոնք սուրբ վախով կ'ապրին: Աստուածաշունչի *Ինկլիշ Սթանտրդրոյ Վըրժըն* (ESV) տարբերակին մէջ այդ համարը հետեւեալ ձեւով թարգմանուած է. «Տիրոջ բարեկամութիւնը անոնց հետ է, որոնք կը վախնան իրմէ»:

Աստուած ամէն մարդու բարեկամը չէ: Աւելի որոշակիօրէն ըսեմ. *Աստուած բարեկամ չէ ամէն մարդու հետ, որ եկեղեցիին անդամ է*: Ատիկա աւելի ընդարձակելու համար, սկսինք Հին Կտակարանէն: Երկու մարդիկ Աստուծոյ բարեկամ կոչուած են. Աբրահամ եւ Մովսէս: Ուրիշներ կ'ան: Անշնչու. Նոյ, Դանիէլ, Եսթեր, Յովսէփ, Դաւիթ, Յոբ, Ենովք, Եսայի եւ շատ ուրիշներ Աստուծոյ հետ քալեցին իրենց կեանքին ընթացքին: Սակայն այդ երկու մարդոց կեանքերը կը ներկայացնեն այն ուղին, որ կ'առաջնորդէ Տիրոջ հետ բարեկամութեան:

Սկսինք Աբրահամով: Ինչո՞ւ ան կոչուած է Աստուծոյ բարեկամը: Երբ ան եօթանասունհինգ տարեկան էր, Աստուած խոստացաւ անոր տալ իր սիրտին փափաքը. որդի մը: Սակայն ատիկա անմիջապէս չպատահեցաւ: Ան քսանհինգ տարի եւս սպասեց նախքան որ Սառա՝ իր կինը, ծնաւ Իսահակը: Կրնամ երեւակայել ճիշտ գնահատանք կամ երախտագիտութիւն եւ քաղցրութիւն կար այդքան երկար ժամանակ սպասելէ ետք այդ խոստումի կատարումին մէջ:

Վստահ եմ, որ հայր-որդի յարաբերութիւնը աւելի եւս զօրացաւ

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* (NKJV) տարբերակէն

ամեն անցնող տարուայ հետ: Անոր մեծ հարստութիւնը ոչինչ էր՝ բաղդատած իր որդիով ունեցած ուրախութեան: Ոչինչ ակելի մեծ նշանակութիւն ունէր Աբրահամի համար. ոչ իսկ իր սեփական կեանքը:

Բայց յետոյ օր մը՝ առանց որեւէ մէկ տեսակի նախօրօք զգուշացումի, աղօթքի մը ատեն Աստուած Աբրահամին կ'ըսէ. «Այժմ ան քու որդիդ, քու սիրած մէկ հատիկ զաւակդ՝ Իսահակը, գնա՛ Մորիայի երկիրը, ու հոն զայն մատուցանէ՛ իբր ողջակէզ լեռներէն մէկուն վրայ՝ որ քեզի պիտի ըսեմ» (Ծնունդներու 22.2):

Ինչ: Մեղոհոր կեանքիդ ամենէն կարեւոր անձը կամ բանը, պարզապէս որովհետեւ Աստուած ըսաւ, որ ընես ատիկա եւ պատճառ ալ չտուաւ, թէ ինչո՛ւ: Լճորջ ես: Կրնամ պատկերացնել Աբրահամի ապրած ցնցումը այդ բառերը լսելէն ետք: Ան բնաւ չէր պատկերացներ, որ Աստուած այդպիսի դժուար բան մը պիտի ուզէր իրմէ: Ան Աբրահամէն նոյնիսկ իր կեանքէն ակելի բան մը ուզած էր. իր սիրտը իրմէ ուզած էր: Հասկնալի չէր իրեն համար:

Շտտեալ կարեւոր կէտը նշեմ. մենք այսօր գիտենք, որ ատիկա քննութիւն մըն էր, փորձարկում մը: Իրականութեան մէջ Աստուածաշունչը յստակօրէն կ'ըսէ ատիկա. «Այս բաներէն ետք Աստուած Աբրահամը փորձարկեց» (հմր 1): Մենք կը կարդանք պատմական իրադարձութիւն մը, որ արդէն եղած վերջացած է. գիտենք արդիւնքը: Հաւատացեալներէն շատեր լսած կամ կարդացած են զանիկա քանի մը անգամ: Բայց կը մոռնանք, որ Աբրահամ չէր գիտեր ատոր քննութիւն մը ըլլալը... Չենք գիտնար, որ փորձարկումի մը մէջ ենք մինչեւ որ անիկա ասարտի եւ զանիկա մեր ետին ձգած ըլլանք: Կրնաս խաբել դպրոցական գրաւորի մը մէջ, բայց ոչ ոք կրնայ խաբել Աստուծոյ քննութիւններուն մէջ: Եթէ մեր սիրտերը սրբագործելու նպատակով Իր Խօսքին մէջ բնակելու մեր պարտականութիւնը չենք ըրած, շատ դժուարութիւն պիտի ունենանք քննութեան յաջողելու հրքան ալ որ խելացի ըլլանք:

Եթէ Աբրահամի հետեւորդները գիտնային, թէ էրբ էր, որ Աստուած կը փորձարկէր զիրենք անապատին մէջ, տարբեր կեցուածք պիտի ունենային կամ տարբեր ձեւով պիտի վարուէին: Աբրահամ տարբեր բան մը ունէր, բան մը, զոր իր սերունդները չունէին. սուրբ վախը:

Կը սիրեմ Աբրահամի ընդառաջումը Աստուծոյ այդ չափազանց դժուար պատուէրին. «Աբրահամ առտուն՝ կանուխ ելաւ» (Ծնունդներու 22.3): Ան անմիջապէս գործի անցաւ: Երկար երկար չմտածեց ըսուածին մասին քանի մը օր կամ շաբաթ. իր բարեկամներուն չհեռաձայնեց՝ անոնց կարծիքը առնելու համար:

Չանտեսեց Աստուծոյ պատուէրը կամ չընդդիմացաւ անոր: Ինք, Իսահակ եւ երկու ծառաներ կանուխ արթնցան յաջորդ առտուն, պատրաստուեցան եւ սկսան իրենց ճամբորդութեան:

Քիչ մը աւելի դիւրին պիտի ըլլար մէկ գիշեր առաջ Աստուծոյ Խօսքը լսելէ ետք ըստածը անմիջապէս կատարելը, բայց երկուքկէս օր ետք՝ երբ Աբրահամ մէկ բառ եւս չէ լսած երկինքէն եւ հիմա ան կը գտնուի այն լեռան դիմաց, որուն վրայ պիտի զոհաբերէ իրեն համար ամէնէն կարելոր անձը կամ բանը... Պարզապէս որովհետեւ Աստուած ըսաւ, որ ատիկա ընէ՝ առանց որեւէ պատճառ տալու:

Աբրահամ կը հասնի լեռան ստորոտը եւ իր ծառաներուն կ'ըսէ, որ հոն սպասեն: Ան Իսահակը կ'առնէ եւ լեռը կը բարձրանան եւ զոհասեղան մը կը շինէ՝ այդ ամբողջ ընթացքին փորձելով ետ պահել իր ալեկոծ զգացումները եւ արցունքները: Իր ամբողջ կամքը եւ մտային ոյժը գործի լծած է՝ կատարելու համար այն ինչ որ պէտք է զոհ մը մատուցանելու համար: Ճակատագրական պահը կը հասնի. Աստուծոյ միտքը փոխուած ըլլալու ամէն յոյս կը թուի կորսուած ըլլալ: Ուստի, մեծ ցաւով, ան կը կապէ Իսահակը, կը վերցնէ դանակը եւ պատրաստ է զանիկա խրելու իր որդիին սիրտը... եւ այդ բոլորը պարզապէս որովհետեւ Աստուած ուզած էր, որ ընէր: Ոչ մէկ պատճառ տրուած էր:

Յանկարծ Աստուծոյ հրեշտակը կը յայտնուի եւ կ'աղաղակէ. «Տղային վրայ ձեռքդ մի՛ դնէր եւ անոր ոչինչ ըրէ, քանի որ *հիմա գիտցայ թէ Աստուծմէ կը վախնաս*, որովհետեւ քու մէկ հատիկ որդիդ չխնայեցիր ինձմէ» (Ծնունդներու 22.12, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Հրեշտակը ինչպէս գիտցաւ, որ Աբրահամ կը վախնար Աստուծմէ: Քանի որ ան *անմիջապէս* հնազանդած էր՝ երբ *հասկնալի չէր իրեն համար*, երբ *օգուտը մը կամ շահ մը չունէր* անոր մէջ, երբ *ցաւալի* էր ատիկա ընելը, եւ քանի որ ատիկա ըրաւ մինչեւ *կատարումը*:

Ապա Աբրահամ իր դանակը վար կը դնէ, կը քակէ Իսահակի կապերը, աչքերը կը վերցնէ եւ կը տեսնէ խոյ մը թաւուտին մէջ: Անոր բերանէն հետեւեալ բառերը դուրս կու գան. «Եհովա-Յիրէ», որ կը նշանակէ՝ «Տէրը պիտի նախախնամէ» (Ծնունդներու 22.14): Ինչ պատահեցաւ: Այդ պահուն Աստուած Աբրահամին յայտնաբերեց Իր նկարագիրին մէկ երեսը, որ ատկէ առաջ ուրիշ ուեւէ մէկը չէր գիտեր: Ինչո՞ւ: Որովհետեւ ան Աստուծոյ բարեկամն էր:

Յստակացնեմ: Բոլորդ, որ կը կարդաք այս գիրքը, կը ճանչնաք զիս իբրեւ Ճոն Պըվլիի հեղինակը: Անոնք, որ լսած են զիս խորհրդա-ժողովներու ընթացքին կամ եկեղեցիներու մէջ, կը ճանչնան զիս իբրեւ

Ճոն Պրվիր պատգամաբերը: Սակայն կայ կին մը, որուն անունը Լիսա է, որ կը ճանչնայ զիս իբրեւ Ճոն Պրվիր ամուսինը, Ճոն Պրվիր հայրը, Ճոն Պրվիր մեծհայրը, Ճոն Պրվիր մտերիմ բարեկամը, Ճոն Պրվիր սիրականը, եւ կրնամ տակաւին շարունակել շարքը: Շատ քիչեր իմ անհատականութեանս այդ երեսները կը ճանչնան. միայն անոնք, որոնք ամէնէն մօտիկն են ինծի: Եւ վերջին նշածս միայն Լիսան գիտէ:

Աբրահամ աւելի մօտիկ բարեկամ մը եղաւ Աստուծոյ այդ օրը, եւ յաջորդ գլուխին մէջ պիտի խօսինք այդ երկու բարեկամներուն արտասովոր ուժաբանութեան մասին, եւ թէ ինչպէս մենք եւս կրնանք այդ ձեւի յարաբերութիւն մը ունենալ:

Անձնականացնել

Հատուած- Տիրոջ [հետ քաղցր, գոհացնող ընկերակցութեան] գաղտնիքը ունին անոնք, որոնք կը վախնան Իրմէ [կ'ակնածին Իրմէ եւ կը պաշտեն զինք], եւ Ան անոնց ցոյց պիտի տայ Իր ուխտը եւ յայտնէ անոնց անոր [խորունկ, ներքին] իմաստը: (Սաղմոսներու 25.14)¹

Միտք- Աստուած Իր գաղտնիքները կը բաժնեկցի մօտիկ բարեկամներուն հետ, եւ Իր մօտիկ բարեկամները անոնք են, որոնք կ'ապրին սուրբ վախով:

Խոկալ- Ինչ է բարեկամը: Բարեկամներ ինչպէս միասնաբար կը վայելեն կեանքը: Ինչն է, որ բարեկամութիւն մը աւելի խորունկ կը դարձնէ: Ես պիտի ուզէի բարեկամ ըլլալ Աստուծոյ: Ինչ կը կարծեմ, որ ան կը փնտռէ բարեկամի մը մէջ: Ես լաւ բարեկամ եղամ եմ Իրեն: Եթէ ոչ, ինչ պէտք է փոխեմ: Ինչ են իմ փափաքներս Իր բարեկամը ըլլալուն հետ կապուած:

Աղօթք- Սիրելի Տէր, կը փափաքիմ ըլլալ Քու մտերիմ բարեկամներդ մէկը: Գիտեմ, որ ասիկա նաեւ Քու փափաքդ է: Երբ կը մտածեմ, թէ ինչ է մօտիկ բարեկամը, կ'անդրադառնամ, որ հաւատարիմ բարեկամ մը չեմ եղած Քեզի: Կը խնդրեմ, որ ներես ինծի՝ Քու փափաքներդ ամէն բանէ վեր չընելուս եւ մեր յարաբերութիւնը չպաշտպանելուս համար իմ ապրելու ձեւիս եւ Քեզի ընդառաջելուս մէջ: Շնորհք կը խնդրեմ բարեկամդ ըլլալու յաւիտեան: Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Պիտի ջանամ Աստուծոյ բարեկամը ըլլալ, եւ կ'որոշեմ ուրիշ որեւէ մէկ բան աւելի առաջնահերթ չհամարել:

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անկլիիֆայր Պայպըլ, Քրիստոս Էրիշըն* (AMPC) տարբերակէն

Աստուծոյ վախը կը լուսաւորէ
մարդուն շունչը, կը բնաջնջէ
չարը, կը տկարացնէ կիրքերը,
կը վտարէ խաւարը շունչէն եւ
զանհիկա մաքրամաքուր կ'ընէ:
Աստուծոյ վախը իմաստութեան
գագաթնակէտն է: Հոն,
որ անհիկա չկայ, ոչ մէկ լաւ
բան կը գտնես: Ան, որ չունի
Աստուծոյ վախը, բաց է դիւային
անկումներու:

– ԷՖՐԷՄ ԱՍՈՐԻՆ

33 | ՆԵՐՔԻՆ ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐԸ ԿԱՄ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խօսեցանք անոր մասին, թե Աբրահամի եւ Աստուծոյ բարեկամութիւնը ինչպէս շինուեցաւ: Անիկա օրինակ մըն է, թէ մենք ինչպէս նոյնպիսի մտերմութեան յարաբերութեան մը մէջ կրնանք մտնել Աստուծոյ հետ: Բայց նախքան այդ մասին խօսիլը շարունակենք Աբրահամի հետ: Կը կարդանք.

Աբրահամ, մեր նախահայրը, *իր գործերով* չէր որ արդարացաւ, երբ իր զաւակը՝ Իսահակը զոհասեղան բարձրացուց զոհ մատուցանելու համար [...] Եւ Աբրահամ *Աստուծոյ բարեկամ կոչուեցաւ*: (Յակոբոսի 2.21,23, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Յակոբոս Առաքեալ կը խօսի անոնց բարեկամութեան մասին, եւ զուգադիպութիւն չէ, որ Յակոբոսի եւ հրեշտակին գործածած բառերը նոյնն են: Այդ մօտիկութեան պատճառը Աբրահամի սուրբ վախն էր, որ ապացուցուեցաւ անոր արագ եւ անմիջական հնազանդութեամբ (գործերով): Նոյնիսկ երբ հրամանը կամ պատուէրը հասկնալի չէր իրեն համար, բացայայտ օգուտ մը չունէր իրեն հետ կապուած եւ ցաւալի էր զանիկա կատարելը, ան դողաց Աստուծոյ Խօսքին դիմաց: Աստուծոյ վախը կը մղէ մեզ թէ՛ *կամենալու* եւ թէ՛ *կատարելու* այն ինչ որ Աստուած կ'ուզէ մեզմէ, որ ընենք:

Օր մը Աստուած հետեւեալ հարցումը ուղղեց երկու հրեշտակներուն, որոնք իրեն կ'ընկերակցէին Աբրահամին տուած Իր այցելութեան ատեն Մամբրէի կաղնիներուն քով. «Միթէ Աբրահամէն ծածկեմ ինչ որ պիտի ընեմ» (Ծնունդներու 18.17):

Ապա Տէրը Իր մտադրութեան մասին խօսեցաւ Աբրահամին, եւ երկու հրեշտակները շարունակեցին իրենց ճամբան դէպի Սոդոմ եւ Գոմոր: Յետոյ պատահածները իմ բառերովս պիտի ըսեմ, որպէսզի ատիկի դիւրաւ ընթեռնիլ ըլլան: Ուստի հիմնականին մէջ Տէրը ըսաւ. «Աբրահամ, կ'ուզեմ պայթեցնել այդ երկու քաղաքները, որովհետեւ անոնց մեղքին աղաղակը շատ բարձր կ'ելլէ: Ինչ է կարծիքդ»:

Կրնամ պատկերացնել այդ բառերը լսել Ստեղծիչէն: Յնցուած, Աբրահամ կը պատասխանէ. «Սոդոմը»:

Տէրը կը պատասխանէ. «Այո, այո, Գոմորն ալ: Ինչ է կարծիքդ ստոր մասին»:

Խուճապի մատնուած ըլլալով, Աբրահամ ինքն իրեն կ'ըսէ. *Մտածէ՛, Աբրահամ, մտածէ՛: Եղբորորդիս Ղովորը հոն կ'ապրի, ուստի պէտք է բարեխօսեմ իրեն համար ինչպէս նաեւ հոն գտնուող անմեղներուն համար:* Աբրահամ հետեւեալ գաղափարը կ'ունենայ.

Արդեօք ամբարիշտին հետ արդամրն ալ պիտի կորսնցնես: Թերեւս այդ քաղաքին մէջ յիսուն արդար ըլլան. արդեօք անոր մէջ եղող յիսուն արդարին համար չխնայելով՝ պիտի կորսնցնես այդ տեղը: Հեռու քեզմէ՝ որ այսպիսի բան մը ընես, որ արդարը ամբարիշտին հետ մեռցնես, եւ արդարը ամբարիշտի պէս ըլլայ: Ամենեւին: Միթէ ամբողջ երկրի Դատաւորը իրատունք պիտի չգործադրէ: (Ծնունդներու 18.23–25)

Կրնամ պատկերացնել Աստուծոյ ուրախութիւնը եւ հաճութիւնը՝ լսելով Իր ուխտի մարդուն պատասխանը: Ան շատ հաւանաբար պատասխանեց. «Շատ ճիշդ կ'ըսես: Լա՛ւ, պիտի չկործանեմ այդ երկու քաղաքները եթէ յիսուն արդար մարդիկ ըլլան հոն: Շատ ուրախ եմ, որ բարեկամիս՝ Աբրահամի հետ խօսեցայ»:

Բայց Աբրահամ չբաւարարուեցաւ. հապա եթէ յիսուն արդար չկայ հոն... Ուստի ան կը կրկնէ ըսածը՝ թիւը քառասունհինգի պակսեցնելով:

Տէրը կը պատասխանէ. «Նորէն ճիշդ ես: Լա՛ւ, քաղաքները պիտի չկործանեմ եթէ քառասունհինգ արդար մարդ գտնուի հոն: Շատ ուրախ եմ, որ բարեկամիս՝ Աբրահամի հետ խօսեցայ»:

Աբրահամ կանգ չ'առնէր. կը շարունակէ նիւթը՝ քառասունհինգէն քառասունի, յետոյ երեսունի, յետոյ քսանի եւ վերջապէս տասը

արդար մարդու իջեցնելով թիւր: Ան ինքն իրեն կը մտածէ. *Պէ՛տք է տասը արդար ըլլայ հոն: Եղբօրորդիս Ղովորը անոնցմէ մէկն է. ինը ուրիշներ ալ կան վստահ:*

Միայն բարեկամ մը կրնայ այդ ձեռով խօսիլ թագաւորի մը հետ, որ կրնայ դատաստան գործարդել: Ծառայէ մը կամ ենթակայէ մը եկած այդպիսի դիմում մը անարգական պիտի ըլլար: Տէրը ընդունեց անոր իւրաքանչիւր խնդրանքը եւ ապա կը կարդանք. «Տէրը գնաց՝ Աբրահամի հետ խօսիլը աւարտելէն անմիջապէս ետք. Աբրահամ ալ իր տեղը վերադարձաւ» (Ծնունդներու 18.33):

Յիշենք, որ Աստուծմէ վախնալ կը նշանակէ սիրել այն ինչ որ Ինք կը սիրէ եւ ատել այն ինչ որ Ինք կ'ատէ: Օր մը երբ սիրով բժշկութեան աղօթք ըրած էի մէկու մը համար, որ սխալ վարմունք ունեցած էր ինծի հանդէպ, Աստուած ինծի ըսաւ. «Որդիս, երբ դուն կը սիրես այն բանը, որ ես կը սիրեմ (մարդիկը), Ես ալ Իմ ծրագիրներուս մասին կը խօսիմ հետդ»: Սուրբ վախը կարող կը դարձնէ մեզ, որ սիրենք անելի իսկական եւ անելի խորունկ ձեռով ոչ միայն զԱստուած, այլեւ մարդիկը:

Սուրբ Գիրքը կ'ըսէ, թէ Սողոմի եւ Գոմորի բնակիչները «կ'ուտէին, կը խմէին, կը գնէին, կը ծախէին, կը տնկէին ու կը շինէին» (Ղուկասի 17.28): Մեզի համար անելի հասկնալի պատկերի մը մէջ դնելով, ըսենք. «Կեանքը լաւ է, տնտեսութիւնը զարգացման մէջ է, եւ եթէ Աստուած կայ, Ան հարց չունի մեր ապրելակերպին հետ»: Այդ քաղաքները շուրջ քսանչորս ժամ ետք պիտի կործանուէին, եւ անոնց բնակիչները բանէ մը լուր չունէին: Բայց ատիկա ամէնէն ահազանգային իրականութիւնը չէ:

Սարսափելի իրականութիւնը հետեւեալն է. Ղովտ, որուն մասին Աստուածաշունչը կ'ըսէ, թէ արդար էր (տէս Բ.Պետրոսի 2.7), նոյնքան անտեղեակ էր պատահելիքէն: Այսինքն՝ ան տարբեր չէր իր շուրջի բոլոր անաստուած մարդոցմէ: Երկու հրեշտակներ պէտք էր գային եւ զինք ու իր ընտանիքը հանէին անկէ, եւ ատիկա եղաւ որովհետեւ Աբրահամ աղօթեց (Ծնունդներու 19.29):

Այդ պատմութիւնը անելի հասկնալի դարձնելու համար, զանիկա նկարագրենք այնպէս ինչպէս կարծես մեր ժամանակին պատահած ըլլար: Ունինք երկու *արդար* տղամարդիկ. երկու փրկուած, վերստին ծնունդ ստացած Քրիստոնէայ տղամարդիկ: Այդ *արդար* մարդոցմէ մէկը գիտէ, թէ Աստուած ինչ պիտի ընէ նախքան ընելը, եւ կ'օգնէ Աստուծոյ, որ որոշէ ինչպէս պիտի ընէ զանիկա: Միւս արդար մարդը անտեղեակ է գալիք դատաստանէն, ճիշդ ինչպէս չարերը անտեղեակ են: Ինչո՞ւ: Առաջին արդար մարդը կը վախնայ Աստուծմէ, հետեւաբար

Աստուծոյ բարեկամն է եւ գիտէ Աստուծոյ գաղտնիքները: Երկրորդ արդար մարդը չի վախնար Աստուծմէ, հետեաբար Աստուծոյ բարեկամը չէ եւ չի գիտեր Աստուծոյ գաղտնիքները:

Ղովտ արդար կոչուեցաւ, բայց ան աշխարհիկ էր: Ան կը ներկայացնէ այն հաւատացեալը, որ երբ դժուարութեան հանդիպի, իր շահին ծառայող ընտրութիւնը կ'ընէ, ինչպէս Կորնթոսի եկեղեցին եւ մեր Արեւմտեան Եկեղեցին մէջ շատ մը հաւատացեալներ: «Արդար» տղամարդոց եւ կիներու այդ խումբին Աստուծոյ հետ ունեցած յարաբերութիւնը շատ տարբեր չէ Միացեալ Նահանգներու նախագահին հետ իմ ունեցած յարաբերութենէս: Ես կ'օգտուիմ անոր որոշումներէն եւ ղեկավարութենէն, բայց չեմ գիտեր անոր ներքին վերջին լուրերը կամ նորութիւնները, ծրագիրները, անձնական զգացումները կամ որոշումները նախքան որ յայտարարէ զանոնք:

Ղովտի նկարագիրը բացայայտ դարձաւ իր բնակութեան վայրի որոշումէն, իբրեւ կին իր ընտրած զոյգէն եւ իր աղջիկներուն հետ յարաբերութեան միջոցաւ իրեն ծնած զաւակներէն, որոնցմէ սերեցան մովաբացիները եւ ամմոնացիները: Ղովտ բնակութեան համար ընտրեց այն վայրը, որ լաւագոյնը երեւցաւ իրեն: Երբ պիտի բաժնուէին, Աբրահամ անոր տուաւ իր բնակութեան վայրը որոշելու ընտրութիւնը՝ ըսելով, թէ ինք պիտի երթար ճիշդ հակառակ ուղղութեամբ: Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Ղովտ երկար նայուածք մը նետեց Յորդանանի բարեբեր դաշտին վրայ» (Ծնունդներու 13.10, շեշտադրումը՝ մեր կողմէ): Ինչհիւ երկար նայուածք մը: Ան գիտէր այդ դաշտերուն մէջ գտնուող քաղաքներուն չարութիւնը: Ան շատ հաւանաբար կը փորձէր որոշել, թէ ինչպէս կրնար օգտուիլ աշխարհի համակարգի բարիքներէն առանց անոր ծուղակներուն մէջ իյնալու: Ան ծրագիր մը կազմեց: Որոշեց իր վրանը դնել դաշտին մէջ՝ ապահով տարածութեան մը չափ հեռու չարութեան կեդրոններէն (տես Ծնունդներու 13.12), բայց անոր զիջողական ծրագիրը չյաջողեցաւ: Յետագային ինք եւ իր ընտանիքը մտան քաղաքի դարպասներէն ներս եւ հոն բնակեցան. ան վերջաւորութեան ներգրաւուեցաւ:

Երբ չունինք սուրբ վախ, վերջաւորութեան պիտի փորձենք կարելի եղածին չափ մօտենալ աշխարհին՝ առանց մէջը իյնալու: Սակայն եթէ ասիկա ըլլայ մեր շարժառիթը, պարզապէս ժամանակի հարց է աշխարհին մեզ իր մէջը քաշելը: Պէտք է յիշենք, որ մենք աշխարհ կանչուած ենք չփրկուածներուն աւետարանելու համար եւ ոչ թէ անոր մաս կազմելու համար:

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Ղովտի կեանքը կը ծառայէ իբրեւ զգուշացում մեզմէ իւրաքանչիւրին: Դատաստանի օրը Ղովտի վրայ պիտի գար գիշերուայ գողին պէս եթէ Աբրահամ բարեխօսած չըլլար: Սոսկալի հետեւանքներ ունեցան անոր աշխարհային հակումները: Ինչպէս ըսինք, Ղովտ շատ անբարեպաշտ ձեռով զաւակներ ունեցաւ: Անոր կինը այնքան կապուած էր Սողոմի, որ անհնազանդ գտնուեցաւ ետ չդառնալու հրեշտակներուն հրամանին, որուն արդիւնքը դատաստան եղաւ. ան անմիջապէս աղի արձանի վերածուեցաւ: Իր սիրովը, Յիսուս մեզի կը զգուշացնէ՝ «Յիշեցէք Ղովտի կնոջ պարագան» (Ղուկասի 17.32):

Իմաստութիւն է հարցնել, թէ բարեկամութեան այդ պայմանը կիրարկելի՞ է նաեւ մեզմէ անոնց համար, որոնք Աստուծոյ զաւակներ են: Այդ մասին շուտով պիտի խօսինք, բայց նախ խօսինք Հին Կտակարանին մէջ Աստուծոյ միւս բարեկամին մասին:

Անձնականացնել

Հատուած- Մօտեցէք Աստուծոյ, եւ Աստուած ինք պիտի մօտենայ ձեզի: Ձեր ձեռքերը լուացէք, մեղաւորներ. մաքրագործեցէք ձեր սիրտերը, որովհետեւ ձեր հաւատարմութիւնը բաժնուած է Աստուծոյ եւ աշխարհին միջեւ: (Յակոբոսի 4.8)¹

Միտք- Աստուած Իր ծրագիրները կը բաժնեկցի անոնց հետ, որոնք կը վախճան Իրմէ: Ան Իր ծրագիրները կը պահէ անոնցմէ, որոնց հաւատարմութիւնը բաժնուած է Աստուծոյ եւ աշխարհին միջեւ:

Խտկալ- Յիսուս կ'ըսէ. «Երբ գայ ինքը՝ Սուրբ Հոգին [...] ձեզի պիտի պատմէ գալիք բաները» (Յովհաննէսի 16.13): Ատիկա ինչպէս կը կապուի Աստուծոյ եւ Աբրահամի յարաբերութեան հետ: Արդեօք կ'ուզէմ, որ Աստուած Իր ծրագիրները բաժնեկցի ինձի հետ:

Աղօթք- Սիրելի Տէր, կը փափաքիմ լսել Քու գաղտնի խորհուրդդ: Կ'անդրադառնամ, որ աշխարհային բաներ կը փափաքիմ ինչպէս Ղովտ փափաքեցաւ: Ես հիմնականօրէն ինքզինքս հանած եմ Քու ներքին շրջանակէդ: Կը զղջամ ատոր համար: Կը խնդրեմ, որ ամբողջութեամբ մաքրես զիս Յիսուսի՝ իմ Տիրոջս արիւնով: Կը խնդրեմ, որ ընդունիս զիս իբրեւ մէկը, որուն հետ կը բաժնեկցիս Քու խորհուրդդ: Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Ես կ'ընտրեմ զԱստուած, ոչ աշխարհը:

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Միայն երբ Աստուծոյ
ներկայութեան մէջ ըլլանք եւ
լեցուինք մեզ գրաւող ահով
եւ մեծարանքով, կը սկսինք
պաշտել զԱստուած հոգիով եւ
ճշմարտութեամբ:

– ԱԼԻՍԹԸՐ ՊԷԿ

34 | ԴԷՄ ԱՌ ԴԷՄ

Հիմա նայինք Հին Կտակարանի միւս մարդուն, որ «բարեկամ» կոչուած է՝ Աստուծոյ հետ իր յարաբերութեան մէջ:

Տէրը կը խօսէր Մովսէսի հետ՝ *երես առ երես*, ինչպէս մարդ մը իր *բարեկամին* հետ կը խօսի: (Ելքի 33.11, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Գրեթէ անհասկնալի է, որ Աստուածաշունչը կը գործածէ «երես առ երես» եզրը՝ Աստուծոյ եւ Մովսէսի յարաբերութիւնը նկարագրելու համար: Նկատի ա՛ռ, որ ասիկա Ամենակարող Աստուածն է, ոչ թէ թաղեցի բարեկամ մը կամ նոյնիսկ հոշակաւոր անձնաւորութիւն մը: Կ'ըմբռնեն այդ հաստատումին մեծութիւնը: Մտերմութիւն նկարագրող այդ եզրը միայն մէկ անգամ չէ, որ գործածուած է. անիկա երկրորդ անգամ մը եւս գործածուած է երբ Տէրը զայրացած էր Ահարոնէն եւ Մարիամէն՝ Մովսէսը քննադատելնուն համար: Ան խստօրէն հոշակեց.

«Իմ ամբողջ տանս մէջ անոր է, որ կը վստահիմ: Ես անոր հետ *երես առ երես* կը խօսիմ, յստակօրէն եւ ոչ հանելուկներով: Ան Տէրը կը տեսնէ այնպէս ինչպէս որ է: (Թիւերու 12.7–8, շեշտադրումը՝ մեր կողմէ)՝

Երբ Աստուած կ'ըսէ «կը վստահիմ քեզի», ատիկա ամէնէն մեծ գովասանքներէն մէկն է, որ մարդ արարած մը կրնայ ստանալ: Ատիկա մեզի համար աւելի յստակ կը դարձնէ Աստուծոյ հետ բարեկամութեան բնոյթը. վստահութեան հիմը: Ինչն է, որ վստահութիւն կը կերտէ Աստուծոյ քով:

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Անպայմանական հնազանդութիւն. միշտ ընել այն ինչ որ կ'ուզուի
Բացարձակ պարկեշտութիւն. միշտ խօսքդ յարգել
Անսասան առաջնահերթութիւն. միշտ Իր փափաքները
առաջին կարգի դնել
Գիտնալ Անոր սիրտը. միշտ ընտրել Աստուծոյ կամքը երբ
որոշումներ կու տաս

Չորսին մէջ ալ յարատեւելը շատ կարեւոր է: Եթէ մարզերէն մէկուն մէջ խախտում ըլլայ, արագ եւ անկեղծ զոջումը քեզ ետ կը դնէ վերաշահուած վստահութեան ճամբուն մէջ: Սուրբ վախը կը քաջալերէ մեզ, որ այդ վստահելիութիւնը ունենանք չորս մարզերուն մէջ ալ, եւ Մովսէս բարձր մակարդակով ունէր այդ մէկը: Այս գլուխին մէջ պիտի կեդրոնանանք երրորդ եւ չորրորդ մարզերուն վրայ. հիմնականօրէն, միշտ գիտնալ եւ ընտրել Աստուծոյ սիրտը:

Նկատի առ Մովսէսի կեանքը. անոր առաջին քառասուն տարիները լեցուն էին մեծ հարստութեամբ, լաւագոյն կերակուրներով, նորոյթ հագուստներով, լաւագոյն ստացուածքներով եւ ամէն տեսակի փափաքելի հաճոյքով: Ան կ'ապրէր հոյակապ տան մը մէջ. ոչ ոք երկրի վրայ անելի հարուստ էր կամ հզօր քան անոր մեծհայրը՝ փարաւոնը: Սակայն կը կարդանք.

Նախընտրեց Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ [...] Եգիպտոսի գանձերէն շատ անելի մեծ հարստութիւն նկատեց՝ Քրիստոսի կրած նախատինքները կրել, որովհետեւ աչքերը յառած էր *Աստուծոյ վարձապրութեան*: (Եբրայեցիներուն 11.25–26, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Մովսէս *նախընտրեց* այդ բոլորէն հրաժարիլ: Ան կրնար փորձել Աստուծոյ ծառայել պալատին մէջ, բայց ան հետամուտ էր *վարձապրութեան* մը, որ Եգիպտոս մնալովը ձեռք պիտի չձգէր: Խոստացուած երկիրն էր: Հաւանական չէ, որ անիկա ըլլար, քանի որ ինչ կար կաթի ու մեղրի երկրին մէջ, որ ինք արդէն իսկ չունէր:

Գիտնալու համար, թէ ան ամէնէն անելի ինչ բանի հետամուտ էր, նկատի առնենք անոր կեանքը պալատէն ետք: Պալատը ձգելու անոր ընտրութիւնը իմաստո՞ն բան մըն էր: Արդեօք իր կեանքի պայմանները անելի լաւ էին քան Եգիպտոսի մէջ իշխան ըլլալը: Ժողովուրդ կառավարելը ձգեց՝ անապատին մէջ քառասուն տարի ոչխար արածելու համար: Ատիկա երկար ժամանակ է ոչխար արածելու համար: Յետոյ ան Աստուծոյ ժողովուրդը փարաւոնէն ազատելու շատ դժուար եւ երկար

գործընթացը ապրեցաւ: Եթէ այդ բոլորը բաւարար չէին, ան սկսաւ ապրիլ վրանի մը տակ չոր անապատի մը մէջ. կեանք մը, որ լեցուն էր մեծ մարտահրաւերներով: Այն ժողովուրդը, զոր կ'առաջնորդէր գանգատող էր, կռուազան եւ բոլորովին դժգոհ անոր ղեկավարութենէն:

Այդ բոլորին կողքին Աստուած Մովսէսին կ'ընէ առաջարկ մը, որ պիտի պակսեցնէր ճնշումին եւ տագնապներուն մեծ մասը: Կը թելադրէ Մովսէսին, որ հաւաքէ ժողովուրդը եւ տանի զիրենք խոստացուած երկիրը: Ան կը նշանակէ հրեշտակ մը, որ առաջնորդէ զիրենք եւ ետ մղէ բոլոր հակառակորդ ազգերը: Տէրը կը յիշեցնէ Մովսէսի, որ անիկա հարուստ եւ բարեբեր հող մը պիտի ըլլայ, բայց վերջաւորութեան կ'ըսէ. «Բայց ես ձեզի հետ պիտի չերթամ» (Ծնունդներու 33.3)¹:

Պահ մը կանգ առ եւ նկատի առ այն ինչ որ Մովսէս եւ ժողովուրդը կ'ապրէին ամէն օր: Անոնք իրենց կեանքին մէջ այլազանութիւն չունէին: Չկային գեղեցիկ հովիտներ, գետեր, անտառներ, բարեբեր հող, պարտէզներ, մրգաստաններ կամ արօտավայրեր: Ոչ ոք տաքուկ լոգանք մը առած էր, հանգիստ անկողինի մը մէջ քնացած էր, լուացուած, մաքուր հագուստներ հագած էր կամ գնումի համար շուկայ գացած էր երկար ժամանակէ ի վեր: Անոնց ճաշատեսակը բացարձակապէս ճանճրացուցիչ էր. չկային թարմ պտուղներ կամ բանջարեղէն, չկար ձուկ կամ կովու միս, չկար անուշեղէն, այլ՝ միայն հացի տեսակ մը, որ ամէն առտու գետինէն կը հաւաքէին՝ առանց իրեն ընկերակցող պիստակի կարագի, անուշի կամ պաղ մսեղէններու. եւ ուրիշ ոչինչ:

Եգիպտոսի մէջ ստրկութիւնը սոսկալի էր, բայց չոր անապատին մէջ թափառիլն ալ անկէ լաւ չէր. երկու պայմաններն ալ չափազանց դժուար էին՝ իրարմէ տարբեր ձեւերով: Սակայն անապատին մէջ իսրայէլացիները յոյս մը ունէին. ունենալ իրենց սեփական երկիրը՝ հարուստ, բարեբեր եւ գեղեցիկ: Անոնք ատոր սպասած էին սերունդներէ ի վեր:

Կրնանք երեւակայել լսել Աստուծոյ այդ հրաշալի բառերը: Վստահաբար Մովսէս պիտի ընդունի այդ առաջարկը, լեռնէն վար պիտի իջնէ աճապարելով եւ այդ մեծ լուրը պիտի բաժնեկցի ժողովուրդին հետ: Ապա ժողովուրդը տօնակատարութեան պիտի սկսի, պիտի գովաբանէ զինք իբրեւ մեծ ղեկավար մը եւ ամէն մարդ ուրախութեամբ պիտի սկսի իր երկար ատենէ ի վեր սպասուած ճամբորդութեան դէպի երկար ատենէ ի վեր սպասուած խոստացուած երկիրը: Սակայն մտիկ ըրէ Աստուծոյ առաջարկին դիմաց Մովսէսի պատասխանը.

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Կուր Նիուզ Թրանսլէյշըն* (GNT) տարբերակէն

«Եթէ քու ներկայութիւնդ մեզի հետ չերթայ, մեզ *ասկէ* մի՛ հաներ»: (Ելքի 33.15, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Յիշեցնենք, թէ ո՞ր էր «ասկէ»ն: Անիկա խնդիրներու, ճնշումի եւ դժուարութեան վայրն էր: Մովսէսի տուած պատասխանը շփոթեցուցիչ եւ նոյնիսկ ապշեցուցիչ է անոնց համար, որոնք լուսատրուած չեն: Հիմնականին մէջ ան հռչակեց. «Եթէ ես պէտք է ընտրեմ Քու *ներկայութեանդ* եւ Քու *օրհնութեանդ* միջեւ, Քու *ներկայութիւնդ* կը նախընտրեմ»: Ինչո՞ւ: Կրնաս մէկու մը մասին գիտնալ իր բացակայութեան, բայց չես կրնար մօտիկ եւ մտերմիկ ըլլալ անոր հետ: Ատիկա էր Մովսէսի ցանկացած վարձատրութիւնը:

Կրնաս հարց տալ, թէ Աստուած ինչպէս ուրախ պիտի ըլլար Մովսէսով երբ ան կը մերժէր ընել այն ինչ որ կ'ըսուէր իրեն: Մովսէս գիտէր Աստուծոյ սիրտը: Հետեւեալը նկատի առ. պատահամ է, որ քու սիրած անձիդ առիթը տաս, որ ընէ բան մը, որ օգտակար կամ հաճելի է միայն իրեն համար եւ անկեղծօրէն ուզած ես, որ ասիկա ընէ, բայց ան զարմացուցած է քեզ, ըսելով. «Ո՛հ, կը նախընտրեմ քեզի հետ ըլլալ փոխանակ հաճոյքի ժամանակ անցընել առանց քեզի»: Այդ ձեւի պատասխանները հազուագիւտ կ'ըլլան, յուզիչ եւ հիանալի:

Մովսէս կը վախնար Աստուծմէ, ուստի այն ինչ որ կարելի էր Աստուծոյ համար միշտ իր առաջնահերթութիւնն էր. ան Աստուծոյ սիրտը ունէր եւ հետեւաբար նաեւ Անոր վստահութիւնը: Իր առաջնորդած ժողովուրդը ուրիշ սիրտ ունէր: Կը կարդանք.

Ան [Աստուած] իր *ճամբաները* [*նկարագիրը*], ըստ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակին՝ Մովսէսի ճանչցուց, եւ իր *արարքները*՝ Իսրայէլի որդիներուն: (Սաղմոսներու 103.7)

Ինչպէս Աբրահամի պարագային, նոյնպէս ալ Աստուած իր *նկարագիրը* յայտնեց Մովսէսին: Աստուածաշունչի *Տը Կուր Նիուզ Թրանսլէյշըն* (GNT) տարբերակին մէջ կը կարդանք, թէ Աստուած Իր *ծրագիրները* յայտնեց Մովսէսին: Այլ խօսքով, Ան Իր անձնական գաղտնիքները յայտնեց Մովսէսին, բայց ոչ Իսրայէլին: Իսրայէլ միայն գիտէր զԱստուած իրենց աղօթքներուն Անոր պատասխանելովը. Անոր *արարքներովը*:

Քանի՞ հաւատացեալներ այսօր զԱստուած կը ճանչնան միայն պատասխանուած աղօթքներու միջոցաւ: Անոնց յարաբերութիւնը Անոր հետ աւելի գործարքային է, ոչ մտերմիկ: Անոնք գիտեն Անոր խօսքերը, բայց ոչ Անոր սիրտը: Աստուածաշունչը յաճախ անոնց

կողմէ նկատի կ'առնուի իբրեւ օրէնքներ եւ հին պատմութիւններ կամ կը գործածուի միայն իբրեւ ներշնչումի աղբիւր մը: Աւելի գէշը այն է, որ անիկա կը շրջուի՝ արտօնութիւն տալու համար անօրէն վարմունքի, փոխանակ նկատի առնուելու իբրեւ Աստուծոյ սիրտը յայտնաբերող կեանք փոխող ճշմարտութիւններ:

Թէ՛ Մովսէս եւ թէ՛ Իսրայէլ արդար էին, ոչ տարբեր քան Աբրահամը եւ Ղովտը: Սակայն միայն անոնք, որոնք կը վախնան Աստուծմէ իրաւունք ունին ճանչնալու Անոր սիրտը՝ նկարագիրը, գաղտնիքները եւ ծրագիրները: Աստուած ինչո՞ւ վստահեցաւ Մովսէսին, բայց ոչ Իր ժողովուրդին: Որովհետեւ Աստուած գիտէր, որ Մովսէսին միշտ պիտի ընտրէր Աստուծոյ սիրտը՝ իրեն համար լաւագոյնին փոխարէն. ասիկա սուրբ վախ է:

Երբ Իսրայէլ ոսկիէ հորթը շինեց Ելքի Գիրքին մէջ, Աստուած Իր զայրոյթին մէջ հռչակեց.

«Ուստի հիմա ձգէ՛ զիս՝ որ իմ բարկութիւնս անոնց դէմ բորբոքի եւ սպառեմ զանոնք, ու քեզ մեծ ազգ մը պիտի ընեմ»: (32.10)

Անգամ մը եւս նկատառելի առաջարկ մը կը կատարուի. Մովսէսը մեծ ազգ մը ընել: Անհաւատալի: Ինչ պատասխան տուաւ Մովսէս: Անգամ մը եւս ան ընտրեց այն ինչ որ լաւագոյնն էր Աստուծոյ համար, ոչ իրեն: Ան համարձակօրէն դէմ դրաւ այդ առաջարկին՝ յիշեցնելով Աստուծոյ Իր համբաւը Եգիպտոսի եւ զիրենք դիտող աշխարհին դիմաց. ըսաւ, որ պիտի ըսէին, թէ Աստուած հաւատարիմ չէր Իր ժողովուրդին հանդէպ: Անոնց խօսակցութիւնը այնքան սաստկացաւ, որ Մովսէս բացայայտօրէն ըսաւ. «Միտքդ փոխէ՛» (տե՛ս հմր 12): Ան քաջութիւնը ունեցաւ Աստուծոյ բարկացած եղած ատեն ըսելու՝ «Միտքդ փոխէ՛»... Ատիկա չի կրնար պատահիլ բացի եթէ Աստուծոյ վախը ունիս եւ հետեւաբար գիտես Անոր սիրտը եւ Անոր համար լաւագոյնը կը փափաքիս:

Ատոր համար էր, որ Աստուած կը վստահէր Մովսէսին եւ չէր վստահեր ժողովուրդին, հակառակ անոր որ Ան անոնցմէ իւրաքանչիւրը փրկած էր: Ան Իր հզօր ձեռքով ազատագրեց ժողովուրդը Եգիպտոսի ամուր բռունցքէն, բայց Իր սիրտի գաղտնիքները չբաժնեկցեցաւ անոնց հետ: Արդեօք բարեկամութեան այդ պայմանը կիրարկելի՞ է Նոր Կտակարանի ժամանակներու Աստուծոյ զաւակներուն համար: Ատիկա պիտի տեսնենք յաջորդ գլուխին մէջ:

Անձնականացնել

Հատուած- Ամէն բան վստահուած է եւ յանձնուած է ինծի Հօրս կողմէ [...] եւ ոչ ոք ամբողջական կերպով գիտէ եւ ճշգրիտ կերպով կը հասկնայ Հայրը բացի Որդին: (Մատթէոսի 11.27)¹

Միտք- Երբ Աստուած կ'ըսէ՝ «Կը վստահիմ քեզի», ասիկա ամէնէն մեծ գովասանքներէն մէկն է, որ մարդ արարած մը կրնայ ստանալ: Վստահութեան հիմը անհրաժեշտ է Աստուծոյ հետ բարեկամութեան մէջ մտնելու համար. անիկա կը գտնուի Տիրոջ վախը ունեցողներուն մօտ:

Խոկալ- Մովսէս կը վախնար Աստուծմէ, գիտէր Անոր սիրտը եւ Աստուած կը վստահէր անոր: Յիսուս կը հրճուէր Տիրոջ վախով, գիտէր Իր Հօրը սիրտը եւ Անոր վստահուեցաւ ամէն բան: Ինչ է կապը: Ինչ կը պատահի երբ մենք կը հրճուինք սուրբ վախով:

Աղօթք- Սիրելի Տէր, կ'ուզեմ, որ ինծի ալ վստահիս: Կը խնդրեմ, որ ներես ինծի այն ժամանակներուն համար երբ Քեզի չեմ հնազանդած, խոստումս չեմ յարգած, Քու փափաքներդ եւ Քեզի համար լաւագոյնը իմ փափաքներէս աւելի վեր չեմ դրած: Կ'ընտրեմ փոխել ասիկա եւ կը խնդրեմ, որ զիս լեցնես սուրբ վախով, որպէսզի զօրացնես զիս այդ կեանքի փոփոխութիւնը կատարելու համար: Կը խնդրեմ Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Կ'ընտրեմ ըլլալ մէկը, որ վստահելի է իմ Տիրոջս՝ Յիսուսի համար:

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Տի Անփոխապար Պայպը, Քրիստոս Էփիշոյն* (AMPC) տարբերակէն

Մեր սիրտերը չէին ճմլուեր,
երբ անիկա ճամբու ընթացքին
մեզի հետ կը խօսէր եւ Սուրբ
գիրքերը կը բացատրէր:

– ՂՈՒԿԱՍԻ 24.32

35 | ԴՈՒՔ ԻՄ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՍ ԷՔ

Աբրահամի եւ Մովսէսի կեանքերը ցոյց կու տան, թէ ինչ բանը անհրաժեշտ է՝ Աստուծոյ հետ բարեկամութեան յարաբերութիւն մը ունենալու համար: Տէրը Մովսէսի մասին նոյնիսկ ըսաւ. «*Իմ ամբողջ տանս մէջ անոր է, որ կը վստահիմ (Թիւերու 12.7, շեշտադրումը՝ մեր կողմէ)*»: Այդ սերունդին համար Աստուած յայտարարեց, թէ Իր ժողովուրդին մէջ չկար ուրիշ ոեւէ մէկը, որուն կրնար վստահիլ Մովսէսէն աւելի: Ո՛րքան զարմանալի հաստատում մը:

Յիսուս փոխեց այդ ստուգանիշը (պայմանը): Արդեօք Ան բացաւ բարեկամութեան դուռը բոլոր անոնց առջեւ, որոնք կը հաւատան Իրեն: Արագ պատասխանը «Ոչ» է, բայց քննարկենք այդ հարցը՝ սկսելով հաստատումով մը, որ Յովհաննէս ըրաւ Յիսուսի առաքելութեան սկիզբի ժամանակներուն մասին.

Ձատիկի տօնին Երուսաղէմի մէջ Իր ըրած հրաշքներուն պատճառով շատեր սկսան *վստահիլ* Յիսուսի: Բայց Ինք անոնց չէր *վստահեր*, քանի որ մարդիկը լաւ կը ճանչնար: (Յովհաննէսի 2.23–24, շեշտադրումը՝ մեր կողմէ)²

Վստահիլ բառին յունարէնը հետաքրքրական բառ մըն է, որ կը սահմանուի իբրեւ՝ «հաւատալ՝ ամբողջական վստահութեան եւ ապաւինելու չափով. վստահութիւն ունենալ, հաւատք ունենալ բանի մը կամ մէկու մը հանդէպ» (Լաու եւ Նիտա, *Կրիք–Ինկլիշ Լեքզիքոն*, էջ 375): Հետաքրքրականօրէն այդ վստահութիւնը Յիսուսի կողմէ

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

փոխադարձուած չէր: Հակառակ անոր որ մարդիկ կը հաւատային Իրեն՝ ամբողջական վստահութեան եւ Իրեն ապաւինելու չափով, Ան չէր վստահեր անոնց: Ան գիտէր, որ մեծ թիւով մարդ արարածներ վստահելի չէին: Ան կը սիրէր զանոնք եւ կը ծառայէր անոնց, բայց բարեկամութեան մակարդակով չէր յարաբերեր անոնց հետ: Այն վստահութիւնը, զոր Աստուած Մովսէսի վերագրեց, Յիսուս (մարմինի մէջ յայտնուած Աստուածը) չունէր անոնց հանդէպ, որոնք պարզապէս կը հաւատային Իրեն:

Խօսինք Վերջին Ընթրիքին մասին: Իր երեք տարուան առաքելութեան ընթացքին Իրեն հաւատացողներուն մեծ մասը վստահելի չէին. շատեր Իրեն կը հետեւէին գաղտնաբար կամ հեռուէն կամ միայն երբ շահ մը ունէին կամ պիտի օգտուէին Իրմէ: Մեծ թիւով աշակերտներ ձգեցին զինք, եւ Յուդա դաւաճանեց զինք (տես Յովհաննէսի 3.1-2, 6.26,66, 12.42, 19.38: Մատթէոսի 26.14-16): Ատիկա աւելի կը բացատրէ, թէ ինչո՞ւ Յիսուս անոնց վստահութիւնը չէր փոխադարձեր:

Ընթրիքի ատեն Յիսուս նստած էր Իրեն ամէնէն մօտիկ եղողներուն հետ: Երախտագիտութեամբ եւ ջերմութեամբ ըսաւ. «Դուք միշտ քովս մնացիք փորձութիւններու ընթացքին» (Ղուկասի 22.28): Հիմնականին մէջ անոնք վստահելի եղած էին: Պետրոս պահի տակ սխալ մը կը գործէ այդ գիշեր, բայց կը զղջայ եւ կը վերադառնայ նոյնիսկ աւելի հաւատարիմ սիրտով մը, եւ Յիսուս գիտէր ատիկա:

Յուդա կը ձգէ կ'երթայ՝ դաւաճանութիւնը ընելու համար, եւ Յիսուս մնացեալ տասնմէկին կ'ըսէ. «Այլեւս ձեզ ծառայ չեմ կոչեր» (Յովհաննէսի 15.15): Յիսուսի «այլեւս» ըսելը կը նշանակէ, թէ ժամանակ մը կար երբ այդ մարդիկը ծառայ կը համարուէին: Ասիկա յայտնութիւն մը չէ, այլ՝ պարզ լեզուական բացատրութիւն մը: Պօղոս այդ սկզբունքը կը բացատրէ, ըսելով.

Ժառանգորդ մը [...] որքան ատեն որ անչափահաս է՝ տարբերութիւն չունի ծառայէ մը: (Գաղատացիներուն 4.1)

Պէտք է հարց տանք, թէ ինչո՞ւ Աստուած մեզ ծառայի մակարդակին կը պահէ երբ Իր Թագաւորութեան ժառանգորդներն ենք: Պատասխանը՝ մեզ պաշտպանելու համար: Ան չ'ուզեր, որ Անանիայի եւ Սափիրայի հետ պատահածը մեզի ալ պատահի. Ան հաճոյք չ'առներ ատկէ:

1980-ականներուն Լիսան եւ ես կ'աշխատէինք երկու համաշխարհային առաքելութիւններու մէջ: Մէկը 450 հոգիոնց

վճարովի անձնակազմ մը ունէր, իսկ միւսը՝ 150: Երկուքին մէջ ղեկավարութեան հետ կապուած փոքր հարցեր նկատած էինք, եւ երբ մենք մեր առաքելութիւնը սկսանք, մեր նկատածներուն ճիշդ հակառակ ուղղութիւնը որդեգրեցինք՝ մեր անձնակազմը ղեկավարելու գործին մէջ: Մեր կարգ մը գաղափարները լաւ էին, իսկ ուրիշներ՝ ոչ: Գործելաճ մը, որ որդեգրեցինք հետեւեալն էր՝ «Իւրաքանչիւր պաշտօնեայի լաւագոյն բարեկամը պիտի ըլլամ»: Արդէն հաւանաբար նկատեցիք ստոր որքան անմիտ բան մը ըլլալը:

Մեր առաջին պաշտօնեան երիտասարդ մըն էր, զոր ճասթին պիտի անուանեմ: Զայն իմ լաւագոյն բարեկամս ըրի. միասին *պասքէթպոլ* կը խաղայինք, *վիպէտներ* կը դիտէինք, յաճախ միասին կը ճաշէինք եւ կ'ընէինք բոլոր այն բաները, որ մտերիմ բարեկամներ իրարու հետ կ'ընեն: Սկիզբը ամէն բան շատ լաւ էր: Սակայն մէկ տարի ետք առիթով մը ստիպուած եղայ իր մէկ սխալին մասին խօսելու իրեն: Առջեւ նստաւ՝ գրասեղանիս դիմացի կողմը եւ նիւթը բացի, մեղմօրէն ըսելով. «Ճասթին, երբ հետս ճամբորդես, պէտք է ազնուութեամբ վարուիս մեզի դիմող եւ մեզմէ ուսուցումի աղբիւրներ պահանջողներուն հետ: Կը խնդրեմ, որ ժպտաս եւ ընկերային ձեռով խօսիս իրենց հետ, քանի որ անոնք թանկարժէք են Աստուծոյ համար»:

Ասկէ ետք պատահածը ցնցիչ էր ինծի համար: Ան մատը ինծի ուղղելով, սկսաւ ամբաստանել զիս ամէն տեսակի սխալ վարմունքով: Թուեց բաներ, որոնք, ըստ իրեն, սխալ կ'ընէի: Մտածեցի. *Օ, ոչ, ես իրապէս այդ բաները կ'ընեմ*: Քանի մը վայրկեան ետք անդրադարձայ, որ ան քննադատական աչքով կը դիտէր զիս: Կանգ առի եւ Սուրբ Հոգիին հարցուցի, թէ ինչ պէտք էր ընէի: Ան մեղմօրէն խօսեցաւ եւ ըսաւ. «Արձակէ՛ զինք իր պաշտօնէն»:

Զգեցի, որ ամէն ինչ որ ունէր արտայայտէր եւ յետոյ ըսի. «Ճասթին, պէտք է քեզ ազատ արձակեմ գործէդ»:

Ան զայրացաւ, եւ փոթորիկի պէս դուրս ելաւ մեր տունէն: Աչքերս լեցուեցան, որովհետեւ կը սիրէի զինք: Յանկարծ Սուրբ Հոգին փսփսաց. «Ան պիտի վերադառնայ եւ կրկնակի անգամ աւելի հաւատարիմ պիտի ըլլայ»:

Երեք ամիս ետք հեռաձայն մը ստացայ իրմէ: Ըսաւ. «Աստուած յստակօրէն խօսեցաւ ինծի եւ յանդիմանեց: Կը հեռաձայնեմ ներողութիւն խնդրելու համար քեզմէ: Զգիտակցեցայ, թէ Աստուած ինչ դիրքի մէջ դրած է զիս քու եւ Լիսայի կեանքին մէջ, եւ չգիտակցեցայ, թէ Աստուած ձեր երկուքին ինչ դիրք տուած է իմ կեանքիս մէջ: Երկուքիդ հետ ալ վարուեցայ իբրեւ պարզ, սովորական մարդիկ՝ իբրեւ գործակիցներ եւ ոչ առաջնորդներ: Կը ներէք»:

Ես արագօրէն պատասխանեցի. «Ճասթին, կը ներեմ քեզի»: Յաւելեալ հաշտարար խօսքերէ ետք հարցուցի իրեն եթէ կ'ուզէր վերադառնալ իր գործին: Ուրախութեամբ համաձայնեցաւ, եւ մենք այդ մարզին մէջ որեւէ մէկ հարց չունեցանք այլեւս:

Հիմա ես տարբեր մտայնութիւն մը ունիմ: Սիրտիս մտերմիկ գաղտնիքները չեմ բաժնեկցիր ոեւէ պաշտօնեայի հետ մինչեւ որ չհաստատուի այն մարզին մէջ, որուն նկատմամբ Ճասթին անգիտակից էր: Ես ատիկա չեմ ըներ մեր խումբի անդամներուն հանդէպ հեռու կամ անանձնական ըլլալու համար. ատիկա կ'ընեմ զիրենք պաշտպանելու համար: Չեմ ուզեր, որ Ճասթինին հետ պատահածը իրենց հետ եւս պատահի: Սակայն երբ կը գիտնամ, որ պաշտօնեայ մը հաստատուած է իր եւ մեր դիրքերը ճանչնալու մարզին մէջ, զայն կ'առնեմ իբրեւ բարեկամ մը: Մեր խումբի անդամներէն ոմանք իմ ամէնէն մօտիկ բարեկամներս են:

Հիմնականին մէջ Տէրը մեզի կ'ըսէ. «Մինչեւ որ լաւ կերպով հաստատուած չըլլաս կեանքիդ մէջ Իմ դերիս գիտակցութեանդ մէջ ինչպէս նաեւ Ինձի հետ քու ո՛վ ըլլալու գիտակցութեանդ մէջ (Տիրոջ վախը), պէտք է քեզ ծառայի մակարդակին վրայ պահեմ հակառակ անոր որ ժառանգորդ ես՝ որդի մը կամ դուստր մը Իմ Թագաւորութեանս մէջ: Ասիկա քեզ պաշտպանելու համար է, որպէսզի Անանիայի եւ Սափիրայի դատաստանին նման դատաստանի մը չարժանանաս»:

Յիսուս այդ մարդոց կ'ըսէ.

«Այլեւս ձեզ *ծառայ* չեմ կոչեր, որովհետեւ ծառան չի գիտեր թէ ինչ կ'ընէ իր տէրը. այլ՝ ձեզ *բարեկամ* կոչեցի, որովհետեւ ինչ որ Հօրմէս լսեցի՝ ձեզի յայտնեցի»: (Յովհաննէսի 15.15, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Յիսուս հիմնականօրէն կ'ըսէ. «Մինչեւ հիմա ձեզի ներքին վերջին լուրերս կամ նորութիւններս չեմ յայտնած. ծրագիրներս, գաղտնի խորհուրդներս կամ սիրտիս մտերմիկ բաժինները: Բայց հիմա կրնամ *վստահիլ* ձեզի ինչպէս վստահեցայ Մովսէսին եւ Աբրահամին»: Ատոր համար Յիսուս բոլորիս կ'ըսէ.

«Դուք իմ բարեկամներս էք, *եթէ* [...]» (Յովհաննէսի 15.14, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Մենք երգեր կ'երգենք, քարոզներ կը քարոզենք եւ սովորական ձեւով կը խօսինք Յիսուսի մեր բարեկամը ըլլալուն մասին: Ոմանք

նոյնիսկ զԱյն իրենց մտերիմ ընկերը կը կոչեն: Սակայն այդ նոյն մարդիկը յաճախ չեն կրնար վերջացնել Յիսուսի վերի հաստատումը: «Եթէ» բառը պայման մը կ'ենթադրէ. ինքնաբերաբար եղող բան մը չէ՝ նոյնիսկ եթէ կը հաւատանք Յիսուսի: Ինչ է բարեկամութեան պայմանը:

«Դուք իմ բարեկամներս էք, եթէ գործադրէք ինչ որ կը պատուիրեն ձեզի» (Չեշտադրումը՝ մեր կողմէ):

Կայ պայման մը. *Տիրոջ վախը*, այսինքն՝ Անոր Խօսքին դիմաց դողալը, Անոր պատուէրներուն անմիջապէս հնազանդիլը մինչեւ կատարում՝ նոյնիսկ եթէ հասկնալի չէ, օգուտ մը չունիս կամ ցաւալի է: Ինչպէս Աբրահամ եւ Մովսէս բարեկամութեան յարաբերութեան մէջ մտան Ամենակարող Աստուծոյ հետ՝ Աստուծոյ ահը ունենալուն շնորհիւ, մեր պարագան ալ ներկայիս տարբեր չէ: Երբ Տիրոջ սիրտը եւ կամքը մեր թիւ մէկ առաջնահերթութիւնն են, այդ ատեն է, որ Ան կրնայ վստահիլ մեզի եւ պիտի ողջունէ մեզ բարեկամութեան յարաբերութեան մը մէջ: Ինչ պատիւ, ինչ առաջնահերթութիւն եւ իրքան ուրախալի է ըլլալ բարեկամը տիեզերքի Ստեղծիչին:

Նախքան փակելս, կ'ուզեմ պատասխանել հաւանաբար ձեր միտքը չարչրկող հարցումի մը. Յիսուս մեզի պատուէրներ կու տայ: Այո, կան աւելի քան հինգ հարիւր պատուէրներ Նոր Կտակարանին մէջ միայն: Սակայն ասոնք փրկութեան համար պահանջուած պատուէրներ չեն՝ տրուած ըլլալով, որ անիկա ձրի պարգեւ մըն է: Այլ, անոնք պատուէրներ են, որոնք կը փառաւոր զԱստուած եւ զորս կրնանք պահել երբ զօրացած կ'ըլլանք սուրբ վախով: Համբարնալէն առաջ Յիսուսի վերջին խօսքերն էին. «Հետեւաբար, գացէք եւ բոլոր ժողովուրդները ինծի աշակերտ դարձուցէք [...] Անոնց սորվեցուցէք այն բոլոր պատուիրանները որ ես ձեզի պոյի» (Մատթէոսի 28.19–20, Չեշտադրումը՝ մեր կողմէ):

Սուրբ վախի մեծագոյն օգուտը Յիսուսի հետ բարեկամութեան յարաբերութեան մէջ ըլլալն է: Յաջորդ բաժինին մէջ պիտի խօսինք սուրբ վախի միւս օգուտներուն մասին:

Անձնականացնել

Հատուած– «Դուք իմ բարեկամներս էք, եթէ գործադրէք ինչ որ կը պատուիրեն ձեզի»: (Յովհաննէսի 15.14)

Միտք– Մենք Յիսուսի վստահութիւնը չենք շահիր պարզապէս Անոր հաւատալով: Տիրոջ հետ բարեկամութիւնը վերապահուած է անոնց, որոնք կը վախնան Իրմէ:

Խոկալ- Կ'արժէ անմիջապէս եւ մինչեւ կատարում հնազանդիլ Յիսուսի նոյնիսկ եթէ հասկնալի չէ պատուէրը, նոյնիսկ եթէ չի թուիր անձնական օգուտ մը ունենալ, նոյնիսկ եթէ ցաւալի է: Անոր բարեկամութեան օգուտը կ'արժէ այդ բոլորը:

Աղօթք- Սիրելի Տէր, ամէն բանէ աւելի կը փափաքիմ Քու մտերիմ բարեկամներէդ մէկը ըլլալ: Չեմ ուզեր Քեզ հեռուէն ճանչնալ. կ'ուզեմ քեզի մօտիկ ըլլալ: Կ'ընտրեմ Տիրոջ վախը. հնազանդիլ Քեզի առանց պայմանի, սիրել Քեզ ամբողջ սիրտովս, շունչովս, հոգիովս եւ ոյժովս, եւ սիրել մարդիկը ճշմարտութեամբ ինչպէս Դուն կ'ընես: Ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Կ'ընտրեմ ըլլալ Յիսուսի բարեկամը: Պիտի հնազանդիմ ամէն պատուէրի, որ կու տայ ինձի:

ԳԱՆՁԻՆ ՕԳՈՒՏՆԵՐԸ

ՎԵՅԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ

Ուտքերուդ արահետները
քննէ՛, եւ բոլոր ճամբաներդ
թող հաստատուին:

– ԱՌԱԿՆԵՐՈՒ 4.26

36 | ԻՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒԻԼԸ

Հիմա մեր ուշադրությունը դարձնենք սուրբ վախի շարք մը օգուտներուն: Արդէն քանի մը հատին մասին խօսեցանք, ներառեալ անոնցմէ ամէնէն կարեւորին, որն է՝ Աստուծոյ հետ մտերմութիւնը: Շարունակենք հասկնալ կամ բացայայտել այն գիտութիւնը թէ՛ «հրչափ մեծ է [Աստուծոյ] բարութիւն[ը]՝ որ [Իրմէ] վախցողներուն վերապահ[եց]» (Սաղմոսներու 31.19):

Նախքան այս շատ հետաքրքրական քննարկումը սկսիլը, կարեւոր է, որ յստակացնենք հասարակաց (տարածում գտած) սխալ հասկացողութիւն մը: Յաճախ մարդիկ Սուրբ Գիրքերը կը մեկնաբանեն իրենց (կամ ուրիշներու) փորձառութեան ակնոցով փոխանակ արտօնելու, որ Սուրբ Գիրքերը ձեակերպեն իրենց փորձառութիւնը: Հիմնականին մէջ Աստուծոյ խոստումները կը համարուին յիսուն–յիսուն տոկոսի յաջողութիւն ենթադրող *սենարիոն*եր, հետեւեալ մտածումով. *Եթէ Աստուած այս բանը կ'ուզէ ինձի համար, հիանալի է: Եթէ ոչ, Ան գերիշխան է եւ պէտք է ընդունիմ ապրկա:* Այդ համոզումը զԱստուած կը դնէ Իր զաւակներուն միջեւ խտրութիւն դնող Աստուած մը ըլլալու դիրքին մէջ, ինչ որ պարզապէս ճիշդ չէ: Ատիկա կրնայ շատ դիպրութեամբ Տիրոջ դէմ ծածուկ եւ չարտայայտուած դժգոհութիւն մը յառաջացնել մարդուն մէջ:

Իրական պատմութիւնը բաւական տարբեր է. յաճախ պէտք է պայքարինք Աստուծոյ ըսածներուն համար: Աւելի բացատրելու համար, դիմենք Սուրբ Գիրքերուն՝ այդ ճշմարտութիւնը հաստատելու

նպատակով: Նշեմ աստուածաշնչական խոստում մը, զոր շատեր ինքնաբերաբար կատարուող խոստում մը կը համարեն: Աստուած խօսեցաւ Աբրահամի. «Իսահակո՛վ պիտի կոչուի քու զարմո՛» (Ծնունդներու 21.12): Աստուծոյ կողմէ ըսուած այդ խօսքը՝ ատկէ առաջ ըսուած ուրիշ խօսքերու կողքին, աստուածային խոստումը յստակացուց. Աբրահամի ազգի մը հայրը ըլլալու իրականութիւնը եւ թէ՛ Մեսիան պիտի գար Իսահակի սերունդէն:

Ատիկա ի մտի ունենալով, տեսնենք, թէ ինչպէս սկսաւ Իսահակի սերունդը՝ նախ նշելով, թէ Աստուած ինչպէս ընտրեց անոր հետ ամուսնանալիք կինը: Աբրահամի ծառան կը ճամբորդէ իր տիրոջ երկիրը՝ Իսահակի համար կին մը գտնելու համար: Երկար ճամբորդութենէ մը ետք, այնտեղի ժողովուրդին հորին քով կը կենայ եւ կ'աղօթէ՝ Աստուծմէ նշան մը ստանալու համար. այն աղջիկը, որ իրեն եւ իր տասը ուղտերուն ջուր տայ երբ ջուր խնդրէ, «անիկա՛ թող ըլլայ քու Իսահակ ծառայիդ համար *սահմանածդ*» (Ծնունդներու 24.14, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Պահ մը կանգ առնենք՝ նշելու համար, թէ անապատին մէջ երկար ճամբորդութենէ մը ետք ուղտ մը կրնայ 113–էն 189 լիթր ջուր խմել տասնհինգ վայրկեանի մէջ: Բազմապատկէ՛ ատիկա տասով (տասը ուղտ ունէր), եւ կը տեսնես, որ երիտասարդուհիի մը համար բաւական ջուր կ'ընէր ատիկա: Անոր աղօթքը միայն հրաշքով մը կրնար պատասխանուիլ, բայց Ռեբեկան կը կատարէ անոր խնդրանքը: Անկասկած, որ ան աստուածային ընտրութեամբ Իսահակի կինը պիտի ըլլար:

Երբ ծառան կը վերադառնայ՝ հետը բերելով Ռեբեկան, Իսահակը եւ Ռեբեկան կ'ամուսնանան: Բայց մեծ արգելք մը կար այդ խոստումի կատարումին դիմաց. Ռեբեկան ամուլ էր եւ չէր կրնար զաւակներ ծնիլ: Աստուած սխալ մը գործած էր: Չէր գիտեր, որ Ռեբեկան չէր կրնար զաւակ ծնիլ: Խոստումը ինչպէս պիտի կատարուէր: Ինչո՞ւ ընտրեց զայն: Ինչ պէտք էր ընէին Իսահակն ու Ռեբեկան: Պէտք էր պարզապէս սպասէին խոստումին կատարման մինչեւ որ անոր արգանդը օր մը հրաշքով մը բացուէր:

Պատասխան գտնելու համար նայինք Աբրահամին՝ մեր առաջին բանալիին համար: Ան համարձակ աղօթքի մարդ էր: Դիմում կատարեց Աստուծոյ, որ հաւատարիմ մնար Իր բնոյթին եւ չկործանէր Սողոմն ու Գոմորը տասը արդար մարդու համար: Աստուածաշունչէն գիտենք, թէ ան իր որդիին կը սորվեցնէ, որ նոյնը ընէ (տես Ծնունդներու 18.19): Ատիկա ի մտի ունենալով, կը կարդանք.

Իսահակ թախանձեց Տէրոջ իր կնոջ համար՝ անոր ամուլ ըլլալուն պատճառով: Տէրը *անոր թախանձանքը ընդունեց*, եւ անոր կինը Ռեբեկան յղացաւ: (Ծնունդներու 25.21, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Դարձեալ, եթէ Աստուծոյ խոստումը անպայման պիտի կատարուէր առանց որեւէ մարդկային միջամտութեան, ապա Ռեբեկա պէտք էր զաակ ունենալու կարողութիւնը ունենար: Բայց այդ չէր պարագան: Իսահակ շատ յատուկ բան մը պէտք էր ընէր, որպէսզի Աստուծոյ խոստումը կատարուէր: Ան պէտք էր *թախանձէր*: Եբրայերէն բառարանը կը նշէ. «Այդ բառին հիմնական իմաստը Տիրոջ ուղղուած աղաղակ է»: Ուստի անիկա պարզապէս սովորական աղօթք մը չէր, այլ՝ ջերմեռանդ աղօթք մը, դիմում մը. աղօթք մը, որ «Ոչ» պատասխան պիտի չընդունէր: Այն տեսակի աղօթք, որ կը հաճեցնէր զԱստուած: Մեզի կ'ըսուի.

Արդարի մը աղօթքը ազդեցիկ է եւ մեծապէս կ'օգնէ: (Յակոբոսի 5.16)

Յակոբոս Առաքեալ կ'ըսէ, թէ ազդու աղօթքը լուրջ կամ կրակոտ աղօթքն է: Ան կու տայ օրինակը Եղիայի, որ անձրեւ գալու համար աղօթեց: Եօթը անգամ Եղիա պէտք ունեցաւ կրակոտ աղօթք ընելու՝ գլուխը ծունկերուն միջեւ առած, եւ եօթը անգամ իր ծառան դրկեց՝ նայելու համար, թէ անձրեւի ամպերը կու գային կամ ոչ: Անոր հաւատքը արգիլեց, որ հրաժարի մինչեւ որ Աստուծոյ խոստումը կատարուեցաւ երկրի վրայ (տես Գ.Թագաւորներուն 18.41–45):

Իսահակ գիտէր Աստուծոյ կամքը եւ կրակոտ կերպով աղաղակեց, որպէսզի անիկա կատարուէր երկրի վրայ: Արդեօք ատիկա ճիշդ է բոլոր հաւատացեալներուն համար: Մեզի կ'ըսուի.

Ո՛վ Տէր, քու խօսքդ յափտենապէս *հաստատուած է* երկինքի մէջ: (Սաղմոսներու 119.89, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Աստուծոյ խօսքը հաստատուած է երկինքի մէջ: Պատահական չէ, որ երկիրը չէ նշուած, այլ միայն՝ երկինքը: Ինչո՞ւ: Սաղմոսողը կ'ըսէ. «Երկինքը Տէրոջ երկինքն է, բայց երկիրը մարդոց որդիներուն տուաւ» (Սաղմոսներու 115.16): Տիրոջ կը պատկանին երկինքն ու երկիրը (տես Ա.Կորնթացիներուն 10.26), բայց Ան երկիրը կարծես վարձու տուած է մարդկութեան որոշ ժամանակի մը համար:

Մեր ամուսնութեան սկիզբը Լիսան եւ ես վարձած էինք յարկաբաժին մը: Մերը չէր անիկա, բայց մեզի էր՝ մէջը ապրելու

համար եւ զանիկա մեր ընտանիքին տունը դարձնելու համար: Տանտէրերը չէին գար յարկաբաժին որոշելու համար, թէ զանիկա ինչպէս պիտի կահաւորէինք կամ զարդարէինք կամ անոր մէջ ապրելու հետ կապուած որեւէ իմաստով որոշումներ տալու համար: Սակայն երբ հեռաձայնէինք օգնութեան համար, տանտէրը միշտ կ'օգնէր մեզի:

Նոյնպէս ալ Աստուած տէրն է երկրի, բայց զանիկա վարձու տուած է մարդկութեան: Ատիկա կը բացատրէ, թէ ինչո՞ւ Ան պարտէզ գալով Ադամի ձեռքին չզարկաւ, որպէսզի պտուղը իյնար ձեռքէն եւ անկէ չուտէր: Ան երկիրին տիրապետելու իշխանութիւնը տուաւ մարդկութեան (Ծնունդներու 1.26–28): Ատիկա հասկնալէ ետք, պէտք է հարց տանք, թէ ինչպէս Իր Խօսքը պիտի հաստատուի երկրի վրայ: Մեզի կ'ըսուի. «Ամէն խօսք պիտի հաստատուի երկու կամ երեք վկաներու *բերանով*» (Բ.Կորնթացիներուն 13.1, շեշտադրումը՝ մեր կողմէ): Իսկ Եսայիի Մարգարէութեան մէջ Աստուած կը հռչակէ.

Իմ *բերանէս* ելած խօսքն ալ այնպէս պիտի ըլլայ. ինծի ապարդիւն պիտի չդառնայ, հապա իմ կամքս պիտի գործադրէ, ու յաջողցնէ այն բանը՝ որուն համար զայն դրկեցի: (Եսայիի 55.11, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Հետաքրքրականօրէն երկու համարներուն մէջ ալ *բերան* բառը կը գործածուի: Աստուծոյ բերանը կը խօսի Իր փափաքը, բայց կարիքը կայ մարդ արարածի մը՝ որուն իշխանութիւն տրուած է երկրի վրայ, որ բերանը բանայ եւ այդ բառերը խօսի, որպէսզի անոնք հաստատուին երկրի վրայ: Այսինքն՝ մենք Իրեն կը դիմենք, որպէսզի գայ եւ օգնէ մեզի երկրի վրայ: Այդպիսով է, որ Անոր խոստումը կը հաստատուի երկրի վրայ այնպէս ինչպէս որ երկիրնքի մէջ է: Պարզ ձեւով ըսելով, Ան բռնի ոյժով միջամտութիւն պիտի չընէ «մեզի վարձու տուած երկրին մէջ» բացի եթէ մենք Իր կամքին կատարուիլը ուզենք:

Աստուած խոստումը տուաւ Աբրահամին: Կրնամս պատկերացնել Իսահակ ինչպէս թախանձեց. «Աստուած, իմ Հայրս, Դուն խոստացար, որ ազգ մը յառաջ պիտի գայ ինձմէ եւ իմ սերունդներս պիտի օրհնուին: Կը խնդրեմ, որ բանաս կնոջս արգանդը, որպէսզի զաւակներ ծնի: Ամէն»: Արդիւնքը՝ Աստուծոյ կամքը հաստատուեցաւ:

Հիմա նայինք մեր մեծագոյն օրինակին՝ Յիսուսի:

Իր երկրաւոր կեանքի ընթացքին, Յիսուս մեծ աղաղակով ու արցունքով աղօթեց եւ աղաչեց [թախանձեց] Աստուծոյ,

1 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

որ կրնար զինք մահուրն է փրկել: Եւ Աստուած զինք *լսեց*, որովհետեւ խոնարհ էր ան եւ հնազանդ [*«Աստուծոյ հանդէպ իր խորունկ ակնածանքին համար»*, ըստ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակին]: (Եբրայեցիներուն 5.7, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Դարձեալ կը հանդիպինք *թախանձել (աղաչել)* բառին, բայց այս անգամ անոր հետ կան *Աստուծոյ հանդէպ խորունկ ակնածանք* բառերը: Ուրիշ բանալի մը կայ հոս: Ոչ միայն ամուր հաւատք պէտք է, որ կը խօսի (կ'աղաղակէ) մինչեւ որ Աստուծոյ խոստումը կատարուի երկրի վրայ, այլեւ Տիրոջ վախը պէտք է, որպէսզի Աստուծոյ կողմէ Իր ժողովուրդին ըրած խոստումները հաստատուին: Նկատի առ, որ կ'ըսէ, թէ Աստուած «լսեց» Յիսուսի աղօթքները: Բան մըն է աղօթելը, բայց ուրիշ բան մըն է աղօթքիդ *լսուիլը*: Կան աղօթքներ, որոնք չեն լսուիր: Անշուշտ: Յակոբոս կը գրէ. «Կը խնդրէք եւ Աստուած չի տար, որովհետեւ գէշ նպատակով կը խնդրէք» (4.3): Դարձեալ, պէտք է մեր շարժառիթներուն նայինք եւ Տիրոջ վախն է, որ մեր շարժառիթները հակակշիռի տակ կը պահէ:

Երբ կը վախնանք Աստուծմէ, կրնանք համարձակօրէն աղօթել եւ հոչակել Աստուծոյ խոստումները եւ կամքը, որպէսզի անոնք կատարուին այս երկրի վրայ, եւ անոնք պիտի հաստատուին երկրի վրայ ինչպէս որ են երկինքի մէջ: Կրնայ ըլլալ, որ ատոր համար է, որ Պօղոս Առաքեալ երկրի վրայ իր ժամանակի վերջաւորութեան գրեց. «Հաւատքի բարի պատերազմը մղէ, ամուր կառչէ յաւիտենական կեանքին» (Ա.Տիմոթէոսի 6.12): Պատերազմ մը կայ, եւ հաւատքով ձեռք կը ձգենք յաւիտենական կեանքի հայթայթածները:

Անձնականացնել

Հատուած- Ան իրմէ վախցողներուն փափաքը կը գործադրէ. անոնց աղաղակը կը լսէ եւ զանոնք կը փրկէ: (Սաղմոսներու 145.19)

Միտք- Յաճախ մարդիկ Սուրբ Գիրքերը կը մեկնաբանեն իրենց (կամ ուրիշներու) փորձառութեան ակնոցով փոխանակ արտօնելու, որ Սուրբ Գիրքերը ձեւակերպեն իրենց փորձառութիւնը:

Խոկալ- Արդեօք արտօնած եմ, որ համոզումներս շեղին Աստուածաշունչի հոչակածներէն՝ իմ կամ ուրիշներու փորձառութիւններուն պատճառով: Կամ խոստումներ, որոնք տակաւին չեն իրագործուած կեանքիս, ընտանիքիս եւ ազդեցութեանս շրջանակին մէջ: Արդեօք ընդունած եմ ապրիլ այդ աստուածային խոստումներէն դուրս: Պատրաստ եմ պայքարելու խոստումներուն համար՝ թախանձելով, որ անոնք կատարուին այս երկրի վրայ:

Աղօթք- Սիրելի Տէր, Յիսուսի անունով ներէ ինձի հոգեւոր ծովութեանս համար՝ ընդունած ըլլալով խոստումներու չկատարուիլը եւ չպայքարելով Քու Խօսքիդ հոչակածներուն համար: Անցեալի փորձառութիւններու լոյսին տակ փորձած եմ ձեւակերպել ընթացքս փոխանակ պայքարելու Քու կամքիդ կատարումին համար: Կը զղջամ եւ կ'ընտրեմ հաւատքի բարի պատերազմը մղել, աղօթել, որպէսզի Քու կամքդ հաստատուի այս երկրի վրայ ինչպէս որ է երկինքի մէջ: Ամէն:

Դաւանութիւն- Կ'ընտրեմ մղել հաւատքի բարի պատերազմը, ձեռք ձգել այն ինչ որ յաւիտենական կեանքը կը հոչակէ եւ տեսնել Աստուծոյ կամքին հաստատումը իմ ազդեցութեան շրջանակիս մէջ:

Այն մարդիկը, որոնք կը
վախնան Աստուծմէ, կեանքը
անվախօրէն կը դիմագրաւեն:

Այն մարդիկը, որոնք
չեն վախնար Աստուծմէ,
վերջաւորութեան կը սկսին
վախնալ ամէն բանէ:

– ՌԻՉԸՐՏ ՀԱԼՎԸՐՍԸՆ

37 | ԱՅՆ ՎԱԽԸ, ՈՐ Կ'ՈՉՆՉԱՑՆԷ ՄԻՒՍ ԲՈԼՈՐ ՎԱԽԵՐԸ

Մենք կ'ապրինք տագնապներով եւ վախով լեցուն աշխարհի մը մէջ: Իրականութեան մէջ Յիսուս մեզի կ'ըսէ, թէ անոնք անելի պիտի սաստկանան: Գալիլիոյ մասին Անոր նկարագրութիւնը սթափեցուցիչ է. «Աշխարհի վրայ պատահելիքներու ակնկալութենէն մարդիկ սարսափէն պիտի նուաղին» (Ղուկասի 21.26): Այդ վախերը եւ անձկութիւնները կը հեռացնեն յոյսը, խաղաղութիւնը եւ հանդարտութիւնը՝ ձգելով միայն անհանգստութիւն, ծանրացած սիրտեր եւ մնայուն տանջանք: Ինչ է ատոր դեղթափը:

Տէրը սաստիկ կերպով զգուշացուց ինձի, որ ուրիշներու պէս մտածող չըլլամ: Ան ըսաւ. «Ամէն բան դաւ մի՛ կոչեր, ինչպէս իրենք կ'ընեն, եւ մի՛ ապրիր վախովը այն բաներուն, որոնցմէ իրենք կը վախնան: Երկինքի Զօրքերուն Տէրը սուրբ ըրէ կեանքիդ մէջ: Ա՛ն է այն, որմէ պէտք է վախնաս: Ա՛ն է այն, որ քեզ պէտք է դողացնէ: Ան քեզ ապահով պիտի պահէ»: (Եսայիի 8.11–14)¹

Սուրբ վախը կ'ոչնչացնէ բոլոր միւս վախերը եւ անձկութիւնները, որովհետեւ անոր ետին կը գտնուի քեզ ապահով պահելու Աստուծոյ խոստումը: Կանգ առ պահ մը եւ մտածէ՛ այդ իրականութեան մասին:

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Պատկերացրո՛ւր, որ Միացեալ Նահանգներու բոլոր զինեալ ուժերը նշանակուած են քեզ պաշտպանելու համար: Ամէն զօրավար իրմէ վար եղող զինուորականներուն կը տեղեկացնէ, թէ դուն թիւ մէկ առաջնահերթութիւն ես, եւ ի՛նչ որ պէտք է քու ապահովութեանդ համար, պէտք է կիրարկուի: Անոնց ամէնէն արդիական զէնքերու ամբողջ հաւաքածոն տրամադրուած է քեզ պաշտպանելու համար ո՛ր որ ալ մնաս, ո՛ր որ ալ երթաս: Գրեթէ աներեւակայելի է, բայց եթէ այդպիսի բան մը պատահի, վստահ եմ, որ ապահով եւ պաշտպանուած պիտի զգաս: Եւ սակայն ատիկա շատ պզտիկ է Ամենակարող Աստուծոյ «Ես քեզ ապահով պիտի պահեմ» խօսքին դիմաց: Զարմանալի չէ, որ կ'ըսուի.

Ո՛րքան մեծ է այն բարութիւնը, որ դուն պահած ես անոնց համար, որոնք կը վախնան քեզմէ: Դուն առատօրէն կը թափես զանիկա անոնց վրայ, որոնք Քեզի կու գան պաշտպանութեան համար՝ օրհնելով զանոնք ամբողջ աշխարհի դիմաց: Կը պահես զանոնք Քու ներկայութեանդ պատսպարանին մէջ՝ ապահով անոնցմէ, որոնք դաւ կը նիւթեն անոնց դէմ: Դուն կը պատսպարես զանոնք Քու ներկայութեանդ մէջ՝ հեռու ամբաստանող լեզուներէ: (Սաղմոսներու 31.19–20, շեշտադրումը՝ մեր կողմէ)՝

Առատ բարութեան խոստումը՝ պահուած ըլլալով Աստուծոյ ներկայութեան պատսպարանին մէջ, ուր ապահով ենք անոնցմէ, որոնք կրնան փորձել վնասել մեզի, բոլորին չէ տրուած, այլ՝ միայն անոնց, որոնք կը վախնան Աստուծմէ: Տարիներ Լիսան եւ ես դիմագրուած ենք սուտեր, չարախօսութիւն, ամբաստանութիւններ եւ սպառնալիքներ: Ես նոյնիսկ կատակած եմ բարեկամներու հետ, ըսելով՝ «Կուկըլի վրայ մի՛ փնտռէք իմ անունս, կրնաք զիս դատապարտող լեցուն յօդուածներ գտնել»: Բայց որոշած ենք լուռ մնալ եւ չպաշտպանել մենք մեզ: Փոխարէնը մենք այդ յարձակումները յանձնած ենք Անոր, որմէ կը վախնանք, եւ տեսած ենք Անոր մնայուն պաշտպանութիւնը: Դիւրին չէ եղած մեզի համար. եղած են ժամանակներ երբ ես պատկերացուցած եմ, որ այդ հարցերը կը դնեմ ափերուս մէջ եւ երկուքը միասին բառացիօրէն վեր՝ երկինք վերցուցած եմ՝ իբրեւ արտաքին նշան մը այդ ամբաստանութիւնները կամ սպառնալիքները Աստուծոյ յանձնելու: Ես աղաղակած եմ. «Հայր, ես այս հարցը կը դնեմ Քու

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն Նիու Լիվինկ Թրանսլէյշըն (NLT) տարբերակէն

ձեռքերուդ մէջ եւ կը խնդրեմ, որ պաշտպանես մեզ»: Ան բնաւ յուսախար չէ ըրած մեզ:

Մենք տեսած ենք սուրբ վախի պաշտպանութիւնը մեր ծանօթներէն շատերու կեանքերուն մէջ: Քանի մը տարի առաջ իմ քաղաքիս մէջ 1,500 հոգիի առջեւ ելոյթ ունեցայ: Ծառայութեան ընթացքին շատեր իրենց վախերը փոխանակեցին Տիրոջ վախով: Յաջորդ երեկոյ երբ մայր մը եւ դուստր մը՝ որոնք այդ ծառայութեան ընթացքին իրենց վախերը Տիրոջ վախով փոխարինելու կոչին ընդառաջողներէն եղած էին, գնումէն տուն կը վերադառնային, իրենց դիմաց ելած էին դանակներով եւ զէնքերով երեք տղամարդիկ: Անոնք խիստ կերպով հրամայած էին, որ տուն մտնեն՝ շատ հաւանաբար մտադրած ըլլալով կողոպտել, բռնաբարել եւ սպաննել զիրենք:

Մայրը յետոյ պատմեց, թէ՛ «Եթէ մէկ գիշեր առաջ այդ ծառայութեան փորձառութիւնը ապրած չըլլայինք, ես վախէս սառած պիտի ըլլայ, անխօս եւ պիտի ընէի իրենց պահանջները»: Բայց ան ըսաւ. «Անտեսեցի տուն մտնելու անոնց հրամանը եւ անմիջապէս սկսայ բարձրաձայն աղօթել Յիսուսին, որ փրկէր մեզ: Որքան աւելի աղաղակեցի, այդքան աճեցան ինքնավստահութիւնս, ոյժս եւ խաղաղութիւնս:

«Մարդիկը սկսան դողալ եւ խիստ կերպով հրամայեցին, որ դադրիմ աղօթել: Իրենց համբերութիւնը վերջաւորութեան հատաւ եւ կատաղի կերպով սկսան պոռալ. «Դադրեց՛ր, դադրեց՛ր, դադրեց՛ր այս աղօթքը»: Այդ մարդիկը բնաւ պատրաստ չէին հանդիպելու այդպիսի ինքնավստահ կիներու: Ոճրագործները շփոթի մատնուեցան, եւ մինչ անոնք կեդրոնացած էին մօրը վրայ, դուստրը կրցաւ ծածուկ կերպով տուն մտնել եւ օգնութիւն կանչել: Երբ մարդիկը յանկարծ անդրադարձան, որ ան չկար, փախուստ տուին:

Նոյն այդ տարին երբ կը ծառայէի Հիուսթընի մէջ, Թեքսաս, ուրիշ կին մը իր վախերը փոխանակեց սուրբ վախով: Ծառայութենէն մէկ շաբաթ ետք մինչ ան գնումները ասարտած ինքնաշարժ կը մտնէ, կը նկատէ, որ տղամարդ մը պահուրտած էր ետեւի նստարանին վրայ՝ դանակ մը ձեռքին: Խիստ կերպով կը հրամայէ կնոջ, որ քշէ ինքնաշարժը: Փոխանակ վախէն իրար անցնելու, ան Յիսուսին կ'աղաղակէ առանց կենալու: Ժամերով կը քշեն եւ ամբողջ ընթացքին մարդը կը պահանջէ իրմէ, որ լռէ, իսկ ինք կը մերժէ: Մարդը վերջաւորութեան կ'ըսէ՝ «Ինքնաշարժը ծայր առ», եւ երբ կինը ըսածը կ'ընէ, ան կը բանայ ետեւի դուռը եւ փախուստ կու տայ:

Առիթով մը Սուրիայի թագաւորը զայրացաւ Եղիսէ մարզարէէն եւ զօրք դրկեց՝ զայն ձերբակալելու համար: Եղիսէի սպասաւորը

առաջինն էր, որ տեսաւ զինուորները, ձիերը եւ կառքերը: Ան վախով պատուեցաւ: «Եղիսէ պատասխանեց. “Մի՛ վախնար, որովհետեւ *մեզի հետը եղողները* աւելի բազմաթիւ են՝ քան անոնց հետ եղողները”»: Եղիսէ աղօթելով, ըսաւ. “Ո՛վ Տէր, կ’աղերսեմ, անոր աչքերը բաց, որպէսզի տեսնէ”» (Դ.Թագաւորներուն 6.16–17, շեշտադրումը՝ մեր կողմէ): Տէրը բացաւ անոր աչքերը եւ սպասաւորը տեսաւ, որ լեռը կրակէ ձիերով եւ կառքերով լեցուն էր:

Յիսուս յաճախ կը գտնուէր ամբոխներու դիմաց, որոնք քարեր կը վերցնէին՝ վրան նետելու համար: Առիթով մըն ալ ամբոխ մը փորձեց զինք բարձր տեղէ մը վար նետել, բայց ամէն կեանքին սպառնացող կացութենէ Ան պարզապէս քալելով հեռացաւ՝ անժխաս (տես՝ Ղուկասի 4.29: Յովհաննէսի 8.59, 10.39):

Միակ պարագան՝ երբ Աստուած կ’արտօնէ, որ Իրմէ վախցող մէկը տառապանքէ մը անցնի, այն է, որ աստիկա երկինքի տնօրինումը կ’ըլլայ՝ Աստուծոյ փառքին համար: Սակայն նոյնիսկ այդ պարագաներուն, սուրբ վախէն եկած ինքնավստահութիւն մը կայ, որ կը ջնջէ մարդկային վախը: Նկատի առ երեք եբրայեցի երիտասարդները, որոնք երկրի ամէնէն հզօր թագաւորին՝ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր Թագաւորին առջեւ բերուեցան: Ան մեծ կուռք մը կառուցանել տուած էր եւ հրապարակած հրովարտակ մը, որ կ’ըսէր, թէ բոլոր մարդիկը պէտք էր խոնարհէին անոր դիմաց ամէն անգամ, որ երաժշտութիւն մը լսուէր երկրին մէջ:

Այդ երեք երիտասարդները կը վախնային Աստուծմէ եւ մերժեցին մեղք գործել հրովարտակին հնազանդելով: Անոնք բերուեցան զայրացած Նաբուգոդոնոսորի մը դիմաց, որ կրնար անմիջապէս զիրենք նետել տալ կրակի հնոցին մէջ: Այդ երիտասարդները վախցան: Պիտի ձգեմ, որ դուն որոշես՝ նկատի առնելով, թէ ինչ կ’ըսեն անոնք զայրացած թագաւորին. «Ահա՛ մեր պաշտած Աստուածը կրնայ մեզ ազատել բորբոքած կրակի հնոցէն. քու ձեռքդ ալ մեզ պիտի ազատէ, ո՛վ թագաւոր: Նոյնիսկ եթէ չընէ, գիտցիր, ո՛վ թագաւոր, թէ մենք քու աստուածներդ պիտի չպաշտենք եւ քու կանգնեցուցած ոսկիէ արձանիդ պիտի չերկրպագենք» (Դանիէլի 3.17–18):

Ինչ ինքնավստահութիւն: Անոնք հանդարտ եւ անվախ մնացին, հակառակ անոր որ Սուրբ Գիրքը կ’ըսէ, թէ՛ «Այն ատեն Նաբուգոդոնոսոր ցասումով լեցուեցաւ. անոր երեսին երեսոյթը այլափոխուեցաւ Սեդրաքի, Միսաքի եւ Աբեդնագովի հանդէպ» (հմր 19): Այդ մարդիկը կը վախնային Աստուծմէ եւ հետեւաբար գիտէին, որ պիտի ազատէր զիրենք կամ ողջ պահելով կամ ալ մահով: Անոնք

նետուեցան կրակի հնոցը, բայց դուրս եկան չմաստուած, առանց նոյնիսկ ծովիսի հոտ ունենալու իրենց վրայ: Անոնք անվախ մնացին, նոյնիսկ երբ մահ դիմագրաւեցին:

Պօղոս Առաքեալ՝ մարդ մը, որ մեծապէս կը վախնար Աստուծմէ, նոյն վերաբերումը ունէր: Երբ հաւանական գլխատում կը դիմագրաւէր, ըսաւ. «Կը հաւատամ, որ կեանքս պատիւ պիտի բերէ Քրիստոսի՝ ըլլայ ատիկա ապրելովս կամ մեռնելովս: Ինծի համար ապրիլ կը նշանակէ ապրիլ Քրիստոսի համար, իսկ մեռնիլը անելի լաւ է» (Փիլիպպեցիներուն 1.20–21): Ինչո՞ւ համար Քրիստոսը փառաւորելու համար մեռնիլը անելի լաւ է, կամ ինչպէս ուրիշ թարգմանութիւններ կ'ըսեն՝ «շատ անելի լաւ է» կեանքէն: Աստուծոյ վախը, որ սկիզբն է իմաստութեան, կը լուսաւորէ մեզ՝ այս կեանքին եւ գալիք կեանքին վերաբերեալ ճիշդ տեսակէտով: Ատոր համար Յիսուս կ'ըսէ. «Մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն եւ սակայն հոգին չեն կրնար սպաննել: Բայց դուք վախցէք մանաւանդ անկէ, որ կրնայ թէ հոգին եւ թէ՛ մարմինը կորուստի մատնել դժոխքին մէջ» (Մատթէոսի 10.28):

Տարիներ առաջ երբ ճամբորդութիւններ կ'ընէի ծառայութիւններ ընելու համար, Աստուած խօսեցաւ ինծի երբ մտահոգ էի զաւակներուս համար: Ըսաւ. «Ճո՛ն, որեւէ վախ որ ունիս կեանքիդ մէջ միայն ցոյց կու տայ այն բանը, որ այդ հարցը չես դրած խաչին տակ. տակաւին քեզի կը պահես կեանքիդ այդ մարզը»: Ապաշխարեցի այդ երեկոյ, որդիներս ամբողջութեամբ Աստուծոյ յանձնեցի եւ այլեւս անգամ մըն ալ չմտահոգուեցայ անոնց ապահովութեան համար: Տիրոջ վախը կ'առաջնորդէ մեզ ամէն բան Յիսուսի յանձնելու: Երբ ատիկա կ'ընենք, կ'ապրինք անոր մէջ, որ ուրիշներ մեծապէս կը փափաքին բայց չեն կրնար գտնել. խաղաղութիւն, ինքնավստահութիւն եւ վախէ ազատագրութիւն:

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Անձնականացնել

Հատուած- Տէրոջ վախը կեանքի կ'առաջնորդէ. զայն ունեցողը կուշտ կը հանգչի, ու ձախորդութեան չի հանդիպիր: (Առակներու 19.23)

Միտք- Ոչ օգտակար վախ մը կեանքիդ մէջ միայն ցոյց կու տայ այն բանը, որ չես դրած խաչին տակ. տակաւին քեզի կը պահես կեանքիդ այդ մարզը:

Խոկալ- Կեանքի դժուարութիւններուն մէջ վախի դէմ կը պայքարիմ: Առողջութեամբս, ֆինանսներդս, ամուսնութեամբս, զաւակներդս, գործիս, կրթական, մերժուած ըլլալիս, հաւատքիս համար հալածուած ըլլալիս կամ կեանքիս մէկ ուրիշ մարզի մէջ: Կեանքիս այդ մարզը ամբողջութեամբ յանձնած եմ Յիսուսի տիրութեան կամ տակաւին իմս է:

Աղօթք- Սիրելի Տէր, ներէ ինձի – (նշէ այն մարզը/մարզերը, որ/որոնք Աստուծոյ չես յանձնած տակաւին) քեզի չյանձնելուս համար: Մտածելէ ետք ինձի համար յստակ դարձաւ, որ տակաւին ինձի կը պահեն այդ մարզը: Իմ անապահովութեան զգացումս մէջտեղ հանեց այդ մարզին մէջ սուրբ վախ չունենալս: Կ'ապաշխարեմ եւ Յիսուսի տիրութեան կը յանձնեմ – (նշէ վերոյիշեալ մարզը/մարզերը) եւ կեանքիս բոլոր մարզերը: Ամէն:

Դաւանութիւն- Յիսուս իմ Տէրս է: Իրեն կու տամ տիրութիւնը կեանքիս բոլոր մարզերուն: Թող Իր կամքը ըլլայ իմ կեանքիս մէջ:

Կրթէ՛ մանուկը իր ճամբան
սկսած ատենը, որպէսզի երբ
ծերանայ՝ անկէ չշեղի:

– ԱՌԱԿՆԵՐՈՒ 22.6

38 | ԱԻԱՆԴ

Սուրբ վախը ունի տակալին ուրիշ օգուտ մըն ալ. բարեպաշտ ասանդ: Կարգ մը հարցումներ հարցնեմ. Ի՞նչ կու գայ միտքդ երբ լսես Պենետիքթ Արնուլտ անունը: «Դաւաճան»ը առաջին բանն է, որ կու գայ միտքդ: Մայր Թերեզա անունը... Գութի Միսիոնարութիւնը միտքդ կու գայ: Ատոլֆ Հիթլեր անունը... «Անգութ բռնատէր, որ սպաննեց միլիոնաւոր անմեղներ» միտքդ կու գայ: Ալպրթ Այնշթայն անունը... Միտքդ կու գայ ան, որ յարաբերականութեան տեսութիւնը յայտնաբերեց:

Միտքդ եկած բաները այդ անուանի մարդոց ձգած ասանդներն են հաւանաբար: Իրականութիւնը այն է, որ մենք բոլորս ալ ասանդ կը ստեղծենք: Ուստի այն հարցումը, որ պէտք է մենք մեզի հարցնենք հետեւեալն է՝ արդեօք այն ասանդը, որ պիտի ձգեմ մարդոց քով լամ հակազդեցութիւն պիտի յառաջացնէ կամ մարդիկ բերան պիտի ծռեն: Աւելի կարեւոր հարցումը, սակայն, այն է, թէ իմ ձգած ասանդս ի՞նչպէս պիտի տեսնուի երկինքի մէջ. իբրեւ օգտակար կամ վնասակար՝ Աստուծոյ յաւիտենական թագաւորութիւնը կերտելու գործին համար:

Միրիամ–Ուէպսթըր Բառարանին համաձայն, *ասանդ* բառին մէկ սահմանումն է՝ «բան մը, որ փոխանցուած է կամ ստացուած է նախահայրէ մը կամ նախորդէ մը»: Աստուծոյ վախը ի՞նչ ազդեցութիւն կ'ունենայ մեր սերունդներուն վրայ: Սկսելու համար, վերադառնանք հաւատքի հօր՝ Աբրահամի: Լերան վրայ՝ երբ հրեշտակը կեցուց զինք Իսահակը դանակով մեռցնելէն, Տէրը ըսաւ իրեն.

Քեզ օրհնելով պիտի *օրհնեմ* եւ քու սերունդդ բազմացնելով պիտի *բազմացնեմ* [...] Եւ քու սերունդդ իր թշնամիներուն դարպասներուն պիտի տիրանայ: (Ծնունդներու 22.17, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Sh Ամփիֆայր Պայպլը, Քլասիք Էփիշոն* (AMPC) տարբերակէն

Տարիներ շարունակ այդ բառերը կարդացած եմ եւ միշտ մտածած, թէ ինչն էր կու անգամ կը նշուի մէկ բառը: Վերջապէս հետաքրքրութիւնս մղեց, որ դիմեմ ռաբբիի մը, որ պատասխանեց. «Հրէական հասկացողութեան մէջ երբ բառ մը երկու անգամ կը նշուի, անիկա բազմապատկելու ակնարկութիւն է... եւ որովհետեւ մէկ բայը ներկայ եղանակի մէջ է իսկ միւսը՝ ապագայի, ատիկա կրնանք հասկնալ իբրեւ մէկ օրինութիւն հայր Աբրահամի վրայ, բայց Աստուած նաեւ կը խոստանայ, թէ անոր սերունդներն ալ պիտի օրհնուին: Այլ խօսքով՝ քեզ օրհնելով, Աբրահամ, պիտի շարունակեմ օրհնել քեզ զաւակներուդ միջոցաւ»:

Սուրբ վախէն կ'օգտուին նաեւ մեր սերունդները. «Իրենց թշնամիներուն դարպասներուն պիտի տիրանան»: Ասիկա հոյակապ է, եւ այդ մասին պիտի խօսինք քիչ ետք, բայց նախ կայ ուրիշ ճշմարտութիւն մը ռաբբիին բացատրութեան մէջ, որ պէտք է լուսարձակի տակ առնուի: Սուրբ վախը կը շարունակէ օրհնել մեզ մեր սերունդներուն միջոցաւ, եւ ատիկա ճիշդ է ոչ միայն այս կեանքի համար, այլեւ յաւիտենապէս:

Երբ մեր սերունդները մեզի համար աւելի մեծ պատիւ եւ ազդեցութիւն յառաջ կը բերեն թէ մօտիկ ապագային մէջ եւ թէ զաւիք կեանքին մէջ, ատիկա կ'ազդէ մեր յաւիտենական կեանքին վրայ: Յստակացնելու համար, տամ օրինակ մը: Արչի Մանինկ ամերիկեան *ֆուլթորի* Նիու Օրլինզ Աէնթս խումբին մէջ մարզիկ մըն էր տասը տարի: Իր յարձակողական ղեկավարութեամբ խումբը միայն որոշ յաջողութիւն արձանագրեց մէկ տարի, իսկ մնացեալ ինը տարիները ձախողութեան տարիներ էին: Ան շատերու կողմէ մոռցուած պիտի ըլլար, բայց անոր երկու որդիները՝ Փէյթըն եւ Իլայ, միասնաբար չորս *Սուփըր Պոլի* յաղթանակներ շահած են եւ լաւագոյն մարզիկի մրցանակը շահած: Ներկայիս աւելի մեծ թիով մարդիկ կը ճանչնան Արչին՝ իր որդիներուն շնորհիւ, եւ հետեւաբար ան աւելի մեծ պատիւ կը ստանայ եւ ազդեցութիւն ունի մարզախաղի աշխարհին մէջ:

Յաւիտենականութեան մէջ շատեր աւելի մեծ պատիւ պիտի ստանան եւ ազդեցութիւն ունենան՝ Թագաւորութիւնը կերտելու մէջ իրենց սերունդներուն հնազանդութեան շնորհիւ: Աբրահամ գերազանց օրինակ մըն է. անոր յաւիտենական ազդեցութիւնը պիտի բարգաւաճի իր սերունդին՝ Յովսէփի, Սամուէլի, Դաւիթի, Դանիէլի, Եսայիի եւ անշուշտ Յիսուսի միջոցաւ (եթէ պարզապէս միայն քանի մը հատը նշենք): Մինչեւ հիմա կը շարունակուի անոր ասանդը: Այդ օրհնութիւնը կը գործէ բոլոր անոնց կեանքերուն մէջ, որոնք կը վախնան Աստուծմէ.

անոնց «յիշատակը յաւիտեան պիտի մնայ» (Սաղմոսներու 112.6, ըստ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակին), եւ անոնք «ազդեցութիւն եւ պատիւ պիտի ունենան» (Սաղմոսներու 112.9, ըստ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակին): Շատեր կը կարծեն, թէ ամէն բան կը սկսի երկինքի մէջ: Սակայն ատիկա ճիշդ չէ: Իբրեւ հաստատեալներ, մենք արդէն իսկ սկսած ենք ձեւակերպել յաւիտենականութեան պատմութիւնը, որովհետեւ մեզի կ'ըսուի, թէ՛ «Իրենց բարի գործերը յաւիտեան պիտի յիշուին» (Սաղմոսներու 112.9, ըստ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակին):

Հիմա խօսինք Աստուծոյ այն խոստումին մասին, թէ՛ մեր սերունդները նուաճողներ պիտի ըլլան. իրենց թշնամիներուն դարպասներուն պիտի տիրանան: Աւելի ժամանակակից ձեւով կրնանք ըսել, թէ մեր սերունդները պիտի ջյաղթուին անոնց կողմէ, որոնք կ'ատեն զԱստուած, այլ փոխարէնը՝ յաջող առաջնորդներ եւ ազդեցութիւն բանեցնողներ պիտի ըլլան (հմմտ Բ.Օրէնքի 28.13): Կրնաս մտածել, որ ատիկա Աբրահամի եւ անոր ուղղակի սերունդներուն մասին է միայն: Բայց մեզի կ'ըսուի, թէ՛ «Քրիստոս Յիսուսի միջոցաւ Աստուած օրինած է հեթանոսները այն նոյն օրինութեամբ, որ խոստացած էր Աբրահամի» (Գաղատացիներուն 3.14)¹: Ասիկա հոյակապ լուր մըն է...

Ո՛րքան երջանիկ են անոնք, որոնք կը վախնան Տիրոջմէ եւ կը հրճուին Անոր պատուէրներուն հնազանդելով: Անոնց զաւակները ամէն տեղ յաջող պիտի ըլլան. բարեպաշտ մարդոց ամբողջ *սերունդ* մը օրինուած պիտի ըլլայ: (Սաղմոսներու 112.1–2, շեշտադրումը՝ մեր կողմէ)²

Սերունդ բառը կը նշանակէ՝ «երկար ժամանակ մը» (*Հիպրու անպ Արամայիք Լեքզիքոն աֆ տը Օլտ Թեսթամընթ*, էջ 217), եւ անիկա վերագրում է մեր սերունդներուն (*Տի Քոմիլիթ Ուրրպ Սթասի Տիքընըրի. Օլտ Թեսթամընթ*, էջ 231): Չաքարիա հետեւեալը մարգարէացաւ. «Անոր ողորմութիւնը իրմէ վախճողներուն վրայ է՝ սերունդէ սերունդ» (Ղուկասի 1.50)³: Ոչ միայն մեր անմիջական զաւակները յաջող պիտի ըլլան, այլեւ այդ խոստումը կ'ընդգրկէ սերունդներ: Ատոր մէկ կարեւոր օրինակը կը գտնուի կեանքերուն մէջ

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

3 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

երկու տղամարդոց, որոնք ծնած էին տասնութերորդ դարու սկիզբները:

Առաջինը Մաքս Ճիլքսն է: 1874-ին Ռիչլըրտ Տակտեյլ անունով ընկերաբան մը տասներեք բանտեր այցելեց Նիու Եորքի *ափսթէյթ* բաժինին մէջ: Ան գտաւ վեց անձեր՝ չորս տարբեր մականուններու տակ, որոնք ազգականներ էին: Ասիկա հետաքրքրութիւն մը յառաջացուց մէջը եւ մղեց զինք, որ աւելի խորը սուզուի այդ ընտանեկան գիծի պրպտութիւն մէջ: Անոր այդ փնտռութիւնը զինք ետ տարաւ հոլանատացի գաղթականի մը՝ Մաքս Ճիլքս անունով, որ ծնած էր 1720-ի եւ 1740-ի միջեւ: Տարիներու ժրաջան ուսումնասիրութիւններէ ետք, Տակտեյլ գտաւ Ճիլքսի սերունդէն 540 հոգի: Անոնց մէջ կային 76 դատապարտեալ ոճրագործներ, 18 հանրատուն կառավարողներ, 120 պոռնիկներ եւ աւելի քան 200 կառավարութենէն օժանդակութիւն ստացողներ: Կարճ ձեւով ըսելով, կային սերնդային անէծքներ, որոնք առաջնորդած էին սխալ վարմունքներու եւ կառավարութեան վրայ տասնեակ միլիոնաւոր տոլարի ծախս եղած էին՝ այսօրուայ թղթադրամի արժէքով (Տակտեյլ, *Տը Ճիլքս*):

Հիմա բաղդատենք զինք ճոնրթըն էտուրրոտզի հետ, որ ծնած էր նոյն ժամանակաշրջանին: Ան վերաբնութեան առաջնորդ մըն էր, որ գրած էր մեծ թիով գիրքեր եւ ներշնչած էր շատերը, որ Աւետարանը ազգերուն տանին: Ան ամուսնացած էր Սառա Փիրփոյնթի հետ, 1727-ին: Այդ զոյգը Աստուծոյ վախը ունէր: Անոնք Աստուածաշունչը կը կարդային եւ միասին կ'աղօթէին ամէն գիշեր նախքան քնանալը: Ունէին տասնմէկ զաւակներ, եւ ճոնրթըն օրինութեան աղօթք մը կ'ընէր իւրաքանչիւր զաւակի վրայ ամէն օր: Ան ըսած է, թէ՛ «Ամէն տուն պէտք է ըլլայ պզտիկ եկեղեցի մը»:

Ճոնրթընի եւ Սառայի սերունդին պատկանող յայտնաբերուած 1,394 անձերը օրինակ են Աստուծմէ վախցողներուն կեանքին մէջ Աստուծոյ խոստումներու իրականացման. *անոնք պիտի տիրանան իրենց թշնամիներուն դարպասներուն եւ անոնց զաւակները յաջող պիտի ըլլան ամէն տեղ*: Անոնց սերունդներուն մէջ կան 13 քոլէճի կամ համալսարանի տնօրէններ, 65 քոլէճի կամ համալսարանի դասախօսներ, 3 Միացեալ Նահագներու ծերակուտականներ, 30 դատաւորներ, 100 փաստաբաններ, 60 բժիշկներ, 75 բանակի եւ ծովուծի զինուորականներ, 100 հովիւներ եւ միսիոնարներ, 60 ականաւոր հեղինակներ եւ 1 Միացեալ Նահագներու փոխ նախագահ՝ Աարոն Պըր: Անոնց սերունդը ոչ իսկ մէկ դահեկանի ծախսի նայած է կառավարութեան վրայ (Ռոպըրթ Ալան Ուորտ, *Տը Տիւսենտընթս աֆ Ճոնրթըն էտուրրոտզ*):

Այն վախերը, որոնք կ'ունենայի մեր չորս որդիներուն հետ կապուած կը վերաբերէին անոնց կանուխէն այս կեանքէն հեռանալուն, եւ թէ արդեօք պիտի ատէին իրենց հայրը՝ տարեկան երբեմն մինչեւ 200 օր քարոզելու համար ճամբորդութեան մէջ ըլլալուն պատճառով կամ արդեօք պիտի ատէին զԱստուած՝ զիս այդ առաքելութեան կանչած ըլլալուն համար: Գիշեր մը՝ տունէն շատ հեռու խորհրդածողովի մը ընթացքին ծառայելէ ետք, անդրադարձայ, որ սուրբ վախի մէջ թերի ըլլալուս պատճառով, չէի կրնար անոնց կեանքերը Յիսուսի յանձնել: Պոռալով աղօթեցի. «Հայր, այս չորս որդիները իմս չեն այլեւս. անոնք կը պատկանին Յիսուսի: Կրնաս ինչ որ ուզես անիկա ընել իրենցմով: Բայց Չարախօս, դուն բնաւ պիտի չդպչիս անոնց»: Այդ օրուրնէ ի վեր ես բնաւ վախ չեմ ունեցած անոնց կեանքերուն համար:

Ատկէ կարճ ժամանակ ետք Աստուած կարեւոր ճշմարտութիւն մը բացայայտեց ինձի Իր Խօսքին միջոցաւ: Փենեհէս Ահարոն քահանայի թողնելէն էր: Ան նախանձախնդիր էր Աստուծոյ հանդէպ եւ Իսրայէլի ժողովուրդին նկատմամբ: Անոր Աստուծոյ վախը զինք առաջնորդեց ընելու այն ինչ որ ուրիշ հաւատացեալներ վախցան ընելու. ան համարձակօրէն պաշտպանեց ճիշդը: Ատիկա ընելուն համար Աստուած ըսաւ. «Ետեաքար ըսէ՛. “Ահա ես անոր կու տամ իմ խաղաղութեան ուխտս: Ասիկա յաւիտենական քահանայութեան ուխտ մը պիտի ըլլայ անոր եւ անկէ ետք՝ անոր զարմին”» (Թիւերու 25.12): Հիմնականին մէջ անոր սերունդին խոստացուեցաւ Աստուծոյ հետ աւելի մտերիմ յարաբերութիւն՝ իր սուրբ վախը ունենալուն համար: Սուրբ Հոգին ինձի ցոյց տուաւ, թէ մեր որդիներուն պաշտպանութիւնը Իր կամքին նկատմամբ Լիսայի եւ իմ ջերմեռանդ հնազանդութեան մէջ էր:

Հիմա տարիներ ետք, մեր չորս որդիներն ալ աշխատած են *Մասենճըր Ինթըրնաշընըլի* մէջ առնուազն ինը տարի: Անոնցմէ երկուքը գիրքեր հրատարակած են, բոլորն ալ առաջնորդներ են եւ ամէնէն կարեւորը՝ բոլորն ալ կ'ապրին Աստուծոյ սուրբ վախով: Մարդիկ շարունակ կը հարցնեն մեզի, թէ ինչ ըրինք, որ մեր զաւակները բոլորն ալ բարեպաշտ տղամարդիկ եղան: Անկեղծօրէն, ատիկա կապ չունէր մեր իմաստութեան հետ, եւ իբրեւ ծնողներ մեր գործած շատ մը սխալները հատորներով գիրքեր կրնան լեցնել: Սակայն այն բանը, որ ճիշդ ըրինք սուրբ վախի մէջ քալելն էր:

Երբ մեր որդիները պզտիկ շեղումներ ունեցան իրենց դեռահաս տարիներուն, Լիսան եւ ես աղաղակեցին Տիրոջ, որպէսզի Իր խոստումները հաստատուէին մեր որդիներուն կեանքերուն մէջ, եւ մենք շարունակեցինք սուրբ վախով ապրիլ: Բնաւ չկորսնցուցինք մեր

հաւատքը. դուք ալ պէտք չէ կորսնցնէք զանիկա: Աստուծոյ խոստումը ձեզի՝ որոնք կը վախնան Տիրոջմէ, այն է, որ ձեր զաւակները «հզօր պիտի ըլլան երկրի վրայ» (Սաղմոսներու 112.2, ըստ անգլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* (NKJV) տարբերակէն):

Անձնականացնել

Հատուած– Քու որդիներդ ձիթենիի տուններուն պէս պիտի ըլլան սեղանիդ շուրջը: Ահա՛ այսպէս պիտի օրհնուի Տերոջմէն վախցող մարդը: (Սաղմոսներու 128.3–4)

Միտք– Երբ կը մնաս սուրբ վախի մէջ, նշանակալից բան մը կը փոխանցուի սերունդներուդ: Ոչ միայն անոնք ազդեցութիւն ունեցող մարդիկ պիտի ըլլան, այլեւ դուն պիտի շարունակես օրհնուիլ անոնց միջոցաւ:

Խոկալ– Ինչպէս կը տեսնեմ զաւակներս (կամ ապագայի զաւակներս): Կը մտահոգուիմ անոնց ապագայով: Արդեօք զանոնք ամբողջութեամբ յանձնամծ եմ Յիսուսի տիրութեան: Անոնց առջեւ սուրբ վախով կը քալեմ: Արդեօք կը մտածեմ, կ'աղօթեմ եւ կը խօսիմ անոնց ներկայի վարմունքին համաձայն կամ Աստուծոյ Խօսքի խոստումներուն համաձայն:

Աղօթք– Սիրելի Տէր, Խօսքդ կ'ըսէ, թէ յաւիտենական աւանդ մը ապահոված կ'ըլլամ եթէ սուրբ վախով ապրիմ: Կը հաւատամ Քու այն խոստումիդ թէ՛ զաւակներս հզօր պիտի ըլլան երկրի վրայ: Անոնք պիտի ըլլան ազդեցիկ, յաջող եւ պատիւ պիտի բերեն Քու անունիդ եւ իմ անունիս: Որոշած եմ շարունակել համարձակօրէն աղօթել՝ այդ խոստումներուն կատարման համար: Ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն– Չաւակներս հզօր են երկրի վրայ, յաջող ամէն տեղ որ երթան եւ կը տիրեն իրենց թշնամիներուն դարպասներուն:

Երբ ուզենք սահմանել,
թէ մարդուն ճշմարիտ
իմաստութիւնը ինչ բանէ կը
բաղկանայ, յարմարագոյն բառը,
որ կարելի է գործածել այն է, որ
որոշակիօրէն կ'արտայայտէ
Աստուծոյ վախը:

– ՕԳՈՍՏԻՆՈՍ ԵՐԱՆԵԼԻ

39 | ԱՄԷՆԷՆ ԿԱՐԵՒՈՐ ԲԱՆԸ

Այս գլուխին մէջ խօսուելիք նիւթը այնքան ընդարձակ է, որ ամբողջ գիրք մը կարելի է գրել միայն անոր մասին: Եւ սակայն անկէ խուսափիլը թերի կամ անկատար կը դարձնէ այս պատգամը: Ուստի մօտեցիր այս գլուխին իբրեւ ծանօթութիւն մը սուրբ վախի այս կարեւոր երեսին:

Մտիկ ըրէ մեր Ստեղծիչին սիրտէն բխած այս խօսքերուն. կեանքի խօսքեր, ճշմարտութեան խօսքեր, խօսքեր, որոնք կը պաշտպանեն, խօսքեր, որոնք պիտի մնան արեւին, լուսինին եւ աստղերուն անցնելէն ալ ետք, խօսքեր, որոնք աւելի վստահելի են քան այն երկիրը, որուն վրայ կը կանգնինք.

Երջանիկ է այն անձը, որ իմաստութիւն կը գտնէ, եւ ան, որ հասկացողութիւն կը շահի [...] *ոչինչ*, որ կը ցանկաս կարելի է բաղդատել անոր հետ: (Առակներու 3.13,15, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹

Ոչինչ կայ այս աշխարհի մէջ, որ համարժէք է աստուածային իմաստութեան: Ուշագրաւ է. ոչինչ: Ատոր համար մեզի կ'ըսուի. «Իմաստութիւն ձեռք ձգելը ամէնէն կարեւոր բանն է, որ կրնաս ընել» (Առակներու 4.7)², եւ երբ զանիկա կը գտնես, անիկա «պիտի առաջնորդէ քեզ բերկրալի ճամբաներու մէջ. անոր բոլոր ճամբաները

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Կուր Նիուզ Թրանսլէյշըն* (GNT) տարբերակէն

գոհացուցիչ են» (Առակներու 3.17)¹:

Պէտք է փնտռենք Աստուծոյ իմաստութիւնը ամէն որոշումի մէջ, որ կու տանք: Որովհետեւ մեզի կ'ըսուի. «Եթէ արժեւորես իմաստութիւնը, անիկա քեզ մեծ մէկը պիտի ընէ» (Առակներու 4.8)²: Ինչ նշանակալից խոստում: Մեծ բառին երբայերէնը կը սահմանուի իբրեւ՝ «բարձրացնել, վեր վերցնել, մեծարուիլ»: Երբ Աստուած կը բարձրացնէ քեզ, ոչ մէկը եւ ոչ մէկ պայման կրնայ քեզ վար առնել: Ուրեմն իմաստութիւնը ուղին է մնայուն նշանակութեան:

Իմաստութիւնը պէտք է յայտնաբերուի. անիկա ծածկուած է, բայց ոչ անմատչելի: Մէյ մը որ գտնուի, անիկա շատ մեծ օգուտներ կը բերէ: Ուրեմն ինչպէս կը գտնենք զանիկա:

Տէրոջ վախը իմաստութեան *սկիզբն* է: (Սաղմոսներու 111.10:
Առակներու 9.10, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Սկիզբին երբայերէնը նշանակալից է: Անիկա կը գտնուի Աստուածաշունչի առաջին համարին մէջ. «*Սկիզբէն* Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց» (շեշտադրումը՝ մեր կողմէ): Այդ բառը կը նշանակէ՝ «սկսելու տեղը» կամ «մեկնակէտը»: Սուրբ վախը իմաստութեան *ծագման կէտն* է: Այս ձեւով պատկերացուր. նկատի առ պահեստի տուն մը՝ լեցուն մնայուն յաջողութեան համար պէտք եղած ամբողջ իմաստութեամբ: Սակայն միայն մէկ դուռ կայ եւ մէկ բանալի, որով կրնաս ներս մտնել. սուրբ վախը: Եսայի կը գրէ. «Իմաստութեան եւ գիտութեան [...] հարուստ պահեստ մը. Տիրոջ վախը *բանալին* է այդ գանձին» (33.6, շեշտադրումը՝ մեր կողմէ)³:

Հիմնականին մէջ չկայ մնայուն իմաստութիւն Տիրոջ վախէն դուրս: Սուրբ վախը ծագումն է մնայուն իմաստութեան, բայց օգուտները կը շարունակուին ծագումի տեղէն անդին.

Տէրոջ վախը կեանքի *աղբիւր* է՝ մահուան *որոգայթներէն* զերծ պահելու համար: (Առակներու 14.27, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Կ'ուզեմ ընդգծել երկու բանալի բառեր. *աղբիւր* եւ *որոգայթներ*: *Աղբիւրի* համար գործածուած երբայերէն բառը ունի «հոսանք» կամ «շարունակ հոսող աղբիւր» իմաստը: Լաւ կեանք մը ապրիլը չի գար

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլեյշըն* (NLT) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլեյշըն* (NLT) տարբերակէն

3 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Ինթըրնաշընըլ Վըրժըն* (NIV) տարբերակէն

ցանցառ, հոս-հոն տրուած լաւ որոշումներէ: Այլ՝ անիկա կու գայ իմաստուն որոշումներու շարունակական հոսքէ մը. որոշումներ, որոնք մնայուն պտուղ կու տան:

Երկրորդ բառը՝ *որոգայթներ*, վերագրում է ծուղակներու կամ կերի: «Այդ եբրայերէն բառի ճիշդ հասկացողութիւնը հետեւեալն է՝ այն հրապուրիչ բանը կամ կերը, որ կը դրուի որսորդի մը ծուղակին մէջ» (Պէյքըր եւ Քարփենթըր, *Տը Քոմփլիթ Ուըրպր Սթապի Տիքշնըրի*, էջ 585): Ուե՛ լաւ որսորդ գիտէ, որ ծուղակը երկու բանի պէտք ունի յաջող ըլլալու համար: Պէտք է պահուած ըլլայ՝ այն յոյսով, որ անասունը պիտի չճանչնայ զանիկա իբրեւ ծուղակ մը, եւ պէտք է կեր դրուած ըլլայ մէջը՝ անասունը ծուղակին մահացու ճիրաններուն մէջ հրաւիրելու համար: Բանալի բառերը լաւ հասկնալէ ետք, նայինք ուրիշ հատուածի մը, որ աւելի կը յստակացնէ նշուած ճշմարտութիւնը.

Տէրոջ վախը *իմաստութեան կրթութիւնն* է: (Առակներու 15.33, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Այդ երկու հատուածներուն ճշմարտութիւնները իրարու միացնելով, կը յայտնաբերենք, որ սուրբ վախը աղբիւր մըն է՝ շարունակական հոսանք մը, Աստուծոյ իմաստութենէն եկած թելադրանքներու: Անիկա միշտ ներկայ եղող խորհրդատու մըն է, որ չի մրափեր կամ քնանար, այլ՝ շարունակ կը մարզէ մեզ՝ կեանքի մէջ իմաստուն որոշումներ տալու համար:

Մարդկութիւնը հազարաւոր տարիներէ ի վեր փաստած է, որ երբ առանձին կը մնանք, այսինքն՝ անջատուած Աստուծոյ իմաստութենէն, վնասակար որոշումներ կու տանք՝ մինչ լման ժամանակը կը կարծենք, թէ լաւ որոշումներ կու տանք: Ինչո՞ւ ատիկա այդպէս է: Մահուան ձեւերը ծածուկ են եւ կերով կը հրապուրեն, ոչ տարբեր որսորդի մը ծուղակէն: Այն ինչ որ լաւ, օգտակար եւ հաճելի կը թուի յաճախ միայն այն կերն է, որ պիտի հրապուրէ քեզ բանի մը, որ վերջաւորութեան վատ է, անիմաստուն, վնասակար եւ վշտալի ցաւ պատճառող: Տիրոջ վախը կը պաշտպանէ մեզ ասկէ՝ *հաւաքարմօրէն մեզ շեղելով այդ ծուղակներէն*:

Եթէ նայիս այսօրուան ընկերութեան, կը տեսնես մեծ եւ խելացի տղամարդիկ եւ կիներ, որոնք իրենց տուած որոշումներով իրենց ազդեցութեան տակ եղողները կործանումի կը տանին: Միեւնոյն ատեն ուրիշներ կոյր են անոնց անմտութեան դիմաց: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ սուրբ վախը մերժելով, «իրենց միտքը

անմտութեամբ խաւարեցաւ: Իրենք զիրենք իմաստուն համարելով՝ յիմարացան» (Հռոմայեցիներուն 1.21–22): Երբ միտքերը կը խաւարին, տեսողութիւնն ալ կը խաւարի. միայն ժամանակի հարց է գլխուդ վրայ իյնալդ մահուան ծածուկ եւ կերով քեզ հրապուրող ծուղկաներուն մէջ:

Սակայն հակառակն ալ ճիշդ է: Երբ ամուր կերպով կը կառչինք սուրբ վախին, կ'ունենանք միշտ ներկայ եղող եւ մնայուն կերպով հոսող իմաստութեան խորհրդատու մը, որ մեզի կու տայ կարողութիւնը մնայուն, օգտակար որոշումներ տալու: Նոյնիսկ երբ անգիտակից կ'ըլլանք թագնուած մահաբեր ծուղկաներուն, աղբիւրը շարունակ կը պաշտպանէ մեզ անգիտակցաբար ծուղակը իյնալէն:

Քննենք այդ սկզբունքը, խօսելով այն մարդուն մասին, որ Աստուծոյ հետ ուխտ չունէր, բայց կը վախնար Աստուծմէ: Ան Գերարայի Աբիմելէք Թագաւորն էր: Աբրահամի կինը՝ Սառան առաւ իր հարեմին մէջ, բայց ատկէ ետք Աստուած իրեն երազի մը մէջ յայտնուեցաւ եւ ըսաւ. «Ահա՛ այդ կնոջ համար՝ որ դուն առիր, պիտի մեռնիս. քանի որ ան ամուսին ունի» (Ծնունդներու 20.3):

Աբիմելէք աղաղակեց. «Տէր [...] ես այս բանը պարկեշտ սիրտով եւ անմեղ ձեռքերով ըրի» (հմր 4–5): Հոս գործածուած «Տէր» բառին համար մեզի կ'ըսուի, թէ անիկա կը նշանակէ «իմ Տէրս» (Պէյքըր եւ Քարփենթըր, *Տը Քոմիլիթ Ուրդր Սթապի Տիքշընըրի*, էջ 18): Անոր Աստուծմէ վախը բաւական բացայայտ է Աստուծոյ տուած անուանումին մէջ ինչպէս նաեւ անոր պատասխանին: Հիմա մտիկ ըրէ, թէ Աստուած ինչ կ'ըսէ իրեն.

Ես ալ գիտցայ թէ այս բանը պարկեշտ սիրտով ըրիր. նաեւ
քեզ զերծ պահեցի ինձի դէմ մեղանշելէն. ասոր համար
քեզի չթոյլատրեցի որ անոր դպչիս: (Ծնունդներու 20.6,
շեշտադրումը՝ մեր կողմէ)

Հակառակ անոր մասին անգիտակից ըլլալուն, Տիրոջ վախը այն խորհրդատուն էր, որ պահեց այդ թագաւորը մահուան ծուղակին մէջ իյնալէն: Ծուղակը ծածկուած էր՝ Սառան իբրեւ Աբրահամի քոյրը ներկայացնելու խաբէական ձեւին մէջ: Սակայն սուրբ վախը պաշտպանեց զինք: Ինչպէս է, որ այդ հեթանոս թագաւորը, որ յայտնի ուխտ մը չունէր Աստուծոյ հետ եւ որ չունէր Աստուծոյ գրաւոր Խօսքը, վախէն դողաց երբ գիտցաւ, որ ուրիշ մարդու մը կինը առած էր: Պատասխանը կը գտնենք Պողոսի գրութեան մէջ. «Հեթանոսները Աստուծոյ Օրէնքը չունին. բայց երբ բնականօրէն Օրէնքին պահանջները

կը գործադրեն, Օրէնքը չունենալով՝ նոյնինքն իրենք են իրենց Օրէնքը: Անոնք ցոյց կու տան, որ Աստուծոյ Օրէնքին պահանջները իրենց սիրտերուն մէջ գրուած ունին, որուն կը վկայէ նաեւ իրենց խիղճը, երբ իրենց դատողութիւնները զիրենք կը յանդիմանեն կամ կ'արդարացնեն» (Հռոմայեցիներուն 2.14-15):

Առաւել, ինչպէս է, որ այդ հեթանոս թագաւորը կը դողայ ուրիշ մարդու մը կինը առած ըլլալու խորհուրդին պատճառով, եւ սակայն տարիներու հովիւ մը կամ տարիներ շարունակ եկեղեցի յաճախող մէկը ուրիշ մէկու մը կնոջ հետ շնութիւն կը գործէ... Բան մը, որ ասելի յաճախակի կերպով կը տեսնենք ժամանակի ընթացքին: Հրթիռներու գիտնական ըլլալու պէտք չկայ: Հակառակ անոր որ տուեալ հովիւը կամ եկեղեցի յաճախողը իր բերանով կը դաւանի, թէ Յիսուսի կը պատկանի, Աստուծոյ վախը չունի: Մեզի կ'ըլուի.

Ես մահէն ասելի դառն գտայ այն կինը՝ որուն սիրտին մէջ ցանցեր եւ ուռկաններ *կան*, ու ձեռքերուն մէջ՝ կապեր. Աստուծոյ առջեւ հաճելի եղողը անկէ կ'ազատի, բայց *մեղաւորը* անկէ կը բռնուի: (Ժողովողի 7.26, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Աստուծոյ Խօսքը չ'ըսեր, թէ *չարը* ծուղակը պիտի իյնայ, այլ՝ *մեղաւորը*. ան, որ ակնկալուած արդիւնքը չի տար՝ իր սուրբ վախ չունենալուն պատճառով: Ատիկա կրնայ շատ դիրութեամբ ըլլալ մէկը, որ Քրիստոնեայ ըլլալ կը դաւանի: Յակոբոս հաւատացեալներուն կը գրէ, ըսելով. «Լուացէք ձեր ձեռքերը, *մեղաւորներ*. մաքրեցէք ձեր սիրտերը, քանի որ ձեր հաւատարմութիւնը բաժնուած է Աստուծոյ եւ աշխարհի միջեւ» (4.8, շեշտադրումը՝ մեր կողմէ)՝:

Արեւմուտքի մէջ մեր ընդունած Աւետարանը կամաց-կամաց վերցուցած է Աստուծոյ վախը մեր սիրտերէն՝ մեզի սորվեցնելով *կեղծ* շնորհքի մը մասին, որ մեզ տարբեր ձեւով կը մարզէ քան ինչպէս Աստուծոյ իմաստութիւնը կը մարզէ: Անիկա յառաջ կը բերէ ոչ-առողջ աղբիւր մը աղաւաղուած խորհուրդի, որ կը վերցնէ մեզ մեղքէն պաշտպանող զսպիչ ոյժը: Սակայն իսկական շնորհքը բախում չ'ունենար սուրբ վախին հետ:

Քանի որ Աստուծոյ փրկարար շնորհքը երեւցաւ բոլոր մարդոց, *կրթելով* [*«սորվեցնելով»*], ըստ անգլերէնի *Նիու Քինկ*

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Ճէյմզ Վըրթըն (NKJV) տարբերակին] մեզ՝ որ ուրանանք ամբարշտութիւնն ու աշխարհային ցանկութիւնները, եւ ապրինք խոհեմութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ այս ներկայ աշխարհին մէջ: (Տիտոսի 2.11-12, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹

Չենք կրնար բաժնել Աստուծոյ ճշմարիտ շնորհքը Աստուծոյ սուրբ վախէն: Իրարու միացած են եւ երկուքն ալ *կը կրթեն* (*կը սորվեցնեն*). շարունակ խորհուրդ տալով մեզի կամ խրատելով մեզ՝ ետ կը պահեն մեզ մահուան ծուղակներէն:

Յիսուսը դաւանող, ուխտի ժողովուրդին մէջ համաճարակի պէս տարածուած այդ անբարեպաշտ վարմունքը նոր բան մը չէ: Ամբողջ Իսրայէլի եւ Եկեղեցոյ պատմութեան մէջ կը տեսնենք նոյն ձեւին կրկնութիւնը: Բայց անիկա ատելի կը սաստկանայ այս վերջին օրերուն, որոնց համար Յիսուս ըսաւ, որ պիտի նշուին խաբկանքով: Սուրբ վախի բացակայութիւնը կը բանայ մարդոց սիրտերը եւ շունչերը խաւարի խորհուրդներուն առջեւ, որոնք կ'երեւին թէ ճիշդ են, բայց իրականութեան մէջ առանց անդրադառնալու կ'առաջնորդեն մեղքի եւ մահուան:

Ներկայիս մեր ընկերութեան մէջ անօրէնութեան ոյժը արագացած ընթացքի մը մէջ է: Կարծես դէպի վեր ելլող կոր գիծի մը վերի բաժինին մէջն ենք: Եթէ հաւատացեալներուն մէջ լայն տարածում եւ ընդունելութիւն գտած կեղծ շնորհքը շարունակէ ջնջել սուրբ վախը հաւատացեալներու սիրտերէն, Յիսուսը դաւանող Քրիստոնեաներու բազմութիւններ պիտի սահին եւ երթան անօրէնութեան խաբկանքներու հոսանքին մէջ: Մենք պէտք ունինք սուրբ վախի վերարթնութեան մը, տրուած ըլլալով, որ անիկա շարունակ կը պաշտպանէ մեզ խաբկանքէն: Անիկա մեր սիրտերը համապատասխան կը պահէ ճշմարտութեան հետ, նոյնիսկ երբ մարդոց մեծամասնութիւնը գլուխն ի վար ինկած է խաբկանքի մէջ:

Ընդունէ՛ սուրբ վախը իբրեւ մեծագոյն գանձոյ: Զանիկա պահէ ատելի ժրաջանօրէն գան պիտի պահէիր մէկ միլիոն տոլարը, ամէնէն թանկարժէք գոհարեղէնը կամ ամէնէն աղուոր տունը: Մենք այդ արժէքաւոր բաները կը պահենք դաշնակցային ապահովագրութիւն ունեցող դրամատուններու, մեծ պահոցներու եւ գանձարկղներու մէջ կամ տան մէջ ահազանգի համակարգեր դնել կու տանք, եւ սակայն

¹ Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանուած, 2001

մեծագոյն գանձը Տիրոջ վախն է: Ատոր համար մեզի կ'ըսուի. «Պահէ սիրտդ ամբողջ զգուշութեամբ, քանի որ կեանքի աղբիւրները անկէ են» (Առակներու 4.23):

Անձնականացնել

Հատուած- Ահա՛ իմաստութիւնը կը գոչէ, ու հանճարը իր ձայնը լսել կու տայ [...] Արդարեւ զիս գտնողը կեանք կը գտնէ ու Տէրոջ բարեհաճութիւնը կը ստանայ, իսկ ինձի դէմ մեղանշողը իր անձին կը վսասէ: (Առակներու 8.1,35-36)

Միտք- Իբրեւ Քրիստոսի հետեւորդ մը իմաստութիւն ստանալը ամէնէն կարեւոր բանն է, որ կրնանք ընել: Տիրոջ վախը իմաստութեան աղբիւրն է. անիկա մեզ կը պաշտպանէ մահուան ծուղակներէն:

Խոկալ- Արդեօք ես սահման դրեր եմ: Որոշած եմ ջարիլ ընկերութեան իմաստութեան, որ հակառակ է Աստուծոյ Խօսքի ըսածներուն: Պատրամստ եմ հալածանք կրելու Անոր Խօսքին նկատմամբ իմ համոզումիս եւ հնազանդութեանս համար: Ինչպէս ւսելի ուշադրութեամբ հետամուտ պիտի ըլլամ Յիսուսի իմաստութեան իմ ամենօրեայ որոշումներուս մէջ:

Աղօթք- Սիրելի Հայր, Յիսուսի անունով, կ'աղաղակեմ Քու իմաստութեանդ եւ հասկացողութեանդ համար: Կը խնդրեմ, որ բանասականջներս եւ աչքերս, որպէսզի ըմբռնեմ զանոնք: Չեմ ուզեր ըլլալ անմիտ մը՝ իմ սեփական կարծիքներս իմաստութիւն համարելով: Պիտի արժեւորեմ Տէր Յիսուս Քրիստոսի իմաստութիւնը եւ վստահիմ Անոր ամէն բանէ ւսելի, որ այս աշխարհը կ'առաջարկէ: Կ'ընտրեմ հնազանդիլ նոյնիսկ եթէ հալածուիմ իմ համոզումներուս կամ հնազանդութեանս համար: Ամէն:

Դաւանութիւն- Վճռած եմ հետամուտ ըլլալ Տէր Յիսուսի իմաստութեան իրաքանչիւր որոշումի մէջ, որ կու տամ:

Աստուծոյ վախը
կը համապատասխանէ
խոնարհներուն:

– ՕԳՈՍՏԻՆՈՍ ԵՐԱՆԵԼԻ

40 | ՅԱԶՈՂ ԿԵՐՊՈՎ ԱՊՐԻԼ

Առակներու Գիրքի իմաստութեան խորքը կայ ինչ որ կը սիրեմ կոչել՝ «զօրութեան զոյգը»: Այդ երկու առաքինութիւնները մօտէն կապ ունին իրարու հետ. յաճախ մէկը միւսը կ'ամբողջացնէ Սուրբ Գիրքերուն մէջ: Անոնք նշուած են հետեւեալ համարին մէջ.

Իրական խոնարհութիւնը եւ Տիրոջ վախը կ'առաջնորդեն հարստութեան, պատիւի եւ երկար կեանքի: (Առակներու 22.4, շեշտադրումը՝ մեր կողմէ)՝

Իրական խոնարհութիւնը եւ սուրբ վախը իրարու հետ կապուած են: Բնաւ պիտի չգտնես մէկը, որ կը վախնայ Աստուծմէ եւ որ իրապէս խոնարհ չէ: Ոչ ալ պիտի գտնես մէկը, որ իրապէս խոնարհ է եւ որ չի վախնար Աստուծմէ: «Իրապէս» բառը կարելի է, տրուած ըլլալով, որ կան կեղծ խոնարհութեան զանազան ձեւեր: Այդ մասին անելի մանրամասնօրէն պիտի խօսինք յաջորդ գլուխին մէջ:

Հակիրճ կերպով նայինք վերը նշուած երեք խոստումներուն. հարստութիւն, պատիւ եւ երկար կեանք: «Հարստութեան» եբրայերէն բառը *ժսէրն* է եւ կը սահմանուի իբրեւ՝ «Ստացուածք, հարստութիւն: Կը նկարագրէ ամէն տեսակի ինչք՝ հող, կալուածք, արջառ եւ սերունդներ»: Անոր իմաստը յստակ է, եւ անիկա սուրբ վախի հետ կապուած մէկ անգամուայ խոստում մը չէ: Սաղմոսողը նաեւ կը գրէ.

Ո՛րքան երջանիկ են անոնք, որոնք կը վախնան Տիրոջմէ եւ կը հրճուին Անոր պատուէրներուն հնազանդելով [...] Անոնք

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

հարուստ պիտի ըլլան եւ անոնց բարի գործերը յաւիտեան պիտի մնան: (Սաղմոսներու 112.1,3)

Հոս գործածուած «հարուստ» բառին տեղ նոյն եբրայերէն բառը գործածուած է՝ *օւէր*: Ասիկա խնդիր յառաջացնող նիւթ մըն է: Կան ոմանք, որոնք հարստութիւն եւ ստացուածք ունենալը բարեպաշտութեան հակառակ կը համարեն: Սակայն եթէ մեր ւաւանդութեան սիրոյն յստակ աստուածաշնչական ճշմարտութիւններ կ'անտեսենք, ատիկա հպարտութեան նշան մը չըլլա՞ր, որ վստահաբար հակառակ է սուրբ վախին:

Ես տարիներ առաջ ատիկա ըմբռնեցի: Մեր ծառայութեան առաջին տարիներուն, Լիսան եւ ես ականատես եղանք, թէ ինչպէս քարոզիչներ կը քարոզէին բարգաւաճման ւսետարան մը, որ մղեց շատերը, որ հետամուտ ըլլան անկումի տանող հարստութեան կամ ճոխութեան: Պտուղը կործանարար էր՝ շատերը ազահութեան առաջնորդելով, ինչ որ կռապաշտութիւն է: Մեծ թիով հաւատացեալներ շեղեցան ճշմարիտ հաւատքէն եւ իրենք իրենց վրայ բերին զանազան վիշտեր: Վնասին ականատես ըլլալով, Լիսան եւ ես գացինք ճիշդ հակառակ ուղղութեամբ. սկսանք արհամարհել ամէն ուսուցում, որ կը նշէր հարստութիւն, ստացուածք կամ բարգաւաճում: Մեր անհասուն կեցուածքը վերջաւորութեան յանդիմանուեցաւ կամ սրբագրուեցաւ Սուրբ Հոգիին կողմէ: Մենք պէտք ունէինք ճիշդ ձեռով հասկնալու այն ճշմարտութիւնը, թէ՛ այն անձը, որ իրապէս կը վախնայ Աստուծմէ, պիտի կարենայ ճիշդ ձեռով վարուիլ հարստութեան հետ եւ պիտի չիյնայ ազահութեան ծուղակը:

Ինչ է նպատակը ստացուածքին եւ հարստութեան: Անոնք միջոցներ են ուրիշները օրհնելու: Այս գիրքի գրուելուն ատենը մեր առաքելութիւնը 53 միլիոն աղբիւրներ (գիրքեր եւ դասընթացքներ) բաժնած էր հովիւներու եւ առաջնորդներու 130 երկիրներու մէջ, 118 լեզուներով: Մենք նաեւ յառաջ բերած ենք հեռաձայնային կիրարկում մը՝ MessengerX անունով, որ լեցուն է աշակերտելու աղբիւրներով 122 լեզուով եւ որ ներբռնուած է 230 երկիրներու մէջ. մենք գումար չենք զանձած անոր գործածութեան համար: Այս ծրագիրները տասնեակ միլիոնաւոր տողարի նայած են: Ինչ պատահած պիտի ըլլար եթէ մեր այս ջանքերը հովանաւորող տղամարդիկն ու կիները ունենային այն համոզումը, թէ՛ բարեպաշտութիւնը հաւասար է սակաւութեան կամ չքաւորութեան: Եթէ այդպէս համոզուած ըլլային, մենք պիտի չկարենայինք հոգեւորապէս զօրացուցած ըլլալ այն բազմամիլիոն մարդիկը, որոնց հասած ենք:

Շատ մեծ տարբերութիւն կայ ազահութեան եւ ուրիշներու կեանքին մէջ ազդեցութիւն բերելու համար հարստութիւն ունենալուն

միջեւ: Անոնք, որոնք իրապէս կը վախնան Աստուծմէ գիտեն այդ տարբերութիւնը եւ իրենք զիրենք զերծ կը պահեն առաջինէն: Նոր Կտակարանին մէջ, Յիսուսի խաչելութենէն ետք, կը կարդանք.

Երբ երեկոյ եղաւ, Յովսէփ անունով *հարուստ* մէկը, որ Արիմաթայէն էր եւ որ ինք ալ *աշակերտած էր Յիսուսի*, գնաց Պիղատոսի մօտ եւ խնդրեց, որ Յիսուսի մարմինը իրեն տրուի: (Մատթէոսի 27.57-58, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Յովսէփ հարուստ էր, եւ Սուրբ Գիրքը զինք կը կոչէ Յիսուսի աշակերտ: Եւ հետաքրքրականը այն է, որ Յիսուսի հետետորդներուն մեծ մասը փախուստ տուած էին եւ պահուլտած, մինչ այդ հարուստ մարդը ունեցաւ համարձակութիւնը՝ ինչ որ յառաջ կու գար իր սուրբ վախէն, անտեսելու հրեայ ղեկավարներուն մարդոց վրայ ունեցած ահարկութեան ազդեցութիւնը ինչպէս նաեւ Հռոմի հզօր ձեռքը, եւ մօտենալու Պիղատոսի եւ խնդրելու, որ Յիսուսի մարմինը իրեն տրուի: Ինչ քաջ մարդ:

Կը խնդրեմ, որ սխալ չհասկնաք: Եթէ մէկը աղքատ է, արդեօք ատիկա կը նշանակէ, որ ան Աստուծոյ վախը չունի: Ո՛չ: Սուրբ Գիրքերը լեցուն են օրինակներովը տղամարդոց եւ կիներու, որոնք նիւթական հարստութիւն չունէին: Արդեօք ատիկա զիրենք ասելի նուազ բարեպաշտ կը դարձնէր: Անշուշտ ոչ: Իրական հարստութիւնը չի չափուիր դրամով կամ ստացուածքով, այլ՝ ուրիշներուն օգնելու մեր կարողութեամբ: Ահա մեր խոստումը.

Տէրոջմէն վախցէք, ո՛վ անոր սուրբերը, որովհետեւ անկէ վախցողներուն ոչինչ կը պակսի: Առիժի կորիւնները պիտի թշուառանան եւ անօթենան, սակայն Տէրը փնտռողներուն ո՛չ մէկ բարիք պիտի պակսի: (Սաղմոսներու 34.9-10)

Բարեպաշտ փափաք է Թագաւորութեան համար ուրիշներու կեանքին մէջ ազդեցութիւն բերելը՝ ըլլայ անիկա աղօթքով, ուտելիքով, ֆինանսներով, ուսուցումով, աշակերտելով, հիւրընկալութեամբ կամ ծառայութեամբ: Լաւ է ունենալ աղբիւրներու առատութիւն՝ իրագործելու համար ամէն բան, որուն կարիքը կայ մեր աստուածային առաքելութեան մէջ: Բարեպաշտ մարդիկը ատիկա կը հետապնդեն եւ այդ ընթացքին իրենք զիրենք անձնապէս օրինուած կը գտնեն: Հպարտները, կրօնամոլները եւ նախանձները իրենց ոյժը պիտի վատնեն վիճաբանելով եւ պնդելով, թէ՛ ինչո՞ւ հաւատացեալները պէտք է աղքատ ըլլան ինչպէս նաեւ պարտադրեն համոզումներ, որոնք Աստուածաշունչին մէջ չեն գտնուիր:

Սողոմոն Թագաւոր իր թագաւորութեան մարդիկը առաջնորդեց Տիրոջ վախին մէջ եւ այդ մասին սորվեցուց անոնց: Այդ օրերուն՝ «ամբողջ Յուդան եւ Իսրայէլը խաղաղութեան եւ ապահովութեան մէջ կ'ապրէին: Եւ Դանէն (դէպի հիւսիս) մինչեւ Բերսաբէ (դէպի հարաւ), *հրաքանջիւր ընտանիք* իր սեփական տունը եւ պարտէզը ունէր» (Գ.Թագաւորներուն 4.25, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹: Նաեւ կը կարդանք, թէ ժողովուրդը «շատ գոհ էր՝ առաջ ուտելիք եւ խմելիք ունենալով» (Գ.Թագաւորներուն 4.20, շեշտադրումը՝ մեր կողմէ)²: Կեցի՛ր եւ հետեւեալ հաստատումը նկատի առ պահ մը. «*Իրաքանջիւր ընտանիք* իր սեփական տունը եւ պարտէզը ունէր»: Ոչ ոք կարիքը ունէր կառավարական օժանդակութեան, ոչ ոք անգործ էր կամ աղքատ. բոլորը առանտօրէն ունէին: Տիրոջ վախը կու տայ իմաստութիւն, որմէ կ'օգտուին բոլոր անոնք, որոնք անոր ազդեցութեան տակ են. այս պարագային ամբողջ ազգ մըն էր: Ինչ պիտի պատահի եթէ մեր բոլոր ղեկավարները Տիրոջ վախով քալեն:

Իբրեւ վերջին խորհուրդ մը՝ ասիկա խոստում մը չէ, որուն համար պէտք է պայքարինք աղօթքով, ինչպէս Իսահակ պէտք էր, որ պայքարէր՝ Ռեբեկայի արգանդին բացուելուն համար: Յիսուս մեզի կը խոստանայ. «Դուք նախ խնդրեցէք որ Աստուծոյ արքայութիւնը գայ եւ աշխատեցէք իր կամքը կատարել, եւ Աստուած այդ բոլորը աւելիով պիտի տայ ձեզի» (Մատթէոսի 6.33):

Նախ նայինք յաջորդ խոստումին. *պատիւ*: Մեր բացումի համարին մէջ գործածուած «պատիւ» բառին երբայերէնը *քապոնյոն* է, որ կը սահմանուի իբրեւ՝ «պատիւ, փառք, մեծափառութիւն, հարստութիւն»: Նախորդ գլուխներէն մէկուն մէջ տեսանք, որ անիկա այն բառն է, զոր Մովսէս գործածեց երբ խնդրեց Աստուծոյ փառքը տեսնել: Անիկա կը կրէ կշիռք մը, իշխանութիւն մը, որ չի գար տիտղոսէ մը կամ դիրքէ մը, այլեւ կապուած է նկարագրի հետ: Ուստի կը յայտնաբերենք սուրբ վախի մէկ ուրիշ օգուտը. ազնուականութիւն: Անիկա կը փոխակերպէ քեզ արժանապատուութիւն եւ պատիւ ունեցող անձի մը: Առակներու Գիրքը միակ գիրքը չէ, որ այդ օգուտին մասին կը խօսի. սաղմոսողը կը գործածէ նոյն երբայերէն բառը անոնց համար, որոնք կը վախնան Աստուծմէ. «Անոնք ազդեցութիւն եւ *պատիւ* պիտի ունենան» (Սաղմոսներու 112.9, շեշտադրումը՝ մեր կողմէ):

Նկատի առ Առակներու Գիրքի առաքինի կինը: Ան հոյակապ

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

յատկանիշներ ունի: Վստահելի է, իմաստուն, ժրաջան, աշխոյժ, աշխատասեր, բարգաւաճ, հարուստ, ազնիւ, կ'օգնէ կարիքի մէջ եղողներուն եւ կը պաշտպանէ անպաշտպանները: Ուրիշ բացառիկ յատկանիշ մը՝ որ երբեմն կը շրջանցենք եւ կապ ունի մեր նիւթին հետ, հետեւեալն է. «Ան զօրութիւն եւ արժանապատուութիւն կը հագնի» (Առակներու 31.25)¹: Այլ խօսքով, ան պատիւ կը հագնի հագուստի պէս՝ ոչ տարբեր մեր հագուստներէն. անիկա տեսանելի եւ նկատելի է բոլորին, որ իր ներկայութեան մէջ կ'ըլլան: Եւ ինչ է անոր վերջին արժանիքը:

Վայելչութիւնը կը խաբէ, ու գեղեցկութիւնը ունայն է. սակայն *Տէրոջմէն վախցող* կինը պիտի գովուի: (Առակներու 31.30, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Սուրբ վախն է: Հոս է հիանալի իրականութիւնը. այդ կնոջ վերագրուած ազնուականութիւնը եւ արժանապատուութիւնը տրամադրելի են ուրիշ տղամարդու եւ կնոջ, որ կը վախնայ Տիրոջմէ: Ճամբորդութիւններու տարիներուս հանդիպած եմ մեծ թիով նշանաւոր կամ կարեւոր ղեկավարներու եւ անհատներու: Անոնցմէ շատերը մեծ ազդեցութիւն ձգած են իրենց ապրած վայրին մէջ: Բայց անոնց կերտած բաներէն աւելի ուշադրութիւնս կը գրաւէ տղամարդու մը կամ կնոջ մը արժանապատուութիւն հագած ըլլալը: Կշիռք մը կայ անոնց ներկայութեան մէջ: Անոնցմէ լոյս, սէր, պատիւ եւ ազնուականութիւն կը ճառագայթէ: Անոնց զաւակները կը սիրեն եւ կը յարգեն զիրենք, եւ անոնց աշխատակիցներն ու բարեկամները կը սիրեն մօտիկ ըլլալ անոնց: Հետաքրքրականօրէն, անոնցմէ շատերը հանրածանօթ դէմքեր չեն: Ինչ գրուած է անոնց այցետոմսին վրայ. թէ՛ անոնք կը վախնան Աստուծմէ:

Մեր բացումի համարին մէջ նշուած երրորդ խոստումը *երկար կեանքն* է, կամ երկայնակեցութիւնը: Անիկա մօտէն կապուած է իրական խոնարհութեան հետ: Մենք այդ խոստումին մասին պիտի խօսինք մեր յաջորդ գլուխին մէջ:

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Անձնականացնել

Հատուած- Տէրոջը վախը՝ չարութիւնը ատելն է [...] ես կը սիրեմ զիս սիրողները. զիս փութով փնտռողները զիս կը գտնեն: Իմ քովս են հարստութիւնն ու փառքը, երկարատեւ փարթամութիւնն ու արդարութիւնը: (Առակներու 8.13,17-18):

Միտք- Սուրբ վախը եւ խոնարհութիւնը կը խոստանան հարստութիւն, պատիւ եւ երկար կեանք: Հարստութիւնը չի չափուիր մեր ունեցած դրամին կամ ստացուածքին չափովը, այլ՝ ուրիշներուն օգնելու մեր կարողութիւնովը: Ազնուականութիւնը փաթթուած է մեր նկարագիրին մէջ, ո՛չ մեր տիտղոսին կամ դիրքին:

Խոկալ- Առողջ լոյսով կը նայիմ հարստութեան: Արդե՞ծք զանիկա կը հետապնդեմ անապահովութեան, վախի կամ ազահութեան մղումով: Արդեօք ատելի լաւ կ'ըլլայ, որ սուրբ վախը հետապնդեմ եւ հաւատամ ուրիշներու կեանքին դաչելու նպատակով առատութիւն ունենալու խոստումին: Ինձի համար ինչ կը նշանակէ արժանապատուութիւն հագած ըլլալը:

Աղօթք- Սիրելի Հայր, կը խնդրեմ, որ կատարես այն խոստումդ, թէ՛ իրական խոնարհութեան եւ սուրբ վախի հետամուտ ըլլալովս պիտի ունենամ այն հարստութիւնը, պատիւը եւ երկար կեանքը, որոնց պէտք ունիմ իրագործելու համար ուրիշներուն ծառայելու իմ աստուածային առաքելութիւնս: Յիսուսի անունով: Ամէն:

Դաւանութիւն- Երկնաւոր Հայրս ինձի խոստացած է՝ հարստութիւն, պատիւ եւ երկար կեանք երբ ես հետամուտ կ'ըլլամ սուրբ վախի եւ իրական խոնարհութեան:

Գիտակից անձը
ճիշդ ճամբուն
մէջ կը մնայ:

– ԱՌԱԿՆԵՐՈՒ 15.21¹

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

41 | ԼԱՒ ԿԵՐՊՈՎ ԱԻԱՐՏԵԼ

Չենք կրնար ամբողջական կերպով խօսած ըլլալ լաւ կերպով ապրելու մասին եթէ չներառենք նաեւ լաւ կերպով աւարտելը: 18–րդ գլուխին մէջ ակնարկութիւն ըրինք երկայնակեցութեան մասին, բայց այս գլուխին մէջ աւելի պիտի բացատրենք անիկա եւ պիտի տեսնենք, թէ ինչպէս Տիրոջ վախը եւ խոնարհութիւնը կարեւոր դեր ունին անոր մէջ:

Իրական խոնարհութիւնը եւ Տիրոջ վախը կ'առաջնորդեն հարստութեան, պատիւի եւ *երկար կեանքի*: (Առակներու 22.4, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹

Սուրբ վախի ամէնէն մեծ օգուտներէն մէկը երկար օրերն են: Աստուածաշունչը կ'ըսէ. «Տէրոջ վախը օրեր կ'աւելցնէ» (Առակներու 10.27): Ինչ խոստում... Եւ միայն մէկ անգամ չէ, որ կը նշուի ասիկա Աստուածաշունչին մէջ, որովհետեւ դարձեալ մեզի կ'ըսուի, թէ՛ սուրբ վախի իմաստութիւնով «քու օրերդ պիտի շատնան ու կեանքիդ տարիները աւելնան» (Առակներու 9.11): Մեզի ոչ միայն կը տրուի կեանքի տարիներու աւելնալու խոստումը, այլեւ կ'ըսուի, թէ՛ մեր տարիները աւելի արդիւնաւէտ պիտի ըլլան:

Ուրիշ հաստատում մըն ալ կը գտնուի Տասը Պատուիրաններէն մէկուն մէջ: Տիրոջ վախը կը ներշնչէ մեզ, որ առանց պայմանի պատուենք մեր ծնողները, եւ ասոր դիմաց մեզի կը խոստացուի՝ «որպէսզի միշտ բարիք գտնես եւ երկրի վրայ կեանքդ երկար ըլլայ» (Եփեսացիներուն 6.3): Անգամ մը եւս կը տեսնենք ոչ միայն

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

երկայնակեցութիւն, այլեւ արդիւնաւէտութիւն: Ասոնք խոստումներ են, զորս կրնանք խնդրել աղօթքի մէջ:

Ասիկա ըսելէ ետք կարեւոր է նշել, թէ եթէ կեանքը որակ չունենայ, տարիներու անլինալուն հաճոյքը կը պակսի: Իր յոռետեսութեան տարիներուն Սողոմոն գրեց. «Մահուան օրը [աւելի լաւ է] քան ծնունդին օրը» (Ժողովորդի 7.1): Յստակ է, որ հաճոյք չէր առներ կեանքէն երբ գրեց այդ բառերը: Ինչն է, որ որակ կու տայ կեանքին: Իրական խոնարհութիւնը եւ Տիրոջ վախը:

Տարիներ առաջ աղօթքի մէջ էի եւ կարդացի.

Ոգիա թագաւորին մահուան տարին՝ Տէրը տեսայ, որ բարձր ու վեհանիստ գահի վրայ բազմած էր. անոր [*պարեգօրին*] քղանցքը տաճարը կը լեցնէր: (Եսայիի 6.1)

Եսայի Տէրը տեսաւ Իր ամբողջ փառքին մէջ: Ինչպէս ըսինք նախորդ գլուխներէն մէկուն մէջ, ան տեսաւ Ամենակարողը Իր գահին վրայ, հսկայ հրեշտակները եւ անոնց գոչինի ձայնէն սեմերուն հիմերուն ցնցուիլը: Այդ փորձառութենէն ետք, անոր կեանքը արմատականօրէն փոխակերպուեցաւ:

Այդ պատմութիւնը կարդալէ ետք, աղաղակեցի. «Տէր, ես ատոր պէտք ունիմ. թարմ տեսիլք մը Յիսուսի»:

Սուրբ Հոգին փսփսաց սիրտիս մէջ. «Այդպէս չէր, որ սկսած եմ այդ համարը: Ե՛տ գնա եւ նորէն կարդա»:

Շուարեցայ, բայց ըրի այն ինչ որ ըսուեցաւ ինծի, եւ այս անգամ «Ոգիա թագաւորին մահուան տարին» բառերը էջէն դուրս ցատկեցին:

Ապա լսեցի. «Ոգիա պէտք էր մեռնէր, որպէսզի Եսայի Իմ մասիս թարմ տեսիլք մը ունենար»:

Այդ ատեն ես ծանօթ չէի Ոգիային. միայն գիտէի, որ Իսրայէլի կամ Յուդայի բազմաթիւ թագաւորներէն մէկն էր: Բայց երբ սկսայ ուսումնասիրել անոր կեանքը, կարգ մը հետաքրքրական իրականութիւններ յայտնաբերեցի: Ան միայն տասնվեց տարեկան էր երբ Յուդայի թագաւորը եղաւ, եւ յիսուներկու տարի թագաւորեց: Այն օրերու կացութիւնը անլի լաւ բացատրելու համար, նշեմ, որ այս գիրքը գրելու ատեն ես Միացեալ Նահանգներու տասը նախագահներու պաշտօնավարութեան օրեր տեսած եմ յիսուներկու տարուայ ընթացքին: Ոգիա երկար տարիներ թագաւորեց:

Տասնհինգ տարեկան հասակին միլիոնաւոր ժողովուրդի վրայ իբրեւ կառավարիչ կարգուած ըլլալով, ան իմաստուն բանը ըրաւ. Աստուծոյ դիմեց: Աստուածաշունչին մէջ կը կարդանք. «Որքան

ժամանակ որ Տէրը կը փնտռէր, Աստուած անոր յաջողութիւն կու տար» (Բ.Մնացորդներուն 26.5): Օ՛ր, ինչ յաջողութիւն: Աստուծոյ իրեն տուած իմաստութիւնը առաջնորդեց զինք զարմանալի մեծութեան: Ան զօրացուց տնտեսութիւնը, վերականգնեց քաղաքներ, հզօր բանակ մը կերտեց եւ ետ առաւ տարածքներ, զորս իր հայրերը կորսնցուցած էին: Աստուածաշունչին մէջ կը կարդանք, թէ՛ «Անոր համբաւը հեռաւոր տեղեր տարածուեցաւ, որովհետեւ ան սքանչելիօրէն օգնութիւն ստացաւ՝ մինչեւ որ ուժովցաւ» (Բ.Մնացորդներուն 26.15):

Սակայն Սողոմոնի նման Տիրոջ վախը իր գանձը չըրաւ: Դժբախտաբար Աստուածաշունչը կ'ըսէ.

«Բայց երբ ուժովցաւ, անոր սիրտը *խրոխտացաւ*՝ իր կործանումին համար»: (Բ.Մնացորդներուն 26.16, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Այդ ընթացքին ան կորսնցուց իր խոնարհութիւնը եւ սուրբ վախը, որոնցմով սկսած էր իր ճամբան: Ահա կարելոր ճշմարտութիւն մը. «զօրութեան գոյգ» արժանիքները կ'արտադրեն պտղաբերութեան ընթացք մը, ինչ որ կը նշանակէ, թէ ընդհանրապէս յաջողութիւնը կը շարունակուի նոյնիսկ երբ այն արժանիքները, որ սկիզբ տուին եւ մղեցին զանհկա այլեւս անոր ետին չեն: Ատկէ ետք ինչ որ կը կարդանք բաւական հետաքրքրական է.

«Արդարեւ Տէրոջ՝ իր Աստուծոյն հանդէպ ուխտագանց եղաւ, ու Տէրոջ տաճարը մտաւ՝ որպէսզի խունկի զոհասեղանին վրայ խունկ ձխէ»: (Բ.Մնացորդներուն 26.16)

Սուրբ Հոգին ինծի հարցուց հարցում մը. «Տղան, Ոգիա *աւելի*՞ հոգեւոր կամ *նուազ*՞ հոգեւոր դարձաւ երբ խրոխտացաւ (հպարտացաւ)»: Անմիջապէս անդրադարձայ, որ պատասխանը կարծուածին կամ ակնկալուածին հակառակն էր: Ես միշտ կը մտածէի, որ երբ հպարտութիւնը մտնէ մէկու մը սիրտը, ան նուազ հոգեւոր կը դառնայ: Սակայն Ոգիա տաճարը մտաւ հոգեւոր արարքներ ընելու համար Տիրոջ առջեւ: Ես աստոր պիտի չանդրադառնայի եթէ Սուրբ Հոգին չհարցնէր ինծի այդ հարցումը:

Տնցուած, առանց մտածելու հետեւեալը ըսի. «Ան *աւելի*՞ հոգեւոր դարձաւ»:

Սուրբ Հոգին փսփսաց սիրտիս մէջ. «Հպարտութեան հոգին եւ կրօնապաշտութեան հոգին միասին կը գործեն, եւ մէկը միւսը կը զօրացնէ՝ մէկը միւսը ծածկելով»: Հպարտութիւնը չ'արտօներ, որ անձը ընդունի, որ կրօնապաշտ դարձած է, իսկ կրօնապաշտութիւնը

կը ծածկէ հպարտութիւնը՝ իր հոգեւոր վարմունքով:

Ապա միտքս եկան Յիսուսի օրուայ փարիսեցիները: Ոգիայի նման, այդ ղեկավարները հաւանաբար անկեղծ սիրով եւ Եհովայի հանդէպ սուրբ վախով սկսան իրենց ծառայութիւնը, բայց տեղ մը եկաւ, որ հպարտութիւնը մտաւ իրենց սիրտը: Անոնք հետզհետէ աւելի հեռացան Աստուծմէ, բայց անոնց կրօնական գործունէութիւնները աւելի շատցան:

Ոգիայի դէմ կեցան քահանաները. անոր ոչ-սուրբգրային վարմունքը մատնանշեցին: Երբ ճշմարտութիւնը անոր առջեւ դրուեցաւ, Ոգիա զայրացաւ քահանաներէն (դարձեալ նշան մը, որ ան կորսնցուցած էր իր խոնարհութիւնը): Յանկարծ բորոտութիւն սկսաւ անոր ճակատին վրայ: Այդ թագաւորի կեանքին մնացեալ բաժինը ողբերգական էր. ան մեկուսի սենեակի մը մէջ ստիպուած էր ապրիլ: Իր որդին ստանձնեց արքունապետի պաշտօնը եւ ան կը դատէր ժողովուրդը: Ոգիա մեռաւ բորոտութեան մէջ:

Այդ պատահածներուն նայինք հանրութեան աչքերով: Յուդայի եւ Երուսաղէմի ժողովուրդին համար միակ բացայայտ իրականութիւնը այն էր, որ իրենց թագաւորը բորոտութեամբ վարակուած էր: Կրնա՞ք պատկերացնել, թէ ընկերային հաղորդամիջոցները ինչպէս պիտի պայթէին այդ լուրով: Հրապարակուած լուրերուն տակ մարդիկ պիտի գրէին՝ «Օ՛, ո՛չ: Մեր թագաւորը բորոտ եղած է. ինչ մեծ ողբերգութիւն»: Ժողովուրդէն ոչ ոք գիտէր, թէ ինչ կար հիւանդութեան ետին: Բայց ներքին պատճառը Սուրբ Հոգին կու տայ մեզի. սուրբ վախի եւ խոնարհութեան կորուստն էր:

Ատիկա մղեց զիս, որ Տիրոջ հարցնեմ մեր օրերուն պատահածներուն մասին: Սիրտս կը կոտրուէր տեսնելով, թէ ճիշտն մեծ թիւով ղեկավարներ անկում կ'ունենային իմ ապրած ժամանակաշրջանիս ընթացքին: Շատ յաճախ անիկա կ'ըլլար ամուսնութենէ դուրս յարաբերութիւններու պատճառով, բայց երբեմն ալ ալքովամոլութեան, թմրեցուցիչի մոլութեան, ագահութեան կամ այլ անառակութիւններու եւ անպատշաճ վարմունքներու պատճառով: Տխուր սիրտով դիտած եմ մեզմէ առաջ, մեզի հետ միասին եւ նոյնիսկ մեզմէ ետք ծառայութեան սկսած ղեկավարներու անկումը: Անոնցմէ իւրաքանչիւրը սկսած էր Յիսուսը փառաւորելու մեծ նախանձախնդրութեամբ: Ինչպէս եղաւ, որ տեղի տուին այդպիսի խաւար վարմունքներու: Չտեսան, որ ուրիշներ ինչպէս ինկած էին նոյն մեղքերուն մէջ:

Սուրբ Հոգին դարձեալ խօսեցաւ ինձի. «Տղաս, այդ ինկած ղեկավարները հորմոններու հարց չունէին, հպարտութեան հարց

Խոկալ- Խոնարհությունը իրականություն մըն է իմ կեանքիս մէջ: Կամ մարզեր կեանքիս մէջ, ուր կը մտածեմ՝ *Ես ասոր մէջէն կ'ելլեմ*: Ծրագիրներ կ'ընեմ առանց Տիրոջ խորհուրդը հարցնելու: Որոշումներ կու տամ առանց ներսիդիս Իր վկայութիւնը փնտռելու: Եթէ այո, ինչպէս կրնամ փոխել այդ մօտեցումը: Շնորհակալ ըլլալը ինչպէս զիս թէ՛ համարձակ եւ թէ՛ խոնարհ կը պահէ:

Աղօթք- Սիրելի Հայր, Յիսուսի անունով, ներէ ինձի կեանքիս հետեւեալ մարզերուն մէջ հպարտութիւն ունենալուս համար (թուէ՛ զանոնք): Կը զղջամ անձիս վրայ վստահելուս եւ ինքզինքս ուրիշներէն աւելի լաւ սեպելուս համար: Մաքրէ՛ զիս Յիսուսի արիւնով: Ես ինքզինքս կը խոնարհեցնեմ Քու առջեւ եւ ատիկա ընելով կ'ընտրեմ ուրիշները տեսնել աւելի կարեւոր քան իմ անձս: Ամէն:

Դաւանութիւն- Կ'ընտրեմ խոնարհութիւնը եւ Տիրոջ վախը, որ առաջնորդեն իմ կեանքս:

Ես յաճախ կ'աղօթեմ.
«Օ, Աստուած, զրկէ՛ մեզի
զղջումի եւ Աստուծոյ վախի
վերարթնութիւն մը, որ պիտի
ցնցէ ամբողջ ցամաքամասը,
որպէսզի փրկուինք եւ
կարենանք թեզի
պատիւ բերել»:

– ԱՅՏԸՆ ՈՒԻԼՍԸՆ ԹՈՂԸՐ

42 | ԳԱՆՁԸ ԳՏՆԵԼ

(Նօթ մը ընթերցողին. այս գլուխը միւսներէն աւելի երկար է, որպէսզի պէտք եղած ձեւով լրացնենք պատգամը: Օրական դրութեամբ կարդացողներուն համար, այս գլուխը բաժնած եմ երկու ընթերցումներու՝ առաւօտեան եւ երեկոյեան:)

Առաւօտեան Ընթերցանութիւն. Օգուտներուն Ամփոփումը

Սուրբ վախի օգուտները այնքան շատ են, որ կարելի չէ մէկ գիրքի մէջ բաւեցնել: Հատորներ կը գրուին եթէ ուզենք ամբողջական ձեւով խօսիլ անոնց մասին: Ես շուրջ երեսուն տարի է, որ կ'ուսումնասիրեմ այս նիւթը եւ տակալին ահով կը լեցուիմ Սուրբ Գիրքերուն ընդմէջէն Սուրբ Հոգիին յայտնածներուն պատճառով: Ուստի այս նիւթը փակենք արագ ակնարկ մը նետելով յաւելեալ քանի մը խոստումներու վրայ: Նկատի առ իրաքանչիւրը իբրեւ ծանօթութիւն մը՝ յաւելեալ հետազօտութեան եւ յայտնաբերումի համար: Ընդունէ՛ այդ խոստումները սիրտիդ մէջ: Մի՛ փորձեր անկարելիոր համարել զանոնք կամ տրամաբանական բացատրութիւններ տալով նուազեցնել անոնց արժէքէն: Աղօթքի ատեն զանոնք Աստուծոյ առջեւ դիր: Ասոնք այն գոհարներն են, զորս Աստուծմէ վախցողները պէտք է գտնեն եւ ձեռք ձգեն:

Ո՛րքան *երջանիկ* են անոնք, որոնք կը վախնան Աստուծմէ. բոլոր անոնք, որոնք կը հետեւին անոր ճամբաներուն: Դուք պիտի *վայելէք* ձեր աշխատանքին պտուղը: Ո՛րքան *երջանիկ* եւ բարգաւաճ պիտի ըլլաք դուք: (Սաղմոսներու 128.1–2, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

Նկատի առ, որ «երջանիկ» արմատ բառը երեք անգամ կ'երեւի վերի երկու համարներուն մէջ [անգլերէնի պարագային նաեւ «վայելէք» բառին արմատն է– *Թարգմանիչ*]։ Այն անձը, որ իրապէս կը վախնայ Աստուծմէ, երջանկութեամբ լեցուած կ'ըլլայ։ Երջանկութեան մէկ երեսը, որ յատուկ կերպով կը նշուի՝ մեր աշխատանքն է։ Բնաւ չեմ մոռնար կեանք փոխող դէպք մը, որ պատահեցաւ երբ իբրեւ երկրաչափ կ'աշխատէի *Այ. Պի. Էմ.* ընկերութեան մէջ 1980–ականներուն սկիզբները։ Կը տօնէինք գործակից երկրաչափի մը ընկերութեան մէջ աշխատելու երեսունութերորդ տարեդարձը։ Օրուան սկիզբը տասնեակ մը երկրաչափներով հաւաքուած էինք անոր գրասենեակը։

Խօսակցութեան ընթացքին ան բերնէն այսպիսի բան մը փախցուց. «Ես ատելով մտած եմ այս շէնքը ամէն օր երեսունութ տարի»։ Միւսները խնդացին եւ գլուխ շարժեցին հաւանութեան նշանով։

Ես հոն գործի սկսած էի միայն քանի մը ամիս առաջ։ Երիտասարդ էի եւ տզէտ, բայց այդ պահուն նաեւ շփոթի մէջ։ Հարցուցի. «Ինչո՞ւ ըրիր»։

Անոր դէմքի արտայայտութիւնը քմծիծաղէն զգուանքի փոխուեցաւ մինչ ինծի դարձաւ, գրասենեակին մէջ գտնուող բոլոր միւսներուն հետ միասին, եւ հեզնանքով ըսաւ. «Ճո՞ն, անունը գործ է։ Պէտք է աշխատիս՝ ուտելիք եւ հագուստ գնելու համար»։ Միւսներուն դէմքի արտայայտութենէն դատելով, կը տեսնէի, որ նոյն զգացումները կը բաժնեկցէին։ Հասկցայ, որ մէկ բառ ես պէտք չէր ըսէի, քանի որ իմաստուն մարդոցմով շրջապատուած չէի։

Միակ պատճառը, որ ես երկրաչափութիւն ուսանած էի լաւ վճարումով գործ մը չգտնելու վախն էր։ Անոր ունեցած արտայայտութիւնը մէջտեղ հանեց իմ անսուրբ վախս։ Այդ օրը որոշեցի, որ ես նոյն բառերը պիտի չարտասանէի երեսունութ տարի ետք։ Այդ վախը պիտի չուղղէր իմ կեանքս. ես Աստուծոյ պիտի վստահէի։ Կրնամ ուրախութեամբ ըսել, որ այդ ժամանակէն ի վեր ես վայելած եմ աշխատանքիս պտուղը, եւ այդ խոստումը բոլոր անոնց է, որոնք կը վախնան Աստուծմէ։

Սաղմոսողը կը շարունակէ.

Քու կինդ պտղաբեր որթատունկի մը պէս պիտի ըլլայ տունէդ ներս, ու քու որդիներդ ծիթենիի տունկերու պէս պիտի ըլլան սեղանիդ շուրջը։ *Ահա՛ այսպէս պիտի օրհնուի Տէրոջմէն վախցող մարդը։* (Սաղմոսներու 128.3–4, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Պիտի վայելես աշխատանքիդ պտուղը, ամուսինդ/կինդ պիտի

ծաղկի, եւ եռանդուն զաւակներդ պիտի ուզեն քեզի հետ ըլլալ: Շատերու կեանքին մէջ կը պակսի այս հատուածներուն մէջ նկարագրուածը: Իրականութեան մէջ ատիկա կը մատնանշէ մեր ընկերութեան մեծ մասին մէջ բացակայ եղող բան մը: Շատեր նոյնիսկ եթէ շատ դրամ կը շահին, կեանքը չեն վայելեր: Լաւ յարաբերութիւն չունին իրենց ամուսինին/կնոջ հետ, եւ իրենց զաւակները որեւէ կապ չեն ուզեր ունենալ իրենց ընտանիքին հետ: Անոնց ընտանիքները կը թօշնին փոխանակ ծաղկելու: Բայց կայ աստուածային յոյս:

Այդ խոստումին յոյսը որոշակի է եւ շատ հիանալի: Անոնց համար չէ, որոնք եկեղեցի կը յաճախեն կամ նոյնիսկ կը դաւանին Յիսուսի հետ յարաբերութիւն ունենալ: Անիկա բացայայտօրէն կը նշէ. «Ահա այսպէս պիտի օրհնուի Տէրոջմէն վախցող մարդը»:

Սիրելի ընթերցող, մօտեցած ես այս պատգամի աւարտին: Մինչեւ հոս հասնելով, դուն ընտրած ես Աստուծմէ վախնալ. հետեւաբար անիկա խոստում մըն է, զոր կրնաս աղօթքով խնդրել: Աղաղակէ՛ Աստուծոյ ինչպէս Իսահակ ըրաւ, որպէսզի սուրբ վախի հետ կապուած այս խոստումներուն կատարումը տեսնես: Մենք երկար ամիսներ անցուցինք երբ այդ խոստումները իրականութիւն չէին մեր տան մէջ. նշաններ կային, որ անոնք բնաւ կրնային չիրականանալ, բայց մենք Աստուծոյ խոստումներուն յոյսին կառչած մնացինք եւ պայքարեցանք անոնց համար աղօթքով: Հիմա կրնանք ըսել, որ տարիներէ ի վեր անոնք իրականացած են մեր ընտանիքին մէջ:

Վերադառնանք ուրիշ սաղմոսի մը, որ խորունկ ձեւով կը խօսի անոնց մասին, որոնք կը վախնան Աստուծմէ.

Փանք Աստուծոյ: Ո՛րքան *երջանիկ* են անոնք, որոնք կը վախնան Տիրոջմէ եւ կը հրճուին Անոր պատուէրներուն հնազանդելով: Անոնց զաւակները ամէն տեղ յաջող պիտի ըլլան. բարեպաշտ մարդոց ամբողջ սերունդ մը օրհնուած պիտի ըլլայ: (Սաղմոսներու 112.1-2, շեշտադրումը՝ մեր կողմէ)¹

Անգամ մը ես կը տեսնենք «երջանիկ» բառը կապուած սուրբ վախին հետ: Երջանկութիւնը հոգետր ոյժ մըն է. անիկա հիմնուած չէ պայմաններու մէջ, ինչպէս ուրախութեան պարագային: Երջանկութիւնը հիմնուած է Աստուծոյ յափտենական Խօսքին մէջ. անիկա մեր ոյժն է: Անիկա մեզ աւելի արդիւնաւէտ եւ պտղաբեր կը դարձնէ:

Դարձեալ այս համարին մէջ կը տեսնենք, որ սուրբ վախը մեծապէս կ'ազդէ մեր սերունդներուն վրայ: Ոչ միայն մենք յաջող

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

պիտի ըլլանք, այլեւ մեր զաւակներուն ալ նոյնը կը խոստացուի: Շարունակենք.

Անոնք հարուստ պիտի ըլլան եւ անոնց բարի գործերը յաւիտեան պիտի մնան [...] Այդպիսի մարդիկը պիտի ջաղթուին չարէն: Անոնք, որոնք արդար են երկար ատեն պիտի յիշուին: Անոնք վատ լուրէն չեն վախնար. անոնք ամբողջ վստահ են, որ Աստուած հոգ պիտի տանի իրենց: Անոնք ինքնավստահ են եւ անվախ, եւ կրնան դիմագրաւել իրենց թշնամիները եւ յաղթել անոնց: (Սաղմոսներու 112.3,6-8)¹

Վերջերս կը խօսէի հաւատացեալ կնոջ մը հետ եւ ան կ'ըսէր, թէ ինչպէս օր մը երբ այս աշխարհէն հեռանանք, մեր յաւիտենականութիւնը պիտի սկսի: Անմիջապէս առարկեցի. «Ո՛հ: Վերստին ծնունդ ստացողներուս համար յաւիտենականութիւնը արդէն սկսած է»: Մեր ներկայի սիրոյ աշխատանքը պիտի շարունակուի յաւիտեան: Սակայն անոնք, որոնք չունին սուրբ վախ, այդ խոստումը չունին. իրականութեան մէջ ճիշդ հակառակը. «Անոնց թէ սէրը, թէ ատելութիւնը, թէ ալ նախանձը արդէն կորսուած են» (Ժողովողի 9.6):

Աստուծմէ վախցողները չեն վախնար վատ լուրէ: Ընկերային հաղորդամիջոցներու եւ այլազան լրատուամիջոցներու ու բամբասանքի մամուլի առատութեան այս ժամանակներուն մէջ վատ լուրերը ամէն ժամանակէ աւելի շատ տարածում կը գտնեն: Շատեր կը վախնան գալիքէն: Բայց ապագայի վերաբերեալ վախ եւ սարսափ չկայ անոնց համար, որոնք կը վախնան Աստուծմէ. անոնք կ'ըլլան ինքնավստահ եւ անվախ: Դարձեալ մեզի կ'ըսուի.

Տէրոջ վախին մէջ ամուր ապահովութիւն [*«վստահութիւն» կամ «ինքնավստահութիւն»*, ըստ անգլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրժըն* (NKJV) տարբերակին] *կայ*, եւ անոր որդիները ապաւէն պիտի ունենան: (Առակներու 14.26, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Ներքին վստահութիւն մը կայ, որ կու գայ սուրբ վախին հետ: Ատիկա բան մըն է, զոր շատեր կը փափաքին, բայց շուտով կը յայտնաբերեն, որ կը թուի անմատչելի ըլլալ: Ունիմ բարեկամ մը՝ Ճոն Հէկի, որ մեծապէս յարգուած հովիւ մըն է Թեքսասի մէջ: Ան Աստուծմէ կը վախնայ այնքան որքան ոեւէ ղեկավար, որուն հանդիպած եմ: 1973-ին մարդ մը կը մտնէ իր եկեղեցին եւ ձեռով մը մինչեւ շուրջ երկու մետր կը մօտենայ իրեն եւ ատրճանակի

¹ Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

ամբողջ փամփշտակիր մը կը պարպէ անոր վրայ: Հովի ճոն ինքնավստահօրէն կանգնած մնաց իր տեղը մինչ վեց կապարներն ալ չհարուածեցին զինք: Այս գիրքը գրելուս ժամանակ յիսունհինգ տարի անցած է այդ դէպքէն եւ ան տակաւին ողջ է եւ Աւետարանը կը քարոզէ: Այդպիսի կացութեան մը մէջ եղող մարդոց մեծ մասը իրար պիտի անցնէր, պիտի պոռար, գետին իյնար կամ ապաստան փնտռէր: Ճոն չչարժեցաւ, այլ՝ ինքնավստահօրէն իր աչքերը սեւեռած պահեց կրակողին վրայ: Մեզի կ'ըսուի.

Տէրոջ հրեշտակը անկէ վախցողներուն շուրջը կը բանակի, ու զանոնք կ'ազատէ: (Սաղմոսներու 34.7)

Հրեշտակներ նշանակուած են պաշտպանելու համար անոնք, որոնք կը վախնան Աստուծմէ: Ոստիկաններուն կատարած քննութիւնները յետագային յայտնաբերեցին, թէ կապարներուն կէսը Հովի ճոնի ձախ կողմէն անցած էին 15 սանթիմետր հեռաւորութեամբ, իսկ միւսը կէսը՝ աջ կողմէն, դարձեալ 15 սանթիմետր հեռաւորութեամբ: Կրակողը միայն երկու մետր հեռուէն կրակած էր: Նոյնիսկ ոչ-փորձառու կրակողի մը երկու մետր հեռաւորութենէն կրակած վեց կապարներէն մէկը թիրախ հարուածած պիտի ըլլար: Վստահ ենք, որ Աստուծոյ մէկ հրեշտակը փոխած էր ուղղութիւնը այդ կապարներուն:

Յուդայի Յովսափատ Թագաւորը մարդ մըն էր, որուն «սիրտը Տէրոջ ճամբաներուն մէջ զօրացաւ» (Բ.Մնացորդներուն 17.6): Իր թագաւորութեան երրորդ տարին ան քահանաներ ղրկեց իր երկիրի բոլոր քաղաքները՝ ժողովուրդին Աստուծոյ Խօսքը ուսուցանելու համար: Կը կարդանք.

Յուդայի շրջակայ երկիրներուն բոլոր թագաւորութիւններուն վրայ Տէրոջ երկիւղը ինկաւ, ու Յովսափատի դէմ չպատերազմեցան: (Բ.Մնացորդներուն 17.10)

Մեծ պաշտպանութիւն կ'ունենանք երբ սուրբ վախի մէջ կը քալենք: Ուրիշ աստուածաշնչական օրինակ մըն է Յակոբը, որ իր ընտանիքին սորվեցուց Աստուծոյ վախը, եւ կուռքերը վերցնել տուաւ անոնց: Երբ ատիկա ըրին, Աստուածաշունչը կ'ըսէ. «Ապա մեկնեցան: Իրենց շրջակայ քաղաքներուն վրայ Աստուծոյ երկիւղը ինկաւ, ուստի Յակոբի որդիները չհետապնդեցին» (Ծնունդներու 35.5):

Շատ մեծ խոստումներ կան անոնց, որոնք Տիրոջմէ կը վախնան: Կարդա՛ հետեւեալը.

Միշտ շարունակե՛ք Տիրոջմէ՛ վախնալ: Պիտի *վարձապրուիս* ասոր համար. քու *յոյսդ* յուսախաբ պիտի չընէ՛ քեզ: (Առակներու 23.17–18, շեշտադրումը՝ մեր կողմէ)՝

Նկատի առ երկու շեշտուած բառերը: Առաջին՝ ժամանակի մը մէջ երբ *յոյսը* հազուագիւտ է, մեծ թիով հոգեւոր առաջնորդներ իրենց ներշնչումները դարձուած են իրենց գլխաւոր կեդրոնացումը՝ լուսանցքի մէջ ձգելով Աստուծոյ Խօսքը: Մէկ կամ երկու աստուածաշնչական համար կը կարդացուի՝ լուրջ ունկնդիրները հաճեցնելու համար, բայց գլխաւոր նիւթը իրենց ներշնչիչ պատմութիւններն են: Հակառակ անոր որ այդ պատմութիւնները օգտակարութիւն պիտի ունենան եւ պիտի մղեն մարդիկը կարճ ժամանակի մը համար՝ ոչ տարբեր քան ներշնչիչ Հովիւուտեան *Ֆիլմ* մը, սակայն անոնք պիտի չունենան սուրբ վախի խոստացած մնայուն *վարձապրութիւնները*:

Տիրոջ վախը մեզ կը վարձատրէ շատ մը ձեւերով. փափաքներու իրականացում (տե՛ս Սաղմոսներու 145.19), հաւատարիմ բարեկամներ (տե՛ս Սաղմոսներու 119.63,74,79), մեր մարմիններուն բժշկութիւն (տե՛ս Առակներու 3.7–8), ինքնութիւն (տե՛ս Սաղմոսներու 60.4) եւ կեանքի մէջ ուղղութիւն, զոր շատեր կը փափաքին:

Ո՛վ է այն մարդը՝ որ Տէրոջմէն կը վախնայ. ահա՛ անոր պիտի սորվեցնէ՛ իր ընտրած ճամբան: Անոր անձը բարօրութեան մէջ պիտի բնակի, եւ անոր զարմը երկրին պիտի տիրանայ: (Սաղմոսներու 25.12–13)

Թէ՛ մարդ ինչո՞ւ չ'արժեւորեր սուրբ վախը, անըմբռնելի է: Իմ մեծ փափաքս է, որ դուն տեսնես անոր արժէքը եւ դուն քեզի չպահես զանհկա, այլ՝ ըլլաս Յովսափատ Թագաւորին պէս, որ իր ազդեցութեան տակ եղող ամբողջ ժողովուրդին սորվեցուց Աստուծմէ՛ վախնալ:

Երեկոյեան Ընթերցում. Սուրբ Վախը Գտնել

Տէրը խօսեցաւ ինձի աւելի քան երեսուն տարի առաջ, ըսելով, որ այս ժամանակին մէջ Աստուծոյ առնելիք վերջին քայլը պիտի ըլլայ շեշտ դնել սուրբ վախին վրայ: Այդ արթնութեան մեծ օգուտը պիտի ըլլայ՝ կատարումը Աստուածաշունչին մէջ գտնուող միակ նկարագրութեան այն Հարսին, որուն համար Յիսուս պիտի վերադառնայ: Անհկա «ժամանակին յարմարող» եկեղեցի մը չէ, հակառակ անոր որ ճիշդ ձեւով

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլէյշըն* (NLT) տարբերակէն

ժամանակին յարմարիլը կարելոր է չփրկուածներուն հասնելու համար: Անիկա «ղեկավարութեան վրայ շեշտ դնող» եկեղեցի մը չէ, հակառակ անոր որ ղեկավարութիւնը շատ կարելոր է զօրաւոր եկեղեցի մը կերտելու մէջ: Անիկա «համայնքային եկեղեցի» մը չէ, հակառակ անոր որ համայնքը կենսական է, որովհետեւ լաւ չէ, որ մարդը առանձին ըլլայ: Ահա միակ նկարագրութիւնը այն Հարսին, որուն պիտի վերադառնայ Յիսուս.

Այնպէս մը՝ որ եկեղեցին իրեն ներկայանայ ամբողջական փառքով, առանց որեւէ արատի կամ խորշումի կամ ուրիշ թերութեան, այլ՝ ըլլայ *սուրբ* եւ անարատ: (Եփեսացիներուն 5.27, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Անիկա սուրբ եկեղեցի մըն է: Սիրելի ընթերցող, քանի որ սրբութիւնը կը կատարելագործուի Աստուծոյ վախով, մեր Տիրոջ բռուն փափաքն է, որ դուն ազդեցութիւն բերող մը ըլլաս այս մեծ արթնութեան ընթացքին: Հետեաբար կարելոր է, որ մեր քննարկումը աւարտենք ըսելով, թէ ինչպէս կրնանք աւելցնել մեր սուրբ վախը:

Վերադառնանք Մալիզիայի հոյակապ եւ գրաւիչ ծառայութեան: Աստուծոյ փառաւոր եւ հզօր ներկայութեան դրսեւորման ընթացքին ես կը դողայի ահով եւ ես ինծի կը մտածէի. *Ճոն Պըվիր, մէկ սխալ բառ չըսես կամ մէկ սխալ քայլ չտանես*:

Մինչ ետեւ-առջեւ կը քալէի բեմին վրայ՝ այդ խորհուրդը ունենալով միտքիս մէջ, բերանէս ելաւ բան մը, զոր ականջներս առաջին անգամ ըլլալով լսեցին: Ես ատոր մասին չէի մտածած եւ զանիկա բնաւ նկատի չէի առած: Համարձակօրէն ըսի. «Ասիկա Տիրոջ վախի Հոգին է»:

Յանկարծ լոյսեր փայլատակեցին միտքիս մէջ: Իմ մէջս պռռացի. *Ճիշդ արիկա է, ճիշդ արիկա է. ասիկա Սուրբ Հոգիի մէկ դրսեւորումն է*: Ատկէ առաջ ատոր չէի անդրադարձած բնաւ, բայց Սուրբ Գիրքին մէջ Յիսուսի մասին կը կարդանք, թէ.

Անոր վրայ պիտի հանգչի Տէրոջ Հոգին, իմաստութեան [Հոգին] ու խելացութեան Հոգին, խորհուրդի [Հոգին] ու զօրութեան Հոգին, Աստուծոյ ճանաչումին [Հոգին] եւ վախին Հոգին: Ան Տէրոջ վախով պիտի ներշնչուի [«ուրախանայ», ըստ անգլերէն *Նիու Քինկ Ճէյմզ Վըրթըն* (NKJV) տարբերակին]: (Եսայիի 11.2-3)

Կան եօթը ձեւեր, որոնցմով Սուրբ Հոգին կը դրսեւորուի, եւ Յիսուս անոնց բոլորին լեցունութեամբը գործեց, բայց Անոր ուրախութիւնը Տիրոջ վախին մէջն էր: Ուստի հետեւեալ հարցումը կը ծագի. Ինչպէս կը ստանան *Տիրոջ վախին Հոգին*: Յիսուս մեզի կ'ըսէ. «Արդ, եթէ

դուք որ չար էք՝ գիտեք ձեր զաւակներուն լաւ պարգեւներ տալ, ձեր երկնաւոր Հայրը որքան աւելի լաւ պարգեւ մը՝ Սուրբ Հոգին պիտի տայ անոնց, որոնք իրեն կը դիմեն» (Ղուկասի 11.13):

Մենք պարզապէս պէտք ունինք խնդրելու մեր երկնաւոր Հօրմէն: Սակայն սովորական խնդրել մը չէ ատիկա, այլ՝ աղաղակ մը մեր սիրտէն եւ այնպիսի աղաղակ մը, որ «Ոչ» պատասխան չ'ուզեր առնել: Այդ խօսքերէն անմիջապէս առաջ, Յիսուս կ'ըսէ. «Շարունակեցէք խնդրել եւ պիտի ստանաք այն ինչ որ կը խնդրէք: Շարունակեցէք փնտռել եւ պիտի գտնէք» (Ղուկասի 11.9)¹: Յարատեւութիւն մը (հաստատակամութիւն մը) կը շեշտուի հոն:

Վերադառնանք 1994, այն խորհրդաժողովին՝ ուր հովիւը սրբագրեց զիս Տիրոջ վախին մասին խօսելուս համար: Յաջորդ առտու այդ շինարարութեան վայրին մէջ ես սկսայ աղօթել՝ «Ինչ սխալ բան ըրած եմ»ի ուղղութեամբ, բայց վերջաւորութեան բուն փափաքով սկսայ բարձրաձայն աղաղակել սուրբ վախի համար: Ատիկա վճռական դիմում մըն էր. դիմում մը, որուն համար «Ոչ» պատասխան պիտի չառնէի: Այդ ատեն ես այդքան գիտակից չէի այդ պահի կարեւորութեան, բայց հիմա կը տեսնեմ զանիկա իբրեւ կեանքիս ամէնէն կարեւոր եւ փոխակերպող դէպքերէն մէկը: Ներկայիս ալ գրեթէ ամէն օր մեծ կրակով իմ երկնաւոր Հօրմէս կը խնդրեմ թարմ լեցունութիւն մը Սուրբ Հոգիի եւ Տիրոջ վախի: Կարդանք ուրիշ աստուածաշնչական հատուած մը, որ շատ կապ ունի մեր նիւթին հետ:

Որդեակս, եթէ իմ խօսքերս ընդունիս եւ պատուիրաններս քովդ պահես, որպէսզի ականջդ իմաստութեան ուշադիր ըլլայ ու սիրող հանճարին բանաս, եթէ դուն խելացութիւնը քեզի կանչես եւ ձայնդ հանճարին ուղղես, եթէ զայն արծաթի պէս փնտռես ու պահուած գանձերու պէս խնդրես, այն ատեն Տէրոջ վախը պիտի հասկնաս եւ Աստուծոյ գիտութիւնը պիտի գտնես: (Առակներու 2.1-5)

Պէտք է խորունկ աղաղակ մը ունենաս սուրբ վախի ժրաջան փնտռութի կողքին՝ ոչ տարբեր քան երբ կը փնտռես կորսնցուցած ադամանդէ նշանտուքի մատանիդ կամ թանկարժէք ոսկեայ զարդեղէն մը: Վստահ եմ, որ դիտած ես գանձ փնտռողներու մասին հեռատեսիլի յայտագիրներ կամ *ֆիլմեր*, որոնց մէջ փնտռողները առանց յոգնելու կը յարատեւեն իրենց փնտռութիւն մէջ: Այդպիսի

1 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Լիվինկ Թրանսլեյշըն* (NLT) տարբերակէն

Ֆիլմ մըն է Նաշընըլ Թրէժըրը: Արտադրուած 2004–ին, ֆիլմը կը ներկայացնէ մարդ մը՝ Պենճամին Կէյթս, որ իր կեանքը անցուց փնտռելով գանձի պահեստ մը, որ պահուած էր 1700–ականներուն: Ան իր ամբողջ ժամանակը եւ ոյժը տրամադրեց՝ նոյնիսկ իր համբարը եւ իր ազատութիւնը վտանգելով, զանիկա գտնելու համար: Հակառակ անոր որ անոր փնտռածը շուտով պիտի կորսուի, անոր առանց յոգնելու յարատեւումն է, որ պէտք է ներշնչէ մեզ:

Եթէ Աստուծոյ Խօսքին, Անոր իմաստութեան, աստուածային խորհուրդին եւ սուրբ վախին մօտենանք նոյն վճռակամութեամբ, մեծապէս պիտի օրհնուինք: Մենք կ'աղաղակենք բանի մը համար, որ երբեք պիտի չկորսուի. անիկա Աստուծոյ գանձն է: Ան զանիկա չէ պահած *մեզմէ*, այլ՝ պահած է *մեզի համար*: Ան կը քաջալերէ մեզ, որ գտնենք զանիկա եւ կը ցնծայ երբ կը գտնենք: Ան նաեւ կը ցնծայ երբ կը վայելենք անոր վարձատրութիւնները:

Կը յուսամ, որ Սուրբ Հոգիին օգնութեամբ, այն ինչ որ ծնաւ իմ մէջս այդ շինարարութեան վայրին մէջ նաեւ կը ծնի քու մէջդ. անկշտանալի անօթութիւն մը Տիրոջ վախի: Գանձդ ըրէ զանիկա, կառչէ անոր, կարծես քու մեծագոյն ստացուածքդ ըլլար: Եթէ ատիկա ընես, պիտի սիրես այն ինչ որ Աստուած կը սիրէ եւ ատես այն ինչ որ Ան կ'ատէ: Այն ինչ որ կարելի է Անոր համար, պիտի ըլլայ կարելի քեզի համար: Խորապէս պիտի սիրես մարդիկը եւ խորապէս ատես մեղքը, որ կը քանդէ զիրենք: Պիտի փոխես քու ազդեցութեան աշխարհիդ եւ յաւիտենապէս ուրախ պիտի ըլլաս, որ ատիկա ըրիր:

Կը խնդրեմ, որ յիշես, թէ *կարելորդ այս մրցումը ինչպէս կը սկսինքը չէ, այլ՝ թէ ինչպէս կը վերջացնենք*: Հետեւեալները ասոր հետ կապուած մեծ յոյս ներշնչող երկու հատուածներ են.

Արդ, անոր՝ որ կրնայ *քեզ անկումներէ փրկել*, պահել անարատ եւ անբիծ, եւ անխառն ուրախութեամբ լեցուն՝ իր փառաւոր ներկայութեան կանգնեցնել: (Յուդայի 24, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Եւ Աստուած *մինչեւ վերջ հաստատուն* պիտի պահէ ձեզ, որպէսզի անմեղադրելի ըլլաք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի դատաստանին օրը: (Ա. Կորնթացիներուն 1.8, շեշտադրումը՝ մեր կողմէ)

Լաւ կերպով վերջացնելը ամէնէն կարելի է երեսն է լաւ կերպով ապրելուն, եւ Աստուած մեզի տուած է սուրբ վախը՝ ատիկա իրագործելու համար: Պատիւ էր ինձի համար այս գանձը քեզի

ծանօթացնելը: Կը խնդրեմ, որ դուն քեզի չպահես զանիկա. շատ կայ բոլորին համար: Բաժնեկցե՛լ այս պատգամը քու ազդեցութեան շրջանակիդ հետ: Եթէ առիկա ընես, աւելի եւ աւելի քիչ կորուստներ պիտի տեսնենք գալիք օրերուն ինչպէս նաեւ՝ աւելի առողջ եկեղեցի մը:

Ընտրե՛լ հիմա մաս կազմել սուրբ վախի յառաջ բերած այս փոխակերպական շարժումին, որ պիտի պատրաստէ Հարսը մեր Փեսայի վերադարձին: Մի՛ ըլլար դուրսը կեցող մը, որ ներս կը նայի: Սուրբ վախը ընդունելով, խորունկ մտերմութիւն պիտի գտնես մեր Փեսային հետ, փրկութիւնդ աւելի հասուն պիտի ըլլայ, պտղաբեր պիտի ըլլաս եւ պիտի կերտես յաւիտենական աւանդ մը:

Անձնականացնել

Հատուած- Արդ, անոր՝ որ կրնայ քեզ անկումներէ փրկել, պահել անարատ եւ անբիծ, եւ անխառն ուրախութեամբ լեցուն՝ իր փառաւոր ներկայութեան կանգնեցնել, միակ Աստուծոյն՝ որ մեր փրկիչն է՝ փանք տուէք, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: Անոր են փառքը, մեծութիւնը, զօրութիւնն ու իշխանութիւնը, թէ՛ բոլոր ժամանակներէն առաջ, թէ՛ այժմ եւ թէ՛ գալիք բոլոր ժամանակներուն: Ամէն: (Յուդայի 24-25)

Միտք- Լաւ կերպով վերջացնելը ամէնէն կարեւոր երեսն է լաւ կերպով ապրելուն: Սուրբ վախի իր պարգեւով, Աստուած քեզ զօրաւոր եւ անմեղադրելի պիտի պահէ մինչեւ վերջ:

Խոկալ- Ինչ պէտք ունիմ ընելու՝ կեանքիս մէջ սուրբ վախը աւելցնելու համար: Արդեօք ես կը փափաքիմ եւ հետեւաբար առանց յոգնելու կը հետապնդեմ սուրբ վախը իբրեւ զանձ մը: Արդեօք պիտի կառչիմ անոր իբրեւ իմ ամէնէն աւելի արժեւորած ստացուածքս: Ինչ պէտք է ընեմ կանոնաւոր դրութեամբ զանիկա պահելու համար:

Աղօթք- Սիրելի Հայր, կ'աղաղակեմ Քեզի, որպէսզի լեցնես զիս Տիրոջ Հոգիով, իմաստութեան Հոգիով, խելացութեան Հոգիով, խորհուրդի Հոգիով, զօրութեան Հոգիով, գիտութեան Հոգիով եւ Տիրոջ վախի Հոգիով: Զօրաւոր պահէ՛ զիս մինչեւ վերջ, որպէսզի անմեղադրելի գտնուիմ Տիրոջս՝ Յիսուս Քրիստոսի դատաստանի օրը: Յիսուսի անունով կ'աղօթեմ: Ամէն:

Դաւանութիւն- Տիրոջ վախը իմ զանձս է:

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵԾՈՒԹԵՆԷՆ ՆՇՈՅԼ ՄԸ

Իսրայելի պատմության մէջ ժամանակ մը Աստուած ուզեց, որ Իր ժողովուրդը աւելի խորը երթայ սուրբ վախի մէջ, ուստի անոնց հետեւեալ հարցումը հարցուց.

«Ուրեմն զիս որո՞ւ կը նմանցնէք, որ ես անոր հաւասար ըլլամ»:
(Եսայիի 40.25)

Եթէ երբեք պատմության մէջ եղած է ժամանակ մը երբ այդ հարցումին մասին պէտք է խորապէս խոկալ, եւ ոչ միայն մակերեսային ձեով կարդալ զանիկա, ատիկա հիմա է: Այսօր եւ այս ժամուն մարդկության «մեծութիւնը» շարունակ կը հրապարակուի ընկերային հաղորդամիջոցներու, մամուլի, լրատուամիջոցներու եւ այլ բեմերու վրայ: Տաղանդաւոր մարզիկներու, Հոլիուուտի գեղեցիկ աստղերուն, երաժշտության մարզի շնորհալի արուեստագէտներու, առետուրի մարզի վարպետներու, հեղինակաւոր դեկավարներու եւ այլ կարեւոր անհատներու գովաբանութիւնը շարունակ կը հրապարակուի: Անոնց համբաւը կը գովուի, եւ հակառակ անոր որ երեսօթապէս անվասա կը թուի ըլլալ ատիկա, մարդուն փառքը գովերգելու այդ շարունակական հոսանքը արգելք կը հանդիսանայ, որ նկատի առնենք Աստուծոյ փառքի իրականութիւնը (փաստերը եւ թիւերը կը գտնուին հեղինակին ստորագրած «Վառած Սիրտ» վերնագիրով գիրքին մէջ, էջ 31–44):

Լիսան եւ ես այդ հարցին հետ ուղղակիօրէն առնչուեցանք շուրջ

քսանհինգ տարի առաջ՝ մեր չորս զաւակները մեծցնելու ընթացքին: Այդ օրերուն լուրերու հոսանքը այդքան գերիշխող չէր, քանի որ հեռաձայնի կիրարկումներ եւ ընկերային հաղորդամիջոցներ չկային: Այն ատեն նոյնիսկ նկատած էինք, որ մեր տղաքը քիչ մը շատ հետաքրքրուած էին արհեստավարժ *պասքէթպոլ* խաղցողով մը: Այն ատեն ան ամէնէն անուանի մարզիկն էր Ամերիկայի մէջ եւ շատեր կուրքի պէս կը պաշտէին զինք, եւ հիմա նոյնիսկ տասնամեակներ ետք, անոր համբաւը տակաւին կը մնայ:

Մեր ընտանիքը ծառայութեան մէջ էր Արեւելեան Ափին մէջ եւ մենք կը մնայինք պանդոկի մը մէջ ովկիանոսին եզերքը: Քանի մը ժամ ծովեզերքը անցընելէ ետք, նոր սենեակ վերադարձած էինք: Տղաքը Ատլանտեան Ովկիանոսի հզօր ալիքներէն բազմիցս ասդին անդին նետուած եւ գլորուած էին, եւ թէ՛ ուրախ էին եւ թէ՛ ահի մէջ անոր հզօրութեան պատճառով:

Նստայ՝ խօսակցութիւն մը ունենալու համար մեր երեք աագ տղոց հետ: Դրան ճեղքէն երեւցող ովկիանոսը մատնանշելով, հարցուցի. «Տղայք, ովկիանոսը հսկայ է, չէ՞»:

Միաձայն պատասխանեցին. «Այո, Հայրիկ»:

Շարունակեցի. «Դուք անոր միայն քանի մը մղոնը կը տեսնէք, բայց ովկիանոսը իրականութեան մէջ հազարաւոր մղոններ կ'երկարի»:

Փաթթուած իրենց անձեռոցներուն տաքութեան մէջ, տղաքը պատասխանեցին. «Ուանու»:

«Եւ ասիկա նոյնիսկ ամէնէն մեծ ովկիանոսը չէ. ուրիշ մը կայ, որ ասելի մեծ է եւ կը կոչուի Խաղաղական Ովկիանոս: Ասոնց կողքին երկու ուրիշներ ալ կան»:

Տղաքը բոլորը իրենց գլուխները շարժեցին հաւանութեամբ եւ լուռ զարմանքով՝ մինչ կը շարունակէինք լսել զարնուող ալիքներուն զօրութիւնը մեր բաց դրան ճեղքէն:

Մեր ճամբորդութեան ընթացքին *էն.Պի.էյ.ի* ասարտական խաղերը տեղի կ'ունենային: Այդ *պասքէթպոլի* աստղին իրագործումներուն մասին շարունակ կը խօսէին լրատուամիջոցները, *Ի.էս.Փի.էն.ը*, մեր տղաքը եւ իրենց ընկերները: Իմ տղաքս տպաւորուած էին գնդակը մէկ ափին մէջ բռնելու այդ մարզիկին ձիրքով: Գիտնալով, որ տղաքս որոշ չափով ըմբռնած էին ջուրի այն մեծ քանակութեան գաղափարը, զոր նոր նկարագրած էի, հարցուցի. «Տղայք, գիտէք, որ Աստուած կշռած է այն ամբողջ ջուրը, զոր կը տեսնէք եւ տակաւին այն ամբողջը, զոր քիչ առաջ նկարագրեցի, Իր ափին մէջ» (տէն Եսայիի 40.12): Անոնց դժմքերուն վրայ կար հարազատ սքանչացում: Ապա կարելի եղածին չափ պարզ բառերով խօսեցայ իրենց ովկիանոսին ոչ միայն չափին այլեւ զօրութեան մասին: Տղոցս ըսի, որ եթէ մէկ մղոն լայնքով երկնաքար մը

զարնուէր Ատլանտեան Ովկիանոսին՝ Նիու Եորքէն քանի մը հարիւր մղոն հեռու, աստիկա պիտի յառաջացնէր այնքան մեծ ալիք մը, որ պիտի քանդէր Ամերիկայի Արեւելեան Ծովեզերքի, Կարիբեան Կղզիներուն եւ Հարաւային Ամերիկայի Ատլանտեան Ծովեզերքի բոլոր քաղաքները: Ոչ միայն աստիկա, այլեւ անոր ազդեցութիւնը պիտի անցնէր ովկիանոսին միւս կողմը եւս եւ կործանէր եւրոպական եւ ասիական եզերքներու շարք մը քաղաքներ եւս: Սակայն տակաւին այդ ալիքը պիտի չըլլար այնքան բարձր որքան Ատլանտեան Ովկիանոսի խորունկութիւնը: Ուստի հարցուցի. «Ի՞նչ պիտի պատահէր եթէ ովկիանոսի ջուրերուն ամբողջ ծանրութիւնը արձակուէր մարդկութեան վրայ: Մեծ զօրութիւն կայ աշխարհի ովկիանոսներուն մէջ, եւ սակայն Աստուած այդ ջուրերուն ամէն մէկ կաթիլը չափեց Իր ափին մէջ»:

Ապա խօսեցայ գիշերուան երկինքին մասին: Հարցուցի տղոց՝ որոնք հիմա արդէն զմայլանքի մէջ էին. «Գիտե՞ք Աստուածաշունչը ուրիշ ի՞նչ կ'ըսէ Աստուծոյ ճիշտ մեծ ըլլալուն մասին»:

«Ի՞նչ, Հայրիկ»:

«Կ'ըսէ, թէ Աստուած կրնայ տիեզերքը չափել Իր թիզով» (տէն Եսայիի 40.12): Իմ ձեռքս իրենց առջեւ բանալով, ցոյց տուի, թէ թիզը բութամատին ծայրէն մինչեւ ճկոյթ մատին ծայրն է: Այն ինչ որ հարցուցի տղաներուս այդ օրը այն հարցումն է, որ հիմա քեզի պիտի հարցնեն. «Բնաւ մտածամ՞ծ ես տիեզերքի չափին մասին»: Անիկա մեր մտային կարողութենէն անդին է: Թերեւս եթէ փորձենք տիեզերքի մեծութեան վերաբերեալ նշոյլ մը ունենալ, մօտեցած կ'ըլլանք ակնարկ մը նետելու Անոր փառքին:

Այն ինչ որ ասկէ ետք պիտի ըսեմ կրնայ քիչ մը արհեստագիտական ըլլալ, բայց կը քաջալերեմ, որ շարունակէք կարդալ՝ մինչ կը փորձեմ պարզացնել ըսելիքներս ճիշդ ինչպէս տղոցս համար ըրի: Երբ կը մտածենք այդ իրականութիւններուն մասին, մեր մէջ ահ մը կը ծագի Աստուծոյ մեծութեան նկատմամբ, որովհետեւ մեզի կ'ըսուի. «Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ» (Սաղմոսներու 19.1): Գիտնականներու համաձայն, տիեզերքի մէջ կան միլիառաւոր ծիր կաթիններ, որոնց իւրաքանչիւրը կը պարունակէ շուրջ 100 միլիոն աստղ: Այդ ծիր կաթիններուն չափը պզտիկ է բաղդատաբար այն անջրպետին կամ տարածութեան, որ գոյութիւն ունի անոնց միջեւ:

Մեր արեւը կը գտնուի այդ ծիր կաթիններէն մէկուն մէջ: Մեր ծիր կաթինը այնքան ընդարձակ է, որ երբ երկինք նայիս գիշերով, տիեզերքի պատկերը չես տեսներ, այլ՝ միայն այն փոքրիկ ծիր կաթինը (փոքրիկ՝ բաղդատաբար տիեզերքին), որուն մէջ մենք կ'ապրինք եւ որ կը կոչուի՝ Յարդ Գոդ: Աւելին, նոյնիսկ Յարդ Գոդի լման պատկերը չես տեսներ, այլ՝ միայն անոր մէկ բաժինը, տրուած

ըլլալով, որ մեր ծիր կաթինի աստղերուն մեծ մասը շատ հեռու են եւ մեր աչքերով չենք կրնար տեսնել զանոնք:

Ուստի հիմա խօսինք այն աստղերուն մասին, զորս *կրնանք տեսնել* մեր աչքերով ամէն գիշեր: Արեւէն բացի երկրին ամէնէն մօտիկ եղող աստղը 4.3 լոյսի տարի հեռու է երկրէն: Մարդոց մեծամասնութեան համար ատիկա հասկնալի չէ, ատոր համար բացատրեմ: Լոյսը կը ճամբորդէ երկվայրկեանը 186,282 մղոն արագութեամբ. ոչ թէ ժամական, այլ՝ *երկվայրկեանը*: Ատիկա կ'ընէ ժամական շուրջ 670,000,000 մղոն: Մեր օդանւաները կը թռչին ժամական շուրջ 500 մղոն արագութեամբ: Ուստի ինչպէս կը տեսնես, լոյսը աներեակայելիօրէն արագ է: Գաղափար մը տալու համար, թէ որքան արագ է անիկա, ենթադրենք, որ մեծ *ճէթ* (արագընթաց) օդանւով կրցար մինչեւ արեւ ճամբորդել: Երբ ես Ասիա կը ճամբորդեմ, որ իմ ապրած երկիրէս երկրագունդին ճիշդ միւս կողմն է, ատիկա շուրջ քսաներեք ժամ կը տեւէ: Եթէ օդանւով առանց դադարի դէպի արեւ պիտի ճամբորդէի, ատիկա պիտի տեւէր շուրջ քսանմէկ տարի: Յիշէ, թէ ո՞ր էիր քսանմէկ տարի առաջ եւ պատկերացուր, որ այդ ամբողջ ժամանակը՝ այն ատենուընէ մինչեւ հիմա, անցուցած պիտի ըլլայիր օդանւաւի մը մէջ (յուսալով, որ պատուհանին քովս էր նստարանդ): Անոնց համար, որոնք քշել կը նախընտրեն... այդ ճամբորդութիւնը կարելի պիտի չըլլար, քանի որ շուրջ երկու հարիւր տարի պիտի տեւէր՝ չհաշուելով քարիւղ լեցնելու կամ հանգիստ ընելու համար առնուած դադարները... Հիմա հետեւեալ հարցումը հարցնենք. որքան ժամանակ կ'առնէ, որ լոյսը հասնի երկիր: Պատասխան՝ միայն 8 վայրկեան եւ 20 երկվայրկեան:

Ձգենք արեւը եւ խօսինք ամէնէն մօտիկ աստղին մասին: Արդէն ըսինք, որ անիկա երկիրէն 4.3 լոյսի տարի հեռու է: Եթէ ուզենք շինել պզտիկ օրինակը երկիրին, արեւուն եւ ամէնէն մօտիկ աստղին, անիկա հետեւեալ ձեով պիտի ըլլայ. համեմատաբար՝ երկիրը պիտի ըլլայ սեւ պղպեղի հատիկի մը չափ, իսկ արեւը՝ քսան սանթիմետր տրամագիծ ունեցող գնդակի մը չափ: Մեր այդ օրինակին մէջ, երկիրին եւ արեւուն միջեւ տարածութիւնը պիտի ըլլայ քսանչորս մետր՝ ամերիկեան *ֆուլպորի* դաշտի մը քառորդ երկայնքը: Սակայն յիշէ, որ եթէ այդ օրինակին մէջ օդանւաւ մըն ալ նկատի պիտի առնէինք, ատիկ քան քսանմէկ տարի պիտի տեւէր անոր այդ քսանչորս մետրը կտրելը:

Ուստի եթէ ատիկա է երկիրի եւ արեւի պզտիկ օրինակը, կրնանս ենթադրել, թէ ամենամօտիկ աստղը որքան հեռու պիտի ըլլայ մեր հատիկի չափ երկիրէն: Ի՞նչ հարիւր մետր, հազար ուրիշ հարիւր մետր կամ նոյնիսկ մղոն մը: Այդ թիւերը մօտիկ անգամ չեն: Մեզի ամէնէն մօտիկ աստղը՝ մեր այդ փոքր օրինակին համաձայն, պիտի ըլլայ չորս հազար մղոն (6,500 քիլոմետր) հեռու սեւ պղպեղի հատիկէն: Այսինքն՝ եթէ մեր երկիրը ներկայացնող սեւ պղպեղի հատիկը դնես

Նիու Եորքի մէջ, արեւը՝ որուն թռչելով հասնիլը քսանմէկ տարի պիտի տեսէ մեր օրինակին մէջ, կ'ըլլայ անկէ քսանչորս մեթր հեռու (Նիու Եորքի մէջ), իսկ ամէնէն մօտիկ աստղը մեր օրինակին մէջ, կ'ըլլայ Լոս Անճելըսէն տակաւին հազար մղոն (1.5 քիլոմեթր) հեռու Խաղաղական Ովկիանոսին մէջ տեղ մը: Այդ ամէնէն մօտիկ աստղին հասնելու համար պէտք է օդանաւով թռչիլ շուրջ 51 *միլիառ* տարի առանց դադարի... Այսինքն՝ 51,000,000,000 տարիներ: Եւ սակայն այդ աստղէն լոյսը երկիր կը հասնի 4.3 տարիէն...

Յաւելեալ բացատրութիւն տամ: Աստղերուն մեծ մասը, զոր պարզ աչքով կը տեսնես գիշերը հարիւրէն մինչեւ հազար լոյսի տարի հեռու են: Սակայն կան քանի մը աստղեր, զորս կրնաս պարզ աչքով տեսնել, որոնք մինչեւ չորս հազար լոյսի տարի հեռու են (յիշէ, որ աստուծոյ նոյնիսկ ամէնէն հեռուն գտնուող աստղերը չեն մեր փոքրիկ ծիր կաթինին մէջ): Պիտի չփորձեմ նոյնիսկ հաշուել, թէ որքան ժամանակ կ'առնէ օդանաւի մը համար, որ հասնի այդ աստղերէն միայն մէկուն: Բայց մտածէ՛ այդ մասին. երբ դուրս կ'ելլես գիշերը եւ կը նայիս այդ աստղերէն մէկուն, որ 4,000 լոյսի տարի հեռու է, դուն իրականութեան մէջ կը նայիս այն լոյսին, որ ելաւ այդ աստղէն այն ժամանակ, որ Աբրահամ Սառայի հետ ամուսնացաւ, եւ որ այդ ժամանակէն ի վեր ժամական 670,000,000 մղոն կը ճամբորդէ առանց դանդաղելու եւ պարզապէս հիմա կամ այդ պահուն է (երբ դուն կը նայիս անոր), որ երկիր կը հասնի...

Յիշէ՛, որ ասոնք պարզապէս աստղեր են Յարդ Գող կոչուած մեր փոքրիկ ծիր կաթինին մէջ: Տակաւին չայցելեցինք մնացեալ միլիառաւոր ծիր կաթինները: Եւ մի՛ մոռնար, որ ծիր կաթիններուն միջեւ ընդհանրապէս ընդարձակ պարսպ տարածութիւններ կան: Օրինակի համար, կայ մեզի շատ մօտիկ ծիր կաթին մը՝ Անտրոմետա անունով: Անիկա մեզմէ շուրջ 2.3 միլիոն լոյսի տարի հեռու է: Մտածէ՛ պահ մը: Լոյսը ժամական 670,000,000 մղոն պիտի ճամբորդէ երկու միլիոն տարի, որպէսզի այդ ծիր կաթինէն մինչեւ մեր երկիրը հասնի: Եւ ատիկա մեզի ամէնէն մօտիկ դրացի ծիր կաթինն է: Կան միլիառաւոր ուրիշներ: Անցամիջ ըմբռնելու կարողութեան մեր սահմանը կամ տակաւին...

Անգամ մը ես յիշեցնեմ, որ Եսայի կը յայտարարէ, թէ Աստուած այս ընդարձակ տիեզերքը չափեց Իր թիզով՝ բութամատին ծայրէն մինչեւ ճկոյթին ծայրը: Իրականութեան մէջ Սողոմոն Աստուծոյ Հոգիով կը յայտարարէ. «Բայց միթէ Աստուած իրապէս երկրի վրայ պիտի բնակի: Ահա երկինքը, ու երկինքներուն երկինքը քեզ չեն կրնար պարունակել» (Գ.Թագաւորներուն 8.27): Ունեցմար նշոյլ մը, թէ՛ որո՞ւ մասին կը խօսինք:

Այդ բոլորը տողոցս հետ բաժնեկցելէ ետք, *էն.Պի.էյ.ի* աստղին կարգավիճակը իր պէտք եղած չափին իջաւ անոնց աչքին: Այլեւս ոչ-առողջ ահով մը չէին նայէր անոր ծիրքին՝ մեր Ստեղծիչին մեծութեան

մասին խորհելէ ետք: Բայց քեզի համար՝ ընթերցողիդ, մէկ քայլ անդին կ'ուզեմ տանիլ նիւթը: Մեր Երկնաւոր Հայրը ոչ միայն հիանալի գործեր ըրած է՝ չափով եւ համեմատութեամբ մեծ, այլեւ Անոր յառաջ բերած մանրամասնութիւնները եւ կը հոչակեն Անոր փառքը: Գիտութիւնը տարիներ եւ մեծ քանակութեամբ դրամ տրամադրած է սերտելու համար այս բնական աշխարհի գործունէութիւնները: Անոնք տակաւին ունին փոքր մէկ մասը այն իմաստութեան, որով Աստուած ըրաւ այս ստեղծագործութիւնը: Տակաւին կան մեծ թիով անպատասխան մնացած հարցումներ: Անոր ծրագրումները եւ գործածած նիւթերը կամ բաղկացուցիչ մասնիկները կը շարունակեն ըլլալ հիացմունքի առարկաներ:

Ամէն տեսակի ստեղծուած կեանք հիմնուած է բջիջներու վրայ: Բջիջներն են բաղկացուցիչ մասնիկները մարդուն մարմինին, բոյսերուն, անասուններուն եւ ամէն ապրող էակի: Մարդուն մարմինը՝ որ ինքնին երկրաչափական հրաշալիք մըն է, կը պարունակէ 100,000,000,000,000 բջիջներ (կրնան ըմբռնել այդ թիւը), որոնք շատ այլազան են: Իր իմաստութեան մէջ Աստուած իւրաքանչիւր տեսակ բջիջի տուած է որոշակի գործունէութիւն մը: Անոնք կ'աճին, կը բազմապատկուին եւ վերջաւորութեան կը մեռնին՝ յատուկ ժամանակացոյցով մը:

Հակառակ պարզ աչքին անտեսանելի ըլլալուն, բջիջները մարդուն ծանօթ եղող ամէնէն փոքր մասնիկները չեն: Բջիջները կը բաղկանան բազմաթիւ մանր կազմուածքներէ, որոնք կը կոչուին մասնիկներ (*մոլեքիւլներ*) եւ որոնք կազմուած են տակաւին ատէլի փոքր կազմուածքներէ, որոնք կը կոչուին տարրեր: Իսկ տարրերը բաղկացած են ատէլի մանր կազմուածքներէ, որոնք կը կոչուին հիւլէներ:

Հիւլէները այնքան մանր են, որ կէտադրութեան նշաններուն մէջի «կէտ»ը կը պարունակէ ատէլի քան մէկ միլիառ հիւլէներ: Այդքան մանր ըլլալով հանդերձ, հիւլէները գրեթէ ամբողջութեամբ կազմուած են պարապութեամբ: Անոնց մէջ կան դրական լիցք ունեցող *փրոթոններ*, չեզոք լիցք ունեցող *նիւթրոններ* եւ ժխտական լիցք ունեցող *էլեքթրոններ*: *Փրոթոնները* եւ *նիւթրոնները* իրարու հետ խմբուած ձեւով կը կազմեն հիւլէին փոքրիկ, խիտ կորիզը: Ժխտական լիցքով մասնիկները լոյսի արագութեամբ կը շրջին կորիզին շուրջը: Անոնք բաղկացուցիչ տարրերն են, որոնք ամէն բան միասին կը պահեն:

Ուստի հիւլէն ռիկէ կ'առնէ իր ոյժը (*էներճի*): Եւ ինչ ոյժ (*ֆորս*) է, որ իրարու հետ միասին կը պահէ լիցքաւորուած հատիկները: Գիտնականները զանիկա կը կոչեն *էլեկտրամագնիսական եւ կորիզային ոյժեր*: Անոնք պարզապէս գիտական մեծ եզրեր են, որ կը նկարագրեն այն ինչ որ տակաւին ամբողջական ձեւով կարելի չէ բացատրել: Որովհետեւ Աստուած ըսած է, թէ Ան «իր խօսքին զօրութեամբ տիեզերքը կը պահէ» (Եբրայեցիներուն 1.3): Եւ Կողոսացիներուն 1.17-ը կ'ըսէ. «Անով ամէն

բան հաստատ կը կենայ»¹: Կանգ առ եւ մտածէ՛ այդ մասին: Ահա այս փառաւոր Ստեղծիչը, զոր կը կոչենք Հայր, որուն նոյնիսկ տիեզերքը չի կրնար պարունակել: Ան կրնայ տիեզերքը չափել Իր թիզով, եւ սակայն այնքան մանրամասնութիւններու գացած է փոքրիկ երկիրը եւ անոր վրայ պտտող արարածները ձեւակերպելու մէջ, որ տարիներու ուսումնասիրութիւններէ ետք արդի գիտութիւնը տակաւին ինքզինք կը գտնէ չպատասխանուած հարցումներու դիմաց: Զարմանալի չէ, որ սաղմոսողը կ'աղաղակէ.

Կը նայիմ երկինքիդ, զոր շինեցիր մատներովդ: Կը տեսնեմ լուսինը եւ աստղերը, զորս դուն ստեղծեցիր: Բայց մարդիկը ինչո՞ւ աւելի կարեւոր են քեզի համար: Ինչո՞ւ հոգ կը տանիս մարդ արարածներուն: (Սաղմոսներու 8.3-4)²

Կը կարծեմ, որ ասիկա կ'ամփոփէ նիւթը: Եթէ ուզէի ենթադրութիւն մը ընել, սաղմոսողը հաւանաբար բառերով կ'արտայայտէ Աստուծոյ գահին շուրջ գտնուող հսկայ հրեշտակներէն մէկուն խորհուրդները: Անոնք կը շարունակեն «Սուրբ ես» աղաղակել՝ Աստուծոյ հրաշալիութեան մեծութեան եւ ընդարձակութեան պատճառով: Այդ էակները ականատես եղան Աստուծոյ ընդարձակ տիեզերքը եւ անոր բարդ մանրամասնութիւնները ստեղծելուն, եւ ապա տեսան ստեղծումը մարդուն եւ աղաղակեցին. «Այս ինչ է: Աստուած ինչո՞ւ այդքան ուշադրութիւն կը դարձնէ այս փոքրիկ մարդոց այս փոքրիկ մոլորակին վրայ»:

Տղոցս հետ խօսելէս ետք, անոնք այլեւս չտարուեցան արդի ժամանակներու հոչակաւոր աստղերու փառքէն եւ չսպառեցան անով: Անոնք հասկցան, թէ մեր մոլորակին վրայ գոյութիւն ունեցող որեւէ մեծ բան անբաղդատելի է մեր Աստուծոյ մեծութեան հետ: Կը յուսամ, որ այս Յաւելուածը նոյն ազդեցութիւնը ունեցաւ վրադ: Խորիէ՛ հոս կարդացածներուդ մասին Եսայի մարգարէին միջոցաւ Աստուծոյ Իր ժողովուրդին հարցուցած հարցումին լոյսին տակ. «Ուրեմն զիս որո՞ւ կը նմանցնէք, որ ես անոր հաւասար ըլլամ» (Եսայիի 40.25):

Անշուշտ շատ գիրքեր կրնան գրուիլ Աստուծոյ ստեղծագործութեան հրաշալիքներուն եւ իմաստութեան մասին: Իմ մտադրութիւնս ասիկա չէ հոս: Նպատակս հիացում եւ սքանչացում յառաջացնելն է Աստուծոյ գործերուն նկատմամբ, որովհետեւ անոնք կը հոչակեն Անոր մեծ փառքը...

1 Աստուածաշունչ Հին եւ Նոր Կտակարաններու՝ Եբրայերէն եւ Յունարէն Բնագիրներէն Թարգմանում, 2001

2 Բառացի թարգմանութիւն՝ անգլերէն *Նիու Սենչըրի Վըրժըն* (NCV) տարբերակէն

ՊԱՏՈՒԵԼՈՒ ՎԱՐՁՔԸ

*Բացայայտեցէք Այս Մոռցուած
Առաքինութեան Զօրութիւնը*



Ոչ մէկ քրիստոնեայ կ'ուզէ զԱստուած սահմանափակել, բայց մեզմէ շատերս անգիտակցաբար կը սահմանափակեն Անոր գործունէութիւնը մեր կեանքին մէջ, որովհետեւ կ'անտեսենք կարեւոր հոգեւոր սկզբունք մը՝ Պատիւը:


Պատիւը այնպիսի հասկացողութիւն մըն է, որ մեծ մասամբ կորսուած է մեր մշակոյթին մէջ, բայց ինչպէս այս գիրքին էջերուն մէջ պիտի տեսնէք, անիկա էական է Աստուծոյ Թագաւորութիւնը կեանքի բոլոր մարզերէն ներս արծակելու համար:

«Պատուելու Վարձքը» գիրքին մէջ հանրաճանաչ հեղինակ Ճոն Պըվիրը, ցոյց կու տայ, թէ ինչպէս պատուելու կոչը ընդունիլը քեզ Աստուծոյ արժէքային համակարգին համապատասխան կը դարձնէ եւ քեզ կը դնէ այնպիսի դիրքի մը մէջ, ուր կը ստանաս այն ինչ որ Աստուած ունի քեզի տալու:

Այս խորունկ աստուածաշնչական յայտնութիւնները միացնելով այդ սկզբունքները գործնականօրէն պատկերող ազդեցիկ պատմութիւններու հետ, այս գիրքը ձեզի կու տայ այդ մոռցուած առաքինութեան մասին նոր հայեացք մը եւ, ամենակարեւորը, քեզի կու տայ բուռն փափաք մը զանիկա գործածելու կեանքի բոլոր մարզերուն մէջ:

X MessengerX

Աշակերտության ճամբորդութիւն մը ամէն մարդու համար, ամենուրեք





- Անվճար, աւելի քան 125 տարբեր լեզուներով
- Հասանելի որպէս հեռաձայնային կիրարկում («Էփիլիքէյշըն») եւ առցանց
- Աղբիւրներ՝ նախատեսուած ձեր անհին համար
- Հետեւեցէք ձեր անցած նիւթերուն եւ աշակերտութեան ուղիին



Ստացէք «Messenger»-ի աշակերտական նիւթերուն ամբողջ գրադարանը, ներառեալ ելեկտրոնային գիրքեր, օտիօգիրքեր, կարճ ֆիլմեր, վիտեօնուսուցումներ, Աստուածաշունչեր եւ աւելին. դիտեցէք, կարդացէք կամ լսեցէք ձեր բոլոր սարքերուն միջոցով:

MessengerX.com



Հասանելի է աշխարհի տարածքին «App Store»-ի եւ «Google Play»-ի մէջ

Ինչ կը նշանակե Աստուծմէ վախնալ:

Կը փափաքին Ստեղծիչը հետ աւելի մտերիմ յարաբերութիւն մը ունենալ: Արդեօք Ան հեռու եւ նոյնիսկ դժուար գտնուող կամ անհասանելի կը թուի քեզի: Ծննդով կը վստահեցնէ, թէ Աստուած մօտ է մեզի, բայց թերեւս շատ անհրաժեշտ բան մը կը պակսի Անոր հետ ընթացքիդ մէջ. Տիրոջ վախը:

«Աստուծոյ Աիը» գիրքին մէջ, Պրովի կը հրաւիրէ քեզ, որ թարմ, նոր նայուածքով մը նկատի առնեն, թէ Ինչ կը նշանակէ գործադրել փրկութիւնը՝ ահով ու դողով: Այդ ընդհանրապէս մոռցուած արժանիքը այն հազուադէպօրէն առնուած ճամբան է, որ կը տանի դէպի իրագործումներով լեցուն եւ պտղաբեր կեանք մը: Պիտի յայտնաբերես, թէ Ինչպէս սուրբ վախը:

- Կենսական է Աստուծոյ հետ մօտիկ յարաբերութեան մը համար:
- Կ'ազատէ մեզ միւս բոլոր վախերէն եւ անձկութիւններէն:
- Կը մաքրագործէ մեր ներքին շարժառիթները եւ մտադրութիւնները:
- Կ'առաջնորդէ մեզ ճշմարիտ իմաստութեան, հասկացողութեան եւ գիտութեան:

Սուրբ վախը մեր առջեւ կը բանայ այն կեանքը, զոր Աստուած մտադրած է, որ ապրիս: Միայն այդ արժեքը զարգացնելով եւ անոր կառչելով է, որ կը գտնենք այն խաղաղութիւնը, ապահովութիւնը եւ ուրախութիւնը, զորս շատեր անմատչելի կը գտնեն: Փոխանակ մեր Ստեղծիչին առջեւ սարսափէն դողդալու, Աստուծոյ վախը մեր սիրտերուն մէջ ընդունիլը եւ անոր կառչիլը մեզ պիտի բարձրացնէ կեանքի աւելի բարձր մակարդակի մը, որ յաւիտենապէս կը փոխէ մեզ:



ԾՆՆ ԴՐՎԻՐԸ պատգամաբեր մըն է՝ ծանօթ Աստուծոյ հօսքին հանդէպ իր համարձակութեամբ եւ անզիջող մօտեցումով: Ան նաեւ միջազգային, մեծ վաճառք ունեցող գիրքերու (*պէսթ-սէլիսկ*) հեղինակ մըն է, որ գրած է գիրքեր, որոնցմէ հաւաքաբար միլիոնաւոր օրինակներ ծախուած են եւ որոնք թարգմանուած են 125 լեզուներու: Իր կնոջ՝ Լիսայի հետ միասին ԾՆՆ համահիմնադիրն է *Մասէնճըր Ինթըրնաշնըլի*՝ առաքելութիւն մը, որ նուիրուած է յեղաշրջելու աշակերտելու գործընթացը ամբողջ աշխարհի մէջ՝ զարգացնելով անզիջող եւ կրակոտ հետեւորդներ Քրիստոսի:



MessengerX

Անվճար ներբեռնումներու
եւ հոսքային հեռարձակման համար
այցելեցէք **MessengerX.com**

Կը ցանկաբ աւելին:
Տեսածոցէք պատկերակը:



Այս գիրքը նուր է Հեղինակէն
եւ ԿԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱՅ ՉԷ